

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍԵԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐՍ

ՊԵՐՈՒԹ
1987

5 OCT 2011



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ ԹԵՔԵՆԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍԵԱՆ

Կ Ո Ւ Ս Ա Կ Ց Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ի Յ Ո Ւ Շ Ե Ր Ս

Խմբագրեց եւ ծանօթագրեց՝
ԴՈԿՏ. ՎԱԶԷ ԳԱԶԱՐԵԱՆ

ՊԵՅՐՈՒԹ
1987

Տպարան Կ. ՏՕՆԻԿՆԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ
 871 -- 887, Արմենիա փողոց, Սէմ Միշէլ - Պէյրութ



Յովհաննէս Պօղոսեան :

Մ Ո Ւ Տ Ք Ի Հ Ա Մ Ա Ր

Ռամկավար Ազատական կուսակցութեան ամենաաշխոյժ գործիչներէն եւ ամենաբեղուն հրապարակագիրներէն Յովհաննէս Պօղոսեանին անտիպ յուշերուն խմբագրման եւ հրատարակման ձեռնարկելով՝ առաւելաբար նպատակն ունինք լուսարձակ մը բանալու պատմական ժամանակաշրջանի մը կարգ մը դէպքերուն եւ իրողութիւններուն վրայ:

Ընթերցողը այս յուշագրական համեստ փորձին մէջ պիտի հանդիպի տեղեկութիւններու, որոնք այլապէս անծանօթ մնացած պիտի ըլլային բոլորիս. այդքանով ալ, ահաւասիկ, այս հաստորը ձեռք կը բերէ սկզբնաղբիւրի ուրոյն արժէք, հակառակ հեղինակին կողմէ թոյլ տրուած կարգ մը թուականային եւ անուանական վրէպներու:

Յաւելուածաբար կու տանք նաեւ Յ. Պօղոսեանին երկու գրքոյկները, քանի որ դժուար է այսօր անոնց հանդիպիլ հրապարակի վրայ:

Ներկայ հատորին աւարտին կ'արտատպենք նաեւ Վահրամ Կէօֆեանին մէկ մահագրականը՝ առաւել եւս յստակացնելու դիմագիծը վաստակաշատ Յովհաննէս Պօղոսեանին:

Ռ. Ա. Կ. ի Կեդրոնական Արխիւնին մէջ գտնուող բնագիրը ենթարկած ենք լեզուական խմբագրումի եւ աննշան յապաւումներու, որոնք բան չեն պակսեցներ այս յուշագրութեան արժէքէն:

Բնագրին աւարտին, ընթերցողը կը հանդիպի մեր կողմէ անհրաժեշտ նկատուած կարգ մը ծանօթագրութիւններու:

Կու տանք նաեւ կենսագրական քանի մը տեղեկութիւն՝ ձեռով մը ամբողջացուցած ըլլալու համար Յ. Պօղոսեանին ինքնակենսագրական բնոյթ ունեցող յուշագրութիւնը:

Յովհաննէս Պօղոսեանը, — որդին՝ Պօղոս Պտըլիկեանին, որ իր կողակիցը ընտրած էր Սատեան ընտանիքէն, — ծներ է Կեսարիա, 1889-ի Մայիսին:

Նախակրթութիւնը ստացեր է Կիւմշեան վարժարանին մէջ :

Կեսարիոյ դէպքին հայրը սպաննուած ըլլալով, 1898-ին իբրեւ որբ ընդունուեր է Ս. Կարապետի ժառանգաւորաց վարժարանը, ուրկէ շրջանաւարտ դարձած է 1904-ին, եւ նոյն տարին իսկ ընտանեօք փոխադրուած են Նեւշեհիք, ուր երկու տարի պաշտօնավարած է իբրեւ ուսուցիչ :

Ուսուցչական պաշտօն վարած է նաեւ Գոնիայի (1905), Աֆիոն Գարահիսարի (1907) եւ Էսկիշեհիքի (1908) ազգային վարժարաններուն մէջ :

Իր ներկայ յուշագրութեան մէջ նշածներէն բացի, հրատարակած է *Առէվիտ* վիպակը (1912), *Սիրածներուս Համար* արձակ բանաստեղծութիւններու գրքոյկը (1914), *Փոթորիկի Երգեր* չափածոյ գրքոյկը (1920), *Արդի Հայաստանը* դասագիրքը (1934) :

Նշուած է թէ իբրեւ հրատարակելի երկ ունի *Ինչպէս դասը Ամերիկան* նամբորդական տպաւորութիւնները :

Մահացեր է 4 Յուլիս 1972-ին, Մոնմորանսիի (Վալ տ'Ուազ) հիւանդանոցը, Ֆրանսա :

Դոկտ. Վ. ՂԱԶԱՐԵԱՆ

Երբ 1909 Օգոստոսին էսկիշէֆրի մէջ ուսուցչական պաշտօնս թողլով կը հասնէի Կ. Պոլիս, հնդամեայ ասպարէզ մը վերջ կը գտնէր ինձ համար, ու կը բացուէր ուսանողական նոր շրջան մը: Արդարեւ, արձանագրուած էի իրաւարանական վարժարանին մէջ, և Կեանքս շահելու համար աշխատելու ստիպուած ըլլալով, մտած էի փաստարան Դաւիթ Տէր Մովսէսեանին գրասենեակը, որ կը գտնուէր Պոլսոյ Կոզմը, Ֆինճանճիլար Եօզուչի մօտ, Պատնաթան Խան: Ասիկա երկարակ չէնք մընէր, անւարան գրասենեակներու կամ միեկանոցներու յատկացում: Կը գրադէի գտական թուղթեր կամ վճարներ բնագործակելով և կամ բնդունելով գրասենեակի յաճախորդները, որոնք երբեմն յամերով կը մնային ու կը վիճարանէին Տէր Մովսէսեանին հետ:

Օր մը, յետ միջօրէին, երկու անսովոր այցելուներ եկան: Անոնք ուրիշ յաճախորդներէ աւելի երկար խօսակցութիւն մը ունեցան: Զիրենք չէի ճանչնար: Մէկը քիչ մը կապացոյ ուրով, թաւ պէտերով, ազդարար մտերով համակրելի անձ մընէր: Միւսը՝ ծնօտին վրայ փոքրիկ սրածայր մօրուքով, ակնոցաւոր և երազող աչքերով, մտաւորականի տիպար մը, որ բանաստեղծ մը կրնար ըլլալ: Անոնց մեկնումէն յետոյ միայն խօսցայ թէ մէկը Միշրան Տամատեանն էր և միւսը՝ Վահան Թէքէեանը: Երկուքն ալ եկած էին Եգիպտոսէն «ազդալին գործով», և գտաւելով իրենց խօսակցութեան երկար անսղութեանէն, կարեւոր խնդիրներու մասին վիճարանած էին:

Դաւիթ Տէր Մովսէսեանը հանրածանօթ էր իրրեւ ճարտար փաստարան, որ միաժամանակ գործօն մասնակցութիւն ունէր ազդալին խնդիրներու մէջ և իրրեւ Երեսփոխան կ'անդամակցէր հայոց պարտիաքարանի Ազդալին Ժողովին: Տամատեանը և Թէքէեանը եկած էին իրրեւ պատուիրակներ Սահմանադրական Ռաճկաւար Կուսակցութեան⁽¹⁾ կողմէ, որուն կեդրոնը Գահիրէ էր: Անոնք Տէր Մովսէսեանին մէջ գտած էին յարմարագոյն անձը, որ կրնար օժանդակել Կուսակցութեան գաղափարատարածման Կ. Պոլսոյ մէջ:

Երկար շմոնցի գրադրի պաշտօնիս մէջ, որ ինձ սահմանափակ և ձանձրալի կը թուէր: Լրագրութիւնը կը հետաքրքրէր զիս: Եւ երբ կէսօրէ յետոյ թերթերու ցրուիչը կու գար և սուր

ձայնով մը կը պոռար «Բիւզանդիոն» անունը, վար կ'իջնէի առնելու համար դրասնեակին թերթը: Արդէն Էսկիշէհի մէջ փորձած էի քանի մը յօդուած գրել «Արեւելք»ին համար: Եւ անոնց հրատարակուելը յոյս մը տուած էր ինձ որ կրնամ յաջողիլ լրագրութեան մէջ:

Պաշտօն մը գտնելու համար գիմեցի Յովհաննէս Շահնազարին, որ սկսած էր վերահրատարակել «Հայրենիք»ը: Ուսանող մը քաջալերելու ազնիւ մտածումով, Շահնազարը ինձ տուաւ թրքերէն թերթերէ լուրեր թարգմանելու գործ մը, զոր պիտի կատարէի առաւելագոյն պարտական ժամերէս յետոյ, կէս օր մը: Ասիկա պիտի ըլլար մուտքս խմբագրական ասպարէզէ ներս:

«Հայրենիք»ին խմբագիրներն էին Վահան Թէքէեանը եւ Երուսնդ Օտեանը: Թէքէեանը կը գրէր ազգային-քաղաքական եւ գրական յօդուածներ. իսկ Օտեանը՝ իր օրը, օրին տոմսերը, առաւելագոյն ազգային անցուդարձերու հետ կապուած: Այդ օրերուն բուն էր պայքարը Ազգային Ժողովին մէջ «բացի-զոցի» խնդրին պատճառով, որուն առարկան էր եկեղեցւոյ բեմերուն տրամադրուիլը քաղաքական բանախօսութեանց: «Հայրենիք»ը գէժ էր այդ «նորութեան», որ կը դալթակեցնէր հաստատեալ ժողովուրդը: Արդարեւ, կուսակցական գործիչներ եւ մոլլաներ քով քովի երևցած էին երբեմն այդ բեմերուն վրայ, եւ ասիկա բնորոշելի էր: Ազգային Ժողովին մէջ Թէքէեանը կը կատարէր բնոյզիմացիի գեր մը, իրեն հետ ունենալով չափաւոր երեսփոխաններ, որոնք կը կազմէին Կեդրոնի խմբակցութիւնը: Այս խմբակցութեան գլխաւոր գէմքերն էին, բացի Վ. Թէքէեանէն, Դ. Տէր Մոյսէսեանը եւ Հայկ Խօճասարեանը: Եկեղեցւոյ բեմերը բանախօսութեանց համար տրամադրելու կուսակիցներն էին Արատական խմբակին պատկանողները, որոնց մէջ կը գտնուէին, բացի պաշտօնական երեսփոխաններէ, Գրիգոր Զօհրապը, Հմայրեակ Խոսրովեանը եւն.: Կը յիշուի թէ «բացի-զոցի» խնդիրը Կ. Պոլսէն դուրս ալ տեղի տուաւ ներքին պայքարի եւ Իզմիրի եկեղեցիին առջեւ սպաննուեցան երկու սահմանադրական ռամկավարներ, [Գևորգ] Հայաճեան եւ [Գէորգ] Քեչիշեան անունով, եթէ չեմ սխալիր: Այս ոճիրը մեծ յուզում յառաջ բերաւ Կ. Պոլսոյ պատրիարքարանի շրջանակներուն մէջ: Այս պայքարին հետեանքով եղիշէ արք.: Դուրեանը պիտի հրաժարէր իր պատրիարքական պաշտօնէն եւ եկեղեցւոյ բեմերը պիտի արգիլուէին բանախօսութեանց համար:

«Հայրենիք»-ին ու Վ. Թէքէեանին պաշտպանած դատաւարները եւ ուղղութիւնը հաճելի էին ինձ: Թէքէեանին մէջ կը յարգէի ոչ միայն գրողէն եւ բանաստեղծը, այլեւ ողջամիտ քաղաքական գործիչը: Ասկէ կը ծնէր իմ համակրութիւնս, որ մեծ դեր մը պիտի կատարէր Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան յարուստ մէջ: Թէքէեանը եղաւ նաեւ իմ ուղեցոյցս գրականութեան մէջ, քաջալերելով իմ առաջին փորձերս բանաստեղծութեան համար:

Դժբախտաբար «Հայրենիք»-ը չկրցաւ երկար տոկալ ներթափանցել իրականութեանց եւ վաւերեցաւ: Անցաւ ուրիշ թերթերու — «Արեւելք»-ին եւ «Ժամանակ»-ին — մէջ խմբագրական պաշտօնի: Այս հանգամանքովս կը հետեւէի Ազգային Ժողովի նիստերուն եւ վիճարանութեանց: Հոն իրարու կը բախէին զանազան հոսանքներ եւ անոնց բնոյթիմաստութեանց մէջէն կրնայի գնահատել մարդիկը եւ իրենց պաշտպանած տեսակէտները: Անոնք կ'անդրադառնային ուսանողական շրջանակէն ներս եւս: Իրաւարանական վարժարանին մէջ կային հոծ թուով հայ ուսանողներ, որոնք արդէն զանազան հաստատմներու բաժնուած էին: Կային 'ղաշնակցական եւ հնչակեան հաստատմներ, որոնց վրայ պիտի աւելնար սահմանադրական ռամկավարն ալ: Իմ տեղս կանուխէն որոշուած էր այս վերջնոյն մէջ:

Այս հաստատմներու կամ միութեանց պատկանող ուսանողները կու գային ոչ միայն իրաւարանական վարժարանէն, այլ համալսարանի միւս ճիւղերէն կամ բարձրագոյն վարժարաններէն եւս: Սահմանադրական Ռամկավար Ուսանողական Միութեան «հիմնադիր» կամ միջոց ուժը եղած էր Արամ Շիշեան կարնեցին, որ Եգիպտոսէն եկած էր եւ առաքելական կոչում ունէր: Այս միութեան մէջ մտած էին Լեւոն Աճեմեանը, Գառար Մովսէսեանը, Աստուր Աստուրեանը, Յովսէփ Յովսէփեանը, Յարութիւն Գաւուգճեանը, Արմենակ Հայկունին եւս: Կը հաւաքուէինք յաճախ Օրիան Պէյ խան, Կուսակցութեան գրասենեակը եւ կամ Շիշեանին մօտ, որ կը պատուէր մեզ թէյով մը, զոր կը սիրէր պատրաստել: Եւ աւելի տարածում տալու համար մեր շարժումին, որոշեցինք հրատարակել ամսաթերթ մըն ալ «Վերածնունդ» անունով: Այս թերթին առաջին թիւը լոյս տեսաւ 1912 Մայիսին, 32 էջով: Խմբագրականը, «Մեր նպատակը», գրած էր Տիրան Քելիկեանը, եւ յօդուած մը ունէր Վ. Թէքէեանը, «Ձոհողութիւն սրտի եւ մտքի» վերնագրով, որ այս գոհողութիւնը կը հակադրէր կամ կը բողոքատէր գրամի եւ նիւթական գոհողութեան հետ: Քելիկեանը եւ Թէքէեանը կը քաջալերէին եւ կերպով մը կը հովանաւորէին մեր միութիւնը: Անոնք մեղի խորհրդատու կամ առաջնորդողներ էին:

«Վերածնունդ»ը հրատարակուեցաւ չորս թիւ (Մայիս-Օգոստոս) : Թերթին պատասխանատու տնօրէնն էր, սկիզբէն, Սահակ Մեւրոպը, որ համակիր մըն էր: Անոր հրաժարումէն յետոյ այս պաշտօնը ստանձնեց Ակգրակ Տիրկերեանը, անգամ մեր միտքիս: Թերթին փակումէն յետոյ եւս անոր շուրջ հաւաքուած ուսանողներն շարունակեցինք մեր պարբերական հաւաքովիները կամ ընկերական պառնները: Կը յիշեմ թէ կիրակի օր մը պոստալի գացինք Ալիւտարէն փեւ, գէպի Չամլըճայի գաղաթիւ, որ հիանալի տեսարան մը ունէր Վոսվորի վրայ: Այնտեղ ճաշեցինք եւ գուարճացանք ամբողջ օրը: Այս պառնները մեզ աւելի կը մօտեցնէին իրարու եւ փոխադարձ կապերը կ'ամրապնդուէին երիտասարդ ընկերներու միջեւ:

Կուսակցութիւնը պաշտօնավերթի չունէր Կ. Պոլսոյ մէջ: Պահ մը «Հալլենիք»ը եղած էր անոր կիսապաշտօնավերթի⁽²⁾: Սակայն կար վարչական մարմին մը, որուն հետ կապ կը պահէինք: Այս վարչութեան առեւտրական էր Տիրան Քելեկեանը: Անոր կ'անդամակցէին, որքան կը յիշեմ, Վ. Թէքէեանը, Տէր Մովսէսեանը, Հայկ Աճառարեանը, Միհրան Տէր Յովհաննէսեանը (ուսուցիչ), Տիրատուրեանը եւ Լեւոն Բանիկեանը (առեւտրական): Կուսակցութիւնը առաւելապէս համակրանք գտած էր առեւտրական եւ յուրջ գտակարելի մէջ, որուն մասնաւոր օժանդակութիւնը կը վաշիշէր Ակգրային ժողովին մէջ մղած իր պայքարներուն բնթացքին:

1912ին էր որ Կ. Պոլիս ուլցելեց Վ. Մայեղեանը, Եղիպտոսէն, որ պահ մը օսմանեան երեսփոխանութեան թեկնածու էր: Կ. Պոլիս ուլցելեցին նաեւ Վանի կուսակցական վարիչներ Շաւարշ Հովիւեանը, Յարութիւն Կաքաւեանը եւն., մասնակցելու պատգամաւորական ժողովի մը: Յետոյ Պոլիս հասաւ Յովհաննէս Յաւրեանը, իրբեւ լիցիւմակից «Քրիշչըն սոյնեւ մանիթրը» թերթին, եւ մեկնեցաւ ապա Վան՝ իրբեւ տնօրէն ուսուցչանոցի: Աչքառու կուսակցական մըն էր նաեւ Գրիգոր Պէօղիկեանը (ապա՝ Շիկահեր):

Իրաւարանական վարժարանը տարակէլ յետոյ, գործեալ մտայ Դաւիթ Տէր Մովսէսեանին գրասենեակը, չթողլով հանդերձ խմբադրի գործը, որովհետեւ Տէր Մովսէսեանը ձեռնարկեց թերթի հրատարակութեան՝ նախ «Արեւիք», յետոյ «Լուսարձակ» անունով: Երկուքն ալ կարճ կեանք ունեցան:

«Արեւիք»ին հրատարակութիւնը զուգադիպեցաւ Պալքանեան պատերազմին: Խմբադրապետն էր Վ. Թէքէեանը: Քաղաքական լուրերը կը խմբագրէր Եղիա Սուրիկեանը, որուն օսմանեան բանակի «յայթանակ»ներուն մասին գրութիւնները ժողովրդականութիւնն չչահեցուցին թերթին: «Արեւիք»ը ամիս մը միայն տեսեց: Անկէ յետոյ Դաւիթ Տէր Մովսէսեանը ձեռնարկեց «Լուս-

սաբճակ»ին հրատարակութեան: Այս թերթին հիմնադիրներն էին Ժիրայր Շիրակացին եւ Արտաշէս Գալիպազեանը, որոնք նիւթական պատճառներով ստիպուած էին թերթը փակել: Տէր Մոխէսեանին հրատարակութեամբ անոր շարունակուելը յաջողութիւն մը չեղաւ եւ միեւնոյն նիւթական զժուարտութեանց պատճառով գործը փչչ յետոյ կանդ առաւ:

Մեր Ուսանողական Միութեան անդամները, որոնք ինձ նրժան տարած էին վարժարանները, կա՛մ գործի լծուեցան Կ. Պոլսոյ մէջ եւ կա՛մ մեկնեցան դատաւ: Մեզմէ յետոյ Ուսանողական Միութիւնն ալ երկար տաւն չշարունակուեցաւ: Սակայն միջոց մը եղած էր որ զապաւարով կապուինք Սահմանադրական Ռամկաւար Կուսակցութեան, յետոյ անոր գործօն անդամները ըլլալու համար:

1914ի գարնան, մասնակցեցայ թղթատարական նախարարութեան կողմէ րացուած մրցումի մը՝ այս պաշտօնատան իրաւարանական բաժնին մէջ պաշտօնի մը համար: Թղթատարական նախարար անուանուած էր Ոսկան Մարտիրիկեանը, որ բարենորոգումներ մտցուց եւ այդ կարգէն ըլլալով՝ փոփոխութիւններ բրաւ պաշտօնէութեան մէջ: Ոսկան Մարտիրիկեանը ծանչցած էր Բանկալթի, Թօշիկեաններուն բնակարանին մէջ, որ ան երբեմն տյցելութեան կու գար եւ շատ զրատէր մէկը եղած էր: Մրցումի մէջ յաջողեցայ եւ այս յաջողութիւնը փչչ մըն ալ կը պարտէի հայ նախարարին: Այս պաշտօնին շնորհիւ Առաջին համաշխարհային պատերազմին սկիզբը գերծ մնացի գինուորական ծառայութեան եւ արտօրէ ալ:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ
«ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆՔ»ԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Այս պատերազմը ահա որ հետեւանքներ տնեցաւ հայ ժողովուրդին համար: 1915 Ապրիլ 11/24ին Կ. Պոլսոյ հայ մտաւորականութիւնը [սկսաւ արտօրուիլ] եւ գատաւ ամբողջ հայութիւնը [հետգհեալ] զոհ եղաւ տարազրութեան խաժգոմ զաւթմաններուն ու խմբական սպանութեանց: Այս հանգամանքներու մէջ ազգային կեանքը եւ կուսակցական գործունէութիւնն ալ զապրած էին: Մեր բնկերնեքն շատեր զոհուած էին Եղեանին, սկսելով Տիրան Քեիկեանէն: Այս զոհերուն մէջ կը գտնուէին երբեմնի մեր Ուսանողական Միութեան անդամներ եւս, ինչպէս Շիշէկեանը եւ Ասատուրեանը:

Զինադադարէն յետոյ Կ. Պոլիս վերադարձած էին Զաւին պարբարք Տէր Եղիայեանը, տարազրութենէ եւ սպանոց վի-

բաղրած հայ մտաւորականներ կամ արտասահման տաղաստանած կուսակցական գործիչներ: Վերսկսած էր ազգային կեանքը եւ կուսակցական գործունէութեան եւս ասպարէզ բացուած կրկին:

Առիթով մը հանդիպեցայ տոբթ. Յակոբ Թօփճեանին, զոր ճանչցած էի լրագրական կեանքիս մէջ: Ինքը քաջուած էր լրագրութենէ եւ հանրակոռքի ընկերութեան մէջ կարեւոր պաշտօն մը ունէր: Յարաբերութեան մասանք Դաւիթ Տէր Մովսէսեանին եւ զանազան ընկերներու հետ, ինչպէս՝ Արամ Խնճիճեանը, որ Գերմանական դրամատան մէջ պաշտօնէտայ էր. Գասպար Մովսէսեանը, որ փաստարանական ասպարէզի մէջ մտած էր. Շուարշ Յակոբեանը՝ փաստարան եւն.: Եւ մէկ քանի հանդիպումներէ յետոյ վերականգմուեցաւ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան վարչութիւնը:

Ազգային գործունէութեան հետ վերսկսած էր հայ թերթերու հրատարակութիւնը հին կամ նոր անուններով: Տիգրան Զաւէնը սկսած էր հրատարակել «Ժողովուրդ» թերթը, որ քիչ յետոյ պիտի միանար «Ժամանակ»ին հետ: Տիգրան Զաւէնը երկար չմնաց եւ քաջուեցաւ. «Ժողովուրդ» անունն ալ վերածուեցաւ «Ժողովուրդի ձայնը»ի, որուն խմբագրութիւնը ստանձնեցինք Սահ-Մեսրոպին հետ, որ տարագրութենէ վերադարձած էր:

Այդ միջոցին թղթատարական նախարարութեան անցած էի եւ լեւ.մտական նախարարութիւն՝ քննիչի օգնականի պաշտօնով:



«Ժողովուրդի ձայնը»ի խմբագրական կազմը՝ 1920-ին: Զախէն աջ, նստած՝ Յովհ. Պօղոսեան, Աբիկ Մուլախեանեան, Վահան Թորոպեց. ոտքի՝ Սարգիս Պօղոսեան, Հրանդ Սամուէլ, Վահան Միրազեց, Լեւոն Թիւրխեան:

րայց ամէն օր պաշտօնատուն երթալու ստիպուած չըլլալով, ազատ ժամանակ ունէի թերթով ալ զբաղելու:

Կովկասէն եկած էին ընկերներ, ինչպէս՝ Յովհաննէս Յակոբեանը եւ Յովսէփ Գոյումճեանը: Հետզհետէ պիտի հասնէին նաեւ Վահան Թովթովենցը եւ Լեւոն Թիւթիւնճեանը: Կուսակցութիւնը զօրացած էր նոր տարրերով եւս, որոնք սկսած էին մօտենալ անոր: Սահակ-Մեսրոպը երկար շմնաց խմբադուլթեան մէջ եւ «Ժողովուրդի ձայնը»ին խմբադասակալութեան պաշտօնը յանձնուեցաւ Յովհաննէս Յակոբեանին, իսկ ես ստանձնեցի խմբագրական քարտուղարի պաշտօնը: Թերթին աշխատակիցներն էին Թովթենցը եւ Թիւթիւնճեանը, որոնք զօր. Անդրանիկին հետ աշխատած էին Կովկասի մէջ եւ ունէին հետաքրքրական պատմութիւններ հայ կամաւորական կեանքէ:

Շատ չանցած Յովհ. Յակոբեանը տարակարծութիւններ ունեցաւ Երջանային Վարչութեան հետ եւ հրաժարեցաւ: Ես անոր տեղ առժամաբար ստանձնեցի խմբադուլթեան գործը, մինչեւ 20 Օգոստոս 1920, երբ մեկնեցայ Փարիզ՝ ուսանելու համար:

Պատերազմը լրանալէն յետոյ Վերակազմեալներու եւ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան միջեւ. զօրծակցութեան փափաքը փոխադարձ էր, որովհետեւ նոյն գաղափարական ունէին եւ նոյն նպատակները կը հետապնդէին⁽³⁾: Ասոր արդելք նկատուող պատճառներ կամ անհասներ գաղբած էին գոյութիւն ունենալէ եւ միացումի ուղղութեամբ չարժու մը կար Ամերիկայի մէջ թէ ալլուր: Փարիզի մէջ, ուր Հայ Ազգային Պատուիրակութեան չորջը կը կեդրոնանար ազգային գործունէութիւնը, ձեռնարկ մը եղած էր 1919-ին, բազմութիւ մտաւորականներու կողմէ, «անհրաժեշտ համախմբում»ի մը համար: Այս ձեռնարկին կը մասնակցէին Արշակ Զօղանեանը, Միհրդատ Միհրդատեանցը (Պեյճիքա), Արշակ Սափրաստեանը (Լոնտոն), Նշան Տէր Ստեփանեանը (Իտալիա), Գ. Սինապեանը, Պօլոս Խամբեանը, Երւանդ Ազաթօնը, Տիգրան Կամսարականը եւն.: Ասոնք կազմած էին Հայ Ազգային Ազատական Միութիւնը⁽⁴⁾ եւ «Հայաստան» անունով չարաթաթերթ մըն ալ հրատարակած, քանի մը թիւ: Այս չարաթաթերթին տաճին թիւին մէջ Արշակ Զօղանեանը հրատարակած էր յօդուած մը, ուր «Հայ ազգի վերածնունդի երկունքին այս հոսկ օրերուն մէջ» քննադատելով հայաստակըչութեան տարրի մը բացակայութիւնը, կը քառադոմէր Վերակազմեալ Հնչակեան, Սահմանադրական Ռամկավար եւ Հայ Ժողովրդական կուսակցութեանց միաձուլումը: Արդարեւ, այս ուղղութեամբ կ'արտայայտուէին նաեւ նոյն միջոցին Փարիզ գտնուող Հայ Ժողովրդական Կուսակցութեան երկու վարիչները՝ Միքայէլ Պապաջանեան եւ Էմիլիէճեան:

Կ. Պոլսոյ մէջ Վերակազմեալները կը հրատարակէին «Ա-

րազած» չարաթաթերթը, Վահան Շահբաժանին խմբադրու-
թեամբ: Եւ երբ Հրաչ Երեսնայը հասած էր Ամերիկայէն, երկու
կուսակցութեանց միացումին համար սկսած էին բանակցութիւն-
ները, երբ ևս մեկնեցաւ Փարիզ: Սահմանադրական Ռամկափար
Կուսակցութեան կողմէ Արտակ Դարբինեանը ևս Աւետիս Թերզի-
պաշեանը, որոնք հասած էին Կոփկասէն, իսկ Վերակողմնաշնե-
րու կողմէ Հրաչ Երեսնայը և Լուիֆիլի Գույումճեանը կը վա-
րէին այդ բանակցութիւնները, որոնք վերջացան համաձայնու-
թեամբ մը՝ բողձալի միութեան համար⁽²⁾: Ասիկա կարեւոր ի-
րողութիւն մըն էր մեզ ազգային կեանքին մէջ:

ՓԱՐԻԶԻ ԱԿՈՒՄԲԸ

Փարիզ հասնելու արձանագրուեցաւ Քաղաքային Գիտու-
թեանց վարժարանը, ուր կը յաճախէին ուրիշ հայ ուսանողներ
ալ: Ունէինք բազմաթիւ ուսանողներ նաեւ իրաւարանաւորն,
բժշկական, հանրային շինութեանց և այլ վարժարաններու մէջ,
որոնք իրարու կը հանդիպէին Սորպոնի չըջակալ սրճարաններուն
մէջ: Անմիջապէս կազմեցինք խումբ մը հայ ուսանողներու, ու-
րոնցմէ կը լիչեմ Յարութիւն Յովիկեանը, Կ. Պարէն իրաւաբա-
նութեան ուսանող, Յ. Ուրֆալեանը, Կիլիկիայէն, իրաւաբա-
նութիւն, Հայկ Տէր Մկրտիչեանը, Վանէն, բժշկութիւն, Էն.:
Յետոյ Կիլիկիայէն Եկաւ Հայկազուն Արամեանը, որուն օգնա-
կան քարտուղարի պաշտօն մը տրուեցաւ Հայ Ազգային Պատուի-
րակութեան գրասենեակին մէջ: Շարաթաւորն հաւաքումներ կ'ու-
նենայինք «Լիւսօ» սրճարանին վերնաշարկը, Սորպոնի փողոցին
մը: Մեր ժողովներուն կը մասնակցէին Ա. Զօպանեանը, Վ.
Թէքէեանը, Միքայէլ Պապաջանեանը, Ն. Տէր Սաւմանեանը, Ա.
Սաֆրատեանը և Լեւոն Մկրտիչեանը, որոնք Ազգ. Պատուի բա-
նութեան մէջ էին: Մեր խօսակցութեանց աստիկան յաճախ Հայ-
կական Հարցի վերաբերեալ գործեր էին, կամ Ազգ. Պատուի բա-
նութեան գործունէութիւնը, որու շուրջ Միքայէլ Պապաջանեան
կու տար ընդարձակ տեղեկութիւններ, իրեն յատուկ համոզիչ
փաստաթղթութիւններով, ու երբեմն միճարանութիւններ ալ կ'ու-
նենայինք: Մեր երկչ ընկերներուն հետ խօսակցութիւնը ևս մի-
ճարանութիւնը ո՛չ միայն կը սրէին մեր հետաքրքրութիւնը, այլ և
մեզի համար կը կազմէին ազգային խնդիրներու ծանօթանալու
միջոց և սառար՝ կուսակցութեան գաղափարակութեան: Երբեմն
կ'ունենայինք այցելու ընկերներ, Ամերիկայէն և այլ չըջան-
ներէ, — ինչպէս՝ 1920 Նոյեմբերի միացումէն յետոյ զումար-



Փարիզի Քաղաքական Գիտությունների վարժարանի 1922-ի շրջանաւարտները: Զախէն աջ՝ Յովհ. Պօղոսեան, Միխայէլ շանշիէֆ, Գրիգոր Կիրակոսեան, Տիգրան Տէր Յակոբեան, Յարութիւն Յովակիմեան եւ Յարութիւն Պերպերեան (նստած):

Իսկ Ա. պատգամաւորական ժողովին անթիւ⁽⁶⁾, — որոնք Փարիզէն կ'անցնէին կամ գործով կու գային Փարիզ:

Մեր ուսանողական խումբը, որուն մէջ ունէինք գործաւոր ընկերներ ալ, ինչպէս՝ Անդրանիկին զինուոր Միսաք Նուպարեանը, կը կազմէր կուսակցական գործունէութեան կորիզը Փարիզի մէջ: Թէեւ մեր թիւը փոքր էր, բայց փարիզահայ գա-



Հ.Ա.Ռ. Կուսակցության ընդհ. պատգամաւորական ժողովի մասնակիցները 1920-ին, Պոլիս: Ջախէն աջ, Ա. շարֆ՝ Գարրիէլ ա. Փափագեան, Լեւոն Թիւրիւնեան, Հայկ Պերպերեան, Կարապետ Յ. Փափագեան, Յակոբ Տէրեց, Պարգեւ Փափագեան, Արշակ Ալլօշանեան, Կարպիս Սրապեան. Բ. շարֆ՝ Շաւարշ Յակոբեան, Հայկ Գալաֆեան. Մկրտիչ Չալազ, Սարգիս Մանուկեան, Սեդրակ Կեպենդեան, Աղազար Աղազարեան, Գրիգոր Պէօզիկեան. Գ. շարֆ՝ Արամ Գրիգորեան (14), Լեւոն Շիրինեան (15), Արամ Իննինեան (16), Պօղոս Եղիայեան (17), տոֆր. Յակոբ Թովնեան (18), Օգսէն Սարսնեան (21), տոֆր. Աւետիս Գուլումեան (22). Գ. շարֆ՝ Ռուբէն Յովնանեան (6), Յովսէփ Գուլումեան (7), Արաակ Գարրինեան (9), փրոֆ. Յովնանէս Յակոբեան (19), Վաղարշակ Տէր Յակոբեան (20). վերջին շարֆ՝ տոֆր. Վահան Ալրունեան (4), Վահան Թէֆէեան (5), Մարտիրոս Տէր Ստեփանեան (8), Համագաստ Բարունակեան (10), Յովսէփ Յովսէփեան (11), Գասպար Մովսէսեան (12), Աւետիս Թերզիպաշեան (13):

զուրկին մէջ համակրանք կը վայելէինք, մանաւանդ որ Հայ Ազգային Ազատական Միութիւն մը կազմէրու նախաձեռնողները, ինչպէս վերը տեսանք, մեզի օժանդակներ էին սկստունքով: Կը կազմակերպէինք հաւաքոյթներ եւ հանդէսներ, օգտուելով այս օժանդակութենէն: Կը յիշեմ մասնաւորապէս այն հաւաքոյթը, զոր կազմակերպեցինք Պօղոս Նուպար վաշային հովանաւորութեամբ, երբ Ռուբէն Հերեանը Փարիզ եկած էր հանդանակու-



Ռուբեն Հերեան :

թեան մը համար: Փաշան անձամբ ներկայ եղաւ այդ հաւաքոյթին, ուր խօսեցաւ Լեւոն Մկրտիչեանը, որ այդ օրերուն Ազգ. Պատուիրակութեան քարտուղարութեան պաշտօնը կը վարէր:

Մեր խումբին ամէնէն կարեւոր դործը եղաւ «Ապագայ» շարաթաթերթին հրատարակութիւնը: Առաջին թիւը ըյս տեսաւ 18 Դեկտ. 1920-ին, «Եւրպէս» տպարանէն: Դիշ յետոյ ունեցանք մեր տառերը եւ հաստատուեցանք Սանթէ փողոցի վրայ, Քրանսական տպարանի մը մէջ: Խմբադրական եւ վարչական գործերը բաժնած էինք ընկերներու մէջ: Խմբադրութիւնը ստանձնած էր եւ: Առաքումի աշխատանքը կը կատարէինք խմբովին:

Թերթը լաւ ընդունելութիւն գտաւ մեր գաղութին մէջ, մանաւանդ որ անիկա կը նկատուէր Հայ Ազգ. Պատուիրակութեան կիսապաշտօնաթերթը եւ այդ հանգամանքով ալ օժանդակու-



Մազրիզիւղ, 22 Յունիս 1922: Կեդրոնը նստած՝ փրօփ. Մարտիրոս Անանիկեան. ետին՝ Տիրատուր Տիֆինեան. աջ ծայրը՝ Սեդրակ Թարսրեան: Միւսները՝ Մազրիզիւղի Ռ.Ա.Կ. մասնաճիւղի անդամներ:

Թիւններ կը գտնէինք: Այսպէս շարունակեցինք երկու տարի, մինչեւ 1922-ի վերջը:

Սեպտ. 1922-ին պատահեցաւ Իգմիրի աղէտը, որուն պիտի հետեւէր, քիչ յետոյ, Կ. Պոլսոյ պարպումը Դաշնակիցներէ: Այս գէպքերուն հետեւանալով բազմաթիւ հայ գաղթականներ խումբերէն Թրանսա եւ ի մասնաւորի Փարիզ, Անտիյ մէջ էին բազմաթիւ կուսակցական ընկերներ, որոնցմով մեր ահումբը բազմացաւ եւ նոր ուժեր աւելցան նախորդներուն վրայ: Կ. Պոլսէն Փարիզ հասան հեղհեղէն Յովսէփ Գույումճեանը, Տիգրան Յուկոբեանը, Սերովբէ Պերպերեանը, Արամ Զիւմպլուչեանը, Արամ Հանէգըր, Մ. Մարտիեանը, Արամ Ինճիճեանը եւն: Այդ միջոցին կը գումարուէր [կուսակցութիւններու] միութենէն յետոյ երկրորդ ընդհանուր պատգամաւորական ժողովը Կ. Պոլսոյ մէջ⁽⁷⁾, որուն կողմէ ընտրուած նոր Կեդրոնական Վարչութեան անդամները կը ստիպուէին հետանալ գէպի Պոլսիւրիտ, նախ, եւ յետոյ պիտի գային հաստատուիլ Փարիզ, ինչպէս՝ Հրաչ Նրուսնդը, Արամ Դարբինեանը եւ Աւետիս Թերզիպուչեանը: Այս կերպով Փարիզ կը փոխադրուէր Կուսակցութեան Կեդրոնը:

Փարիզի մէջ արդէն կազմուած էր Շրջանային Վարչու-



Ռ․Ա․ Կուսակցութեան Ա․ քնդի․ պատգամաւորական ժողովի մասնակիցները, 1922-ին. Պոլիս: Զախէն աջ, նստած՝ Շաւարշ Յակոբեան, Արտակ Դարբինեան. Հրաչ Երուանդ. Մուշեղ Սեբոբեան, Արամ Խննինեան. Աւետիս Թերզիպաշեան, Վահան Թէֆէեան. Բ․ շարք՝ Արամ Ճիւղպաշեան, Լուրֆիկ Գույումեան, փրոֆ․ Մարտիրոս Անանիկեան, Արշակ Պապիկեան, Ս․ Սրսոյեան. Գ․ շարք՝ Արշակ Սափրաստեան. Տիրատուր Տիֆինեան. Գրիգոր Պէօգիկեան, Օգսէն Սարաֆեան, տոֆք․ Տիգրան Էնֆիէնեան, տոֆք․ Գալուստ Ապանեան:

Թիւն մը, նորեկ բնիկներով և փարիզահայ գաղութէն մէկ քանի տանձնատուութիւններով, ինչպէս՝ Պօղոս Իսմիւրեանը և Արամ Ճեւահիրճեանը: Քիչ յետոյ Փարիզ պիտի գար Հաստատուելու Ետալի Կարիկեանը, Ատիս-Ապապալէն, և պիտի ստանձնէր զօրծօն մասնակցութիւն մը այս վարչութեան մէջ:

Այս պայմաններուն բերումով յարմար դատուեցաւ ինչ-ինչ փոփոխութիւններ բնել «Ապապալ»ին խմբադրութեան մէջ: Յովսէփ Գույումեանը ստանձնեց խմբադրական գործը. սակայն վարչական գործը կը կազար, և նիւթական պայմաններու հարկադրանքին տակ Ետալի Կարիկեանը ստանձնեց Թերթին հրատարակութեան պատասխանատուութիւնը, իմ գործակցութեամբ՝ խմբադրութեան համար, և ապահովելով աշխատակցութիւնը Լեւոն Բաշաբեանին, Շիրվանդատէին և այլ գրողներ-



Յովսէփ Գուլումբեանն եւ Յովսէփ Ուլուխօնեան 1927-ին, Մարտէշլ:

բու: Թերթը կը պահէր Շրջանակի օրկանին հանդամանքը, երբ 1924-ի Փետրուարին Գ. րնդհանուր պատգամաւորական ժողովը⁽⁸⁾ գումարուեցաւ Փարիզի մէջ:

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ**

Այս ժողովը կը գումարուէր բացառիկ պայմաններու մէջ եւ կոչուած էր Կուսակցութեան դերը ճշդելու, այդ պայմանները նկատի առնելով:

Նախ՝ հանդէպ խորհրդայնացած Հայաստանի, որուն կաշտիւներ կայունացած էր, սկիզբի վերիվաքումներէն յետոյ: Նախորդ պատգամաւորական ժողովը, գումարուած Կ. Պոլիս,

սրաշաճն տուած էր Արտակ Դարբինեանին՝ յատուկ առաքելութեամբ մեկնելու Երևան, ուր անձնական ծանօթութիւններ ունէր Հայաստանի նոր վարիչներուն, մասնաւանդ կրթական կոմիտար Ասքանազ Մաւաւեանին հետ։ Այս կերպով կապ մը հաստատուած էր Երկրին եւ Արտասահմանի միջեւ, որոնք իրարմէ խզուած էին բարբոթին եւ երկուստեք նախապաշարուած էին իրարու հանդէպ։

Երկրորդ՝ Լոգանի գաշնադերը կնքուած էր(°) եւ հայ աղ-գային գատը ձախտուած։ Կային սակաւ շնորհամտահայ գաղթականութեան վերաբերեալ հարցեր, որոնք չէին կրնար անտարբեր թողուլ Կուսակցութիւնը։

Երրորդ՝ Կ. Պոլսոյ, Իզմիրի, ինչպէս նաեւ Կիլիկիոյ արտադրութիւն կազմուած էին նոր հայ գաղութներ, որոնք տակաւին անկազմակերպ էին իրենց մէջ եւ իրարու հետ օրկանական կապեր չունէին։ Կուսակցութիւնը պէտք է գրադէր այդ կապերը հաստատելու հարցով։

Ժողովր տեղի ունեցաւ Աւրիանթ փողոցի վրայ, Սոսիէթէ Սովանթի շէնքին մէջ, ուր Կուսակցութիւնը սենեակ մը ունէր արդէն իրբեւ Ժողովատեղի Փարիզի ակումբին եւ «Ապագայ» թերթին խմբագրութեան համար։ Ամերիկայի Շրջանակը կը ներկայացնէր փրոֆ. Մարտիրոս Անանիկեանը։ Կովկասի Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը կը ներկայացնէր Մ. Պապա-ջանեանը, Կեդրոնական Վարչութիւնէն ներկայ էին Հրաչ Երուանդը, Ա. Դարբինեանը, Վ. Թէքէեանը, Ա. Թերզիպաշեանը։ Ներկայացուցչական հանգամանքով կը մասնակցէին Արշակ Սաֆրաստեանը (Լոնտոն), Միհրդատ Միհրդատեանցը (Պրիւքսէ), Եսայի Կարիկեանը, Վ. Մարկեանը, Յովհ. Պօղոսեանը։

Առաջին ասիւն ճշգուեցաւ Կուսակցութեան վարչադիւրը հանդէպ Հայաստանի։ Այս մասին տեղի ունեցան բոռն միճարանութիւններ, նոյնիսկ բնդհարում մըն ալ՝ փրոֆ. Անանիկեանին եւ Ա. Թերզիպաշեանին միջեւ, որ կարելի է ըսել Ժողովին պահպանողական թեւը կը ներկայացնէր։ Պապաջանեանը, Ա. Դարբինեանը, Ե. Կարիկեանը եւ Միհրդատեանցը հայաստանեան վարչադիւր ջերմ կուսակիցներ էին, եւ ըստ այնմ ալ նոր Կեդրոնական Վարչութեան թեկնածուներու անունները ճշգուեցան։

Ժողովը որոշած էր որ Կուսակցութեան նոր Կեդրոնը հաստատուի Մերձասոր Արեւելքի նոր գաղութներէն մէկուն մէջ, որ կրնար կեդրոնական զիրք մը ունենայ միւս գաղութներուն համար, աշխարհագրական տեսակէտով։ Այս բմբնումով որոշուեցաւ Աթէնքը՝ իրբեւ կեդրոնաւորի։ Եւ ընտրուեցան հետեւեալները՝ Հրաչ Երուանդ, Ա. Թերզիպաշեան եւ Յովհ. Պօղոսեան՝ Փարիզէն, Միհրան Սրվալլըր եւ աւրթ. Տիգրան Էնֆիլճեան, որոնք արդէն Աթէնք կը գանուէին։ Փարիզէն Աթէնք երթալիք անդամները միմարում պիտի ըլլային։

Ժողովը որոշեց նաև Կուսակցութեան ղեկը միւս հայ կուսակցութեանց եւ զանազան հայկական կազմակերպութեանց հանդէպ:

Միաժամանակ ընդունուեցան ծրագիր — կանոնադրի մէջ փոփոխութիւններ, այն յօդուածներուն համար մանաւանդ, որոնք պետական կարգուսարքի հետ կապ ունէին, որոնք բլլալով որ Կուսակցութիւնը առաւելաւոր պիտի դործէր այլևս պաշտօնաբուն մէջ:

Ժողովը ազմկալից եղած էր եւ ստեղծուած՝ կարգ մը ղեկաղաղածութիւններ, որոնց հետևանքներէն մէկը եղաւ Վ. Թէքէեանին մեկուսացումը առժամեայ կերպով⁽¹⁾:

ԱԹԵՆՔԻ ԿԵԴՐՈՆԸ

Փարիզէն բնորոտած Կեդրոնի երեք անդամներս Մարտի սկիզբը ճամբայ ելանք զէպի Բիրէա, Փրանսական «Լամարթին» շոգեհատով: Կերթայինք զէպի անձանօթ միջնովայր մը, զաղթական հայութեան մէջ գործելու, գրեթէ պարտապէս քննարկով:

Այս պաշտականութիւնը եկած էր Բիւրօնին եւ Կիլիկիայէն: Աթէնքի եւ Բիրէայի պանդոկները լեցուած էին: Իւրաքանչիւր սենեակի մէջ մէկ ընտանիք: Ա. Դարբինեանին հետ հապի կրցանք երկու սենեակ գտնել Աթէնքի պանդոկներէն մէկուն մէջ, Օմանիայի հրապարակին մօտ: Հրաչ Երուսնոյր պիտի մնար Քոքինիայի զաղթականը, իր քրոջ զաւակներուն մօտ, որոնք կը ընդունէին ընկեր Կարապետ Թարխանեանին հետ, որ կը սպասէր Ամերիկա մեկնելու կարելիութեան:

Բիրէա եւ Աթէնք պիտի գտնէինք արդէն մեզի ծանօթ ընկերներ: Առաջին տաթիւ՝ ընկեր Առաքել Պետրոսեանը, որ շոգեհատային գործակալութեան գրասենեակ մը ունէր Բիրէա: Աթէնք կը գտնուէին Վահան Միրազեանը, Յարութիւն Դարբինեանը եւ Հրանտ Մամուրեանը: Միրազեանը կը ծանօնայի «Փոստալար ճայր»-ի խմբագրատունէն եւ հիմա թղթակիցն էր «Քրիշէն սոյնա մանիթր»-ի թերթին: Յարութիւն Դարբինեանը Կ. Պոլսոյ մէջ խմբագրած էր Վահան Շահրիմանին հետ «Արագած» շաբաթաթերթը:

Առաջին տաթիւ մեր պարտականութիւնն էր ծանօթանալ մեր ընկերական շրջանակին հետ: Ակումբներն ունէինք զաղթականայանքուն մէջ, ինչպէս՝ Քոքինիա, Ֆիքս, Տուրկութի եւն.: Պարբերաբար անոնց տալինք ալցելութիւններ: Յաճախ կը գրանէինք մեր ընկերները հաւաքուած իրենցմէ մէկուն խրճիթին մէջ, ոմանք ծաղապատիկ նստած պետներ, խորհերու վրայ: Անոնց



Չախէն աջ, նստած՝ վահրամ Գրիգորեան եւ Սուրէն Պարբեւեան.
 ռաֆի՝ Սուրէն Սուրէնեան եւ վահան Շահիրիման:

աղնկայութիւնը մեծ էր մեզմէ: Իրենց խնդիրները կը պարզէին
 յուզիչ վստահութեամբ մը եւ մեզմէ կ'աղնկայէին զարման իրենց
 ցաւերուն, որոնք գաղթականի ցաւեր էին:

Այս գաղթականներուն կարեւորներն էին Ֆիքս եւ Քոքի-
 նիա: Ֆիքսի մէջ ունէինք ընկեր Արամ Մարտիրոսեանը, երգչկացի,
 աղցական՝ Ոսկան Մարտիրոսեանին, արհեստով Նիսան, քաջ եւ ազ-
 ատէր երիտասարդ մը, որուն տունը կ'ընէինք մեր հաւաքոյթնե-
 րը: Այս գաղթականին մէջ էր որ ճանչցայ Համբարձում Պեր-
 պերեանը, այն տառն չառ երիտասարդ, որ կ'ուսանէր Աթէնքի
 երաժշտանոցին մէջ: Նրբ կը հանդիպէի իր գաղթականի սենեա-

կը, զբաղած կ'ըլլար ջութակի գոտովը, նօթի տետրակը փայտէ պարզ գրակալի մը վրայ հաստատած: Իսկ Քոքինիայի տկուժըրը ամէնէն բազմանգամն էր, կազմուած կիլիկեցի ընկերներէ՝ առաւելաբար: Անոնց մէջ ուշագրաւ գէժք մըն էր Սարգիս Տէր Յակոբեանը, սեցի, որ կ'ապրէր իր ծնողքին հետ: Քաջ եւ խանդավառ կուսակցական մը, որ գժրախառարար պաղահաս մահ մը ունեցաւ: Այստեղ ճանչցայ կողկառացի պատուական հայրենակից մը, Գույումճեան, որ մեզի Զեքմ համակիր էր: Միակ տկուժըն էր որ ունէր իր սրահը, «Արարատ», հոգաչէն եւ պարզ նստարաններով, ուր հանդէս – հաւաքոյթներ եւս սկսանք կազմակերպել աւելի յետոյ:

Անհրաժեշտ էր, սակայն, չարժման մէջ գնել կուսակցական գործունէութեան մեքենան: Չունէինք զբառենեակ եւ կը հաւաքւէինք Միհրան Արմաղլըին մօտ, որ կը բնակէր Ակրոսոյիս պանդոկը, իր կնոջ հետ: Տիկին Մարի Արմաղլըն, աղնուական նկարագրի տէր եւ կենցաղազէտ, մեզ առանձին կը թողուր ժողովներու համար եւ միայն կու գար մեզ պատուասիրելու թէյով մը: Ատենապետի պաշտօնը ստանձնած էր Հրաչ Երուսնալը, առնագլխի գործը ինձ յանձնուած էր, իսկ զանձապետի պաշտօնը՝ տոքթ. Էնֆիլէճեանին, որուն յաճախ կ'այցելէինք իր զարմանալուներ, Օմոնիայի հրապարակին վրայ հայ գեղարան մը, որ կ'ընդունէր իր հիւանդները հայրական հոգածութեամբ, զանոնք ոչ միայն զարմանելով յաճախ ձրի, այլ անոնց տալով նաեւ անհրաժեշտ գեղերը: Տօքթ. Էնֆիլէճեանը, իր կուսակցական գործունէութեամբ ծանօթ Իգմիրի մէջ, իր սոցիալական մօրտաքով, պատկասելի գէժք մըն էր եւ Աթէնքի գաղութին մէջ կը փայլէր բնդհանուր յարգանք, ու կարեւոր գեր մըն ալ կը կատարէր ազգային-եկեղեցական գործերու մէջ:

Տեղական խնդիրները ասանց անտեսելու, անհրաժեշտ էր կապ հաստատել Երջանակներու հետ: Մեր երկու գլխաւոր կուսանները Եղիպտոսի եւ Ամերիկայի Երջանակներն էին, որոնց աջակցութիւնը մեզի պիտի չպակսէր: Այդ աջակցութիւնը ապահովելու համար հարկ եղաւ հետզհետէ ճամբայ հանել Արտակ Դարբինեանը գէպի Գահիրէ եւ Հրաչ Երուսնալը գէպի Ամերիկա: Ինձ փնտրուեցաւ այցելութիւնը գէպի Պալէստինը:

ԱՌԱՔԵՆՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Արգարեւ, մեր Աթէնք հասնելէն ամիս մը յետոյ ճամբայ ելայ գէպի Սկանիկ, որ այդ օրերուն գործի համար հասած էր Արա Միտրեանը՝ Պիլճիքայէն: Անիկա ազնիւ աջակից մը եղաւ:

մեր գործին, իրրեւ ազգականը բնկեր Վ. Մալեղեանին: Սեւանիկի մէջ ունէինք ակումբ եւ թերթ «Ալիք» անունով, զոր կը խմբագրէր ընկեր Գառնիկ Նաւասարդեանը: «Ալիք» մեր միակ հրատարակութիւնն էր Յունաստանի մէջ:

Ես կը ճամբորդէի հայկական անցագրով, որ այն ատեն ղեռնի գորտէր: Կրցայ զիւրաւ Վիգա ստանալ Պուլկարիոյ համար, բայց ո՛չ Ռումանիոյ, ուր չկրցայ երթալ:

Մայիս ամսոյ մէջ հասայ Սոֆիա եւ անմիջապէս յարաբերութեան մտայ այս եւ ուրիշ քաղաքներու մեր ակումբներուն հետ: Եւ չնորհիւ լրացրողի հանգամանքիս, կրցայ ձրի ճամբորդութեան քարթ մը ձեռք բերել: Պուլկար իշխանութիւնները ամէնուրեք հաճոյակատար զանուեցան եւ իրրեւ օտարական սրեւէ տեղ զժուարտութեան համակրակցայ:

Օգտուելով ներկայութեան, ամէն տեղ մեր ընկերները կը կազմակերպէին ժողովներ, հաւարոյթ—բանախօսութիւններ, հանդէսներ, զաշտահանդէսներ, մանաւանդ որ ամառ էր եղանակը: Կը յիշեմ Սոֆիայի զաշտահանդէսը Բնիաթովայի մէջ, Վիթուլերան ստորոտը: Ընկերներ եւ համակիրներ կը շրջապատէին զիս սրտազին հիւրամեծարութեամբ մը, որուն յիշատակը մինչեւ հիմա անջինջ կը մնայ յիշողութեանս մէջ: Այսպէս եղաւ Փյովտիւ, Վառնա, Շումէն, Պուրկաղ, Ռուսձուք: Պուլկարիա երջանիկ երկիր մը ըլլալու բոլոր պայմանները ունէր, քաղաքական կացութեամբ կայուն, բարգաւաճ երկրագործութեամբ եւ զիւրացիական կենցաղով, արտաքին ասեւտուրի բաց նստահանդիւրանելով, ուր հաստատուած հայութիւնը խաղաղ կ'ապրէր ու բարեկեցիկ էր: Իր ազգային—մշակութային հաստատութիւններով կազմակերպուած գաղութ մը, որ չէր ցնցուած [Ա.] համաշխարհային պատերազմէն եւ կորաչրական ընդունելութիւն մը բրած էր Թրակիայէն կամ Պոլսէն եկած գաղթականութեան:

Պուլկարահայ գաղութը իր ազգային կեանքին համընթացարար մասնակցած էր մեր յեղափոխական գործունէութեան: Բոլոր հայ կուսակցութիւնները հոն ունեցած էին իրենց գործունէութեան գաշտը եւ իրենց մամուլը: Ռամկավար Ազատական կուսակցութեան միացումէն ստաջ հոն ունեցած էինք Արմենական, Գաղափարական, Միութեանական⁽¹⁾ եւ այլ անուններով գաղտնական խմբաւորումներ, որոնց պատկանողները հիմա բոլորւած էին միացեալ կուսակցութեան շուրջ: Ամբողջ հինգ ամիս, Մայիսէն—Սեպտեմբեր, պարբերական ալցելութիւններով շրջեցայ Պուլկարիան: Մեր հայաստանեան ուղղութիւնը կը խանդավառէր ամէնքը եւ կը կազմէր բանախօսութիւններուս գլխաւոր նիւթը: Օգոստոսի մէջ, իթէ չեմ սխալիր, ունեցանք Շրջանակին ակումբներուն պատգամաւորական ժողովը, Վառնայի մէջ, որ մեր լատպոյն կեդրոններէն մէկն էր, եւ ուր սկսած էինք հրա-



Պուլկարիոյ Ռ. Ա. Կ. շրջանային պատգամաւորական ժողովին առիթով, 1924-ին, վառու: Զախէն աջ, նստած՝ Միլիտոնեան, Ներսէս փափագեան եւ տիկինը, Զովի. Պօղոսեան, օրդ. փափագեան, Արմէն Շիտանեան, պատ. Շահվելեան. ոտի՝ Զ. Պօղոսեանին ետեւը՝ Արամ Սահակեան, դէպի աջ՝ Տիգրան Մարտիրոսեան եւ Մանուկեան, Սահակեանին ետեւը՝ Աւետիսեան եւ Կ. փափագեան:

տարակիւ «Լուսարձակ» չարաթաթերթը, զոր իմ մեկնումէս յետոյ չարունակեց ընկեր Տիգրան Մարտիրոսեանը, «Փարոս» առնուով:

Դժբախտաբար չեմ կրնար յիշել այն բոլոր ընկերները, որոնք ինձ աջակից եղան եւ որոնց աղբիւ հիւրասիրութիւնն ալ վաճակեցի: Կը յիշեմ միայն իրենց զործունէութեամբ ծանօթ աշուտներ, մտապայմաներու համար ներգոյսթիւն խնդրելով:

Առֆիւս. — Յակոբ Յարութիւնեան, Փալազաշեան, Տիգրան Մարտիրոսեան, Շեքերճեան (յասանկարիչ):

Փլովարիւ կամ Զիլիպէ. — Յակոբ Փափագեան:

Վառու. — Միլիտոնեան, Մանուկեան, Փափագեան եղբայրներ՝ Գասպար եւ Ներսէս, Արմէն Շիտանեան:

Պուրկուզ.— Աւետիսեան :

Ռուսնուք.— Սարաֆեան Օննիկ, Կօչկաղարեան եւ պատ-
ւելի Շահփեյեան :

Շումկէն.— Արամ Սահակեան :

Մեր կուսակցական շրջանակէն դուրս ալ հաստատած էի
ծանօթութիւններ եւ բարեկամութիւններ : Լաւ յարաբերութիւն-
ներ ունէինք հնչական շրջանակին հետ եւ հաճոյքը ունեցայ գոր-
ծակցելու Կ. Գալֆախեանին եւ «Պայքանեան մամուլ»ի խմբագիր
Յարութիւն Պօղոսեանին հետ, որ վերջին [Բ.] պատերազմի զըժ-
րախա զոհերէն մէկը եղաւ : Պուլկարիա ալցելութիւնս իմ կու-
սակցական կեանքիս հաճելի շրջաններէն մէկը կը կազմէ :

ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԳԱՂԹԸ

Աւստամբերի վերջերը Վառնայէն մեկնեցայ պուլկարական
նստով մը, «Յար փերաինանա», գէպի Բիրքա : Արաի աբախիւնով
անցայ Վասիսթէն, վերչիշելով հին ծանօթ վայրերը եւ գէմքե-
րը : Շօգեհաւր խարսխեց Ղալաթիոյ քարափին առջեւ եւ մնաց
դիշեր մը : Որքան ալ օտար նաւի մը մէջ ըլլայի, սիրտս զողի մէջ
էր հայկական անցապրիս պատճառով, զոր քննեց ստախկան մը եւ
եւ տուաւ ինձ՝ առանց զժուարթութիւն յարուցանելու : Զիս վրա-
տահեցնող ալցելութիւն մըն ալ ունեցայ նստուն վրայ : Ընկեր
Շտարշ Յակոբեանը, վանեցի եւ փառապան, որուն կարծեմ կա-
նուխէն գրած էի, եկած էր դիւ տեսնելու : Վասիսթէն հետանալէ
տառջ, վերջին տկնարի մըն ալ նետեցի գէպի Չամբրճա, որ յի-
շատակներով լեցուն էր ինձ համար, որովհետեւ երբ 1917-18 կա-
կորդի ծանր հիւանդութեան մը հետեւանքով վերադարձական
գործողութեան մը ենթարկուած էի, Փոքր Չամբրճա կոչուած
բլրակին վրայ տուն մը սպրած էի օգափոխութեան համար :
Թէշկական խնամքի եւ Չամբրճայի օգին շնորհիւ վերադարձ էի
տառջութիւնս : Այս հիւանդութիւնը, որ մահացու կրնար ըլլալ,
կը պարտիմ մեր բնաւանդին տարապրութեան հետեւանքով կրած
վշտիս եւ գոյն փրկելու համար դանդաղան պաշտօնատուներու մօտ
կատարած գիմամներուս ստիժած յոգնութեանց :

Աթէնքի մէջ գտայ բնիկ Դարբինեանը, որ վերադարձած
էր Եգիպտոսէն : Բնիկը հրաշ Երուանդը տակաւին Ամերիկա կը
գտնուէր : Քիչ յետոյ բնիկի Մ. Սրվադյան պիտի թողուր մեզ,
Ազգ. Պատուիրակութեան կողմէ իրեն յանձնուած պաշտօնը վեր-
ջացած ըլլալով : Այս կերպով, Կեդրոնական Վարչութեան պակ-
սած անդամին տեղը պիտի գրաւէր բնիկը Պետրոս Տէր Յովհան-
նէսեանը, որ փոխ-անդամ նշանակուած էր պառզամաւորական

Ժողովէն: Զարգացած եւ ազգասէր երիտասարդ մը, որ վաղաժամ մահ մը պիտի ունենար քանի մը տարի յետոյ, Նրուսողէմ:


Աթէնքի ազգային կեանքը փոթորկուած էր Նրեափոխանական Ժողովէն ներս մղուող սոյաքարներով, որոնց նշաւակ էր մանաւնդ տաաջնորդ Կարապետ Լոյսկ: Մաղլըմեանին անձը: Մենք, ինչպէս հնչակեանները, կը պաշտպանէինք զինք — անրասիր եւ կորովի եկեղեցական մըն էր: Խնդրոյ նիւթ էր համայնքին ներքին կանոնադրութիւնը կամ սահմանադրութիւնը, զոր պատրաստած էր տօքթ. Էնֆիէճեանը: Նրեափոխանական Ժողովին մէջ մեր կողմէ կարեւոր զեր մը կը կատարէր ընկեր Յարութիւն Դարբինեանը, որ փորձառութիւն ունէր ազգային-եկեղեցական խնդիրներու մէջ, նախապէս երկար տարիներ վարած բլլալով Բարեբոյի ազգային տաաջնորդարանին քարտուղարութիւնը:

Մեկ կը մասնագէր զազութիւն անասական զրութիւնը: Արտաքին օժանդակութիւնները անրատարար էին եւ արժատական զարման մը չէին կրնար կազմել: Ընդհանուր փափաք մը կար զէպի Հայաստան մեկնելու, եթէ հնարաւորութիւն մը ստեղծուէր: Այս Ժողովրդական պահանջին ընդառաջ երթալու համար, պէտք էր որ կամուրջ մը ստեղծուէր արտասահմանի եւ երկրին միջեւ: Փարսիկ մէջ ընկերներ Մ. Պապաջանեանին եւ Ե. Կարիկեանին ջանքերով ստեղծուած էր Հ.Օ.Կ.ի վարչութիւնը, որ ներդաշխ զեւանք: պարաստելու համար կ'ընէր ձեռնարկներ: Աթէնքի մէջ եւս կազմեցինք Հ.Օ.Կ.ի մասնաճիւղ մը, որուն գլուխը անցան տօքթ. Էնֆիէճեանը եւ Կարապետ Ազատեանը, մեզի համակիր պատուական հայրենակից մը: Հ.Օ.Կ.ը ճիւղաւորուեցաւ ուրիշ կեդրոններու մէջ եւս, ինչպէս՝ Սեւանիկ, Բաթրաս, Կրեւէ եւն: Այլ միջոցին Փարսի հասած էր Դանիէլ Շահվերդեանը, որուն հետ յարաբերութիւն հաստատուեցաւ եւ կազմուեցան ներդաշխ տաաջին ցանկերը, Աթէնքի եւ Սեւանիկի շրջաններէն: Խանդավառութիւնը մեծ էր զազմական հայութեան մէջ, եւ տօքթ. Էնֆիէճեանին գտնուած զեղարանը զարձած էր ներդաշխ զրասեանակ: Քանի մը ամիս յետոյ տաաջին կարաւանները պիտի մեկնէին զէպի Հայաստան, յունական չափեւաններով: Կը յիշեմ այս զազմականներէն ամբիւն-զարահասարցի մասափաճառ Յովհաննէսը, որ քանիցս եկած էր մօտս, թախանձադին խնդրելով որ տաաջին կարաւանին մաս կազմէ: Թրքաբախտ էր, բայց այնիւ ու ազգասէր հայ: 1930ին, երբ Նրեան կը գտնուէր, անակնկալ ունեցաւ իր աչքելութիւնը ընդունելու Հ.Օ.Կ.ի զրասեանակին մէջ: Մասափաճառ թրքաբախտ Յովհաննէսը զարձած էր հայաբախտ շինարար վարպետ: Ուրախ էր եւ երջանիկ: Եւ ալ՝ իրեն հետ:

«ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեր Աթէնք ժամանումէն յետոյ, անհրաժեշտ պահանջը կը զգայինք թերթի մը, որ մեր փրօփականտին միջոցը ըլլար ևւ մեր գործունէութեան տեղեկատուն: Սեւանիկի «Այեք»ը այդ պահանջը մասամբ կը լրացնէր. բայց Աթէնքի կեդրոնին մէջ մեր ձայնը լսելի չէր ըլլար: Այս պատճառով որոշեցինք ձեռնարկել օրաթերթի մը հրատարակութեան, «Արարատ» անունով: Խրմբազրական մարմնի անդամներն էինք Հրանդ Մամուրեանը, Յարութիւն Դարբինեանը, Վահան Միրազեանը ևւ ևւ: Թերթը լոյս տեսաւ, որքան կը յիշեմ, 1925 Յունուար 1ին: Արդէն գոյութիւն ունէր զաշնակցական օրաթերթ մը, «Նոր օր», որ կը հրատարակուէր Անտոն Դադէլին ևւ Գ. Լազեանին կողմէ: Ազգաւորական մը չէր կրնար երկու օրաթերթ ապրեցնել ևւ դանուեցանք նիւթական դժուարութիւններու առջև, որոնց կրցանք տոկալ հինգ-ամիս: Եւ Մայիսի վերջերը ստիպուեցանք զապրեցնել թերթը:

Այս ձախողանքը խորացէս ազդեց վրաս: Մեր նիւթական բերք ծանր էր ևւ պէտք էր «թերթեցնել» մեր նաւը: Եւ «Ել վրձակն Յովնանու»: Որոշեցի հրաժարիլ պաշտօնէս ևւ վերադառնալ Փարիզ:



«Արարատ»ի խմբագրական կազմը 1925-ին: Չաիէն աջ՝ Յարութիւն Դարբինեան, Հրանդ Մամուրեան, Յովհ. Պօղոսեան, Վահան Միրազեան:

Յաջորդ տարին, 1926ի դարնան, պիտի ունենայինք մեր պատգամաւորական ժողովը Փարիզ, ուր հասած էին նաեւ քնիւրներ, Հրաչ Երուսնդէ եւ Արտակ Գարրինեանը: Եւ փակելով Աթէնքի մեր գործունէութեան շրջանը, Կեղրոնական Վարչութիւնը պիտի կազմուէր Փարիզի մէջ, այս անգամ առանց իմ մասնակցութեան:

Ասիկա ինձ համար չեղաւ մեկուսացում մը, որովհետեւ «Ապագայ» շարաթաթերթը, Լոօրեայի վերածուելով, դարձած էր Կեղրոնի օրկան, Ա. Գարրինեանին խմբադրութեամբ: Շարունակեցի իմ աշխատակցութիւնս այս եւ մեր միւս թերթերուն, ի մասնաւորի «Պայքար»ին: Կը դրապէի միաժամանակ անձնական գործով, ապրուստս ձարելու համար: Այս կարգէն ըլլալով 1926ին հաստատեցի տղարանական փոքր գործ մը եւ ձեռնարկեցի «Արագած» կիսամսեայ զրական եւ զեղարուեստական հանդէսին հրատարակութեան, ապահովելով աշխատակցութիւնը Կարէն Միքայէլեանին, որ ալ ժամանակ մասնաւոր առաքելութեամբ կը գտնուէր Փարիզ, Արամ Երեմեանին եւ ալ զրոյներու: Չեռնարկեցի նաեւ Ա. Երեմեանին «Հայաստանի նկարիչները սրմանակ» գործին տպագրութեան, որ նիւթական ծանր բեռ մը եղաւ ինձ համար եւ պատճառ դարձաւ որ վերջ տամ «Արագած»ին հրատարակութեան, տարի մը առկայէ յետոյ, եւ հաշուեյարգարի ենթաբեկմ տպագրական գործս:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՍ

1925ին Փարիզ հասած էին Հայաստանի Օգնութեան Կոմիտէի (Հ. Օ. Կ.) Կեղրոնական Վարչութեան եւ Պետական Կարմիր Խաչի պատուիրակութիւնները, որոնց մաս կը կազմէին Գրիգոր Վարդանեանը, Կարէն Միքայէլեանը եւ բժիշկ Սպանդարտ Կամսարականը: Անոնք շրջեցան Ֆրանսա եւ զանազան հայ գաղութներ, մինչեւ Ամերիկա: Ասիկա եղաւ առաջին եւ կարեւոր հաղորդակցութիւնը Երկրին եւ զապթահայութեան միջեւ: Դրմբախառարար այս տարուոյ աջնան պատահեցաւ Շիրակի երկրաշարժը, որմէ ապիւնալիւրուն օգնութեան համար ձեռնարկուեցաւ հանգանակութեան մը, սկսելով Փարիզէն:

Յաջորդ տարիներուն եւս Հայաստանէն ունեցանք զանազան ալլելիութիւններ, որոնք ամբողջեցին կապը հայութեան երկու հատուածներուն միջեւ: Այսպէս է որ ալլելիած էր Փարիզ Արամայիս Երզնէկեանը, Հայաստանի երկրաշարժական նոխարարը, որուն ներկայութեամբ կատարուեցան խորհրդակցութիւններ Հայաստանի երկրաշարժական զբաժանտան համար բաժնեթուղթերու

արձանագրութեան մասին: Այս ձեռնարկին գլխաւոր ջատագուին էր Յսայի Կարիկեանը, որ գէպի Հայաստան օգնութեան շարժումին գլուխը եղաւ. միշտ եւ անձամբ այդ շարժումին մասնակցած ըլլալու համար գնաց Երեւան, հայ որրերու համար մեքենական ստացածագործարան մը հաստատելու. նպատակով՝ իր գրամով: Կարիկեանը մնաց հոն տարի մը եւ յուսախար վերադարձաւ՝ չըկարենալով շարունակել իր ձեռնարկած գործը, որ յետոյ ընդարձակուեցաւ. պետութեան կողմէ:

Միաժամանակ արտասահմանի մէջ լայն ծաւալ գտած էր հայրենակցական միութիւններու կողմէ նոր աւաններու շինութեան շարժումը, որուն իր մասնակցութիւնը կը բերէր Հ. Բ. Ը. Միութիւնն ալ, որ Պօղոս Նուպար փաշային զանազան հայրենաշէն ձեռնարկներէն յետոյ, ինչպէս՝ Երեւանի ակնարուժարանը, Դարուհի Յակոբեան մայրանոցը, ձեռնարկեց Նուպարաշէն աւանին շինութեան: Ռամկավար ազատական մամուլը, մասնաւորապէս Ամէրիկայի մէջ, իր փրօփականաւ լայն միջոցները արամադրած էր այս գործին, եւ 1929ին «Պայքար»ը հրապարակ նետած էր հանգանակութիւն մը, Երեւանի մէջ Գիւղատնտեսական վարժարան մը հիմնելու համար: Արդարեւ, այս նպատակով հանգանակուեցաւ. տաս հազար տուար եւ Մ. Պապաջանեանին ազդիւն հոգին փրայ կառուցուեցաւ այդ վարժարանը:

Հայաստանի հանդէպ ստեղծուած այս հայրենասիրական հետաքրքրութեան զոտնացում տալու համար, «Պայքար»ի խմբագրութիւնը ինձ առաջարկեց որ իրրեւ իր թղթակիցը Հայաստան ալցելով եւ որքան կարելի է առատ ու վաւերական տեղեկութիւններ հաւաքեմ: Այս առաջարկը եղաւ ինձ 1930 Յունիսին: Անկէ առաջ Հայաստան ալցելով եւ ինձ ընկերներ Արտակ Դարբինեանը, Հրաչ Երուանդը եւ Ա. Թերզիպաշեանը, Կուսակցութեան կողմէ յատուկ առաքելութեամբ ⁽¹³⁾: Սիրով ընդատաջ գացի այս առաջարկին եւ հակառակ որ կինս վերարոժական ծանր գործողութեան մը ենթարկուած էր եւ զեռ անկողնոյ կը ծառայէր, Օգոստոսի մէջ ճամբայ ելայ գէպի Երեւան, Մոսկուայի ճամբով եւ երկաթուղիով, Վիգայի համար զանազան ձեւակերպութիւններ յրացնելէ յետոյ: Այն շրջանին զիւրին չէր այս ճամբորդութիւնը: Թէեւ. Խորհրդային Միութիւն ալցելողներու համար արդէն գոյութիւն ունէր ինքնաշարժ, բայց ես պիտի երթայի իրրեւ անհատ ալցելու եւ թերթի թղթակից: Բարեբախտաբար, ծանօթութիւնները, զորս հաստատած էի Փարիզ ալցելով Հայաստանի դանազան վարիչներուն կամ ներկայացուցիչներուն հետ, իմ ճամբորդութիւնս մեծապէս զիւրացուցին եւ ինձ հանդէպ յայտնուեցաւ բացառիկ համակրանք ու վստահութիւն, որոնց չորհիւ կըրցայ մնայ երկու ամիս Հայաստանի մէջ, ալցելել բազմաթիւ շրջաններ, նօթագրել թղթակիցի մը համար անհրաժեշտ տեղեկու-

Թիւններ եւ վերադարձիս անոնց տալ լաշին հրատարակութիւն, «Պայքար»ի մէջ յօդուածաշարքով մը, որ երկու հատորներու մէջ պիտի ամփոփուէր, առաջինը՝ «Երկու ամիս Հայաստանի մէջ» անունով⁽¹⁾, երկրորդը՝ «Վերաշինուող Հայաստանը»: Այս երկրորդը կարելի չեղաւ հրատարակել 1930ի Ամերիկայի անտեսական տապալակին պատճառով: Իմ Հայաստան ճամբորդութեանս տպաւորութիւնները «Արեւ»ին եւ մեր միւս թերթերուն մէջ առաւել կամ նուազ ընդարձակ կերպով արտաստուած ըլլալով, չեմ ուզեր հոս անոնց կրկնութիւնը ընել: Միայն պարտք ունիմ յայտնելու թէ Հ. Օ. Կ.ի Գլխաւոր Վարչութեան նախագահ Գրիգոր Վարդանեանին, Կարէն Միքայէլեանին եւ Հայաստանի Պետական Կարմիր Խաչի վարչութեան նախագահ Բժիշկ Սպանդարտ Կամսարականին մասնաւոր աջակցութիւնը վայելեցի իմ առաքելութիւնս գլուխ հանելու համար:

Նախ կար ընակարանի հարցը: Այն տան Երեւան ունէր միայն մէկ պանդոկ, Արովեանի վրայ, որու գէմ՝ կը գտնուէր Հ. Օ. Կ.ի Գլխաւոր Վարչութեան գրասենեակը: Եւ պանդոկին մէջ տեղ չկար, որովհետեւ անոր սենեակները յատկացուած էին ոչ միայն ճամբորդներու, այլեւ տեղական ընակիչներուն: Օրինակ՝ այդ սենեակներէն մէկը յատկացուած էր Գուրգէն Մահարիին: Գրիգոր Վարդանեանը կարգադրեց որ ընակիմ Յովհ. Յակոբեանին տան մէջ, որ չինուած էր Հ. Օ. Կ.ի կողմէ, Փրանսահայ գաղութին օժանդակութեամբ, մտաւորականներու յատկացուելու համար: Հոս էր, օրինակ, որ կը ընակէին Դերենիկ Դեմիրճեանը եւ Նշան Մակինցը, Պետ-հրատի տնօրէնը: Այս տան գետնայարկին մէջ ընակարան մը տրուած էր նաեւ ընկեր Գառնիկ Նաւասարդեանին, «Ալիք»ի նախկին խմբագիր, որ Հայաստան ներգաղթելէ յետոյ մարզական ուսուցիչի պաշտօնին կոչուած էր, իրրեւ նախկին զինուորական: Պէտք է ըսեմ թէ ընկեր Յակոբեանը եւ իր ազնիւ տիկինը երկու ամիս զիս հիւրասիրեցին եւ օրեւէ նեղութիւն չկրեցի ապրուստի կողմէ, որպէս թէ ընտանիքին մէկ անդամը ըլլայի: Հ.Օ.Կ.ի այս տունին մօտ էր «Պայքար»ին կողմէ չինուած Գիւղատնտեսական վարժարանը, համալսարանական թաղին մէջ:

Սակայն առանց Հայաստանի վարչապետ Սահակ Տէր Գաբրիէլեանին եւ Համայնապար Կուսակցութեան առաջին քարտուղար Ազատի Խանճեանին համակրութեան ու մասնաւոր արտօնութեան՝ այդ առաքելութիւնս պիտի չկարենար տալ այն արդիւնքը, զոր կրցայ ձեռք բերել: Որովհետեւ իմ թղթակիցի հանդամանքիս առընթեր ունէի կուսակցականի հանդամանքը, եւ իմ վրայ պարտք դրուած էր նաեւ որ երկրին վարիչները լուսարանեմ մեր կուսակցութեան ուղղութեան ու գործունէութեան մասին, ինչպէս նաեւ պիտի լուսարանուէի, փոխադարձաբար, երկրի վարիչներուն տրամադրութեանց եւ կարծիքին մասին՝ մեր ուղղութեան ու

գործունէութեան վերաբերմամբ: Այս մարզի վրայ մասնաւորաբար չառ կարեւոր եղան Ազասի Խանճեանին հետ իմ տեսակցութիւններս, որոնք սկիզբը պաշտօնական հանդամանք մը ունեցան, իսկ չհասցնելով դարձան մտերմական, փոխադարձ համակրանքի եւ փառհասութեան միջնորդութիւն մը մէջ: Արդարեւ, Ազասի Խանճեանը նախ զիս ընդունեց իր պաշտօնատան մէջ, Չեկայի պետ Օթեանին ներկայութեամբ: Իսկ յետոյ զիս ընդունեց մասնաւոր, պիտի ըսէի՝ խորհրդապահական ժամագրութեամբ՝ իր քնակարանին մէջ, իրիկուն մը ուշ առէն, ուր մօտ երեք ժամ ըրինք գաղութահայութեան վերաբերեալ բոլոր խնդիրներուն քննութիւնը եւ այդ առնչութեամբ պարզեցի մեր Կուսակցութեան վերապահութեամբ դերը: Այն առէն մեզի համար զժողովրդականացի էր որ մեր Կուսակցութիւնը հայաստանեան ուղղութիւն եւ գործունէութիւն մը ընդգրկած ու անոր գրական փաստերը առած ըլլալով հանդերձ, միեւնոյն գծի վրայ կը գրուէր՝ իրրեւ պոթութեան կուսակցութիւն՝ հակահայաստանեան կազմակերպութեանց հետ եւ նշաւակ կ'ըլլար պաշտօնական յայտարարութիւններով կամ մամուլով միեւնոյն քննադատութեանց ու յարձակումներու: Իմ ջանքս եղաւ համոզել թէ անոնք կը տկարացնէին մեր զիրքը եւ մեր գործակիցներուն ու համակիրներուն մէջ գեղահոգութիւն առաջ բերելով՝ անոնց ճիգերը կը ջլատէին: Ասկէ կը տուէր Հայաստանի օժանդակութեան գործն ալ: Առանց յաւակնելու արմատապէս բարեփոխած ըլլալ մեր մասին գոյութիւն ունեցող համոզումները, կըրնամ հաւատարմութիւն մասնաւորապէս Ազասի Խանճեանը նոր ու չափաւոր ուղղութիւն մը տուաւ այդ քննադատութեանց, եւ յարձակումներն ալ որոշ չափով մեղմացան: Այս առիթներով անձամբ հաստատեցի Հայաստանի վարիչներուն՝ մասնաւորապէս Սահակ Տէր Գարրիէլեանին եւ Ազասի Խանճեանին՝ հայրենասիրութիւնը եւ անկեղծ ու խոր հայկական զգացումները, որոնց մասին արդէն սրեւէ կասկած չունէինք:

Հայաստան այցելութիւնս ոչ միայն իմ կուսակցական գործունէութեան, այլեւ իմ կեանքիս համար եղաւ անկիւնաքար մը: Այն երկու ամիսները, որ անցուցի հին, կազմեցին ինձ համար հոգեկան վայելքի եւ կազմուրումի շրջան մը, ամբապնդեցին իմ մէջ՝ սերը հայ երկրին, հաւատքը անոր ապագային, ինչպէս նաեւ համոզումը Կուսակցութեան ընդգրկած քաղաքական ուղղութեան սպասարարական հանգամանքին հանդէպ: Ատիկա կը պարտիմ «Պայքար»ին խմբագրութեան, մասնաւորապէս ընկեր Արմենակ Նազարին եւ ընկեր Հրանդ Քեպապճեանին, որ 1929ի մեր ընդհանուր պատգամաւորական ժողովին մասնակցած էր Փարիզի մէջ, իրրեւ Ամերիկայի Շրջանակի պատգամաւոր, եւ այդ առթիւ իրարու կապուած էինք սերտ բարեկամութեամբ ու ինք ալ ուժ տուած էր Հայաստան այցելութիւնս ծրագրելու: Դժբախտաբար



Հրանդ Քեպապեան, 1929-ին:

Հ. Քեպապեանը վաղաճառ մահ մը ունեցաւ եւ իրմով կորսնցուցինք շատ երկրաստարդ ու թանկագին յատկութիւններով օժտուած ընկեր մը:

Հայաստանէն վերադարձիւ մեր Փարիզի ակումբը կողմա-կերպեց բանախօսութիւն մը Սոսիէթէ Սափանթի սրահին մէջ, Վ. Թէքէեանին նախադասութեամբ: Տուի իմ առաջին տպասրութիւններս, որոնք խանդավառիչ էին: Յետոյ շրջան մը բքի հայաշատ քաղաքներուն մէջ՝ առաջարկութեամբ Հ. Օ. Կ. ի վարչութեան, որուն կ'անդամակցէի:

«ԱՐԵՒ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԱ ՇՐՋԱՆԸ

1931ի ամառը տեղի ունեցած մեր ընդհանուր պատգամաւորական ժողովը⁽¹⁵⁾, Փարիզի մէջ, զիս մերընտրեց անդամ Կեդրոնական Վարչութեան: Այդ ժողովին ներկայ էր ընկեր Էօփէն Բարապեանը, եզրպատուէն: Չեմ յիշեր թէ այդ առթիւ խնդրոյ առարկայ եղա՞ւ «Արեւ»ին խմբադրութեան հարցը, որովհետեւ ընկեր Յակոբ Փափազեանը, որ կը վարէր «Արեւ»ին խմբադրապետի պաշտօնը՝ ընկեր Յովհ. Յակոբեանին Հայաստան մեկնումէն յետոյ, ինք ալ բնօրինակ մեկնած էր Հայաստան եւ այդ պաշտօնը առժամայէս կը վարէր ընկեր Օննիկ Մահաւեստանը: Ամէն պարագայի, 1932ի սկիզբը ինձ տաճարի ուղեցաւ Էրթալ եզրպատու, «Արեւ»ին պարծը տասնօթիս համար: Եւ ծանօթ չէի Շրջանակին, թէ եւ Գահիրէ եւ Ալեքսանդրիա հինէն ծանօթ ընկերներ ունէի:



Ռ.Ա.Կ. եզրպատուի Շրջանակի Ա. պատգամաւորականի մասնակիցները, Գահիրէ, 1924 Յունուար 8: Զախէն աջ, Ա. շարք՝ Գ. Գըլընեան, Լ. Կոկանեան, Փ. Պալուցի, Կ. Պողոսեան, Ս. Թիւրապեան, Զ. Գեշիշեան, Հ. Փիլիկեան. Բ. շարք՝ Յ. Սանտալեան, Թ. Սեւեփեան, Խ. Գուրեան, Ա. Պետրոսեան, Յ. Փափազեան, Յ. Յովակիմեան. Գ. շարք՝ Թ. Պարոնեան, Թ. Սեւօնեան, Գ. Կանանեան, Ս. Բարբաղեան, Ա. Անեմեան, Ա. Ամիրաջեան, տոբք. Տէր Մարգարեան, Հ. Տիլեկեան, Գ. Գարբինեան, Մլեհ, Յ. Գազանեան, Մ. Պալիկեան, Կ. Մկրտիչեան, Յ. Գաբրիելեան, Մ. Բրուտեան, Գ. Գազաբեան:

ինչպէս՝ Շաւարշ Սեւոյճեանը, որ 1921ին անդամակցած էր Փա-
րիզի մեր ակումբին, Լեւոն Աճեմեանը, Պետրոս Տեփոյեանը, Լե-
ւոն Մկրտիչեանը: Այս վերջնայն նամակ մը գրեցի և իր կարծիքը
ուղեցի: Լ. Մկրտիչեանը չքաջալիւրեց զիս, որովհետեւ թերթը
նիւթական նեղութեան մէջ էր: Այս խոկ պատճառով ուղեցի
ստանձնել այդ գործը, որքան ալ զայն ուժերէս վեր նկատած ըլ-
լայի:

1932 Մարտի սկիզբը բնտանեօք ճամբայ ելանք դէպի Ա-
դրբայդ՝ Գաշիւրէի կայարանին մէջ մեզ կը սպասէին Կու-
սակցութեան Շրջանային Վարչութեան և «Արև»-ի խմբագրու-
թեան անդամներ ու ընկերներ: Ողջագլուխեցանք անոնց հետ,
որոնցմէ ոմանք արդէն ծանօթ էին ինձ: Ընկեր Լեւոն Կոկանեանը
իր կառքով մեզ աստղնորդեց էմատէտտին փողոցին վրայ պոս-
դով մը, ուր քանի մը օր մնայէ յետոյ տեղաւորուեցանք Հելիոս-
պոլտոյ մէջ նոր էլինստ՝ տուն մը, անհրաժեշտ կահ-կարասիքը
լրացնելէ յետոյ:

Առաջին օրէն բացառիկ համակրանք և հոգածութիւն
գտանք մեր բոլոր ընկերներուն մօտ: Ի մասնաւորի կը յիշեմ տէր
և տիկին Կոկանեաններուն սրտազին հիւրասիրութիւնը առաջին
օրերուն: Եզրպատս մեր բնակութեան ընթացքին երբեք ինքզինք-
նիս չզգացինք միեմակ կամ օտար: Ընտանեկան-բարեկամական
յարաբերութիւններ հաստատեցինք շուտով, մանաւանդ ընկեր-
ներ Զարգարեանին, Ն. Գէորգեանին, Պ. Տեփոյեանին, Լ. Աճեմ-
եանին հետ: Մօտիկ էինք և գրացի Հելիոպոլսոյ մեր ընկերներէն
տէր և տիկին Տիգրան Մերճանեաններուն և Յովնան Յովհաննէս-
եանին, ուսուցիչ Նուպարեան վարժարանի: Ընկեր Կոկանեանը
յաճախ կ'ընկերանար ինձ իր կառքով, Հելիոպոլսէն Գաշիւրէ եր-
թեւեկի համար, և զիս երբեք առանձին չէր թողուր: Իր և տիկին
Կոկանեանին ազնուասիրտ ու եզրաչրական վերաբերումը երբեք
չեմ մոռնար:

Առաջին ամթիւ տղեկացած էի թերթին նիւթական կացու-
թեան, որ փայլուն չէր: Ամսական բաց մը կար և պարտք մը,
որ հեղհեղէտ ատելոցած էր: Անհրաժեշտ էր անմիջական դարձան
մը: Եւ ունեցանք առաջին ժողով մը ընկեր Արամ Սարափեանին
բնակարանին մէջ: Պէտք էր տւելոյն թերթին հասցեթէրը և
զեղչել անոր ծախքերը՝ ինսպոյութեան համար: Ու առաջին ամ-
թիւ Ժողովի մասնակցող ընկերները իրենց մէջ հանգանակեցին
գումար մը՝ անհրաժեշտ վճարումները զիմակալելու համար:
Պատրաստեցինք խնայողական պիտճէ մը: Իմ պարտականու-
թիւնս համարեցի մասնակցել ընկերներու ցոյց տուած զոհողու-
թեան, առաջարկելով որ խմբագրատեղի թոշակը՝ ամսական 25
ոսիկ՝ զեղչուի 15ի, օգնական խմբագրի կամ վարչական պաշ-
տօնեաներու թոշակն ալ՝ նոյն համեմատութեամբ: Այս կարգադ-



Ալեքսանդրիա. Տիգրան երկարի սրահին մէջ, 1932-ին: Չախէն աջ, նստած՝ Լեւոն Անեմեան, Արամ Սարափեան. Պետրոս Տեփոյեան, Լեւոն Կուկանեան, Յովի. Պօղոսեան, Վահան Զարդարեան, Էօծէն Բաբադեան. Շաւարշ Խմբրդեան, Օննիկ Իշխմեան, Փոլ Քեշիշեան. ուսի՝ Գրիգոր Նիկողոսեան, Դուրգէն եկարեան, Յովնան Յովհաննէսեան, Մեսրոպ Դույունեան, Յակոբ Արամեան, Նուպար Գէորգեան, Սահակ Թիւրապեան. Շաւարշ Սեւոյեան, Դաւիթիկ Սվազեան, Վարդգէս Դարաւաշեան, Գրիգոր Զազրեան, Տիգրան Ալեքսանեան եւ. (?) :

բութիւնը տնտեսայ տնտեսիկայ մը եղաւ թերթին պաշտօնեաներուն համար, որոնք չէին սպասեր նման «նուէր»ի մը նոր խմբադրայեալին կողմէ: Այդ պատճառով այլ բնկերներ Օ. Մահաեսեանը եւ Մ. Նաթանեանը հրաժարեցան իրենց պաշտօնէն. բայց անպաշտօն չմնացին, որովհետեւ բնկեր Մահաեսեանը քիչ յետոյ պիտի մեկնէր Կիպրոս, Մեղիգոնեան հաստատութեան մէջ պաշտօնով, իսկ Մ. Նաթանեանը՝ Պէլլուսի, Հ.Բ.Ը. Միութեան կողմէ կրթական քննիչի պաշտօնով:

Այս մեկնումներով եւ կը մնայի տասնէին՝ թերթին խմբադրական եւ վարչական գործերուն համար, իրբեւ միակ օգնական տնտեսայով բնկեր Վ. Զէյթունցեանը, որ թերթին առաջումը եւ զանձումը կը կառարէր: Ամբողջ մեկ ամիս այս գործը տարի մինակա, տասերեայոյն ջանքս թափելով, մինչեւ որ պաշտօնի կուչեցինք երկու երիտասարդ եւ արժէքաւոր բնկերներ. — Յակոբ


Արամեանը, որ իրաւաբանական ուսանող էր, իրրեւ խմբադրի օգնական, եւ Վարդգէս Գարտաշեանը՝ իրրեւ վարչական պաշտօնեայ: Շնորհիւ այս կարգադրութեանց, թերթին պիւտճէն հաւասարակչութեայ:

Այս արդիւնքը ձեռք բերելու համար արդարութիւն է յիշել անունները մեր ընկերներուն, որոնք իրենց նիւթական օժանդակութիւնը չխնայեցին թերթին համար եւ ինձ զօրավիյ եղան.— Գահիրէի մէջ՝ ընկերներ Խօթէն Բարադեանը, Լեւոն Կոկանեանը, Շաւարշ Սեւթեքեանը, Արամ Սարաֆեանը, Տիգրան Մերձանեանը, Ն. Գէորգեանը, Փայլակ Պալունին, Յակոբճան Պոնճուզեանը, որ յետոյ կտակ մըն ալ պիտի բնէր ի նպաստ թերթին, Տիգրան Հաճընեանը, Մեսրոպ Գուլումճեանը եւն.: Աղեքսանդրիոյ մէջ՝ ընկերներ Ծ. Իմերզեանը, Աշոտ Գասապեանը, Տիգրան Ալեքսանեանը, Միհրան Թոզաթլեանը, Մելքոն Գասապեանը, որ «Արեւ»ի զործակալն էր, փաստարան Միհրան Թեյեանը, որու շնորհիւ կը վաճելէինք նաեւ Արմենակ պէյ Կամսարականին համակրանքը եւ օժանդակութիւնը:

Նիւթական օժանդակութեանց չափ թանկալին էր ինձ համար թերթին աշխատակիցներուն բարոյական օժանդակութիւնը: Գահիրէ հասնելուս ուրախութիւնը ունեցայ վերադառնալու հին մտաւորական ընկերներ.— Վահան Զարգարեան, Արշակ Ալպոյաճեան, Պետրոս Տեփօյեան, Լեւոն Աճեմեան, Ալեքսանդր Սարաֆեան: Զարգարեանին զրաւամտատունը մօտ էր խմբադրատան: Յաճախ կ'երթայի իր մօտ եւ կ'օգտուէի իր խորհուրդներէն եւ հաղուստիւս գիրքերէն, որոնց պէտք կ'ունենայի իմ յօդուածներուս համար: Այս աշխատակիցները յաճախ կ'աչցելէին խմբադրատուն: Անոնց վրայ աւելցաւ նաեւ Գրիգոր Համբրիկեանը, երբ Պենհայի կայարանէն, ուր կ'աշխատէր, փոխադրուեցաւ: Գահիրէ՝ պաշտօնով: Եւ երբ խմբադրական աշխատանքը լրացած ըլլար, միասին կ'երթայինք մօտակայ սրճարան մը՝ պաւաթ մը պարկուր առնելու եւ մեր յօդուածիւնները մոտնալու համար: Թերթին աշխատակիցները նաեւ խորհրդականներ էին ինձ համար:

Իրրեւ աշխատակից ունեցանք յետոյ Ոսկան Մարտիկեանը, որ Երուսաղէմի հայոց պատրիարքարանին եկեմատական կաջութիւնը կարգի գնելէ յետոյ եկած էր հաստատուիլ Գահիրէ: Իրեն հետ ծանօթութիւնս հին էր, բայց ինձ համար անսկնկալ մը եղաւ, երբ սկսաւ գրել կամ թարգմանել ազգային-պատմական նիւթերու վրայ յօդուածներ, զորս կը բերէր խմբադրատուն: Անիկա կը մասնակցէր նաեւ Գեղարուեստաեիրաց սրահին մէջ կադմակերպուած: մեր հաւաքայթներուն՝ իր բանախօսութիւններով:

Աղեքսանդրիոյ մէջ եւս ունէինք աշխատակիցներ, ինչպէս՝ Միրայէլ Կիրճեանը, տիկին Վիքթորիա Աբարունին, Ստեփան Շահպաղը եւ Յակոբ Նալբանդեանը, անօրէն Պօպսեան փարժա-



Գահիրեյի Գեղարուեստապիրաց սրահին մեջ Ռ.Ա.Կ.ի
երիտասարդաց միությունն լույսաեղանկն տեսարան մը:

բանի: Եւ երբ պարբերաբար կ'ելլէի Աղեքսանդրիւս, հաճոյք եւ պարտականութիւն կը զգայի անոնց հետ հանդիպումներ ունենալ:

Բացի ընկերական և աշխատակիցներու շրջանակէն՝ թերթին չուրջը ունէինք համակիրներու շրջանակ մըն ալ, թերթի ընթերցողներուն մէջ։ Գահիրէի մեր համակիրներուն զուխը կրթնամ դնել Բիւզանդ. Թէքէեանը և «Փարիզիւնա»-ի խումբը, կամ հետաքայներու շրջանակը։ «Փարիզիւնա» զարեջատունը հայկական կեդրոն մըն էր, տեսակ մը ազգային տկոմը, ուր երբեմն խմբովին կ'երթայինք մեր ժողովներէն կամ հաւաքոյթներէն յետոյ ու կը բոլորուէինք սեղաններու շուրջ, մտերմիկ և զրեթէ բնասանկան մթնոլորտի մը մէջ։ Այդ սեղաններուն կը հսկէր Բիւզանդ. Թէքէեանը, իր բարձր հասակով և համոյակատար վարունակարարով։ Մեր համակիրները բազմաթիւ. էին Ադրբայճանցիւն, մէջ ևս։ Անոնք կը բերէին իրենց մասնակցութիւնը թերթին օժանդակու թեան և կը լեցնէին մեր հանդէս-հաւաքոյթի սրահները։ Անոնց կը պարտինք մեր յաջողութիւնը, երբ՝ ըլլա՛յ Գահիրէ, ըլլա՛յ Ադրբայճանցիւն սկսանք կազմակերպել «Արեւ»-ի տարեկան պարահանդէսները։ Թերթը կ'ապրէր նիւթապէս և բարոյապէս բարգաւաճ վիճակի մը մէջ։

Թեև իմ աշխատանքը, որքան ալ ծանր բոլար, չէր կրնար
անտեսել տալ կուսակցական գործը, որ ամբողջովին պայտռար


կ'ընթանար: Կուսակցութիւն եւ թերթ փոխադարձ օժանդակներ էին, եւ թերթին մէջ հարկադրարար մղուող մամուլի պայքարին պատճառով կուսակցական շարքերը աւելի կը սեղմուէին անոր շուրջ: Ու ստոր ստիթները չպակսեցան: Առաջին տոթիւ նշեմ Ա. Նիկիտի գրքոյկը⁽³⁶⁾, որ Սուբիայէն ստացուած էր անձանօթի մը կողմէ եւ ուր հայ կազմակերպութեան մը կը վերադրէր Սուբիայ մէջ քաղաքական աշխատանքներ, ինչ որ արար ժողովուրդին կասկածը հրաւիրելու: Բնոյթ ունէր: Աշխատակից մը՝ Լ. Աճեմեան, որ «Արեւորդի» կը ստորագրէր, այդ գրքոյկին հեղինակութիւնը վերադրեց Ն. Ալլարաւեանին, ինչ որ սխալ մըն էր, նկատի ունենալով մանաւանդ գրքոյկին ազճատ լեզուն: Այդ սխալը ուղղել ջանալի թերթին խմբագրական սխալներէ մէջ, սակայն պատրուակը արեւած էր հակասակորդին, որ սկսաւ գիտամբաստանել իրրեւ անոր բուն հեղինակը եւ խնդիրը տարաւ մինչեւ Թեմական Ժողով...:

Սուր պայքարի ուրիշ տոթի մը կ'դաւ 1933ի Լուրպական Ծնունդի օրը Նիւ Եորքի մէջ գործուած սրբապիղծ սճիրը, որուն զոճ զնայ Դեանդ արքեպիսկ. Դուրեանը: Ոճրադործները ձերբակալուեցան եւ դատադարտուեցան. բայց զիւրին չեղաւ արդարութեան երեւան գալը:

Բուն պայքար ստեղծուած էր նաեւ Հ.Բ.Ը. Միութեան շուրջ, հակասակորդ մամուլը բնոյհանուր յարձակում մը չղթալը՝ ըլլալով այս միութեան գլխի՝ Փարիզէն Աթէնք, Պոսթմէն Պէլլուսթ եւ Գահիրէ: Այս ազդաւն կազմակերպութեան հիմնադրումէն ի վեր անոր կողքին եղած էինք միշտ եւ «Արեւ»ը անտարբեր էր կրնար մնալ եւ չստանձնել անոր պաշտպանութիւնը: Երկար խմբագրականներու շարքով մը պատասխանեցին Բարեկործանող «Քանդեկ» ուղղակիութեան՝ խմբագրականներ, որոնք առանձին գրքոյկի մը ձեւով ալ հրատարակուեցան Միութեան Գահիրէի վարչութեան ծախքով, «Պայքարը Հ.Բ.Ը. Միութեան գլխի» խորագրով⁽³⁷⁾:

Լրացրական սուր պայքարի տեղի տուաւ նաեւ Հ.Օ.Կ.ի մասնաճիւղին գործունէութիւնը Աղեքսանդրիայ մէջ: Մեր բնկերները, որոնք անդամ էին վարչութեան, հետապնդուեցան իրրեւ... «Համաշխարհ» եւ դատարանի յանձնուեցան: Անշուշտ եղիպտական դատարանը մերժեց իրենց գլխի եղած ամբաստանութիւնը եւ զանոնք ազատ արձակեց: Այս եւ այլ ստիթներով յաճախ իջած եմ Աղեքսանդրիա, երբ մանաւանդ Ժողովներ կամ զանազան հասարակիներ կ'ունենայինք:

«Համաշխարհ»ի ամբաստանութիւնը գործածուեցաւ նաեւ անձիս գլխի հակասակորդներու կողմէ, որոնք այս միջոցով կ'ուղէին գիտ հետապնդի թերթէն եւ Եղիպտոսէն ալ: Ասոր իրրեւ «ապացոյց» տալը կը քշուէր իմ ալցելութիւնս Հայաստան, ուրիշ



Ռ.Ա.Կ. Եզիպտոսի Շրջանակի ժԱ. պատգամաւորականի մասնակիցները, Ադեֆանդիոս, 12 փետր. 1933: Չախէն աջ. Ա. շարֆ՝ Ս. Թիւրապեան. Տ. Ալիֆառնեան. Բ. շարֆ՝ Կ. Մկրտիչեան, Ն. Գեորգեան, մերր Շ. Սեյթմեհան, Լ. Կոկանեան, Յ. Պօլոսեան, Է. Բաբապեան, Վ. Զարդարեան. Տ. Հանրեկեան, Մ. Թուգարլեան. Գ. շարֆ՝ Մ. Գուլումեան, Մ. Գաապարեան, Լ. Անեմեան, Ա. Գաապեան, Յ. Յովհաննէոեան, փ. Պալունի:

վերադարձած էի որպէս «պոլշէիկ զործակար» մը: Անշուշտ ջրեցինք այս ամբաստանութիւնը, որուն չէին հաւատար նոյնիսկ անոր անպիսի հեղինակները: Սակայն եզիպտական իշխանութեանց մօտ եղած այս մասնաճիւղները բոլորովին ապարդիւն չմնացին, և երբ 1938ի ամառը Պէյրութի վայցած էի ստանձնելու համար «Զարթօնք»ին խմբագրութիւնը տոժամեայ կերպով, Գոհիբէ վերադարձիս համար ունեցայ զժուարտութիւններ՝ զայլթականի անցապրիս պայմանաժամին լրացած ըլլալը պատրաստելով, և վերջ ի վերջոյ թողուցի եզիպտոսը, ընտանեօք փոխադրուելու համար Պէյրութ:

1934ի ամառը Կուտակցութեան ընդհանուր պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ Փարիզի մէջ⁽¹⁸⁾: Ես ալ հոն կը գլուխուէի ամսուան մը արձակուրդով և մասնակցեցայ, ընկեր է. Բարազեանին հետ, իրրեւ պատգամաւոր Եզիպտոսի: Ամերիկայի Շրջանակը կը ներկայացնէին տոքթ. Արշակ Տէր Մարկոսեանը և

ընկեր Գ. Ս. Փափաղեանը: Ժողովը նկատի առնելով որ Գաճիրէ գարձած էր կուտակցական գործունէութեան համար կարելուր կռուան մը մանաւանդ Մերձաւոր Արեւելքի երկիրներուն համար, նոր Կեդրոնը կազմեց աշխուղ զանուղ ընկերներէ եւ կեդրոնականելին փոխադրուեցաւ Փարիզէն Գաճիրէ: Այս Կեդրոնական Վարչութեան անդամներէն Տիրան Պէյլերեանը մեռաւ քիչ յետոյ եւ յաջորդ բնդհանուր ժողովը, գումարուած 1937ին, Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրեց նաեւ ընկերներ Վ. Թէքէեանը եւ Միշրան Տամատեանը, որոնք յետոյ եկան հաստատուելի Գաճիրէ: Այս տարուայ ընթացքին կորսնցուցինք նաեւ ընկեր Յովսէփ Գույումճեանը, որ Փարիզէն հրախրուած էր իրրեւ անօրէն Հեյրապոլտոյ Նուպարեան վարժարանին եւ որ պատուատոյ մը պատճառով թոնաւորուեցաւ ու մեռաւ: Ընկեր Գույումճեանը ծանօթ էր Վանի վարժապետանոցի տեսուչի իր պաշտօնին ընտրմով 1915ի հերոսական պայքարներուն իր ընթացք մասնակցութեամբ, եւ իր մահը խոր ցաւ առթեց մեր ընկերական շրջանակին մէջ:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱ

Մեր Կեդրոնական Վարչութիւնը Գաճիրէ փոխադրուելէ յետոյ, Կուտակցութեան գործունէութիւնը ընդլայնելու համար կազմեցինք ծրագիր մը, որուն գործադրութիւնը կը կարօտէր հիմնադրամի կամ պահեստի գումարի մը: Այդ պատճառով ինձ պաշտօն արուեցաւ իրազօրի հանգամանքով ալցելի Ամերիկա: Տրուած ըլլալով այս Երջանակին ընդարձակութիւնը, կը նախատեսուէր մեկ ամսուան պայմանաժամ մը տուոր համար: 1935 Յունիսին ընտանեօք ճամբայ ելանք գէպի Փարիզ եւ ընտանեքս հոս թողելէ յետոյ Հուրէն առի «Ուաշինկթըն» չոպենուր՝ այս ճամբորդութեան համար բազում ձեւակերպութիւններ լրացնելէ յետոյ:

Ամերիկայի մեր Երջանակին տարեկան պատգամաւորական ժողովը կը գումարուէր Յունիսի սկիզբը՝ աշինքն՝ ամերիկեան անկախութեան տօնին: Յունիս 30ի իրիկունը հասայ Նիւ Եորք, երբ հակայ շէնքերով քաղաքին վրայ ամպեր կուտակուած էին եւ երկինքը մթնցած: Եոպենուր հալիւ քարափին մօտեցած, ճամբորդները սկսան վար իջնել եւ իմ կարգս չէր գար: Յետոյ տեղեկացայ թէ Երջանային Վարչութեան անդամներ եւ Նիւ Եորքի ընկերներ նաւամատայց եկած էին գիտ ընդունելու, հակառակ տեղացող անձրեւին, եւ իմ անունս ի դուր պոսացած՝ յուսալով գիտ գտնել ճամբորդներու մէջ: Երբ չոպենուր պարպուած էր եւ քանի մը յետամնաց ճամբորդներս կը սպասէինք մեկնելու, չոպենուին



«Ուաշինկերն» հատուկ վրայ, 1935-ին :

մրտյ եկան ընկերներ ձիո՞ Զանդալեանը և Տիրատուր Տիփիճեանը, հասկնալու համար թէ ինչո՞ւ չէի արածութեան վար իջնելու : Եւ տեսնել յետոյ նստապետը, ինձ հազարդեցին թէ իմ անցադրիս վիզան օրինաւոր չէր նկատուեր և ստիպուած էի մնալ էլիս Այլ լինաւ կոչուած զազթակոյտնին մէջ, մինչև որ Ուաշինկերնէն արածութիւն ստացուի որ Ամերիկա տաք կրնան :

Արդարեւ, յայտնի եղաւ թէ զազթականի անցադրիս պատճառով Գահիրէի ամերիկեան հիւպատոսարանը ինձ վիզա տալու էր Ուաշինկերնէն արածութեան յետոյ, ինչ որ չէր բրած հաճոյսկատարութեամբ, և հիմա այդ զանցատութեան զոհը կը դառնայի :

Ուրեմն այդ գիշերը անցուցի չոգենալին մէջ և հետեւեալ առտու փոխադրուեցայ ինձ նման «կասկածելի»ներու հետ էլիս Այլ լինաւ, սպասելով որ զազթակին զատարանը քննէ իւրաքանչիւրին կացութիւնը և իր վճիռը տայ : Եթէ այս վճիռը աննպաստ

ըլլար, այն միևնույն շտկենաւով որ եկած էի, պէտք էի փերա-
գտանալ Թրանսա, ինչ որ փայլուն հեռանկարներով ճամբայ ելած
մէկու մը համար անհաճոյ կացութիւն մը կը ստեղծէր:

Էլիս Ալլենտի կղկնակը Նիւ Եորքի ծովկղերէն քիչ հեռու
ցցուած ժայռ մըն էր, որու վրայ շինուած էր ընդարձակ բանալի
նման տխրատեսիլ չէնք մը, որմէ ներս կար սրահ մը, նստարան-
ներով եւ սեղաններով, ուր կը ճաշէին նաեւ մուտքի արտօնու-
թիւն սպասող եկուորները: Անոնք կ'ընդունէին այցելութիւններ
իրենց ծանօթներէն, որոնք կու գային զանոնք յուսադրելու կամ
գօտեսնելու: Եւ ալ ունեցայ այցելուներ, եւ առաջինս աթիւ՝
զրէկորայրներէն, «Նոր գիր»ի խմբագիրներ Բենիամին Նուրիկ-
եանը եւ Ալեք Գլըճեանը, որոնք եկած էին ինձ ծանօթանալու եւ
իրենց ցուր յայտնելու պատահածին համար: Եկաւ նաեւ բնիկեր
Տիքիճեանը, Շրջանային Վարչութեան կողմէ, եւ ինձ հազար-
դէց թէ արգէն ընկեր Տիգրան Սմարեանին միջոցով գիմում կա-
տարած էին Ուաշինկթըն ու կը սպասէին իմ ցամաք ելլելուս ար-
տօնութեան:

Հակառակ ատոր, պէտք եղաւ որ երկու օր սպասեմ գա-
տարանի կազմուելուն եւ վճիռին: Գիշերները անցուցի գաղթա-
կայանի սրահին շուրջ բայրուած սենեակներէն մէկուն մէջ:
Օրուան ընթացքին կը պտտէի գաղթակայանին պարտէզին մէջ:

Երբորդ օրը բնիկեր Տիքիճեանը եկաւ. զիս առաջնորդելու
գտատարանին ստջեւ, որ կը գումարուէր այս սրահին մօտիկ սենե-
ակի մը մէջ: Գտատարանի նախապահն էր սուրիացի մը, երկու
օգնականներով, ուր զիս հարցափութեց եւ ստացաւ բնիկեր Տիքի-
ճեանին վկայութիւնը՝ թէ Ամերիկա եկած եմ «Պատրար» թերթին
հրաւրով եւ անոր կողմէ պիտի վճարուէին ծախքերս, որքան ա-
սեն որ մնամ, իրբեւ անոր աշխատակիցը: Գտատարանը բարեա-
ցակամ գանուեցաւ եւ ինձ երեք ամիս Ամերիկա մնալու արտօ-
նեց, 500 տոյարի երաշխատորութեամբ մը, որ անմիջապէս վճար-
ուեցաւ եւ մեկնեցայ Էլիս Ալլենտին: Այսպէս երկար ժամեր ան-
ցուցած էի զիւելով Ազատութեան արձանը, որ շատ հոս չէր,
եւ նոյնիսկ անոր նախընթաց ընտանեկանութիւն մը...:

Նիւ Եորքի մէջ բնիկներէ Ճիմ Չանդարեանը եւ Կարապետ
Փափաղեանը զիս առաջնորդեցին պանդոկ մը, ուր գիշեր մը հան-
դիստ բրի եւ մտցայ ճամբու յոյնութիւններ ու սրանկողութիւն-
ներ: Հետեւեալ օտուտ, 3 Յուլիսին, բնիկեր Չանդարեանին հետ
օգնաւս պիտի տանէի Տիթորոյթի համար, ուր արգէն գումար-
ւած էր պատգամաւորական ժողովր: Ընկեր Օննիկ Պարոտեանը
սոցնաութիւնը ունեցած էր իր ախկնոջ հետ մեզի բնիկերակցելու
օգակալան: Եւ ստատան ժամը Գին, որքան կը յիշեմ, օգնաւ
բարձրացանք: Ասիկա առաջին օգանաւի ճամբորդութիւնս էր եւ
վերջինն ալ պիտի ըլլար: Ընկեր Ճիմին ներկայութիւնը զիս ազա-

Հովցուց ճամբորդութեանս ընթացքին, երբ օդանաւը պարբերական ցնցումներ կ'ունենար, օդի հոսանքին-կամ ամպերուն պատճառով:

Օդանաւը Պիւֆֆալօ հանդիպելէ յետոյ իջաւ կէսօրէն քիչ ետք Տիթրոյթի օդակայանը, ուրկէ ուղղուեցանք մեր Կուսակցութեան ակումբը, ուր պատգամաւոր ընկերներ հաւաքուած էին եւ վիճարանելու վրայ: Ընկեր Չանգայեանին առաջնորդութեամբ մեր մօտքը ընդունուեցաւ ծափերով եւ խանդավառիչ միջոցառում մը մէջ ողջագուրուեցանք բոլորին հետ, որ մեզի բարի գալուստ կը մաղթէին: Ժողովին կ'ատենապետէր տոքթ. Լեւոն Մուղալեանը (Շիրակոյէն): Հոն էին արդէն ինծի ծանօթ ընկեր եւ ընկերուհիներ՝ Խիկին Արաքսի Սինանեանը, զոր ճանչցած էի Պուլիարիա, Գ. Ս. Փափաղեանը, Գասպար Մոյսէսեանը, Համադասպ Բարունակեանը, Յարութիւն Պերպերեանը, Արիկ Գալֆայեանը (չեւոյ վարդապետ) եւն.:

Օրը Հինգշաբթի էր, եւ պատգամաւորական ժողովը կը դումարէր իր Զ. նիստը: Ատենապետին հրաւերով զեկոյց մը ըրի ժողովին իմ առաքելութեանս մասին, յայտնելով որ կուսակցական գործունէութեան ծրագրով մը կու գամ եւ անոր յաջողութեան համար Կեդրոնը պէտք ունի 10,000 տոլարի դումարի մը: Իմ խօսքերս ընդունուեցան ջերմ համակրանքով եւ պիւտճէի յանձնախումբին յանձնուեցաւ այս մասին որոշում մը առնելու պաշտօնը: Հետեւեալ առտուան նիստին պիւտճէի յանձնախումբը կը ընդէր իր դրական պատասխանը, որ նոյն օրն իսկ կը հետագրուէր Գահիրէ:

Ահաւասիկ ժողովին որոշումը այդ մասին (արձանագրութիւն ԺԵ. պատգամաւորական ժողովի, նիստ Ը., վերջընթեր էջ).

«Ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը.— Պատգամաւորական ժողովը կը գնահատէ Կեդրոնական վարչութեան ջանքերը եւ, լսելէ յետոյ ընկ. Յովհ. Պօղոսեանը, միաձայնութեամբ 10,000 տոլար կը քուէարկէ, Կեդրոնին կուսակցական վերակազմութեան ծրագրին իրագործման համար:»

Միեւնոյն նիստին կ'ընտրուէր Շրջանային նոր Վարչութիւնը Նիւ Եօրքի մէջ, հետեւեալ անդամներով.— Ճիմ Չանգալեան, Կար. Փափաղեան, Վահան Մինասեան, Տիրատուր Տիքիճեան, Եր. Մեսիայեան, Կ. Քելիշեան եւ Նշան Շահինեան:

Հետեւեալ օրը, Շաբաթ, ժողովը կ'ունենար իր փակման նիստը, զանազան որոշումներով եւ ուղերձներով: Այս առթիւ ժողովը կը յայտնէր իր ցաւակցութիւնը Միհրան Սըվազլըին մահուան համար:

Ժողովը վերջացաւ դաշտահանդէսով մը, ըստ սովորութեան: Տիթրոյթի ակումբին մեր պատուական ընկերները, իրենց զլուլը ունենալով իրենց ատենապետ Նահապետ Արրահամեան-

նը, ջանք չէին խնայած այս հաւաքույթը փայլուն և արդիւնաւոր բնծայելու համար: Իրիկունը բաժնուէցանք անկէ, Նիւ Եորք վերադառնալու համար:

Նիւ Եորքի մէջ նորընտիր Շրջանային Վարչութիւնը գումարեց իր նիստը իմ ներկայութեամբս, դժեկու համար աշխատանքի ծրագիր մը իրեն, միեւնոյն ատեն պատարասելու համար ալցելութիւններու ծրագիրը մեր ակումբներուն: Սակայն առաջին առթիւ նկատուեցաւ թէ այդ ալցելութիւնները անմիջապէս կարելի չեն ամառուան շրջանին մէջ, ուր մտած էինք, և պէտք էր սպասել Սեպտեմբերին, երբ կը վերսկսէր ակումբներու գործունէութիւնը: Մինչ այդ կրնայի մասնակցել դաշտահանդէսներու, որոնք կը կազմակերպուէին ամառուան ընթացքին, և առոնք առիթ մըն էին որ երթամ հոս ու հոն, ծանօթանալու ընկերներու և իմ մասնակցութիւնս բերելու այդ հանդէսներուն՝ բանախօսութիւններով, զանոնք բարոյապէս և նիւթապէս աւելի արդիւնաւոր գործնելու համար: Այդ առիթներուն սպասելով, Նիւ Եորքէն պիտի երթայի Պոսթոն, ուր էր «Պայքար»ին խմբադրութիւնը, և պիտի աշխատակցէի թերթին, ինչ որ ըրի՝ զբելով յօդւածաշարք մը մեր Կուսակցութեան միացումին առանձնիկ տմեկին ստիժով, որ զբաղւելով մըն ալ հրատարակուեցաւ ⁽¹⁹⁾:


«Պայքար»ը այդ շրջանին կը խմբադրուէր երկու հօդիւր՝ ընկերին Արմենակ Նազարին և Երուսնդ Մեսիայեանին պատասխանատուութեամբ: Աշխատանքի բաժանում մը եղած էր, Ա. Նազարին աւարով աղային բաժնի, իսկ Ե. Մեսիայեանին՝ միջազգային բաժնի խմբադրութիւններ: Սակայն այս երկուստեք զժուարտութիւններ կը սանդղէր. ամէն պարագայի, երկու խմբադիր ընկերներու վերաբերմունքը ինձ հանդէպ՝ աւելի քան եղբայրական էր:

Ուրեմն, օրուան ժամերուս մեծ մասը կ'անցնէի խմբադրատան մէջ, ուր յաճախակի ալցելութիւններ կու տային մեր ընկերները, Պոսթոնէն կամ դուրսէն: Անհամբերութեամբ կը սպասէի իրիկուան, երբ մեր ընկերները իրենց գործերէն ելած՝ ապասկըլլային և կու գային խմբադրատան, միասին դուրս ելլելու համար: Կը յիշեմ մեր այս ընկերական և մտերմական հանդիպումները ի մասնաւորի Վահրամ Գրիգորեանին, Գ. Ս. Փափաղեանին, Սարգիս Մարեղմեղեանին, Գառարար Մովսէսեանին հետ, յաճախ գերմանական գարեջրատան մը մէջ: Վահրամ Գրիգորեանը մատուցականի տիպար էր, յայտնի հոկտոր, հաւասարապէս կը խօսէր հայերէն, անգլերէն և ֆրանսերէն: Կը զրազէր ապահովադրական գործով, ինչպէս Գ. Ս. Փափաղեանը: Մարեղմեղեանը կուսակցական նուիրումի տիպար մըն էր, կը զրազէր փարագրութեամբ (գինիօկրափիւր). Գ. Մովսէսեանը ունէր հին հազուսանդէնի զօրծ մը.....:

Իմ Պոսթոնը ընտելացրեցի ինչպես Ռուսիայի Մամուլ-
 եանը, իր Փորկի եւ Պէս սեւամորթներու թատերական խումբով,
 որ տուտա քանի մը ներկայացումներ: Մամուլեանը ճանչցած էի
 Փարիզ, 1921 թուականին, երբ եկած էր իրեն ուսանող եւ Լոն-
 տոն գացած՝ հետեւելու համար անգլիական թատրոնին: Այդ առ-
 թիւ իրեն տուած էի «Ապագայ» թերթին թղթակիցի քարթ մը,
 զիւրացնելու համար իր մուտքը թատերական ներկայացումնե-
 րու: Պոսթոնի մեր ընկերներուն հետ օգտուեցանք այդ առիթէն եւ
 իրեն ի պատիւ տուինք ճաշասեղան մը մեծ սրահովներէն մէկուն
 մէջ: Ներկայ եղան Պոսթոնի քաղաքացեալ եւ կառավարիչին
 ներկայացուցիչը: Կային բազմաթիւ ամերիկացիներ եւս: Եւ շատ
 փայլուն անցաւ ճաշը, որու ընթացքին խօսք առինք Վ. Գրիգոր-
 եանը (անգլիերէն) եւ Լա (հայերէն): Խօսեցաւ նաեւ Ռ. Մամուլ-
 եանը:

Այս շրջանին կրցայ պատասխանել մեծագոյն Պոսթոնի ա-
 կումբներուն կողմէ կազմակերպուած զաշտահանող էսքերուն ներ-
 կայ ըլլալու հրաւերին.....:

Դաշտահանողներ ունեցանք նաեւ Ուսար-Փրովիտենսի եւ
 այլ քաղաքներու մէջ: Ուսարինը տեղի ունեցաւ «Վարժապետան
 սպարակ»ին մէջ: Հոն ծանօթացած էի արդէն ընկերներ ճորճ



Փրովիտենսի դաշտահանողներ: Յովի. Պոզոսեանին ձախին՝
 Մանուկ փերեցեանը. աջին՝ Նազարէր փրանեանը եւ ձիւմ Զանգալեանը:

Քելեշեանին, Մաղաք Պերպերեանին, Զաւէն Պալքարին, Նշան Տէրտէրեանին:

* * *

Սեպտեմբեր ամիսը հասած էր եւ ես պէտք է ձեռնարկէի տկումբնեւրու այցելութեան ծրագրիս գործադրութեան: Ինձ պիտի ընկերանային Շրջանային Վարչութեան անդամներ, Չանդալեանը՝ Նիւ Եօրքի շրջանին մէջ, Երուանդ Մեսիայեանը՝ Պոսթոն, իսկ Տիքիձեանը՝ միւս շրջաններ: Փրովիտենտի շրջանին մէջ մենաւորս պիտի ըլլար տօքթ. Արշակ Մարկոսեանը, որու հետ հինէն ծանօթ էի արդէն.....: Հոն պիտի հանդիպէի նաեւ ընկերներ Սմբատ Բարեջանեանին եւ Նազարէթ Փիլանեանին: Տօքթ. Բարեջանեանը ծանօթ էր ինձ Կիլիկիոյ մէջ ունեցած հայրենատիրական գործունէութեամբը.....:

Ընկեր Չանդալեանին հետ գացինք Նիւ Ճրրդի, Նիւ Եօրք, Հարթֆորտ եւ մօտակայ տկումբնեւր: Այս շրջանին մէջ կը գանուէին բազմաթիւ տիպանակերացիներ, որոնք Չանդալեանը կ'ընդունէին իրբեւ իրենց ընտանիքին մէկ անդամը: Իր բարձր հասակը, համակրելի գէմքը, զինուորականի համարձակ եւ վրձնական խօսուածքը մեծ տպաւորութիւն կը թողէին եւ իր ներկայութիւնը ինձ համար մեծ զօրավիզ մըն էր: Չանդալեանը գործի մարդ էր միանգամայն: Ամերիկեան բանակի գէնքի ընկերոջ մը հետ հաստատած էր փոքրագրութեան (ինկլէշլիք) ընդարձակ գործ մը, որուն մէջ կ'աշխատէին իրեն ծանօթ բազմաթիւ հայեր, որոնցմէ շատերու սորվեցուցած էր գործը.....:

Ընկեր Մեսիայեանին հետ այցելեցինք Պոսթոնի շրջանի տկումբնեւրը: Բոլորն ալ չեմ յիշեր, բայց ուր որ կ'երթայինք՝ կ'արտայայտուէր պերճախօսութեամբ, իմ առաքելութեանս յաջողութիւնը ապահովելու համար, եւ հանգանակութիւնը յաջող կ'երթար իր խանդավառիչ խօսքերուն արձագանգելով:

Այս այցելութիւններէս յետոյ Նիւ Եօրք վերադարձայ՝ ճամբայ ելլելու համար գէպի Ուաշինկթըն եւ Ռիչմոնտ (Վիրճինիա): Ինձ կ'ընկերանար ընկեր Թորոս Պարոնեանը, որ Կ. Պոլսէն ծանօթ էր ինձ: Ուաշինկթընի մէջ իմանք հայկական պանդոկ մը, որուն տէրը պրոսպեր հայ մըն էր՝ Խոսրով անունով, եթէ չեմ սխալիր: Հոս ունէինք քիչ թիւով ընկերներ, որոնցմէ Հասցործեանին անունը կը յիշեմ.....: Ռիչմոնտ անակնկալը պիտի ունենայի հանդիպելու ընկեր Շաւարշ Հովիտեանին, հին վաստակաւոր գործիչ մը, որ անշքացած կեանք մը կ'ապրէր, քաշուած նպարտաւճառի խանութին մէջ, զոր կը վարէր իր եղբորորդուն հետ: Ամերիկայէն մեկնումէս քիչ յետոյ իմացայ թէ գիշեր մը գող մը մտած էր խանութը, որուն ետեւի սենեակին մէջ կը բնակէր, եւ սպանած էր զինք: Իր եղբորորդին շատ չանցած մեկնեցաւ Հայաստան:

Սեպտեմբեր ամիսը վերջացած էր. վերջացած էր նաև Ամերիկա միադու. համար ինձ տրուած երեք ամսուան պայմանաժամը: Կանուխէն գծուած ծրագրի համաձայն պէտք էր այցելէի 33 քաղաքներ, Արևելքի և Միջին Արևմուտքի նահանգներուն մէջ, բայց հազիւ թէ ծրագրին կէտը զործադրուած էր: Բարեբախտաբար Ուտարի մեր ընկերներէն ձորճ Քիլեշեանը յաջողած էր այս պայմանաժամիս երկարածդումը ձեռք բերել՝ չնորհիւ Ուտարի ծերակուտականին հետ իր բարեկամութեան: Եւ կրցայ շարունակել այցելութիւններս՝ սկսելով Ուտարէն...: Ապա ընկեր Տիքիճեանին հետ անցանք Փրովիտենս..., յետոյ Ֆիլադելֆիա...:

Անկէ յետոյ պիտի այցելէինք Միլուոքի, Քլիվլենտի շըրջանները...: Քլիվլենտի մէջ պիտի հանդիպէի ընկերներ Կ. Կիւլպենկեանին, Ա. Նիկոլոսեանին և Աստիկեան Եղրայրներուն...:

Շիքախօ պիտի հանդիպէինք տաքթ. Մուշաղեանին, որուն ծանօթացած էի արդէն Տիլթոյթ...: Ծանօթացանք նաև ընկերներ Չրաքեանին ու Նորհատին հետ..., ապա նաև ծանօթ բարերար ձոն Տօնեանին, Եղկաթցի հայրենակից մը, որ տղայ հասակին մէջ հասած էր Ամերիկա և ոտքի վրայ պանծն ծախե-



Տիրատուր Տիքիճեանին հետ, Նիակարայի ջրվեժին մօտ:

լով կրցած էր հաստատել նպարալաճառի գործ մը, որ յետոյ պաղպաղակի հսկայ գործարանի մը վերածուած էր ու կը զբաղէր իր յարակից բնակարաններով ամբողջ «կղզի» մը, որուն սեփականատէրը պարճած էր Տօնեանը.....:

Ամերիկա ալցելութեան նիւթական արդիւնքը ինձ համար քաջալերիչ չէր եղած, ու ասոր պատճառներէն մէկը եթէ իմ անցադրիս դժուարութիւններն էին, ուրիշ մըն ալ՝ կարեւոր, եղանակին գէշ ընտրութիւնը, որովհետեւ արձակուրդի շրջանին պատճառով երկու թանկագին ամիսներ կորսնցուցած էի: Սակայն բարոյական արդիւնքը ինձ համար շատ կարեւոր եղած էր: Նախ՝ ճանչցած էի Նոր աշխարհը, իր նոր կենցաղով եւ ըմբռնումներով, որոնք սակայն հին սերունդին մոռցնել չէին տուած իրենց աւանդութիւններն ու սովորութիւնները, ու անպարտ մնացած էր հայկական ոգին՝ ընտանիքներու թէ բնակչութեան մէջ: Այս մօտէն ծանօթացած էի բազմաթիւ հին բնիկներու, ինչպէս՝ տոքթ. Սմբատ Բարեջանեանը, տոքթ. Մովսէս Յովսէփեանը, Սուբէն Սուբէնեանը, Սարգիս Մալէմեղեանը, Արմենակ Նազարը, Վահան Քիւրքեանը, Վահրամ Գրիգորեանը, Նազարէթ Փիւրանեանը, որոնց կեանքը եւ գործունէութիւնը կը յիշեցնէին Կուսակցութեան հերոսական շրջանները եւ կենդանի ու ներշնչող օրինակներ էին նոր սերունդին համար, որ հասակ կը նետէր անոնց քովն ի վեր:

Ինձ համար ուրիշ ազատ օրիչ երևոյթ մըն էր այն, որ ամերիկահայութիւնը, ովկիանոսով բաժնուած Հին աշխարհէն, իր հետաքրքրութիւնը կը պահէր հայութեան միւս հատուածներուն հանդէպ, ու թէեւ ունէր իր տեղական պահանջները եւ մասհոգութիւնները, անտարրեր չէր «գուրս»էն եկած կոչերու նկատմամբ ու կը ջանար զոհացում տալ ամէնուն՝ ասոնց մէկը զրկելու միտքն ի վնաս: Համերաշխութեան ոգին կը գործէր, ինչպէս գործած էր երբեմն մինչեւ մահ նուիրումի ոգին, ու բացառիկ վայելք մըն էր ինձ համար մանաւանդ՝ խօսիլ մեր նախկին կամուրջներուն կամ լեզվոնականներուն հետ, որոնք իրենց արիւնի տուրքը բերած էին երբեմն աշխարհ սիրով, որքան կը բերէին իրենց բարոյական եւ նիւթական տուրքը աշխարհ: Կուսակցութիւնը կրնար հպարտ ըլլալ անոնցմով, ինչպէս անոնք հպարտ էին Կուսակցութեամբ, որ իրենց նուիրումի զոյրոյցը եղած էր: Նոյնը կը մնար զոհողութեան ոգին, որ հիներէն կը փոխանցուէր նորերուն: Ատով կ'ապահովուէր նաեւ Կուսակցական գործունէութեան շարունակականութիւնը: Եւ այդ նպատակին համար աշխատած ըլլալու գոհունակութիւնը ունէի: Այս մտածումն իսկ կը բաւէր որ ինքզինքս բարոյապէս վարձատրուած զգայի հնգամսեայ առաքելութենէս:

Փարիզ հասնելուս դիմաւորուեցալ Հին աշխարհի հողերով:

Ճրանաայի Շրջանակին զլիաւոր հողը եղած էր միշտ «Ապագայ» թերթը, որ քանի մը տարիէ ի վեր կը հրատարակուէր իրրեւ օրաթերթ, Հրաչ Երուանդին խմբագրութեամբ: Որքան ալ լայն բլլար մեր Շրջանակը եւ թերթին գոյութիւնը անհրաժեշտութիւն մը, անիկա հետի էր ինքնաբաւ բլլալէ, եւ զէպի Ամերիկա ճամբուս վրայ հանդիպելով Փարիզ, տեսած էի այն պայմանները, որոնց մէջ հ'աշխարհէր Հրաչ Երուանդը, սեղմուած Թոփալեան տպարանի նեղ մէկ սենեակին մէջ: Լեցուն ձեռքերով չէի վերադառնար. սակայն բրած էի ինչ որ կրնայի թեթեւեղելու համար թերթին առօրեայ հոգերը: Վերադարձիս ունեցանք ժողովներ, Շրջանային Վարչութեան հետ քննելու համար կացութիւնը: Իրրեւ. դաժման հ'առաջարկուէր զեղջիւ ծախքերը եւ թերթը հրատարակել չարաթր երկու անգամ: Այս պայափարին գէժ էր Հրաչը, որ պատրաստ էր ամէն զոհոյութեան՝ օրաթերթը չարունակելու համար: Խնդիրը ստիպուեցալ ենթարկել Կեդրոնական Վարչութեան, որ համաձայն գտնուեցաւ. Հրաչ Երուանդին տեսակէտին, որուն ուժ տուի եւ: Եւ թերթին համար ճիշդ մը բրած բլլալու նպատակով, չրջան մը բրի ձրանաայի մեր ակումբներուն մօտ, անոնց զոհոյութեան ոգիին կօշ մը բնելով:

Նիւ Եօրքէն վերադարձէս ի վեր անցած էին չորս ամիսներ եւ ես արդէն ուշացած էի Գահիրէ վերադառնալու համար:

Այդ չրջանին զուգադիպեցաւ Ռուրի չրջանին պարպումը ձրանաայի կողմէ, Հիթլէրի սպառնալիքներուն տուել տեղի տալով: Նոյնիակ պահ մը հօրիզոնին վրայ պատերազմի փտանդը սրտացմտած էր, եւ քաղաքական փոթորիկ մը կրնար ճամբաները փակել տալու: Ուրեմն փոթացի վերադառնալ՝ ետիս թողլով մտահոյիչ վիճակ մը: Արդարեւ, «Ապագայ»ն չկրցաւ տոկալ երկար տտեն եւ չկրցաւ խոտափիլ փակուելու հարկադրանքէն: Եւ զայն զէթ մասամբ փոխարինելու համար, եղբայրս՝ Սարգիս Պօղոսեան, տարի մը հրատարակեց իրրեւ անձնական թերթ «Արագած»ը, որ անոնք եղած էր տաս տարի տառջ հրատարակուած իմ գրական հանդէսիս:


Մօտ ինն ամիս Գահիրէէն բացակայութեան չրջանին «Արեւ»ին խմբագրութիւնը վարած էր Յակոբ Նայրանդեանը, տեղական ուժերու օժանդակութեամբ: Լրագրական վէճը չէր դադրած: Աղբայրն կեանքը փոթորիկով զէպքերը կը չարունակուէին մասնաւորապէս Լիբանանի մէջ, որ պատահեցան քաղաքական ոճիրներ եւս, ինչպէս նաեւ Սուրիոյ մէջ:

Այս ոճիրներուն գէժ ծառայաւ Միհրան Տամատեանը, որ

մինչև այն ատեն կ'աղբէր լուսթեան դատապարտուած կամովին. եւ սակայն հակառակորդները կ'ակնածէին իր ներկայութենէն:

Հին օրերու անրասիր յեղափոխականին ելույթը զգատուած էր հոչ մըն էր հզրայրասպան կերքով մոլեգնած միջնուրարի մը մէջ: Այդ հոչը զգատութեան բերաս, արդարեւ, հզրայրասպանութեան հեղինակները: Սակայն Պէյքուի մէջ կուսակցական օրկանի մը պէտքը կը զգացուէր շատոնց եւ ատոր համար մտածւեցաւ հրաւիրել ընկեր Սեդրակ Կեպենդեանը Կիպրոսէն, իրբեւ խմբագիր եւ գործիչ, Հալէպի «Եփրատ» թերթը օրաթերթի վերածելու ծրագրով: Դժբախտաբար, Կիպրիկի մէջ իր ունեցած երբեմնի գործունէութեան պատճառով քաղաքական մասնութիւններու զոհ գնաց Կեպենդեանը, որ ստիպուեցաւ վերադառնալ Կիպրոս:

Այս պայմաններու մէջ, 1937ի ամառը գումարուեցաւ Կուսակցութեան ընդհանուր պատգամաւորական ժողովը⁽²⁰⁾ Գա-



Ռ.Ա.Կ. 1937-ի ընդհ. պատգամաւորականի մասնակիցներ, Լ. Կոկանեանին Ղամբալի գործատան պարտէզը: Ջախէն աջ, նստած՝ Լեւոն Կոկանեան, Լեւոն Թիւթիւնեան, Էօթէն Բաբազեան, Գասպար Մովսէսեան, Շաւարշ Սեւյոնեան, Տիրան Պէլլիքեան. ոտքի՝ Լեւոն Անեմեան, Պետրոս Տեփոյեան, Նուպար Գէորգեան, Տիգրան Հանրմեան, Յովհ. Պօղոսեան եւ Համբարձում Պերպերեան:

Հիրէ: Ամերիկայէն ընկեր Գասպար Մովսէսեանը եւ Լոզանէն ընկեր Լեւոն Թիւթիւնճեանը Ամերիկայի շրջանակին կողմէ նշանակուած էին պատգամաւոր: Միաժամանակ Պէյրութի մէջ ընկերներ Տամատեանը եւ Թէքէեանը ձեռնարկած էին «Զարթօնք»ին հրատարակութեան, իրրեւ անհատական ձեռնարկ⁽²¹⁾: Թերթին արտօնատէրի գործը անձնուիրարար ստանձնած էր ընկեր Բարուռակ Թովմասեանը, հակառակ Ամերիկեան համալսարանին մէջ ունեցած փափուկ պաշտօնին՝ իրրեւ գասախօս: Որոշուեցաւ ընկեր Գ. Մովսէսեանը զրկել Պէյրութ, ուր ան, ի միջի ալլոց, յաջողեցաւ «Պայքար»ին մուտքին դէմ դրուած արգելքը⁽²²⁾ վերցրնել՝ Փրանսական իշխանութեանց մօտ իր կատարած դիմումներով:

«Զարթօնք»ին խմբագրութիւնը ստանձնած էր Վ. Թէքէեանը, որ ատոյջութեամբ տկար էր եւ ամիս մը միայն կրցաւ տուկալ թերթին առօրեայ աշխատանքին յոգնութեանց: Լեւոն Թիւթիւնճեանը տակաւին Գաշիրէ կը մնար եւ որոշուեցաւ որ ստանձնէ «Զարթօնք»ին խմբագրութեան գործը, զոր վարեց մօտ տարի մը:

Վ. Թէքէեանէն յետոյ Մ. Տամատեանն ալ փոխադրուած էր Գաշիրէ, թերթին ծանրութիւնը մնացած էր Բ. Թովմասեանին ուսերուն վրայ: Ընկեր Թիւթիւնճեանը Լոզան թողուցած էր իր հիւանդ կիներ եւ կ'ուզէր վերադառնալ՝ չկրնալով Պէյրութ փոխադրուիլ տունով: Անհրաժեշտ էր «Զարթօնք»ը չլքել իր բախտին եւ Պէյրութի մէջ սկսած գործը շարունակել: Եւ որոշուեցաւ որ «Արեւ»ին խմբագրութիւնը յանձնելով Վ. Թէքէեանին, երթամ Պէյրութ, երեք ամսուան պայմանաժամով, մինչեւ որ մնալուսն կարգադրութիւն մը կարելի ըլլայ ընել:

ԳԱՀԻՐԷՆ ՊԵՅՐՈՒԹ ՓՈԽԱԴՐՈՒԹԻԻՆՍ

1938 Յունիսին հասալ Պէյրութ, ուր զիմաւորուեցայ ընկեր Բ. Թովմասեանին կողմէ կորալրակաւն Ֆերմ զգացումներով: Առաջնորդուեցայ պանդոկ մը Պուրճի հրապարակին վրայ:

Յաջորդ օր գացի «Զարթօնք»ի խմբագրատունը: Ասիկա «Մեծ թատրոն»ի շէնքին ետեւ անկ վողոցի մը խօրը ընդարձակ սրահ մըն էր, որ կրնար հանկալք մը կղած ըլլալ, բայց զուրկ՝ խմբագրատան մը յարմարութիւններէն: Մուտքին կը գտնուէր խմբագրական սեղանը, քիչ մը հետոն՝ գրաշարական կազմաները եւ տաքման պաշտօնեային համար սեղան մը: Թերթը շարուելէ յետոյ էջերը կը տարուէին մօտիկ արարական տպարան մը, ուր կը տպագրուէր ան:

Ընկեր Թիւթիւնճեանը տակաւին չէր մեկնած եւ իրեն հետ ողջադուրուեցանք: Կը բնակէր Յ. Աճեմեանին տունը, ուր սեն-

եակ մը ունէր նաեւ ընկեր Միք. Նաթանեանը: Թերթին վարչական գործը յանձնուած էր պահ մը ընկեր Արտաշէս Տէր Գէորգեանին, զոր կը ճանչնայի Կ. Պոլսոյ «Ժողովուրդի ձայնը»-ին չըրջանէն: Յետոյ այս պաշտօնը յանձնուեցաւ Ա. Յովսէփեանին եւ ապա Յ. Սահակեանին:

Թերթին խմբադրութիւնը ստանձնելէս յետոյ կը սպասէի կարգ մը զժողովութեանց՝ իրրեւ «Արեւ»ի խմբադիր համակրանք չվայելելով հակառակորդներու մօտ: Առաջին ատիւ նաեւ ինկալը ունեցայ առտու մը խմբադրատուն երթալով տանելու թէ գլխերանց մարդիկ մտած էին եւ թափած՝ շարուած էջերը: Անմիջապէս յաջողեցանք թերթին չթափուած մասերը իրարու քով բերել եւ երկու էջ կապելով թերթը հասցնել նոյն օրուան... կէս ծաւալով:

Տեղական հանդամանքները նկատի ունենալով, ընկեր Թովմատեանը յաջորդաբար դիտ ներկայացուց ընդհանուր ապահովութեան անօրէն Գոյումպանին եւ Փրանսական Բարձր Գոմիսրութեան մամուլի գիւտնի պետ Շամպարին, որ շատ աղնիւ եւ բարեացակամ անձ մըն էր եւ որուն հետ յաճախակի չփութներ պիտի ունենայի մամուլի հաղորդակցութեանց անխիթնելով, որոնք կը կատարուէին բոլոր թերթերու ներկայացուցիչներուն, որոչ օրերու:

Հետզհետէ ծանօթացայ մեր ընկերական շրջանակին եւ շրջապատին: Առաջին ատիւ ունեցանք վարչական ժողով մը ընկեր Կարապետ Ապրաճեանին բնակարանին մէջ: Ընկեր Ապրաճեանը կը ճանչնայի Գոնիւայէն, որ 1905 թուականին դառնաւ էի ուսուցչական պաշտօնով: Այդ ատիւ ճանչցայ ընկերներ Մկրտիչ Մարքիանը, Յակոբ Թորոսեանը, Դեռնդ Տէր Պետրոսեանը, առթիւ Յովսէփ Եղեղաթեանը եւ ուրիշներ, որոնք բոլորուած էին ընկեր Թովմատեանին շուրջ եւ պատրաստակամ էին օժանդակելու թերթին աւակաճումին: Մասնաւոր չորհակալութիւն կը պարտիմ ընկեր Մկրտիչ Մարքիանին, որ իր եղբայրական աղնիւ աջակցութիւնը չզլացաւ մեր գործին, Պէյրութ բնակութեանս շրջանին:

Իմ պարտականութիւնս էր նաեւ ծանօթութիւններ հաստատել մեր ազգային մարմիններուն եւ վարչական կեդրոններուն հետ: Յաճախակի այցելութիւններ կու տայի հայոց առաջնորդներ եւ առաջնորդ եղբէջ Կարոյեան որդեանին, Անթիլիաս Պետրոս արք. Սարաճեանին, որ Բարդէն աթոռակից կաթողիկոսին վարձանէն յետոյ կաթողիկոսական տեղապահի պաշտօնը կը վարէր, Էջրեֆիէի պատրիարքարանը [կաթողիկէներու] եւ հայ կաթողիկէ պատրիարք-կաթողիկոս Ագաճանեանին...:

Սարաճեան սրբազանը կը կատարէր շինարար գործ մը Կլիկեան Աթոռ օժակելով իրեն արժանի շէնքերով՝ մայր տաճար,

դպրոց, վեհարան, հաստատակներու մատուռ՝ ձեռք բերելէ յետոյ Գաշիքէն Գայազճեան ամուլին նուիրատուութիւնը, որուն վրայ աւելցաւ հաւել Լոնտոնէն Գնածեանին նուիրատուութիւնը: Հակառակ իր տարիքին, աշխույժ էր եւ շինութեանց կը հսկէր փոշիներու մէջ: Զիս կ'ընդունէր միշտ համակրանքով եւ մեր թերթին հանդէպ ունէր մասնաւոր դիմահաւանք:

Խմբադրական ուշխատանքներս արդելք չեղան որ ալցելիմ հաւել Դամասկոս, Հայէպ եւ Սանճաք, Օգոստոս ամսու ընթացքին: Դամասկոս մօտէն պիտի ճանչնայի Միհրան Տէր Սաեփանեանը, որ «Արեւ»ի աշխատակիցն էր եւ հեռը կը թղթակցէինք արդէն: Կ'աշխատէր Սուրիոյ կառավարութեան սրահածնատուն մը, Մերձէի հրապարակին մօտ, եւ ալլ հանգամանքով լուստեղեակ էր Սուրիոյ քաղաքական անցյուղարձեւուն ու ծանօթ պետական անձնատուրութեանց: Իրեն հեռ ծանօթանալէս յետոյ կարելի չէր չկապուիլ անկեղծ ու սրապին մտերմութեամբ, զոր երկուքս ալ պահեցինք իրարու հանդէպ, մինչեւ իր մահը:

Հայէպի մէջ պիտի գտնէի տուրթ. Խաչիկ Պօղոսեանը, ու



Միկրանին (?) եւ ընտանիքին հետ, 1940-ին, Պէյրութ:

րուն ծանօթ էի արդէն, ինչպէս փաստարան Լեւոն Թամզարեանը, զոր կը յիշէի Գոնիայէն: Պիտի ծանօթանալի Նազարէթ Պաթըքճեանին, փաստարան, եւ Վահան Սեմերճիպաշեանին, քիմիագէտ- նաեւ՝ Արիս Շաքլեանին, որ քարաուղարի պաշտօն ունէր Հ.Բ.Ը. Միութեան գրասենեակին մէջ, եւ Եղիապար Պենիանին, որ կը հրատարակէր «Նփրատ»ը: Դժբախտաբար թերթը փայլուն վիճակ մը հունէր եւ թիւրիմացութեանց ալ տեղի կուտար մեր ընկերական շրջանակին մէջ: Անշուշտ առաջին առթիւ պարտականութիւնս էր հարթել այդ թիւրիմացութիւնները: Հալէպ պիտի ճանչնայի նաեւ Պարոնը [Մալլումեան], որ զիւրառիրեց իր պանդոկը, իրրեւ համակրանք հանգէպ մեր թերթին.....:

ՍԱՆՃԱՔ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՍ

Պիտի ըսէի Հաթայ: Որովհետեւ տարիէ մը ի վեր Սանճաքի վարչակարգը եւ անունը փոխած էին, քանի որ Սուրիոյ մէջ երեւան եկած անկախութեան շարժումներէն յետոյ, Թուրքիա կը ջանար իր կարծեցեայ «իրաւունքները» արժեցնել Կիլիկիոյ այս հողամասին վրայ՝ Փրանսական հոգաատարութիւնը վերջ դրած: Թուրքեւֆրանսական համաձայնութեամբ կազմուած էր խառն վարչակարգ մը, ինքնավարութեան սկզբունքին վրայ, թուրքերու գերակայութիւնը ապահովելու նպատակով: Հաթայի կառավարութեան կեդրոն նշանակուած էր Անախոք, եւ Արեքստնորէթի մէջ՝ Փրանսական կառավարիչի պաշտօնին վերջ արուած: Կազմուած էր «խորհրդարան» մըն ալ՝ երկրին բաղկացուցիչ տարրերուն մասնակցութեամբ եւ, անշուշտ, թուրք մեծամասնութեամբ: Թուրքերէն լեզուն ալ՝ պաշտօնական լեզու հռչակուած: Աւելին բլլալով՝ Թուրքիա հոս զրկած էր ներկայացուցիչ մը իւրրեւ «գեոպոլի», որուն պաշտօնը պիտի բլլար պատրաստել Սանճաքի կցամբ Թուրքիոյ:

Այս փոփոխութիւնը սկսած էր մտահոգել Սանճաքի հայութիւնը՝ անոր յիշողութեան մէջ նորոգելով Կիլիկիոյ պառպուժին գէպերը եւ նոր գաղթականութեան մը հետանկարը: Կուսակցութեան Կեդրոնը փափաքած էր որ Պէյրութ գտնուէլէս օգտուելով ալցեյեմ Սանճաք եւ մօտէն տեղեկանամ հայոց կացութեան ու, եթէ կարելի է, թուրքերու արամաղրութեանց: Այս ճամբորդութիւնը զիւրացնելու համար Փրանսական Բարձր Քաճիսերութիւնը յանձնարարական մը տուած էր ինձ՝ իր Հալէպի ներկայացուցչին ուղղելով:

Հալէպ հասնելուս գաղի տեսնել այդ ներկայացուցիչը, որ

Փիլիփ Տալիս կը կոչուէր. բարեկիրթ եւ հաճոյակատար պաշտօնատար մը, որ ինձ տուաւ մասնաւոր արտօնագիր Սանճաք մըտնելու համար: Յանձնարարական ունէի նաեւ Անտիոքի մէջ Փրանսական իշխանութիւնները ներկայացնող զնգապետ Քոչէին, որ ծանօթ էր չերքէզներէ կազմուած զուռլի մը, որ Փրանսական բանակին մէջ կարեւոր գէր մը կատարած էր ախրդիներու ապրատամբուն շրջանին:

Քանի մը օր ետք Գրըզիսան մեկնող կտոր մը գտայ: Մեր տաղին հանդրուանն էր Ռէյհանիէ, որ Սանճաքի սահմանադրութիւն վրայ գիւղ մըն էր, տասնեակ մը հայ բնաւնիքներով: Ծանօթացայ քահանային եւ անկէ տեղեկութիւններ հարցուցի թուրքերու բնթացքին մասին: Տրուած տեղեկութիւնները քաջայերիչ էին: Հայերը կը մտածէին հետանայ փորձանքի մը չհանդիպած: Անկէ ուղղուեցանք գէպի Գրըզիսան, որ Սանճաքի հայութեան կարեւոր կեդրոններէն մէկն էր: Հոն պիտի ծանօթանայի այնթապցի հերոս Ասուր Լեւոնեանին...: Հոս պիտի հանդիպէի նաեւ Տիգրան Քեչիչեանին, սակայն ծանօթ բնաւնիքէ մը, զոր հանչեցած էի Փարիզ իրրեւ ուսանող, որ պիղծին ծալքը բնոյթաձակ տան մը երկրորդ յարկին վրայ կ'ապրէր մեծակեացի կեանք մը, գիրքերով շրջապատուած:

Գիւղին մէջ շատայ թուրք զինուորներ, որոնց պիտի հանդիպէի Պէլլանի մէջ, ուր հասանք հայ գաղթականներու համար Աղզերու Ընկերութեան կողմէ շինուած Հայաչէն զիւր բերելով: Պէլլան, համառուն կիրճին մէջ, ամբարցուած կայանի մը երևոյթը ունէր: Թուրք սպաներ եւ զինուորներ կ'երթեւեկէին փողոցներու մէջ: Անոնց երևոյթը զիս մասհնոյթեամբ պատեց: Այս տպաւորութեան տակ պիտի երթայի գտնել մեր պատւական բնիկը Գասպար Մենակը, իր խանութին մէջ: Հոն եկաւ նաեւ բնիկը Գէորգ Դարբինեանը, որուն ծանօթացած էի Պէլլութի մէջ: Իրիկունը մօտ էր եւ միասին բարձրացանք Սոպուք Օլուքի ամառանոցը, ուր բնիկը Մենակը պիտի հիւրասիրէր մեզ բնտանեկան սեղանի մը շուրջ: Այդ առթիւ տեսայ նաեւ բնիկը Թորոս Լուսինեանը, ուսուցիչ եւ հին յեղափոխական:

Ալեքսանդրէթէն մեկնելէ տաճ ալցելիցի Նուպարեան վարժարանը, որուն տնօրէնն էր բնիկը Մարտիրոս Տէր Սահեանեանը, թէ եւ ամառուան առթիւ փակ էր վարժարանը:

Ալեքսանդրէթէն օթոպիս մը զիս պիտի տաճնորդէր Անտիօք՝ Հաթայի «մայրաքաղաք»ը: Որքան Ալեքսանդրէթ հայկական էր իր մթնոլորտով եւ շրջապատով,— հայ գաղթականներ չորցուցած էին շրջակայ ճահիճները եւ անոնց տեղ մշակած պարաչէզներ,— նոյնքան Անտիօք թրքական դրոշմ մը ունենալ կը թուէր, իր հնամենի տուներով եւ նեղ փողոցներով: Անցանք Ուրոնգէսի վրայ նկատուած կամուրջէն եւ ելանք փոշոտ հրապարակի

մը վրայ, ուր թուրք զիւղացիներ եկած էին առեւտուրի համար: Անկէ գիմեցի Արքաճամ Սարալառեանին հասցէին. Ան էր որ ինձ ուղեցոյց եղաւ զանկու. համար զնպատեալ Քոչէն, որուն ներկայացուցի յանձնարարականս եւ ըստառելով ճամբորդութեան նպատակը՝ խնդրեցի որ տեսակցութիւն մը կարգադրէ ինձ համար թուրքիոյ ներկայացուցիչին հետ: Ասիկա կը կոչուէր ձեւատ Աչքը Ալըն, երբեմնի թուրքիոյ գեսպան Լոնտոնի մէջ: Գընդադառար հետաձայնն առաւ ու խօսեցաւ անոր հետ իմ մասին եւ առաւ ժամադրութիւն մը, որ խորհրդապահական մնայ: Թուրք պաշտօնատարը զիս ընդունեց կառավարչատան մէջ, սառն քաղաքավարութեամբ, երբ մանաւանդ յայտնեցի թէ թերթի մը լիզթակիցն եմ:

Մեր խօսակցութիւնը տեւեց զրեթէ ժամ մը: Ի միջի ալլոյց, հարցուցի թէ թուրքիոյ կառավարութիւնը ինչ կը մտածէ արտասահմանի հայոց եւ անոնց կայուածական իրաւունքներու մասին:

— Թուրքիայէն դուրս եղած հայերը մեր հպատակները չեն եւ անոնք մեզ չեն հետաքրքրեր: Իսկ անոնք որ կը մնան երկրին մէջ, հաւատար քաղաքացիի իրաւունքներ ունին ուրիշ թուրքերու հետ:

Խօսեցայ նաեւ թուրքիա վերադառնալ ուղղով հայոց դէմ դրուած արգելքներու մասին: Այս եւ նման հարցումներուս ուղղակի պատասխանել խոստալեցաւ, միշտ «օրինական» հոյի վրայ ջանալով զնեյ խնդրեր:

Մեր խօսակցութեան բնթացքին թուրք պաշտօնեաներ եւ սպաներ կ'երթեւեկէին: Մթնոլորտը ճնշիչ էր ինձ համար: Ձեւատ Աչքը Ալընը կը խօսէր տիրաւար, որպէս թէ արդէն գրաւուած հողամասի մը վարչութեան գլուխը ըլլար:

Կ'ուզէի ժամ առաջ մեկնիլ Անտիոքէն: Սակայն ունէի «ուխտագնացութիւն» մը, զոր պէտք է կատարէի: Ինձ յանձնարարուած էր այցելել Սուէտիս եւ տեսնել ընկեր Նապի Նազուպեանը:

Որոշուէիս ամբ քերելով ուղղուեցայ զէպի Լեթչիէ, ձիու կառքով մը: Ասիկա Սուէտիոյ զիւղերէն էր, Մուսա լեռան ստորոտը, ուր սպարապի մը մէջ կը բնակէր ընկեր Վաղարշակ Օֆլադեանը, քաջ երիտասարդ մը: Զիս ընդունեց ուրախութեամբ եւ անմիջապէս գտաւ պատանի մը ու զայն զրկեց Նոզուն Օլուք, ուր էր Նապի Նազուպեանը: Ժամադրուած էինք լեռան ստորոտը, ջուրի երկրի մը վրայ բարձրացող հաստարմատ կաղնիի մը տակ: Ժամ մը սպասումէ յետոյ Նապի Նազուպեանը հասաւ իր գաւիին եւ քանի մը հայ զիւղացիներու հետ. ուղղադրուեցանք յուղամով, որպէս թէ չին ծանօթներ եղած ըլլայինք: Կը գանուէի ձեւատական լեռան գէմ յանդիման, այն հոգին վրայ, ուր կ'ըստուած էր Քասասուն օրերու փառքը: Թերեւս այս հնամենի կաղնիին



Վաղարշակ Օֆիազեան, Սուէտիա :

տակէն անցած էին նոյնքան հնամենի ժողովուրդի մը մեռնիլ չուզող զաւակներուն խումբերը, զէպի ծովեզերք, զէպի ազատութեամբ ուղղուելու համար։ Եւ Նսալի Նաղուպեանը կանգնած էր քովս՝ իրրեւ կենդանի վիտն այդ յաղթական պայամարախն։ Իմ խօսքերս չառ ահար էին բաղդատմամբ անոր էութենէն իսող աչն ուժին, որ մեր ժողովուրդին պարտութեամբ պատմութենէն կը յարզէր։ Եւ սակայն եկած էի միտիթարութեան եւ յոյսի խօսք մը բերելու։ Աստու թուրք պաշտօնատարի մը ներկայութեան տուած հոգեկան ճնշումը արդէն վարատած էր շնչելով այս սըրբազան լեռան օդը։ Եւ հիմա իմ պարզ խօսակիցներս էին, «լեռան մարդիկը», որ զիս կը կապուրէին եւ ինձ յոյս ու հաւատք կը ներշնչէին։

Նսալի Նաղուպեանին եւ իր ընկերներուն հետ մեր խօսակցութիւնը երկար չտևեց։ Կը զգուշանայինք մեր հանդիպումը տարածայնելէ։ Թշնամին տունէն ներս մտած էր արդէն։

Եզրիպոստէն զուրա ելած էի երեք ամսուան պայմանաժամով եւ իմ հոն բնակութեանս արածութիւնը կը լրանար Սեպտեմբերի վերջը: Պէտք էր տնտեսաբար զիջել վերադառնալու համար:

Պէյրուիթէն Աղեքսանդրիա մեկնող ուղևորական չուկնաւ մը կար: Գացի տոմսակա առնելու: Տոմսակալաճառ պաշտօնեան ըստ թէ զժրախտարար չի կրնար տոմսակ տալ, մինչեւ որ եզրիպոստէն հիւպատոսարան երթալով եզրիպոստ մօտաքի վիզա շտապէ: Անմիջապէս զիմեցի եզրիպոստական հիւպատոսարան, ուր ինձ ըսուեցաւ թէ եզրիպոստէն զուրա ելլելու տակն պէտք էր նաեւ հոն վերադարձի համար վիզա առած ըլլալի: Ուստի Գաշիրէ պիտի տայ: Պնդեցի թէ մինչեւ Սեպտեմբերի վերջը եզրիպոստ բնակելու իրաւունք ունիմ: Բայց ի զուր: Պէտք է սպասել Գաշիրէէն զայլք հրահանգին:

Ասիկա հաշուի մէջ չկար: Շուկնաւը փախցուցի, հսկասակ որ Գաշիրէ կնոջ հետ պրծած էի թէ կու գամ այս չուկնաւով: Կինս Գաշիրէէն Աղեքսանդրիա իջած էր, զիս սպասելու համար, եւ յոսանալու եղած՝ չուկնաւի ճամբորդներուն մէջ զիս չտանելով: Եւ անմիջապէս Գաշիրէ չէր դարձած, յաջորդ չուկնաւի մը սպասելով: Այլ միջոցին դատակա հիւանդացած էր եւ կինս բարեկամ բնասնիքի մը մօտ ապաստանած՝ մտանդած ըլլալով չուարումի: Իրմէ ստացած նամակս սրտաբեկում պատճառեց ինձ եւ ես անհամբեր էի Գաշիրէէն առնելու սրտապնդող յար մը, որ կ'ուշանար եւ պիտի ուշանար տարի մը:

Երեք ամիս պայմանաժամով եկած էի Պէյրուիթ, տոմսաւարար ստանձնելու «Ձարթօնք»ին խմբագրութիւնը: Հիմա իմ Պէյրուիթ բնակութիւնս կը տեւականանար: Այս պատճառով սենեակ մը վարձեցի յոյն բնասնիքի մը տան մէջ, Գամասկոս փողոցի մօտ: Միաժամանակ Կեղբոնական Վարչութիւնէն պարտականութիւն գրուեցաւ վրաս, որ աչքեյիմ Իրաք, թէ՛ կուտակեցական գործերով եւ թէ՛ «Արև»ին յետնեալ բաժնեկիները պանձելու համար:

Անցան աշնան ամիսները թերթին տօբեայ հոգերով եւ զրադամներով: Մտած էինք ձմեռն ամիսներուն մէջ, ուր Սանինի գաղաթին վրայ կուտակուած ձիւնին մէջէն Պէյրուիթի վրայ ինկող արեւի ճաճանչները տեղի հաճելի կը պարձնէին եղանակը: Յունուարի վերջերը ճամբայ ելայ զէպի Գամասկոս, անկէ առնելու համար մէկը այն ճամբորդատար օթնպիսներէն, որոնք ոտքիական տնտեսարար կարելով կ'երթան Եփրատի եւ Տիգրիսի ափերը, զէպի խալիֆաներու եւ հազարամէկ զիշերներու երկիրը:

Այս ճամբան լեցուն կը թուէր ինձ պաշտնիքներով:

Փետրուարի սկիզբը մշուշոտ առաւօտով մը ճամբայ ելալ զէպի Պապաստ մեկնող օթոպիւսով մը, որ մասնաւոր ընկերութեան մը կը պատկանէր: Ծամբու ընթացքին է միայն որ պիտի հանդիպէի հին դասընկերոջ մը՝ Կեսարիոյ Ս. Կարապետ վանքէն տոբթ. Յարութիւն Ռէիզեանին, շատոնց Պապաստ հաստատում, որ հոն կը վերադառնար: Ամբողջ օրը օթոպիւսը անցաւ անհուն տարածութիւններէ, փոշոտ ճամբու մը վրայ, ուր ոչ մէկ զիւղ կամ մարդկային հետք կար: Երեկոյեան հասանք Ռութպա, ճամբուն մէջտեղը կայան մը, ուր հաւաքուած էին պետեւիներ եւ ճամբորդներ, սարճարանի մը մէջ: Սաստիկ հով մը փռչիւ ամպի մը մէջ աներեւոյթ կը դարձնէր շրջապատը: Ժամ մը հանդիստէյետոյ ճամբայ ելանք կրկին: Գիշերուան մութին մէջ երբեմն կը տեսնուէին հաս ու կտոր հեղաւոր լոյսեր, որոնք կարծես այս անձայր ուղկիւնսին վրայ փարոսներ էին: Աստուան զէմ հասանք Ռեմատիէ, Եփրատի եղերքը, որ Իրաքի առաջին քաղաքն էր, ուր մաքսային գործողութիւններ պիտի կատարուէին եւ պիտի հանդիպէի իրաքցի առաջին օստիկաններուն, շատ քաղաքավարի, որոնք թրքերէն ալ կը խօսէին: Անկէ յետոյ ճամբան տակի հաճելի դարձաւ, որովհետեւ Եփրատի եւ Տիգրիսի միջեւ երկարոց տարածութեան վրայ կը հանդիպէինք ծաւերու, կանաչութեան եւ տեղ տեղ ալ բնակչութեանց խմբաւորումներու: Այս ճամբուն վրայ անցանք Հապանիէ, որ անպիտան գինուորական օգանակային կայան մըն էր: Հոս հանդիպեցանք նաեւ ծինելոյցներու եւ գործաւորներու, որոնք կ'աշխատէին գործարաններու մէջ:

Պապաստ հասած էինք կէսօրուան մօտ: Զիակաքով մը անցայ Տիգրիսի վրայ ձգուած փայտէ կամուրջ մը, որ կը շարժէր ձիերու սմբակներուն տակ: Կտոր գիս տարաւ հայոց եկեղեցին, որ կը գտնուէր Այ Ռաշիտ պոպոսային մօտ, նեղ ու երկար փողոցի մը մէջ: Հոն էր նաեւ հայոց առաջնորդարանը, ուր գիւս համակարհով պիտի ընդունէր եւ հիւրավորէր Ռուբէն եպօսկ: Մասնականոր, աշխարհիկ եւ յայն հաճոյակատարութեամբ մը: Եկեղեցիին բակին մէջ էր հայոց վարժարանը, ուր մօտ 500 աշակերտներ կը յաճախէին: Ռուբէն սրբազանք իմ մենտորս պիտի ըլլար՝ ճանչցնելու համար քաղաքը եւ հայ գաղութը:

Իրականին մէջ կար երկու գաղութ — հին եւ նոր: Հինը կու գար օսմանեան սուլթաններու կողմէ Պապաստի գրաւումի օրերէն: Առանք Պարսկաստանէն եկած էին առտելապէս եւ մօտ երկու հարիւր բնաւանիք կը կազմէին՝ հայախօս մնացած եւ տիրացած անտեսական լաւ զիւրքերու: Առանք ապահոված էին կալւածներ եւ մնացուն հասոյթներ եկեղեցիին եւ պարոյցին համար: Բացի առաջնորդանիւստ եկեղեցիէն, կար երկրորդ եւ աւելի հին եւ



Մանասեան սրբազան եւ Զօրա իսկեմոէքեան, 1938-ին :

կեղեցի մը, որ նախապէս սուրիական եղած է ու Պաղատար գրաւող սուլթան Մուրատին կողմէ նուիրուած է իր բանակին մէջ զբա-
նուող հայ ճարտարապէտի մը, որուն շինած թնդանօթները գի-
րացուցած են Մուրատին յաղթանակը: Այս ճարտարապէտին ա-
նունն է Կէօք Նազար, որ Ս. Աստուածածին փոքրիկ եկեղեցիին
հետ նուէր ստացեր է շրջապատը գտնուող հողերը, զորս յառ-
կացուցեր է հայոց բնակութեան:

Այս հին գաղթականութեան վրայ տեղեցած է Առաքին հա-
մաշխարհային պատերազմին կամ անկէ յետոյ եկած նոր գաղ-
թականութիւնը, մօտ 500 բնասնիք, որ հաստատուած է մասամբ
քաղաքին մէջ եւ մասամբ քաղաքին երկու — հիւսիս ու հարաւ —
ծալքերը գտնուող գաղթականացաններու մէջ, որոնք տարիներու
ընթացքին եղած են նորաշէն տաններ: Հին եւ նոր գաղթական-
ներուն միջեւ ձալումը կը կատարուէր հեռոյհեռ, բայց զեռ հե-
ռաւորութիւնները կը պահուէին՝ հին գաղութը նախանձախնդիր
բլլալով իր «խրտանք»ներուն եւ յաւաքով չգիտելով նոր գաղ-
թականութեան հաստատուելը քաղաքին մարմիններուն մէջ,
քաղաքի բնակիչներուն ուժով: Այս պատճառով առաջ եկած էին ներ-
քին վէճեր, որոնց խառնուած էր կառակցական կիրքն ալ, որ
գործէն կը հրահրուէր, Առաջնորդին գէմ պալքաբերն ալ պատ-
ճառ գտնալով: Սակայն Ռուբէն ս. Մանասեանը լուսազոյն յա-
րարերութիւններ հաստատած էր տեղական իշխանութեանց հետ
եւ հին գաղութին ալ պաշտպանութիւնը կը վաշխէր:

Պաղտատի մէջ մենք կուտակեցական կազմակերպութիւն չունէինք, բայց կային բնիկները նոր հասած գաղթականներուն մէջ, ինչպէս՝ Վանեցի Վարդապետին եղբայրները եւ Զօթեան գեղապործը, որ միաժամանակ «Արեւ»ին պատուակալ գործակալ էր: Մեր թերթին չորսնէնք համակիրներու շրջանակ մը, որու հետ առաջին օրէն կրցայ հաստատել յարաբերութիւններ, Մանասեան ա.ին հետ այցելութիւններով: Նոյնիսկ կրցայ ներկայ ըլլալ հին գաղութին անդամներուն կողմէ պարբերաբար տեղի ունեցող ընտանեկան հաւաքոյթներու, որոնք էք հոմ կը կոչուէին:

Պաղտատի մէջ կը գտնուէր այդ ատեն Զաւէն պատրիարքը, որ բնիկ պաղտատցի ըլլալով՝ ունէր իր ընտանեկան պարագաները, որոնք կը պատկանէին հին գաղութին եւ աղբեցիկ շրջանակ մը կը կազմէին: Կ. Պոլսոյ նախկին պատրիարքը քաջուած կ'ապրէր, չէր յուշերով եւ անցեալի փառքին ու նաեւ զժրախոտութեան տարիներու վերջիչումով: Կոկորդէն վերաբուժական գործողութեան մը ենթարկուած ըլլալով, իր ձայնական լարերը կարուած էին եւ չէր կրնար խօսիլ: Բայց ինչ որ կ'ուզէր ըսել, կը գրէր թուղթի վրայ եւ կը կարդային: Կ. Պոլսոյ պատրիարքութեան շրջանէն կը ճանչնայի զինք եւ իր ընդունելութիւնը ինձ համար աւելի քան համակրական եղաւ:

Պաղտատի մէջ ճանչցայ Գույումճեան եւ Թիւրապեան կեսարացի պատուական ընտանիքները: Գույումճեանը տառնապետն էր Հ.Բ.Բ. Միութեան մասնաճիւղին, կազմուած մեր համակիրներէն, որ կը գործէր իրրեւ տեղական բարեփոխական բնիկեակցութիւն մը եւ կը պահէր գաղթականական վարժարան մը: Հոն ճանչցայ նաեւ ուրիշ պատուական հայ մը՝ Մինասեան, որ տնօրէնն էր Օսմանեան դրամատան ճիւղին: Ունեցայ նաեւ անակնկալ հանդիպում մը Գաշիբէնէ «Արեւ»ի աշխատակից Լեւոն Քիրազեանին հետ, որ զժրախոտ պարագաներու բերմամբ հեռացած էր եւ առժամապէս կը գտնուէր Պաղտատ:

Մանասեան ա.ին հետ պիտի այցելէի նաեւ Պաղտատի շրջակայքը, Քաղմիչ, չիւններու նշանաւոր մզկիթը, Հիլլէ, որու մօտ են Բարեյոնի աշտարակին եւ հին քաղաքին աւերակները, Սելման Փակ եւ Տիզրոնի աւերակները: Հիլլէի մէջ ծանօթացայ տոբթ. Յովհաննէստփին..... Յետոյ այցելեցինք նաեւ Հինատիէի ջրամբարն ու կամուրջը Եփրատի վրայ, որ կը գտնուէր Մարաիրոս Գույումճեանը, ճարտարագէտ.....:

Պաղտատէն յետոյ հանդիպեցայ Քերքուք, որ կը գտնուէր դէպի Մուսուլ ճամբուս վրայ: Այտեղ ունէինք փոքրիկ գաղութ մը, պատերազմի հետեւանքով հաստատուած, որուն անդամները փոքր առեւտրականներ կամ քարիւղի գտարանին մէջ աշխատող պաշտօնեաներ ու գործաւորներ էին: Առաջին առթիւ գացի

տեանել ընկեր Զօրա Իսկենաէրեանը.....: Ընկեր Զօրան Հոս
Հաստատուած էր իր երկու եղբայրներուն հետ եւ ունէր սիմե-
մայի դործ մը: Կը պատկանէր Սուէախոյ մէջ իր քաջութեամբ
ծանօթ բնտանիքի մը եւ պահած էր հայ տանուէրի վեհանձն
աւանդութիւնները: Կը վերլիչէր Մուսալերան հերոսապատումէն
գրուագիւններ եւ կ'ապրէր անցեալով, մոռնալով դապժախանութեան
չըջանի գառնութիւնները:

Իրեն հետ այցելեցի Քերքութի հայոց եկեղեցին, փոքրիկ
մատուռ մը, եւ զպրօցը, պատմական բերդը եւ Պապա Կուրկուրի
քարիւղի զտարանները, որոնց ծիսելոյցներէ բարձրացող բոցերը
կը լուսաւորէին չըջապատը, գիշեր տաւն: Զտարանները պապը-
նելու ազնուութիւնը ունեցաւ հայ մասնագէտ մը, Օրջանեան, որ
հոս կ'աշխատէր իրրեւ պաշտօնեայ:

Քերքութէն անցայ Մուսուլ՝ Էրպէլի ճամբով, նշանաւոր
Արբելան, ուր Մեծն Աղեքսանդրը ջախջախեց Գարհէին բանակ-
ները: Արբելայի մէջ կային երկու հայեր՝ Արբահամեան եւ Գա-
րիկեան, երկուքն ալ բաժանորդ «Արեւ»ին. մէկը ունէր ճաշարան
եւ միւսը՝ սրճարան մը.....:

Մուսուլ կը գտնուի Տիգրիսի եզերքը, որուն վրայ նեո-
ւած քարաշէն կամուրջէ մը անցանք ուղտերու կարտան մը
հրմշակելով, քաղաք կարենալ մտնելու: Ճամբը: Պաղտատի հետ
բաղկադամով Մուսուլ տեղի մաքուր քաղաք մը բլրով կը թուէր
եւ չունէր անոր փոշիով ծածկուած փողոցները, որոնք հոս ա-
ւելի լայն էին եւ կանոնաւոր, մինչդեռ Պաղտատի մէջ տուները
պահուրտած էին պարիսպներու ետեւ, նեղ ու զփութարանցանիկ
փողոցներու մէջ:

Առաջին առթիւ գացի գտնել Միհրան Փիլիկեանը, որ ծա-
նօթ էր ինձ իրրեւ «Արեւ»ի պատուակալ գործակալ եւ բարե-
կամ.....: Այստեղ կը գտնուէին Ուզանեան եղբայրները եւ Ճի-
նիվիդեանը, որոնք ունէին գինիի գործարան մը «Հատեպա» ա-
նունով: Ունէինք բազմաթիւ հայ արուեստագործներ, որոնց մէջ
կը յիշեմ մեր բարեկամ Հալկայ Գաստանեանը.....: Մանօթա-
ցայ նաեւ ծերունի Սարգիս Զաքմաքճեանին հետ, որ տարապրու-
թեան տարիներուն մեծ ծառայութիւններ մատուցած էր հայ
գժարխտ դապժախաններուն, եւ որուն աչքերը ալ չէին տեսներ
հիմա:

Ընկեր Փիլիկեանին եւ մէկ քանի բարեկամներու հետ այ-
ցելեցինք քաղաքին մօտ Նեպի Եունուս կոչուած վայրը, ուր կայ
Յովհանն մարգարէին գերեզմանը, այժմ ուխտատեղի: Ասիկա կը
գտնուի բլրակի մը վրայ, որուն ստորոտը կը գտնուի հոր մը,
որու շուրջը բնակած են բազմաթիւ հայ դապժախաններ, տա-
րադրութեան չըջանին, եւ որոնցմէ մահապաճներու ոսկերաւիքը
թաղուած էր փոսի մը մէջ, որմէ դուրս կը ցցուէին ոսկորներ,



Տոֆր . Վ . Թովսպեանին հետ, 1938-ին :

Հոգին տակէն: Քիչ հետո կը գտնուէր ձաղձաղ գետակը, ուր դաղթականները կ'ընէն եղեր իրենց լուսադէր և երբեմն ալ աւարտուններու յարձակումներուն ենթակայ կ'ըլլան եղեր: Այս շըրջանը տկանատեսը եղած է մեր ժողովուրդին թշուառութեան և տառապանքներուն, և ուխտաւորի մը յուզումով ու ակնածանքով է որ անցայ անոր կոխած ճամբաներէն և հետս վերցուցի տկորներու փոսէն նշխար մը, իրբև մասունք:

Այցեղեցինք նաև Նինուէի հին աւերակներուն՝ Խորսապատ (Խորսովապատ) կոչուած վայրին մօտ, բլուրի մը վրայ: Այստեղ կային եազուպի քրիստոնեաներու և եկեղեցիներու գիւղեր, ուր ևս այցեղեցինք, ինչպէս նաև իրենց չէլսերուն ուխտավայրը, մանաւանդ Լազուպիներու եկեղեցին, ուր մեզ ընդունեց իրենց արարախօս քահանան:

Մուտուէն կը մեկնէի դէպի Պէյրութ, Իրաքի այցելութեանս շրջանը վերջացնելով:

ՎԵՐԱՂԱՐՁ ԳԱՀԻՐԷ ՆԻ ԿՐԿԻՆ ՄԵԿՆՈՒՄ

Պէյրութ վերադարձիս ի զուր սպասեցի Գահիրէէն գալիք վիզային: Եւ վերջիվերջոյ ստիպուեցայ լիբանանեան անցագրով մը ճամբայ ելլել դէպի Ալեքսանդրիա:

Իմ բացահայտութեանս, «Արեւ»ին խմբագրատնտեսութիւնը վարած էր Վ. Թէքէեանը, որուն պաշտօնը չէր վերջանար, այլ կը գլխարկէր իմ վերադարձովս, մանաւանդ որ երկուքս ալ տնդամեներ էինք Կեղրոնական Վարչութեան: Ինքը արժանաւորագոյնն էր խմբագրատնտեսի աթոռին համար, և արդէն տնդալին ալ, ամէն տնդամ որ Գահիրէ կու գար, իրեն կը թողուի այդ աթոռը, իրեւ իմ կողմէ իրեն հանդէպ յարգանքի պարտականութիւն մը: Եւ զիտէի թէ ատով հաճոյք մըն ալ կը պատճառեմ իրեն:

Արդէն ղէպքերն ալ աշխատէս իւրին որ չկարենամ վերահաստատուել Գահիրէ: Լիբանանեան տնդալիւրս ինչքոյ տուարկայ եղած էր Փրանսական հիւպատոսարանին կողմէ, որ միանգամայն կը զրազէր լիբանանեան գործերով: Եւ կարելի չէզուեզիպտոսի մէջ ընակութեան համար արտօնութիւն վերատանալ: Միայն ինձ երեք ամիս պաշտնաթամ տրուեցաւ, գործերս կարգադրելու համար:

Յունիսի սկիզբները վերադարձած ըլլալով, Օդոստոսի վերջը ընտանիքով մեկնեցանք Պէյրութ, վերջնապէս ստանձնելու համար «Զարթօնք»ին խմբագրութիւնը:

Հազիւ հասած էինք Պէյրութ, երբ քաղաքական դէպքերը գտնալիթեցին և պատերազմ յայտարարուեցաւ Գերմանիոյ դէմ, որ Տանցիկի նրբանցքը գրաւելով յարձակած էր Լեհաստանի վրայ: Պրոմփանալի մէջ ամառուան համար երկու սենեակ վարձած էինք և առաջին տոթիւ պատերազմական վիճակին հակադդեցութիւնը չուշացաւ: Եզիպտոսէն օդափոխութեան եկած ընտանիքներ կ'աճապարէին վերադառնալ՝ յարաբերութեանց խզումէն վախնալով: Այս վիճակը կրնար անտկնկալներ վերադառնել մեզի համար ալ, թէ և ուղղակի պատերազմի գիծին վրայ չգտնուէինք, ինչպէս Եւրոպական երկիրները: Այս անտկնկալներէն մէկը եղաւ Սանճաքի կցումը Թուրքիոյ, որով անոր չեզոքութիւնը կ'ուզէին սուստովել Անգլիա և Ֆրանսա: Սանճաքի արտադպովը պիտի չուշանար, Սուրիոյ և Լիբանանի հայութիւնն ալ մատնելով տապալալի: Որքան ալ Փրանսական իշխանութիւններ տտր համար զիւրութիւններ տուած ըլլային, 30.000 հայ դպրեթականներու խուժումը զէպի Պէյրութ՝ ազգային իշխանութիւնները կը դնէր ծանր հոգերու տակ: Եւ օգնութեան կոչեր ուղղուեցան արտասահմանի հայ դպրութիւններու ևս, ընտանաւարը:

Առաջին տոթիւ «Պայքար»ը հրապարակ նետեց հանդանակութիւն մը 10.000 տոյարի, «Մէկ մարդմէկ զրիս ցորեն» նշանաբանով: Եւ կազմեցինք Սանճաքի դպրեթականներու օգնութեան մարմին մը, առաջին օգնութիւնները հասցնելու համար: Այս մարմինը յետոյ ընդլայնուեցաւ և տրուեցաւ կաթովիկոսական փոխանորդ Պետրոս արք. Սարաճեանին, երբ սկսուած հանդանակութեան շարունակումը ստանձնեց Հ.Բ.Ը. Միութիւնը, նա-

խառնասուած դումարը կրկնապատկելով եւ եռապատկելով: Յրանսական Բարձր Քոմիսերութիւնը եւ Ազգերու Ընկերութեան Գաղթականական Մարմինը եւս իրենց դրամական օժանդակութիւնները բերին ու հաստատուեցան զաղթականները Այնճարի, Սուրի, Նաճրի մէջ: Սանճաքի զաղթականութեան օժանդակութեան եւ տեղաւորման խնդիրներուն մէջ ստանձնեցինք պատուարեր դեր մը եւ կրցանք արգարացնել մեր Կուսակցութեան ժողովրդանուէր դործունէութիւնը: Սարաճեանս ս. ին նախադաճութեամբ դործող յանձնախումբին անդամներն էինք՝ ընկեր Բարունակ Թովմասեանը եւ ես Կուսակցութեան, ընկերներ Հմայեակ Գրանեանը եւ Միք. Նաթանեանը Բարեգործականին եւ Բիւզանդ Եղիաշեանը Անթիլիասի կաթողիկոսարանին կողմէ: Մեզի կ'օժանդակէր նաեւ Լիբանանի խորհրդարանի հայ անդամ Վահրամ Լէյլեկեանը, որուն հետ զսարնիկեր եղած էի Կ. Պոլսոյ իրաւարանական վարժարանին մէջ, Ֆրանսական թէ լիբանանեան իշխանութեանց հետ յարաբերութեանց համար:

«Զարթօնք»ը փոխադրած էինք, իր սեփական տառերով, կաթողիկէ հայոց Ս. Եղիա եկեղեցւոյ բակին կից արարական տպարանի մը: Մեր խմբագրատունը դարձած էր Սանճաքէն գաղթած մեր ընկերներուն եւ բարեկամներուն ժամադրաւայրը: Անոնց համար զօրավիշ եւ մխիթարութիւն մըն էր մեր եզրայրական վերաբերմունքը, որ բնական էր նման պարագաներու մէջ, մանաւանդ որ Սանճաքի զաղթականներու օգնութեան յանձնախումբին տաննապետի պաշտօնով յաճախ կ'այցելէի զաղթականները եւ անձնապէս մօտէն տեղեակ կ'ըլլայի անոնց կարօտութեանց ու մեր ընկերներուն ակնկալութեանց: Այս կերպով է որ կրցայ տեղաւորել Սուրի մէջ Մուսալեբան զաղթականներէն Եսայի Եսպոսպեանը, Սամսոն աղան, Ասատուր աղա Դաւթեանը, Ալեքսանտրէթէն Թորոս Լուսինեանը, Յիսու Յովսէփեանը եւ ուրիշներ: Սուրի զաղթականին մէջ հաստատեցինք դպրոց մը, որ պաշտօնի կոչուեցաւ Թ. Լուսինեանը: Կը յիշեմ Եսայի Եսպոսպեանին գոհունակութիւնը, երբ տեղաւորուած էր իրեն յատկացուած տունը, որ ուզած էր որ ըլլայ բարձրութեան մը վրայ, ուրկէ կարենայ ընդգրկել զաղթականին սահմանները: Իր փափաքն էր նաեւ որ կարենայինք իրեն համար առնել ձի մը, որպէսզի կարենար ջրջիլ եւ պահակութիւն ընել՝ զբացի գիւղերու բնակիչներուն ռանձկութեանց դէմ պաշտպանելու համար զաղթականին հոգերը:

«Զարթօնք»ին նոր տպարանը թէ եւ կեդրոն տեղ մը, Պուրճի հրապարակին մօտ, սակայն չատ անշուք էր: Մեր խմբագրական սենեակն էր, ցած ձեղունով, հազիւ կը պարփակէր խմբագիրը եւ օգնականը, որ ընկեր Գրիգոր Պեքրեճեանն էր, յետոյ մեկնած հայաստան: Եզրպատտի հետ մեր յարաբերութիւնները խզուած էին

սլատերազմի սլատճառով, բայց Ֆրանսայի հետ յարաբերութիւնները կը պահուէին: Պատերազմի նեղութիւնները կ'անդրադառնային մեր վրայ եւս. սակայն արգարութիւն է ըսել թէ ընկեր Մկրտիչ Մսրըլեանին ներկայութիւնը մեզի համար զօրավիգ մը եղաւ մեր նեղ օրերուն մէջ եւ, ի միջի ալլոց, կրցանք ապահովել թերթին թուղթը, որ ալ օրերուն դժուար կը հայթայթուէր:

Ազգային մարզի վրայ կարեւոր դէպքեր եղան Անթիլիասի կաթողիկոսարանին կանոնադրութեան մշակումը եւ կաթողիկոսական ընտրութիւնը, որ տեղի ունեցաւ 1941ի դարնան: Յատուկ յանձնախումբ մը կազմուած էր կանոնադրութեան մշակման համար: Ասոր անդամներն էինք, որքան կը յիշեմ, Հրաչ Փապիակաւնը՝ Դաշնակցութեան կողմէ, եւ՝ ուսմկավար ազատականներու կողմէ, Հ. Գրանեանը եւ Բ. Նզիրայեանը: Կանոնադրութեան հիմք կը կազմէր Ազգային Սահմանադրութիւնը: Կաթողիկոսարանը պիտի ունենար «ազգային» կամ սլատգամաւորական ժողով մը, որ պիտի ընտրէր վարչութիւն մը կամ քաղաքական ժողով մը, իր կողքին ունենալով կրօնական ժողով մը: Այս ժողովները պիտի հակակշռէին կաթողիկոսարանի գործերը եւ հաշիւները: Այս կանոնադրութիւնը պիտի գործադրուէր՝ երբ վաւերացուէր նոր ընտրուելիք կաթողիկոսին կողմէ: Արդարեւ, կատարուեցաւ կաթողիկոսական ընտրութիւնը եւ միաձայնութեամբ ընտրուեցաւ Պետրոս արք. Սարաճեանը, որ եղած էր չինարար եկեղեցական մը եւ կաթողիկոսարանի ներկայ չէնքերը չինած: Իր սլատոնաւարութիւնը տեւեց երեք ամիս միայն եւ վախճանեցաւ՝ առանց կարենալ վաւերացնելու նոր կանոնադրութիւնը: Իր յաջորդը՝ Գարեգին կաթողիկոս մերժեց զայն վաւերացնել:

Նոյն միջոցին դուպպիակեցաւ նաեւ Էջմիածնայ կաթողիկոսական ընտրութիւնը: 1937ին Խորէն կաթողիկոսը վախճանած էր Հայաստանի մէջ սլատահած ցաւալի զէպքերու ընթացքին եւ յաջորդ մը չէր ընտրուած: 1941ի ամառը պիտի դուժարուէր ազգային եկեղեցական ժողով, անոր յաջորդը ընտրելու համար: Լիրանանէն երկու սլատգամաւորներ պիտի մեկնէին, Խաղարքեպօկ եւ աշխարհական մը: Ասոր համար երկու թեկնածու ներկայացուած էր Փրանսական Բարձր Քոմիսերութեան, անցադրի արտօնութեան համար: Մէկը՝ Գոսպար Իփեկեան, միւսը՝ եւ: Բարձր Քոմիսերութիւնը նախընտրեց Գ. Իփեկեանը, որ արդարեւ մեկնեցաւ, բայց... Երեսուցէմի ճամբով Պարսկաստան, եւ անկէ անդին չանցաւ: Խաղ սրբազանը Էջմիածին հասաւ առանձին, բայց սլատերազմի սլատճառով բոլոր սլատուիրակները կարելիութիւնը ունեցած չըլլալով ուղեւորել զէպի Էջմիածին, ընտրութիւնը յետաձգուեցաւ:

1941 Յունիսին տեղի ունեցաւ անդլիական ուժերու յարձակումը զէպի Պաղեստին եւ Լիրանան: Անոնց կ'ընկերանային

Կոլխոթ Ֆրանսական ուժերը: Պէյրուի Ֆրանսական ուժերուն վերջին հրամանատարն էր զօր. Տէնցը, բարձր քոմիսէր, որ յետոյ մահուան պիտի դատապարտուէր: Ասոնց զիմադրութիւնը երկար չտեսց եւ ամիս մը ետք Պէյրուի գրաւուեցաւ:

Պատերազմական դէպքերու ընթացքին ընտանեօք դիւզադնացութեան ելած էինք Թըզըին, Սանինի ստորոտը. բայց երբեմն կ'իջնէի Պէյրուի եւ քանի մը անգամ ներկայ եղայ ումբերու անկումին քաղաքին վրայ, անոնցմէ մէկն ալ ինկաւ մեր տան մօտ: Անգլիացիներու եւ Կոլխոթ Ֆրանսացիներու ժամանումով քաղաքական դէպքերու ուղղութիւնը փոխուած էր. նախապէս խզուած յարաբերութիւնները հաստատուած էին արտասահմանի հետ. ստոր փոխարէն՝ պիտի խզուէին յարաբերութիւնները Ֆրանսայի հետ:

Այդ միջոցին էր որ Եգիպտոսէն հասան ընկերներ էօփէն Բարապեանը եւ Շաւարշ Սեյժոնքեանը, որոնց յայտնեցի Ֆրանսա վերադառնալու մտադրութիւնս, որովհետեւ կ'ինս եւ ես մահուոյ էինք մեր ընտանեկան պարագաներուն մասին, որոնցմէ խզուած էինք եւ լսած՝ որ կ'նշու հայրը ծանր կերպով հիւանդ էր: Վրաստան էի թէ իմ մեկնումս որեւէ կերպով պիտի չվնասէ թերթին, որքան ատեն անոր գլուխը կը մնար ընկեր Թովմասեանը, մահաւանդ Եգիպտոսի հետ յարաբերութիւններու վերահաստատումէն յետոյ: Եւ արձանագրուեցանք Ֆրանսա վերադառնալ փափաքող Ֆրանսացիներու հետ, որոնք պիտի մեկնէին չոգենաւով:

Արգարես, «Զարթօնք»ը անխափան շարունակուեցաւ իմ մեկնումէս յետոյ եւս: Ատիկա կը պարտիք ընկեր Բարունակ Թովմասեանին, որ ինչպէս թերթին հիմնարկութեան, նոյնպէս եւ անոր գոյատեւման մէջ կատարեց զլիսաւոր դերը, իր աշխատանքը եւ յոգնութիւնը երբեք չ'ընդհատուեցաւ: Կանդ չառնելով որ եւէ զոհոյթեան տոջեւ, նոյնիսկ մտանդելով իր պաշտօնը Ամերիկեան համալսարանին մէջ: Ան է որ իր քաջքով կը պահէր լատաղոյն յարաբերութիւններ անդալան թէ հոգատար իշխանութեանց հետ, հարթելով դժուարութիւնները, քաղաքական փափուկ պայմաններու մէջ.....:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ, ԿՐԱՆՍԱՅԻ ՄԵՋ

Ֆրանսական իշխանութեանց կարգադրութեամբ եւ գրուման բանակի հրամանատարութեան ալ հաւանութեամբ, Լիբանանի եւ Սուրիոյ Ֆրանսացիները չոգենաւով փոխադրուեցան Մարսէյ, հետեւին տոնելով իրենց ինչքերէն եւ կահոյքներէն ինչ որ կրնային: Շոգենաւերը երեքական կամ չորսական խում-

րերով կը մեկնէին, Հճանդիպելու համար թշնամի — խտալական կամ գերմանական — ուժերու ընդգրկմութեան կամ անոնց կողմէ ընկղմելու վտանգին: Արդարեւ, խտալական ջուրերու մէջ հանդիպեցայ մարտանաւերու, որոնք հետուէն կը հետեւէին ֆրանսական չուկնաւերու, որոնք ներգաղթողներ կը փոխադրէին:

Մարտէլլի մէջ, ուր գիմաւորուեցանք զինուորական սպառններով, ձեռք առնուած էին կանխաւ. բոլոր կարգադրութիւնները՝ վերադարձողները իրենց տեղերը հասցնելու կամ զանոնք առժամեայ կերպով հիւրասիրելու համար զանազան հանրային շէնքերու մէջ: Նոյնիսկ անոնց կը բաժնուէին սպարենաւորութի եւ հագուստեղէնի համար քարթեր, առանց որոնց կարելի էր գնել որեւէ բան: Պատերազմի հարկադրանքներուն պիտի վարժուէինք մենք ալ, որ առատութեան երկիրէ մը կու գայինք եւ տակաւին չէինք զգացած սպաւերազմը մեր մարթին վրայ:

Մեր ծրարները եւ գոյքերը Մարտէլլի քարափին վրայ իջեցնելէ յետոյ, իմացանք թէ չէինք կրնար Փարիզ երթալ առանց գերման զբաւման իշխանութեանց արտօնութեան: Ատոր սպասելով, պէտք էր գտնէինք տեղ մը, պատասպարուելու համար: Ասիկա առաջին անակնկալն էր: Օրը կիրակի էր եւ քանի մը բնակիւններ, որոնց հասցէները գիտէի, բացակայ էին: Երկու շաբթի օր զացի գտնել ընկեր Մարիզեանը, լսած ըլլալով թէ Բաբելորձականի գրասենեակը առժամապէս Փարիզէն փոխադրուած էր Մարտէլլ: Բարաուգար Թալէստանին հետ խորհրդակցելէ յետոյ, ընկեր Մարիզեանը ցաւով յայտարարեց թէ որեւէ տեղ զբանել կարելի չէ Մարտէլլի մէջ: Բայց ստիպուած էինք որեւէ տեղ ձգել, չուկնաւին մէջ մնալ կարելի չըլլալով: Անմիջապէս հետադրեցինք Լիոն, մօտիկ ազգականի մը, որ մեզի պատասխանեց թէ կրնայ մեզի սենեակ մը տալ, ու նոյն օրն իսկ մեկնեցանք Լիոն, ուր փոխադրուեցաւ մեր կահ կարասին ալ:

Մեր ազգականին մօտ հասնելէ յետոյ միայն գիտակցեցանք բոլոր այն զժուարտութիւններուն, որոնց հետ պէժ առ պէժ կը գտնուէինք: Նախ պէտք էր մտածել ապրուստի մասին, որովհետեւ Փարիզ երթալու արտօնութիւնը կ'ուշանար եւ երբեք պիտի չգար: Լեցուն զրպաններով չէ որ կու գայինք եւ մեր վախ միջոցները սպառելու վրայ էին: Ի՞նչ կրնայի ընել ինձ անձմանօթ միջալայրի մը մէջ, ուր ամէն սք իր զժուարտութիւններուն պէժ կը պայքարէր: Գաղափարը ունեցայ փորձելու քանի մը ֆրանսերէն յօդուածներ պատրաստել եւ տանիլ ֆրանսական թերթերու, որոնք Փարիզէն փոխադրուած էին Լիոն, ինչպէս «Լը Ժուրնալ» մեծ թերթը: Առաջին ամթիւ պատերազմի զէպքերուն հետ կապուած յօդուած մը գրեցի Պարուի քարիւղի հանքերուն վրայ, որովհետեւ այդ օրերուն գերման բանակները կ'ուղղուէին զէպի Կովկաս: Սրատարով կը սպասէի որ յօդուածը երեւնայ «Լը

Ժուրնալ»ի մէջ, որուն տարած էի դաշին: Ու աստու մըն ալ տե-
սայ, առաջին էջին վրայ, մեծ վերնադասերով տպուած յօդ-
ւածս, ինչ որ քաջութիւն տուաւ ինձ ներկայանալու թերթին
խմբագրատեղին, որ Մարտիկաքն էր, յայտնի զէմք մը լրագ-
րական աշխարհի մէջ: Զիս համակրանքով քնդանեց եւ բաւ թէ
կրնամ շարունակել աշխատակցութիւնս: Ու իբրեւ վերջարան
բաւ:

— Կրնաք տեսնել մեր գանձապահը եւ ստանալ ձեր վճա-
րումը...:

Հայ լրագրողի կեանքիս մէջ երբեք նման բան չէի յաճ եւ
ասիկա զիս դարձացուց ու մտաւորութիւն ներշնչեց: Անցէ՛ք ձեր
վճարումը ստանալու համար: Ու արդարեւ, թէ՛ այս փորձիկան
մեծ թերթին եւ թէ՛ տեղական «Լը Նոսթրալ» կաթոլիկ թեր-
թին աշխատակցեցայ պարբերաբար ու ամով կրցայ կեանքս շա-
նիլ մօտ երկու տարի: Կը ստորագրէի անուանս գլխատուերով
(Օ. Պէ. կամ Պէ.):

..... Լիոնի մէջ ունէինք հին ընկերներ՝ Յակոբ Շահպաղ,
Ստրէն Քեպրազեան, Յ. Տէր Ահարոնեան, Պօղոս Մեսսմեան
ևւն: Յաճախակի կը տեսնուէի գրադէտ Երուանդ Տէր Անդրէաս-
եանին եւ պատուելի Գ. Խաչիկեանին հետ, որոնք հաստատուած
էին քնտանեօք այս քաղաքին մէջ: Պատ. Խաչիկեանին գաւկին՝
Տիրանին հետ հին ծանօթներ եւ բարեկամներ էինք արդէն: Երբ
ժամանակ գտնէի պարենաւորման համար անխուսափելի «պր-
ջ»երէ կամ սպասումներէ, կ'երթայի քաղաքին մատենադարանը՝
ուսումնասիրութեանց համար:

Պատերազմի պատճառով սակզծուած միջոցաւ մը եւ
հարկադրանքներուն մէջ կուտակեցական գործունէութիւնը դադ-
րած էր, ինչպէս դադրած էին ազգային բոլոր գործունէութիւն-
ները, որքան ալ գտնուէինք «ազատ գօտի» մէջ, այսինքն՝ գեր-
մանական գրուման շրջապէսն զուրս, ենթակայ՝ ֆրանսական
օրէնքներու: Ինչ որ արդելք չէր ընկերական յարաբերութեանց:
Երբեմն կ'այցելէի Տեսին եւ Վիլն քաղաքները, որոնք շատ մօտիկ
էին եւ ուր եւս ունէինք ընկերներ կամ համակիրներ, ինչպէս՝
Ս. Ալամեանը, Մ. Ժիհանեանը, Լ. Ղարիպեանը, Կարօ Տէր
Գարրեթեանը (Տեսին), Մեսրոպ Ժիլերճեանը, Կօչկարեանը, Կ.
Խաչատուրեանը, Յ. Օհանեանը, Տէրադեանը, Ալիպեանը
(Վիլն) ևւն: Կապ կը պահէի Հ.Բ.Ը. Միութեան մարմիններուն
հետ, ու երկու անգամ ալ շրջաններ ըրի հարաւային Ֆրանսայի
մէջ, հանդիպելով Ալն-Շամօն, Ալն Թիթիէն, Վալյան, Փոն տիւ.
Շերիւի ևւն, ուր եւս ընկերներ ունէինք, ինչպէս՝ Տօնապետեա-
նը եւ Տեմիրճեանը (Ալն-Շամօն), Տեմիրճեանը, Յովսէփեանը եւ
Սարալտաբեանը (Ալն Թիթիէն), Յ. Կարապետեանը, Օ. Պօյա-
ճեանը, Տ. Ալամեանը ևւն. (Վալյան): Այս այցելութիւններուս

չնորհիւ կը տեղեկանայի տեղական պէտքերուն եւ իմ հնարաւորութեանս սահմանին մէջ կը ջանայի օգտակար ըլլալ: Այդպիսութիւններէս յետոյ կը հասցնէի տեղեկագրեր Փարիզ, Շ.Բ.Ը. Միութեան վարչութեան:

Ուրիշ պարտականութիւն մըն ալ դրուած էր վրաս Լեւոն Բաշաբեանին կողմէ, որ իրբեւ Հայ Գաղթականաց Գրասենեակի անօրէն կը մնար Վիշի եւ կը յարարեւէր Ֆրանսական իշխանութեանց հետ, հայաց վերաբերեալ խնդիրներու մասին: Կերպով մը իր անպաշտօն ներկայացուցիչն էի Լիւոն եւ կը տեղեկագրէի ինձ ներկայացուած խնդիրները: Այս կարգէն ըլլալով կը պատահէին ինքնութեան թուղթի կամ տուեալական կանոններու եւ սեղմումներու գէմ գործուած արարքներու վերաբերեալ խորհուրդներ: 1943 Փետրուարի սկիզբը երբ մեռաւ Լեւոն Բաշաբեանը, Լիւոնէն հայ քառանայի մը բնակեցութեամբ գացի իր յաղարկաւորութեան եւ այդ առիթով ճանչցայ Վիշիի հայ փոքրաթիւ գաղութը, որուն անդամները Փարիզէն կամ ուրիշ չըջաններէ հոն ապաստանած ծանօթ հայրենակիցներ էին, ինչպէս՝ Գրիգոր Այաթօնը, Ժ. Խամբեանը, Մենտոր Բուենիսթեանը: Այս վերջինը յաջորդեց Բաշաբեանին, իրբեւ քարտուղար Հայ Գաղթականաց Գրասենեակին:

Ես ալ քիչ յետոյ պիտի փոխադրուէի Վիշի բնառնօք, իրբեւ թարգման ուսանողի սպասարկութեան մէջ: Այս պաշտօնը կը պարտիմ ֆրանսայի Բարձր Գոմիսերութեան, որ Պէլլուիէն փոխադրուած էր Վիշի եւ կը շարունակէր զրադիլ Սուրիայէն եւ Լիբանանէն ներգաղթած ֆրանսացիներու գործերով, միաժամանակ ստանձնած ըլլալով անոնց զբաղում գտնելու հօգը: Այս նպատակով ալ իւրաքանչիւրին մասնադիտութիւնը նշանակուած էր անոնց անուանացանկին մէջ: Երբ ուսանողի սպասարկութիւնը պէտք ունեցած էր թրքերէն լեզուի թարգմանիչի մը, զայն չէին գտած եւ գիմած էին ֆրանսական Բարձր Գոմիսերութեան, որ զիս յանձնարարած էր: Վիշի փոխադրուելով կապերս պահեցի նաեւ Հայ Գաղթականաց Գրասենեակին հետ ու ասոր չնորհիւ կրցայ օգտակար ըլլալ ըստմանքի բնակիչներու:

Վիշի բնակչութեանն ընթացքին քանիցս հաճոյքը ունեցայ տեսնելու բնիկ Արշակ Զօպանեանը, որ Փարիզէն կու գար գաղթականական գործերու համար եւ գիմումներ կը կատարէր պատկան պաշտօնատանց մօտ ու նոյնիսկ կ'ընդունուէր անձամբ մարալիս Փեթլէին կողմէ, որ միշտ համակրանքով բնկատուջ կ'երթար իրեն ներկայացուած խնդրանքներուն: Դժուար օրեր կ'ապրէին հայերն ալ, այդ օրերուն, մանաւանդ Փարիզ եւ Ֆրանսայի զբաղման չըջանին մէջ, եւ անոնց անհատական խնդրանքներուն բաւարարութիւն տալը բացառիկ ճիգերու եւ զոհողութեանց գնով կ'ըլլար, ինչ որ սիրով յանձն կ'առնէր Զօպանեանը:

Կը յիշեմ մանաւանդ իր գիմումները այն հայ բժիշկներուն համար, որոնց չէր թույլատրուէր գործել, կամ՝ այս ու այն անհատը փրկելու համար ծանր ամբաստանութիւններէ կամ դատապարտութիւններէ, որոնց կ'ենթարկուէին ֆրանսական կամ գերմանական իշխանութեանց կողմէ: Աստիճ կ'ըլլային մանաւանդ «սեւ շուկայ»ի պատճառով կամ քաղաքական վերադրումներով: :

«ԱՅՍՕՐ»ԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Վիշիէն վերադարձանք Փարիզ 1944 Հոկտեմբերին, երբ գերմանացիները հեռացած էին արդէն, եւ ոստիոյի պաշտօնին մէջ վերահաստատուեցաւ:

Պատերազմի սկզբումները վերջացած էին, թէեւ կը շարունակուէին պարենաւորումի եւ այլ գծուարութիւններ: Ընկերական չարարելութիւններն այ կամաց կամաց վերահաստատուեցան եւ առաջին տոթիւ հաւաք մը ունեցանք գերձակ ընկեր թաթույ Մեկքոնեանին խանութի եւ չնորհիւ Սարգիս եղբոր ջանքերուն, վերակազմուեցաւ Փարիզի տկումը:

Գիշ յետոյ պիտի վերահրատարակուէր «Ապագայ»ն, դարձեալ իրրեւ չարաթաթելի, խմբադրութեամբ ընկեր Արտակ Դարբինեանին, երբ վերջացած էր պատերազմը Գերմանիոյ պարտութեամբ:

Խ. Միտթեան կողքին, Դաշնակիցներու յայթանակին իր մարդկային գոհույթեանց ծանր տուրքը բերած էր Հայաստանն այլ, որ հազիւ գտած խաղաղութիւնը՝ իր չինարարական գործին տարնթեր ձեռնարկեց ներգաղթի, իր գոնէր բանալով արաստահմանի հայութեան առջեւ, եւ այդ կարգին՝ ֆրանսահայութեան եւս: Փարիզի մէջ կազմուած էր Ազգային ճակատ մը բոյոր հայ հոսանքներու մասնակցութեամբ եւ ձեռնարկուեցաւ ներգաղթի կազմակերպումին, որուն մէջ կարեւոր եւ գործօն մասնակցութիւն մը պիտի ունենար մեր Կուսակցութիւնն այլ, ընկեր Ս. Դարբինեանին գլխաւորութեամբ:

1947ի տմաւր տեղի ունեցաւ Կուսակցութեան ընդհանուր պատգամաւորական ժողովը Գաշիւրէ. բայց բոյոր չըմաններէն սղասուած պատգամաւորներէն ոմանք ներկայ չկարենալով բլլալ, ժողովը յեաձգուեցաւ յաջորդ տարուան, Փարիզ գումարելոյ պայմանով:

Արդարեւ, յաջորդ տարուան Օգոստոսին Փարիզի մէջ, Լիթեար պանդիր, գումարուեցաւ մեր ժողովը, որուն ներկայ էին Հրաչ Նրումանցի՝ Ամբրիկայէն եւ Խօթէն Բարաղեանը՝ Գաշիւրէէն: Եզիպտոսէն պատգամաւոր նշանակուած էր նաեւ ընկեր

Նուպար Պերպերեանը, որ կը գտնուէր Փարիզ՝ իր իրաւարանական քէզը անցնելու համար: Եղիպտոսէն փոխ-պատգամաւորի հանգամանք տրուած էր ինձ: Լիրանանէն եկած էին ընկերներ Բ. Թովմասեանը եւ Համարաճում Պերպերեանը, եթէ չեմ սխալիր⁽²⁴⁾:

1937ին Գահիրէի մէջ ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը չարունակած էր իր պաշտօնը պատերազմի տարիներուն: Ես ալ պահած էի Կեդրոնական Վարչութեան անգամակցութիւնս, հակառակ կեդրոնաւիպրէն հեռացած ըլլալուս, դէպքերու պատճառաւ: Ժողովը լսեց այս տարիներու դործունէութիւնը եւ որոշեց, ստեղծուած նոր պայմաններու լոյսին տակ, Պէյրութ հաստատել կեդրոնատեղին, հակառակ որ ոմանք կը պնդէին զայն փոխադրել կրկին Փարիզ: Ընկեր Է. Բարազեանը, որ կուսակից եղած էր Պէյրութի, չէր անպիտանար Փարիզի կեդրոնական հանգամանքը եւ քաղաքական տեսակէտով կարեւորութիւնը ու կը մտածէր զայն զօրացնել կուսակցական տեսակէտով եւս, հոս հաստատելով տպարան մը եւ թերթը վերածելով օրաթերթի: Այս նպատակով մտադիր էր ընել նուիրատուութիւն մը եւ հիմնել Հայ Ազգային Հիմնադրամի⁽²⁵⁾ մասնաճիւղ մը, կապուած Գահիրէի, ուր արդէն հաստատուած էր ան եւ շատ յուսադրիչ դործունէութեան մը ձեռնարկած, իրեն հետ ունենալով եղիպտոսահայ զաւուրի խումբերէն եւ օժանդակութիւնը:

Ընկեր Է. Բարազեանը Նիսի մէջ գնած էր տուն մը եւ մասնաւոր եղանակը կ'անցնէր հոն, ընտանեօր: Ուրեմն մօտէն պիտի կարենար հետեւիլ եւ հսկել Փարիզ հաստատուելիք տպարանական ու թերթի դործին: Ասոր համար կ'ուզէր նաեւ իմ դործակցութիւնս ունենալ: Սակայն պետական պաշտօնի կոչուած ըլլալով, չէի համարձակեր դործս ձգել եւ կրկին դառնալ լրագրական աշխատանքի, անկախաբար նիւթական մտահոգութիւններէս:

1949 տարուայ ընթացքին այս ծրագիրը հասունցաւ ընկեր Էօփէնին միտքին մէջ եւ անոր դործադրութիւնը դիւրացած նկատեց, երբ մանաւանդ ընկեր Շ. Սեւօնքեանը Գահիրէէն ուղեց փոխադրուել Փարիզ, իր ընտանիքով: Երկու հօգիւրով պիտի կարենային գլուխ հանել այս ձեռնարկը, որուն գծաւարութիւնները դիտէին կանուխէն եւ պնդեցին որ ես ալ տամ իմ աջակցութիւնս, մանաւանդ որ Քրտեսահպատակ եղած ըլլալով, թերթին արտօնութիւնը կրնայինք ձեռք բերել իմ անուանս, մինչդեռ Փարիզի մեր ընկերներուն մէջ այս հանգամանքը ներկայացնող ուրիշ մէկը չունէինք այդ առնէն:

Ընկեր Բարազեանը 1949 Դեկտեմբեր ամսուն երբ կրկին Փարիզ եկած էր, ծանր հիւանդութիւն մը ունեցաւ եւ ստամոքսէն ենթարկուեցաւ բժշկական դործողութեան մը: Հակառակ իր

ստույգական վիճակին, իր ծրագրերէն չհրաժարեցաւ. բնագնահատելը՝ անոր գործադրութեան տեւիլի փարեցաւ, իր ողորացեալ ձեռնարկէրէր աչքիէն ձեռք բերելով անոր աշխատանոցին վարձակալութիւնը, ապարանքի հաստատելու համար հին: Իսկ տպարանին կազմակերպութեան գործը յանձնեց Հրաչեայ Տէր Ներսէսեանին, ծանօթ տպարանատէր երբեմն Կ. Պոլսոյ, ապա Փարիզի մէջ, որ պատերազմի տարիներուն հաստատուած էր Նիս:

Ընկեր Բարազեանը սկիզբէն արամադրած էր հինգ միլիոն հին ֆրանք, որուն կէսը յատկացուեցաւ տպարանին կազմակերպման, կազմածներուն եւ մեքենաներուն: Տպարանի համար սահմանուած աշխատանոցը, որ կը գտնուէր Սէն Միշէլի հրապարակին մօտ, Ժիւլ-Բէռտ փողոցին մէջ, նորոգուեցաւ եւ զանազան փոփոխութիւններ կրեց: 1950ի ընթացքին այս աշխատանքները լրացուեցան եւ տարւոյ վերջը պաշտօնէս հրաժարեցալ, ստանձնելու համար «Այսօր» օրաթերթին խմբագրութիւնը: Առաջին թիւը լոյս պիտի տեսնէր 1951 Յունուար 1ին: Թերթին եւ տպարանին բացումը կատարուեցաւ հանդիսաւոր կերպով:

Տպարանը «Էր սուէյր» (Արեւ) անունով, կը պատկանէր անանուն ընկերութեան մը, ասուտրական օրէնքներու համաձայն կազմուած, որուն մէջ սկիզբէն բաժիններ ունէինք ընկեր Բարազեանը, Շրջանային Վարչութեան անդամներ եւ ես: Մեծադոյն բաժինը կը պատկանէր ընկեր Բարազեանին: Սակայն երբ 1950ի ընթացքին Փարիզ եկաւ հաստատուիլ ընկեր Շ. Սեյօնքեանը, Ընկերութիւնը վերակազմուեցաւ եւ անոնք որ իրենց բաժինները չէին ուզեր պահել, զանոնք փոխանցեցին ընկեր Սեյօնքեանին, որ ընկեր Էօփէնին հետ գարձաւ գլխաւոր բաժնեակերէն մէկը: Տպարանի եւ թերթի կարգադրութիւնները եղած էին Շրջանային Վարչութեան հետ համախորհուրդ, թէեւ թերթը կուսակցական պաշտօնաթերթի հանդամանք պիտի չունենար՝ գոնէ հրապարակաւ: Ընկեր Սեյօնքեանը պիտի վարէր վարչական պատասխանատուութիւնը. եւ ունէի՝ իրբեւ որոշումաւոր՝ գործին օրինակն պատասխանատուութիւնը, ընկեր Մ. Վարանդին պիտի կատարէր հաշուաւարի գործը՝ պատուակալ կերպով:

Գործը այսպէս կազմակերպուած, յաջողութեան բոլոր պայմանները եւ յոյս ունէր: Թերթը սկիզբէն իսկ լաւ բնութանութիւն գտաւ իր չափաւոր ուղղութեամբ եւ բովանդակութեամբ, մանաւանդ որ հայերէնի հետ ֆրանսերէնի բաժին մըն ալ ունէինք, ֆրանսախօս երիտասարդութեան համար: Զրանսալէն գուր, Եւրոպայի զանազան երկիրներէն ալ ունեցանք աշխատակիցներ եւ բաժանորդներ: Թերթը կը հրատարակէինք 2000 օրինակ, որուն կէսը կը վաճառուէր: Տկար էր ծանուցումներու բաժինը:

Տպարանը առաջին օրէն լաւ չգործեց եւ շտուաւ իրմէ

սպասուած արդիւնքը, որ հասոյթ մը պիտի սպասուէր թերթին: Այդ պատճառով առաջին համաձայնութիւն մը ունեցանք Տէր Ներսէսեանին հետ, որմէ ստիպուեցանք բաժնուիլ: Յետոյ, չէինք կրցած թերթին պիւտճէն հաստատարակչուէլ և ստիպուեցանք բացը դուցել նորանոր ներդրումներով: Ընկեր ի. Բարադեանը հեռզհեռէ իր հինգ միլիոնի նուիրատուութիւնը կրկնեց: Նոյնքան դամար մըն ալ բերաւ, իրբեւ փոխատուութիւն, ընկեր Սեյժեքեանը, և թերթը իր երկրորդ տարին լրացուց անխափան: Երրորդ տարուան սկիզբը սկսանք մեր համակիրներու շարժանակին մէջ հաւաքել նուիրատուութիւն, որուն մասնակցեցան նախ Հայ Ազգային Հիմնադրամի Փարիզի մարմնին անդամները և յետոյ՝ բարեկամներ Լոնտոնէն, Պրիւքսէլէն, Անվերսէն, Միլանոյէն, Ժընէվէն: Այդ միջոցին Փարիզ եկած էր հաստատուիլ



«Այսօր»ին նաշանդանէն տեսարան մը (1953 Մայիս): Զախէն աջ, նստած՝ Մ. Միխրդատեանց, Վ. Մուրաիկեան, տոքթ. Օ. Մանուկեան, Շ. Սիւլօմեան, Ն. Ֆրենկեան, Սերովբէ եպսկ. Մանուկեան, Ե. Հիւսիսեան, տկն. Ս. Քիրքնեան, Գ. Սեֆերեան. ռոքի՝ Կ. Փափազեան, Խ. Երամոֆ-Աւեան, Ա. Օհանեան, Վ. Թոսունեան, Մ. Խաչիկեան. նստողներուն անմիջապէս ետեւը՝ օրդ. Գովանեան, Լ. Թիւրիւնեան, Յ. Պօղոսեան, Վ. Պանտիկեան, Ա. Սափրաստեան, Ա. Զքրաշեան, փրոֆ. Ֆ. Ֆէյալի, օրդ. Ի. Պիւլպիւլեան, Շ. Իմիրզեան:

ընկեր Շատարչ Իմիրզեանը, Իրաքէն, իր գործերը հաշուեյարդարի ենթարկելէ յետոյ: Իր ներկայութիւնը նոր աջակցութիւն մը բերաւ մեր գործին եւ ան ալ իր գրամական զոհողութիւնը չխնայեց, հետագային բաժին մըն ալ աննկող «Լը սոլէյ» ընկերութեան մէջ: Այս օժանդակութեանց չնորհիւ ստեղծուած խանդավառութեան միմուրրախն մէջ տեղի ունեցաւ, Մայիս ամսուն, Հայ Ազգային Հիմնադրամի ճաշատեղանք, Լիւթիսիայի մեծ սրահին մէջ, ի պատիւ մեր գործին օժանդակող բարեկամներու: Այդ աջակցութեանց գումարը հասած էր մօտ հինգ միլիոնի (հին ֆրանք), ինչպէս յայտարարուեցաւ:

Այդ խանդավառ սպասարարութեան տակ եւ հանդիստ սըրտով մեկնած էի արձակուրդի, Յունիս ամսոյ մէջ, Լա Թրանչ կոչուած ծովեզերեայ փոքրիկ քաղաքը: Ասիկա թերթի հրատարակութեան սկիզբէն ի վեր առաջին արձակուրդս էր, սակայն պիտի ստիպուէի դաշն կիսատ թողուլ, որովհետեւ յանկարծ Փաթիլէն ստացայ հեռագիր մը, Յունիս ամիսը չվերջացած, թէ թերթը դադարման ենթարկուած է:

Ի՞նչ էր պատահած, եւ ի՞նչպէս կարելի էր որ մերինին նման թերթ մը այս հարուածը ստանար: Բուն պատճառները մեզի անծանօթ մնացին եւ այդ դադարման պատասխանատուները յականչ անուանէ յոյսի մէջ չըրեուեցան: Կասկածներ ունեցանք միայն, երբ սկսանք անվերջ գիմումներու պետական պաշտօնատանց, ոստիկանական սպասարկութեանց, երեսփոխաններու, փաստարաններու եւ ազդեցիկ անձերու մօտ, հայ թէ ֆրանսացի, այս հանկուղի լուծելու համար: Յայտնի է որ նախանձր եւ շարութիւնը, ձեռք ձեռքի տուած, ամիսներէ ի վեր աշխատած էին մութի մէջ, մեր գործը քանդելու համար, եւ վերջիվերջոյ յաջողած: Ինչ որ կրցանք գիտնալ կամ կուսնել՝ հետեւեալ պատրուակները կամ «յանցանք»ները կը վերապրուէին մեզի:

1.- Մեր թերթը Խ. Հայաստանի համակիր ուղղութիւն մը ունէր եւ հրատարակած էր յօդուածներ, որոնք «կասկածելի» կը նկատուէին:

2.- Մեր խմբագրութեան մէջ առած էինք (վերջին ամսու մէջ) Մկրտիչ Երեցանցը իրրեւ օգնական, որ նախապէս խմբագրած էր ձախակողմեան թերթ մը, արդէն դադարած:

3.- Դրամահաւաքութիւն բրած էինք Ֆրանսայէ դուրս դառնալու երկիրներու մէջ մեր թերթին համար:

4.- Մեր թերթին մէջ հայերէնի դատրնթացք մը հաստատած էինք Ֆրանսախոսներու համար, ինչ որ ձուլումի դէմ ասնուած միջոց մը կը նկատուէր:

5.- Կասկածներ ներշնչուած էին ընկեր Սեւօնքեանին դէմ, իրրեւ փաստարան կատարած իր կարգ մը գիմումներուն համար իշխանութեանց մօտ: Արդարեւ, ընկեր Սեւօնքեանը կը

գրադէր նաեւ փաստաբանական գործերով, մեր տպարանին մէջ ունենալով իր գրասենեակը:

Սակայն այս բոլորը, անոնց վրայ աւելցնելով ուրիշներ ալ, տակաւին բաւարար կերպով համադրէ չէին թերթի գաղափրաման համար՝ առանց որոշ ամբաստանութեան մը. բայց մեզի ըսուեցաւ թէ օտար լեզուով հրատարակուող թերթերը միշտ ենթակայ են վարչական որոշմամբ մը զաղարուսի: Եւ ասիկա ճիշդ էր: Ֆրանսերէն թերթ մը միայն զառարանի վճիռով կրնար զաղարման զառապարտուիլ:

Թերթին զաղարումը տպարանին համար ալ հարուած մը եղաւ: Եւ զանազան վճարումներ եկան աւելնալ մեր պարաքերուն վրայ, որոնց մեծ մասը կը կադմէին զանազան պետական տուրքեր: Այդ պատճառով ալ պաշտօնական հաշուեքնութեանց տոտրկայ եղանք: Վերջապէս, գծրախառնութիւնները իրենց հետ կը բերեն ներքին անհամաձայնութիւններ եւս: Եւ յարարերութիւնները յարուեցան բնիկներ Էօփէնին եւ Սեյօնքեանին միջեւ, գործին նիւթական մատակարարութեան ու հաշիւներուն պատճառով:

Ամերիկայէն վերադարձին, բնիկը Սեյօնքեանը անտկրեկալը ունեցաւ. շատ ծանր որոշումի մը տալիս. գտնուելու ֆրանսական իշխանութեանց կողմէ եւ ստիպուեցաւ հետանալ Ֆրանսայէն: Ասոր ալ պատճառը կամ պատասխանատուութիւնը, որոնք թերթին զաղարման հետ կապ ունէին, մնացին մտիկին մէջ:

Բնիկը Սեյօնքեանին «Էր սոյէյր» բնիկրութեան մէջ ունեցած բաժինները փոխանցուած էին բնիկը Ծ. Իմիրզեանին, որ բնիկը Էօփէնին ալ փոխանորդութիւնը ունէր տպարանի գործերը վարելու համար: Տարին վերջացուցած էինք մտահոգութեամբ: Բարերախառնութիւն մը եղաւ. որ նոր տարւոյն սկիզբները Գահիրէէն Փարիզ փոխադրուած էին երկու հրեայ կորալներ, մէկը տուտարական, որ գործով մը կ'ազէր հաստատուիլ հոս: Ծանօթ ըլլալով բնիկը Է. Բարազեանին, այս վերջինը ներկայացուցած էր մեր տպարանը եւ առաջարկած որ զինք գոյն: Այս մասին կատարուած բանակցութիւններէ յետոյ համաձայնութիւն գոյացաւ եւ յիշեալ երկու կորալները ծախու առին տպարանը, իր գոյրով եւ պարաքերով: Ասիկա եղաւ վախճանը այնքան զոհոյթիւններով եւ յոյսերով սկսուած գեղեցիկ գործի մը:

Տպարանը զնոյ կորալները օտարահոգատակ ըլլալով՝ խնդրեցին որ շարունակեմ մնալ իրրեւ տպարանին պատասխանատու վարիչը օրէնքին տալիս: Արդէն կը շարունակէի գործս կէս թոշակով, յորմհետէ զաղարած էր թերթը: Իմ զոհոյթիւնս այն եղաւ որ պետական պաշտօնս եւ հանգստեան թոշակի իրաւունքը կորսնցնելէ յետոյ կը ստիպուէի այլեւս օտար հաստատութեան մը մէջ աշխատիլ նուազագոյն վճարումով մը: Միայն

թէ ասիկա թոյլ կու տար որ տրամադրութեանս տակ ունենամ զրասենեակ մը, որուն կից պահարանի մը մէջ փոխադրած էինք «Ապագայ»ին շրջանէն մնացած թուղթեր եւ գիրքեր: Անոնց վրայ կ'աւերնային հիմա «Այսօր»ին թուղթերը եւ գիրքերն ալ: Ասոր շնորհիւ կրնայի շարունակել իմ աշխատակցութիւնս մեր մամուլին եւ ձեռնթափ ըլլալ իմ կուսակցական թէ ազգային գործունէութենէս:

Այս գործունէութեան շրջանակին մէջ կ'իյնար Հ.Բ.Ը. Միութիւնը, որուն երկարատեւ անդամը եղած էի եւ 1949էն ի վեր Եւրոպայի Կեդրոնական Յանձնաժողովին կ'անդամակցէի, վարելով երբեմն աստեղագիրի պաշտօնը: Եւ երբ 1960ին Արամ Թերզեանին հրաժարումով բաց մնաց Հ.Բ.Ը. Միութեան Փարիզի գրասենեակին փարշական քարտուղարի պաշտօնը, որուն համար յարմար թեկնածու մը չգտնուեցաւ, հրաւիրուեցայ այդ պաշտօնին:

Դժբախտաբար այս շրջանին զուգահեռեցաւ Բարեգործականի ներքին տագնապը, Փարիզի եւ Նիւ Նորքի միջեւ ստեղծուած ցաւալի վէճին պատճառով, կանոնադրական հարցերու շուրջ: Դադրած ըլլալով Վարչութեան անդամ ըլլալէ, որեւէ պատասխանատուութիւն չէի կրնար ունենալ արուած որոշումներուն կամ լրագրական պայքարին մէջ, բաւականանալով կատարել ինչ որ զրասենեակի պաշտօնիս հարկադրանքն էր: Միակ մագթանքս էր որ գոյանայ համաձայնութիւն մը՝ վերջ տալու համար այս վէճին, որ հոգեպէս կը տատապեցնէր զիս, տեսնելով այն բարոյական միասը, զոր կը կրէր Միութիւնը այս ներքին վէճին հետեւանքով: Ասոր պատճառով անողջութիւնս այ խանդարուած էր եւ իժիշկս խորհուրդ կու տար որ աշխատանքէ դադարիմ: Միս կողմէ, արուած ըլլալով մեր Կուսակցութեան վերին մարմիններուն կողմնորոշումը, որ իմ գիրքս զժուարութեան կը մատնէր եւ զիս հակասութեան մէջ կը դնէր մեր մամուլին ուղղութեան հետ, տուի հրաժարականս իմ պաշտօնէս եւ զրասենեակէն քաշուեցայ 1965 Հոկտ. 1ին: Եւ Կեդրոնական Վարչութեան փափաքին ընդառաջ երթալով, վերագրեցայ մեր մամուլի աշխատակցութեան գործին, որքան կը ներէին իմ հնարաւորութիւններս:

Այն ազգային կրթութիւնը, զոր ստացած էի Կեսարիոյ Ս. Կարապետի փարժարանին մէջ, զիս պատրաստած էր ազգային ծառայութեան, որուն նուիրուեցայ նախ իբրեւ ուսուցիչ, յետոյ մտնելով Ռ. Ազատական Կուսակցութեան մէջ: Կեանքիս վախճանին մօտ, զոհոնալիութիւնը ունիմ մտածելու որ այդ կերպով կրցայ օգտակար ըլլալ իմ պատկանած ազգիս: Եւ այդ գոհունակութիւնը կը կազմէ իմ գլխաւոր վարձատրութիւնս:

Փարիզ, 10 Նոյեմբեր 1965

Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

1.- Թէեւ Թէֆէեանն ու Տամատեանը Պոլիս հասած էին 1908-ի Օգոստոսին, իսկ Հայ Սահմ. Ռամկավար Կուսակցութեան կազմուքինը հռչակւած էր Հոկտ. 31-ին. բայց մինչ այդ արդէն Եգիպտոսի մէջ յառաջ կը տարւէին Կուսակցութեան հիմնումը ապահովող բանակցութիւնները, որոնց նախածեռնարկ եղած էին նաեւ Թէֆէեանն ու Տամատեանը: Այս առումով ալ անոնք կը նկատուին հիմնադիրները Հ.Ս.Ռ.Կ.Ի Եգիպտոսի մէջ, ապա նաեւ՝ անոր Պոխոյ մասնաճիւղին, որ յետոյ ձեռք պիտի բերէր կեդրոնական դիրք:

2.- Շահնագարին «Հայրենիք»ը կիսապաշտօնաբերք կը նկատուէր անոր համար որ Թէֆէեանը խմբագիր էր հոն եւ քերքը կը հետեւէր ռամկավար ուղղութեան: Զայն Հ.Ս.Ռ.Կ.Ի եւ Հ.Բ.Բ.Մ.Ի պաշտօնաբերքին վերածելու համար ալ ջանքեր եղած են ատենին, եւ Թէֆէեանը 1910-ի Փետրուարի սկիզբը անցած է Գահիրէ՝ ներքակն միջոցներ ապահովելու նպատակով: Թէֆէեանին առաջնութիւնը յանգած է յաջող արդիւնքի եւ ան Ապրիլ 4-ին դարձած է Պոլիս. սակայն Շահնագարը զանազան ննջումներու տեղի տալով քերքը փակած է Ապրիլ 18-ին...:

3.- Այս մասին տեսնել նաեւ մեր «Համառօտ պատմութիւն ՌԱԿ-ի» գրիոյկը, Պէյրութ, 1978. ինչպէս նաեւ «Ռամկավար եւ Ազատական Կուսակցութիւններու միութիւնը» յօդուածը, «Զարբօմֆ-բացատիկ», Պէյրութ, 1982, էջ 99-102:

4.- 1919 Յունիս 5-ին հիմնուած Հայ Ազգային Ազատական Միութեան կազմութեան մանրամասնութիւններուն համար տեսնել մեր «Հայ Ազգ. Ազատական Միութիւն» յօդուածը, «Զարբօմֆ» օրաքերք. Պէյրութ, 9 Ապրիլ 1983, Գ. էջ:

5.- Այդ համաձայնութեան պաշտօնագիրը տեսնել ներկայ հատորին «Յանելուած» բաժնին մէջ: Դիտելի է քէ բանագնացները Պօղոսեանին կողմէ յիշեալ չորս անունները չեն եղած միայն:

6.- Թուականը, ըստ երեւոյթի. պէտք է ըլլայ 1921, եւ ակնարկութիւնը հաւանաբար Ֆրանսայի Շրջանակի պատգամաւորական ժողովին է:

7.- Ռ.Ա.Կ.Ի առաջին րնդհանուր պատգամաւորական ժողովն է որ կայացած է 1922-ին, եւ ոչ քէ երկրորդը: Յ. Պօղոսեանը շփոթի մէջ է: ՌԱԿ-ի Ա. ընդհ. պազմ. ժողովին մասին տեսնել Արտակ Դարբինեանին «Հայ ազատագրական շարժման օրերէն» գիրքը, Փարիզ, 1947, էջ 544-549:

8.— 1924-ի Յունուար 14-ին Փարիզի մէջ գումարուիլ սկսած ընդհ. պտգմ. ժողովը երկրորդն էր կարգով, ոչ քէ՝ երրորդը: Այս մասին տեսնել Ա. Դարբինեանին նշուած աշխատութիւնը, էջ 558-573:

9.— Լոգանի խորհրդածողովը տեղի ունեցաւ. 1922 Նոյ. 20-1923 Յուլիս 24 եւ վերջ գտաւ դաշնագրով մը, ուր յիշատակութիւն անգամ չկար Հայաստանի եւ հայոց մասին: Այդպիսով, փաստօրէն, Արեւմտահայաստանը կը մնար քրքական տիրապետութեան տակ:

10.— Արթիւրային նկարերու անբաւարարութեան պատճառով Թէֆէեանին հրաժարականին պատճառով կը մնայ աղօտ: Թէֆէեանը յիշեալ պատգամաւորական ժողովին յղած իր 25.1-1924 քուակիր նամակով յայտնած է քէ կը հրաժարի անոր համար որ բանի մը ընկերներ իր մասին դրական կարծիք չունին, բացի այդ՝ ինք չ'ուզէր որ Կուսակցութիւնը հարուստի մը ենթարկուի...: Հրաժարականը չ'ընդունուի ժողովականներուն կողմէ եւ կարն տեսնել մը ետք Թէֆէեանը կրկին կը փարի կուսակցական գործունէութեան:

11.— Այս մասին անհրաժեշտ ծանօթութիւններու համար տեսնել մեր «Արմենական Կուսակցութիւնը (ակնարկներ)» աշխատութիւնը, Պէյրութ, 1985, էջ 59-62:

12.— 1926-ի Մարտին կայացած Ռ.Ա.Կ.ի Գ. ընդհ. պտգմ. ժողովին մասին տեսնել Ա. Դարբինեանին նշուած աշխատութեան 592-599 էջերը:

13.— Ա. Դարբինեանը Հայաստան մեկնած է 1922-ին: Իր առաջելութեան մասին ընդարձակ տեղեկութիւններ կան իր նշուած աշխատութեան մէջ, էջ 498-544: 1924-ին Կուսակցութիւնը Հայաստան ուղարկած է Նաայի Կարիկեանը (Հ.Բ.Ղ. Միութեան կողմէ) եւ Աւետիս Թերզիպաշեանը (Պոլսոյ ազգային պատրիարքարանին կողմէ): Յատուկ առաջնութեամբ Հայաստան ուղարկուած են նաեւ Հրաչ Ներումցը (երկու անգամ) եւ Միքայէլ Պապաջանեանը: Վերջինս երեւան չ'հասած՝ Թիֆլիսի մէջ կը վախճանի յետ հիւանդութեան: Իսկ Հրաչ Ներումցը իր առաջնութեան շուրջ ունի շատ հետաքրքրական անտիպ տեղեկագիր մը, որ կը գտնուի Ռ.Ա.Կ.ի Կեդրոնական Արխիւին մէջ:

14.— Յովհ. Պօղոսեան, «Ներկու. ամիս Հայաստանի մէջ», տպարան «Պայքար», Պոսթոն, 1931, 500 էջ: Գիրքը հրատարակութիւնն է «Պայքար» օրաքերթին վարչութեան:

15.— 1931-ի Օգոստոսին կը կայանայ Ռ.Ա.Կ.ի Ն. ընդհ. պտգմ. ժողովը: Այս մասին տեսնել Ա. Դարբինեանին նշուած աշխատութիւնը, էջ 602-605: Հոս սխալմամբ իբրեւ Գ. ընդհ. պտգմ. ժողով ներկայացուած է գումարուածը:

16.— Կարելի չեղաւ գտնել հետքեր «Ա. Նիկոլ»ի ակնարկուած գրքոյկին եւ քացայայտել հեղինակին ինքնութիւնը:

17.— 1934-ին Գահիրէ լոյս տեսած 32 էջանոց այս գրքոյկին բովանդակութիւնը տեսնել ներկայ հատորին «Յանելուած» բաժնին մէջ:

18.— Խօսքը Ռ.Ա.Կ.ի Զ. ընդհ. պտգմ. ժողովին կը վերաբերի:

19.— «Մեր դերը ի՞նչ եղաւ եւ ի՞նչ պիտի ըլլայ», Պոսքոն, 1935, 43 էջ: Ամբողջութեամբ կ'արտասուուի «Յաւելուած» բաժնին մէջ:

20.— Ռ.Ա.Կ. ի. ընդհ. պտգմ. ժողովին մասին տեսնել Ա. Գարբին-եանին նշուած աշխատութիւնը, էջ 605-608:

21.— Յուշագրողը շփոթի մէջ է:

Պէյրուքի մէջ կուսակցական պաշտօնաբերք մը ունենալու հարցը Ռ.Ա.Կ.ի Լիբանանի եւ Հարաւային Սուրիոյ Շրջանային Վարչութեան օրակարգին վրայ կը դրուի առաջին անգամ Տ Յուլիս 1935-ին, նշելով քէ «Պէյրուքի մէջ քերթի մը հրատարակուելուն համար, երկար ժամանակներ է ի վեր կարգ մը ընկերներու միջեւ շարունակ խորհրդակցութիւններ եղած են»:

21 Յուլիսի նիստին, խմբագրապետի մը անհրաժեշտութիւնը նկատի ունենալով, ժողովականները կ'որոշեն դիմել տոքթ. Յակոբ Թօփնեանին: Առ այդ պարտականութիւն կ'ը ստանձնեն Շրջ. Վարչութեան Միւսրան Տաւատեանն ու տոքթ. Տիրան Պեգիբեանը:

31 Յուլիսի նիստին, յիշեալ վարչականները կը գեկուցեն քէ տոքթ. Թօփնեանն ընդունած է ստանձնել խմբագրապետութիւնը, քան զիտնալով քէ «քերթը կուսակցութեան պիտի պատկանի ոչ քէ ուրիշի մը»: Ամբիջապէս կ'որոշուի կազմել հանգանակիչ մարմին մը: Կը նախատեսուէր ԳՅՏ օսմանեան ոսկիի գումար մը իբրեւ ամսվարկ:

Իր 7-րդ նիստին ընթացքին, Շրջ. Վարչութիւնը կը կազմէ քերթին հարցերով զբաղելու սահմանուած վարչական մարմին մը, զոր կը բաղկացրնեն Միւսրան Տաւատեանը, Սարգիս Պազալեանը, տոքթ. Յ. Թօփնեանը, Նիքսէս Շիրինեանը, տոքթ. Տ. Պեգիբեանը: Իբրեւ խորհրդակից ասոնց կը միանան Յակոբ Թորոսեանը, Մկրտիչ Մարքիսեանը եւ Կարապետ Ապահեանը: Սակայն, արուած ըլլալով որ տոքթ. Պեգիբեանը կը մերժէ ստանձնել արտօնատիրութիւնը, հարցին յստակացումը կը ձգուի յաջորդ՝ 8-րդ նիստին, որուն ընթացքին Ն. Շիրինեանը, ստիպումներու առջեւ տեղի տալով, ղըժ-կամակութեամբ կ'ընդունի ստանձնել արտօնատիրութիւնը:

3 Սեպտ. 1935-ի 9-րդ նիստին. կը մտածուի հրատարակելի քերթին անունին մասին եւ կ'առաջարկուի որ յառաջիկայ նիստի մը ընթացքին նշուուի ան:

Նիւրական դժուարութիւններու հետեւանալով, ըստ երեւոյթին, Շրջ. Վարչութեան օրակարգերէն կը բացակայի քերթին հարցը, մինչեւ 1936-ի Մարտը, երբ Ռ.Ա.Կ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ-անդամ Յովհաննէս Սեփեանեանին Պէյրուք ժամանումով կրկին կ'արժարժուի ան:

Սեփեանեանը յիշեալ 14-րդ նիստին ընթացքին կը յայտնէ քէ Կեդր. Վարչութիւնը 500 սուր. ոսկի կը տրամադրէ քերթին հրատարակութեան համար, ապա կ'առաջարկէ որ, զործնական նկատառումներով, քերթին վարչական քէ խմբագրական ամբողջ գործունէութիւնը յանձնուի խմբագրապետին եւ վարիչ տնօրէնին *անկախօրէն*, որպէսզի դրամ տուողները նիւրական ու բարոյական իրաւասութիւն չունենան քերթին նկատմամբ: Կ'որոշուի գո-

յացնել 2500 սուր․ ոսկինոց հիմնադրամ մը եւ խմբագրապետ կը կոչուի Մ․ Տամատեանը, որուն կը վստահուի ամօրէնի ընտրութիւնը :

Յաջորդ՝ 2 Ապրիլ 1936-ի նիստին, յարմար կը տեսնուի քերթը կոչել «Զարքօն», քէն որոշուած էր նախապէս «Լաշս» անունը : Կ'որոշուի դիմել հանգանակութեան, յայտարարելով քէ «Զարքօն» անունով ազգային շահերը պաշտպանող քերթ մը պիտի հրատարակուի Մ․ Տամատեանին խմբագրապետութեամբ :

10 Ապրիլի նիստին մէջ կը յստակացուի քէ Շրջ․ Վարչութիւնը իր հսկողութիւնը պիտի ունենայ քերթին վրայ՝ ընդհանուր գիծերու մէջ, եւ քէ խմբագրապետը հարկ տեսնուած ժամանակ պատրաստ պիտի ըլլայ ներկայանալու Շրջ․ Վարչութեան ժողովին :

30 Ապրիլին ժողովակազմները կ'որդեգրեն Մ․ Տամատեանին այն տեսակէտը քէ «նկատի առնելով որ քերթին ուղղութիւնը ըստ երեւոյթին անկուսակցական եւ ըստ էութեան կուսակցական պիտի ըլլայ, նկատելով որ քերթին հրատարակութեան համակիր շատ մը չէզոք անձնատուրքիւններ յեկադրած են որ քերթին իբրեւ արտօնատէր կուսակցական մը չներկայացուի» յարմար է անկուսակցական մը կարգել արտօնատէր : Առ այդ, Ն․ Շիրինեանին հաւանութեամբ, կը ձեռնարկուի նոր արտօնատիրոջ մը որոնումին :

4 Մայիսին իբրեւ արտօնատէր կը յիշատակուի անունը Բարունակ Թովմասեանին : Թերթին տնօրէն կը նշանակուի Յ․ Սեֆեմեանը :

Շատ չանցած, սակայն, Տամատեանը առողջական պատմատներով իսկ Սեֆեմեանը՝ նւիրական, կը ստիպուին հրաժարի խմբագրապետի ու տնօրէնի իրենց վստահուած պարտականութենէն եւ նւիրական դժուարութիւններու հարքումով, 1937 Սեպտ․ 26-ին վերջապէս, Վահան Թէֆէեանին խումբագրապետութեամբ ու Բ․ Թովմասեանին արտօնատիրութեամբ լոյս կը տեսնէ «Զարքօն»ը, իբրեւ Ռ․Ա․Կ․ի պաշտօնաթերթ :

22․- Այդ արգելքի բնութիւնը էր այդ ատեն ամբողջ Սուրիոյ տարածքին :

23․- Ռամկավար Ազատական կուսակցութեան Բ․ ընդի․ պետմ․ ժողովը գումարուած է Գահիրէ, 1946 Հոկտ․ 23-Նոյ․ 2 : Սակայն նկատի առնելով որ կարգ մը Շրջանակներ չէին կրցած իրենց պատգամաւորները դրկել Գահիրէ, որոշուած է կայացնել լրացուցիչ ժողով մը, որ գումարուած է Փարիզ, 1947 Հոկտ․ 11-22 : Անոր իբրեւ Սուրիա-Լիբանանի Շրջանակի պատգամաւորներ ներկայացուած են անունները մերք չըսող Սեդրակեանին, Հայկաչէն Ուզունեանին ու Յակոբ Գաիթեանին, սակայն նիստերուն մասնակցութիւն կրցած է բերել միայն Հ․ Ուզունեանը :

24․- 27 Մայիս 1942-ին հիմնուած Հայ Ազգային Հիմնադրամին մասին մանրամասնեալ տեղեկութիւններու համար տեսնել դոկտ․ Աւետիս Եւփունեանին «Պատմութիւն Հայ Ազգային Հիմնադրամի 1942-1982» աշխատութիւնը, Գահիրէ, 1985, ինչպէս նաեւ մեր գրախօսականը անոր մասին, «Զարքօն» օրաթերթ, Պէյրութ, 12 Սեպտ․ 1985 :

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՌԱՄԿԱՎԱՐ ԵՒ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՆԵՐՈՒ

ՄԻՈՒԹԵԱՆ

Ազգայնական երկու կուսակցութիւններու միացումին համար յառաջ տարուած քանակցութիւնները յաջողութեամբ վերջացած ըլլալով՝ այսօր կը հռչակենք անոնց անպայման ու վերջնական միութիւնը՝

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ անունին տակ:

Այս իրողութիւնը ծնունդ է ուժերու տնտեսումին, կեդրոնացումին, ու ազգային ծառայութեան մասին ամենախորունկ համոզումներու ու կամեցողութեան:

Երկու կուսակցութիւնները կը միանան աւելի ուժգին քափով նուիրուելու համար իրենց կոչումէն բոլորով պարտաւորութիւններուն եւ աւելի ներուժ կեանք տալու համար Ազգայնական եւ Ռամկավարական այն սկզբունքներուն, որոնցմով ժողովուրդի մը քաղաքական գոյութիւնը կը դառնայ առողջ, զօրաւոր, ապահով, եւ ազատութեան ու խաղաղութեան մթնոլորտի մը մէջ բոլոր ուժերը հնարաւորութիւն կ'ունենան իմացական ու տնտեսական անկաշկանդ զարգացումի ու բարգաւաճումի:

Երկու կուսակցութիւններու միութիւնը հաւատարմութեան վերանորոգուած ուխտ մըն է նոյն ատեն դէպի հայ ժողովուրդի քաղաքական, տնտեսական ու մտաւորական լաւագոյն շահերը ու դէպի ազգային հաստատութիւնները, սեփականութիւններն ու բնորոշող յատկութիւնները, լայնախոհ տրամադրութիւններով, եւ յանձնառութիւն մը՝ միշտ գերծ մնալու հատուածային, դասակարգային ու աղանդամոլական միտումներէ եւ նեղմիտ անջատողականութենէ:

Հայ ժողովուրդի գերագոյն շահերուն մտահոգութիւնովը կայացուած այս միութիւնը վստահ ենք թէ ոչ միայն սիրագեղ զգացումներով ու խանդավառութեամբ իրարու կողմի պիտի նետէ երկու կուսակցութիւններու բոլոր հետեւորդները, աշխատելու բուն եռանդովը լեցուած, այլ ժողովուրդէն պիտի գնահատուի

իբր շինարար գործ, եւ իրեն հրաւիրէ բոլոր այն ուժերը, որ քաղաքական կեանքի մէջ նետուելու համար այս տեսակ միութեան մը քաղաքական ունեւնին:

Այս հասկացողութիւններով ու այս յառաջադրութիւններով հայ իրականութեան կը յանձնենք Ռաւկավար Ազատական Կուսակցութիւնը:

Ռաւկավար
Կուսակցութեան
միութեան լիազօրներ՝
Ա. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ
ԱՐԱՄ ԻՆՃԻՃԵԱՆ
Գ. ՊԵՏՐՅԵԱՆ (Շիկահեր)
Կ. Պոլիս, Հոկտ. 1 1921.

Ազատական
Կուսակցութեան
Կեդրոնական Վարչութիւն
ՄԻՀՐԱՆ ՍՎԱԶԼԵԱՆ
ՀՐԱԶ ԵՐՈՒԱՆԴ
ԼՈՒԹՅԻԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Խ

ՊԱՅԻԱՐԸ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Ա. ՊԱՅԻԱՐԻՆ ԲՆՈՅԹԸ

Վերջին ամիսներու մէջ Հ. Բ. Ը. Միութեան դէմ «կատաղի պայքար» մը սկսած է միեւ զաշնակցական մամուլը, բնականօրէն կարգախօսի մը վրայ: Եթէ բանք թէ այդ պայքարը շղթայադրածով վարելէն յետոյ «սրբակայութիւն» արտոգոստով որակեցին Բարեկործանի կատարած ազդաշէն գործը, կարելի է ենթադրել թէ պայքարի համահաւաստի մասնակցող թերթերը ինչպիսիս պիտի եւ ոճով ալ — զոր պիտի կրնայինք... «մտն» կոչել ի հակառակէն — պատասխանեցին վերէն եկող մասի շարժումին: Այսպէս, օրինակ, Սեւանիկի «Հորիզոն»ը նոյն ամսոյ սկիզբը ԵՐԵՎ Խմբագրական յօդուած հրատարակեց բնականօրէն Հ. Բ. Ը. Միութեան: Պէտք ունի «Ազգակ»ը վերջին օրերս եօթը յօդուած գործ տուաւ միեւնոյն «Փապրիկա»յէն, որուն վրայ աւելցաւ այս թերթին 17 նոյնի Խմբագրականը:

Ինչո՞ւ համար այս պայքարը: Ի՞նչ է անոր տուն տուող պատրուակը: Ի՞նչ է անոր նպատակը: Եւ ի՞նչ կրնար բլլալ անոր արդիւնքը: Այս հարցումներուն կոչեմք պատասխանի առարկայօրէն քննարկի հարցը եւ քննարկի խորաքանշիւր իր եւ գիր իր տեղը գնել: Որովհետեւ պայքարի բնթայքին երեւան բերած պատճառարանութիւնները ոչ միայն խաթարած իրողութիւններ, այլ խեղաթիւրուած ճշմարտութիւններ են: Հարցը մէկը յիշած բլլալու համար բանք, օրինակ, թէ՛ «Ազգակ»ի յօդուածագիրը՝ «Ո՞վ է Բարեկործանի թշնամին» խորագրով իր եօթը յօդուածներուն իրեւ եզրակացութիւն եւ իր հարցումին իրեւ պատասխան՝ կը յայտարարէր սա «ճշմարտութիւն»ը, թէ՛ Բարեկործանի թշնամին... Ռամկավար Ազատական Կուսակցութիւնն է:

Եթէ համբերատարութեամբ կարդացինք այդ բոլորը, չէինք կրնար թել, ասանց մեղսակից բլլալու թշնամանքի մը որ կայ իրականին մէջ ոչ միայն այսօր, այլ Հ. Բ. Ը. Միութեան հիմնում օրէն իսկ եւ որ քանիցս քօղաղերծուած եւ խաբանուած է, բաւ արժանւոյն, «Արեւ»ի սիւնակներուն մէջ: Ուրեմն պաշտպանողական մը չէ որ պիտի փորձենք ո՛չ Հ. Բ. Ը. Միութեան համար, որուն գործը շատ բարձր կը մնայ այս նոր պայքարին ալ

(*) Խմբագրական յօդուածաշարք, հրատարակուած Գաիիքի «ԱՐՆԻ» օրաթերթին 1934 Նոյն 21-27ի քիւրում մէջ:

հասողութենէն, եւ ոչ ալ մեզի համար, որ այս հայրենանուէր եւ ազգօգուտ հաստատութեան մասին մեր անվերապահ եւ անխախտ բարեկամութեան նոր ապացոյցները տալու պէտքը հունինք:

Հ.Բ.Ը.Մ իութեան դէմ մղուած նոր պայքարին բնոյթը ա՛յն է, ինչ որ է Հ.Յ.Դաշնակցութեան այժմ մղած միւս բոլոր պայքարներուն բնոյթը: Այս պայքարն ալ միեւնոյն հոգեբանութեան, միեւնոյն ըմբռնումի արդիւնք է: Ինչո՞ւ Հ.Յ.Դաշնակցութիւնը կը պայքարի Հայաստանի ներկայ կառավարութեան դէմ. — Որովհետեւ այս կազմակերպութիւնը հոգեբանօրէն իրմէ դուրս իշխանութիւն եւ հեղինակութիւն չի ճանչնար, եւ ո՛վ որ Հայաստանի ներկայ կառավարութեան — որ նո՛յն հոգեբանութեամբ օտար է իրեն — համակրանք կը յայտնէ, առով իսկ իր վրայ կը հրաւիրէ հակառակութիւն եւ նախատինք: Ինչո՞ւ համար Հ.Յ.Դաշնակցութիւնը հակառակ է Հայաստանեայց եկեղեցիին եւ անոր նուիրապետութեան. — Որովհետեւ անիկա չ'ենթարկուիր իր հրամանին եւ իրեն դործիք չի դառնար: Ինչո՞ւ համար Հ.Յ.Դաշնակցութիւնը կը պայքարի Ռամկավար Ազատական Կուսակցութեան դէմ. — Որովհետեւ այս կուսակցութիւնը չի բաժնէր իր քաղաքական համոզումները եւ իր գործելակերպը միասակար կը դնէ Հայ հայրենիքի եւ Հայ Ժողովուրդին շահերուն համար: Իսկ Հ. Յ. Դաշնակցութեան զեկավարները չեն հանդուրժեր ոչ միայն իրենցմէ դուրս հեղինակութեան մը, այլ՝ իրենցմէ դուրս կամ հակառակ կործիրի ալ: Պղտիկ բռնապետներու խումբ մը, որ կ'ուզէ տիրապետել, այժմ արտասահմանի մէջ, — ինչպէս երեկ էր Հայաստանի մէջ — առանձինն եւ անսահման կերպով: Վերջերս այս խումբին պատկանող խիկար մը Բարիդի «Յառաջ»ին մէջ կ'առաջարկէր արտասահմանի հայութիւնը միացնել Հ. Յ. Դաշնակցութեան բացարձակ տիրակալութեան տակ: Այսինքն անոր իշխանութեան եւ հեղինակութեան ենթարկել ամէն ինչ:

Ամէն պարագային, տիրակալութեան ախտէն բռնուած բոլոր մը արկածախնդիրներ, Բարիդի իրենց վերջին ընդհանուր ժողովէն յետոյ, ընդհանուր յարձակողական մը հրամայեցին բոլոր ճակատներու վրայ: Աթէնքի դաշնակցական թերթը այդ հրամանը կը փոխանցէր շարքայիներուն իր 1933 Մարտի թիւերէն միոյն մէկ խմբագրական յօդուածին մէջ, ըսելով մօտաւորապէս հետեւեալը. «Տասը տարիէ ի վեր կռուեցանք? համայնավարներու դէմ, տասը տարի ալ պիտի կռուինք աղա-բաշա-բօշաներու դէմ, մեր կրակը ուղղելով Բարեգործականին, Ռամկավար Ազատական Կուսակցութեան, ՀՕԿՃիին, ՊօքՃիին դէմ, եւ պիտի քար ու քանդ ընենք Բարեգործականի գրասենեակները, «Արեւ»ի, «Պայքար»ի ու «Ապագայ»ի խմբագրատունները» եւ այլն: Բարեգործականի գրասենեակները «քար ու քանդ ընելու» որոշումը

Բարեկի մէջ տրուած պահուն տակաւին զործադրութեան չէր գրուած Հ. Բ. Բ. Միութեան կրթական նոր ծրագիրը: Ուրեմն պատրուակը որ ալժամ առաջ կը քշուի, Բարեկործականի գէմ «կատաղի պալքար» մզկլու համար, լոկ պատրուակ է: Իրականութիւնը այն է, որ Բարեկործականի գէմ եւս «կրակ բանալ»ու որոշումը տրուած էր ճիշդ այն ատեն, երբ «կրակ բանալ»ու կամ «զանակ չարժեկլ»ու որոշում տրուած էր Հայաստանեայց եկեղեցիին եւ Դաշնակցութեան առջեւ զլուխ չծուց հայ եկեղեցականներուն գէմ, երբ ասարեկումի ենթարկելու որոշումը տրուած էր Դաշնակցութեանէն բաժնուած ու անոր գէմ պալքարող նախկին բնկերներու գէմ, որոնց պիտի հետեւէին ուրիշ կուսակցութեանց պատեկանողներ եւս, ըստ կարգի եւ տեղի:

Ուրեմն այն «կատաղի պալքար»ը որ մեր աչքին առջեւ կը պարզէ Հ. Յ. Դաշնակցութեան մամուլը, Բարեկործականի գէմ պիտի մղուէր եթէ նոյնիսկ այս հաստատութիւնը իր կրթական ծրագիրը մշակած եւ զործադրութեան գրած չըլլար: Ինչպէս որ «Լուսուոյն»ը պատրուակ եղաւ լոկ Հայաստանեայց եկեղեցիին եւ հայ եկեղեցականութեան գէմ գրոհ տալու համար, կրթական ծրագիրին զործադրութեան պալքաններն ալ ուրիշ պատրուակ մը եղան վարդապետին քողարկելու համար այն նպատակը, զոր կը հետապնդէ Հ. Յ. Դաշնակցութիւնը, քայքայել փորձելու համար Բարեկործականը: Սեւանիկի զաշնակցական թերթին՝ «Հորիզոն»ի խմբագիրը, Չ Նոյեմբեր թիւով կ'ըսէր. «Ո՞վ որ կը գրէ ու կը խօսի Բարեկործականի գէմ, կատարած կ'ըլլայ խղճի պարտք մը հայ ժողովուրդի նկատմամբ»: Նայն թերթին 4 Նոյ. ի խմբագրականին մէջ կ'ըսուի. «Բարեկործականի գէմ եւ ճշմարտապէս? Բարեկործականի գեանի վրայ պէտք է ճակատեցնել այնպիսի ոյժ մը, այնպիսի կազմակերպութիւն մը, որ կարենայ չէզոքացնել, բարեւիրութեան պիտակի տակ ալը կազմակերպութեան սարքած գարշիկի գաւերը»: Իսկ ո՞րն է այդ «ուժ»ը, այդ «ճշմարտապէս Բարեկործական ? կազմակերպութիւնը»: «Հորիզոն» եւ իր համահարգները՝ Պոսթանէն Պէլլուիթ՝ կը պատասխանեն. — «Համապայլին»ն է այդ, «Հայ Կարմիր խաչ»ն է այդ:

«Համապայլին» եւ «Գիծութեան խաչ» կամ «Հայ Կարմիր խաչ»: Ահա այն կազմակերպութիւնները, որ պէտք է կանգնուին Բարեկործականի... տակարարեան վրայ: Իսկ «Համապայլին» եւ «Կարմիր խաչ» զուտ զաշնակցական հիմնարկութիւններ են, միմիայն Դաշնակցութեան նպատակներուն ջուր — կամ տուր — հասցնելու համար:

Ասիկա պէտք է գիտնայ ամէն բանէ առաջ, հասկնալու համար Հ. Բ. Բ. Միութեան գէմ չղթալազերծուած ներկայ «կատաղի» պալքարին բռն պատճառը:

Հ. Բ. Ը. Միութեան գէժ միջուղ պայքարը, բռնիք, իր բնույթով նոյնանման է Հայաստանի եւ Հայաստանեայց եկեղեցւոյ գէժ միջուղ պայքարին: Պայքարին ձեռն ալ, հետեւաբար նոյնը պիտի ըլլար:

Արդարեւ, Դաշնակցութեան ղեկավարները իրբւ. մղիչ ազդակ տնէին Բարիկի իրենց վերջին ընդհ. ժողովին մէջ, այն միտքը թէ կա՛մ պէտք է ինքնիշխան տիրեմ գաղութներու մէջ եւ կամ զանոնք պէտք է տակնուվրայ ընեն: Այսպէս էր որ երբ ըստիպուեցան հրաժարիլ Հայաստանի մէջ տիրելէ, անոնք բոլորեցուցին փետրարեան «սպասամբութիւն»ը, իրենց օգնութեան կանչելով Գարապէտի բանակը: Արատահամանի մէջ եւս միեւնոյն մարդիկը պիտի բռնկեցնէին «քաղաքացիական կռիւ»ը, իրենց օգնութեան կանչելով բոլոր օտար ուժերը, այն պարսպային որ պիտի չյաջողէին՝ ամէն ֆակտի վրայ գրոհ տալէ յետոյ՝ տիրակալի գաղութահայութիւնը: Անոնք որ օտար տիրութւ. վրայ հիւրընկալուած կամ հանդուրժուած, անպաշտպան եւ թշուառ հայ զանգուածներուն մէջ պիտի բռնկեցնէին եղբայրասպան կռիւր, պատրաստած էին կանուխէն իրենց ընդհանուր ծրարիրը, իրբւ. սկզբունք ունենալով «վերագործ»ը գէղի ահարկչութիւն, ինչպէս կր պահանջէր «Յոսաբեր»ի Թանաճար: Ու արդարացիութ. համար այս կարեկի միջոցը, այնպէս ցոյց պիտի արուէր չարքերուն թէ Դաշնակցութիւնը ընդհանուր յարձակումի մը ենթարկուած է «միացեալ ճակատ»ի մը կողմէ, որուն մէջ կր մտնէին Հայաստանի կառավարութիւնը, Հայաստանեայց եկեղեցին, Բարեկործակներ, «ՀՕԿՃի»ն, «այօքճի»ն, «ռամկավար»ը, «հնչակեան»ը, «համայնապար»ը եւ վերջապէս՝ բոտ «Յոսաբեր»ի՝ բաղմութիւնը «անասնոց եւ անբանից»: Այս «միացեալ ճակատ»ը կաղմուած ցոյց պիտի արուէր Զեկայի հովանաւորութեան տակ եւ ուրեմն անկէ ալ (մասամբ եւս . . . էնկիւրիէն) մճարուած պիտի ըլլար: Դաշնակցական պարզամիտ շարքայինը այսպէս պիտի տեսնէր, իր ղեկավարներուն ցուցմանքով, իր շրջապատը, այսինքն՝ պաշարուած «ներքին թշնամի»ներու կամ «ներքին թուրք»ներու բանակէ մը եւ տախտակած յոսահառ կախ մը մղելու անոնց գէժ, որոնք կ'ուզեն «բնաջնջել» «աղաւաղներ», «բնախր», «աղբիւ» հայութիւնը, այսինքն Հ. Յ. Դաշնակցութիւնը: Այսպիսի «յարձակողական» մը կրնար միտիլ միմիայն «զուտ ճան»ներու կողմէ, հայութեան թշնամիներուն գրգռմով, եւ ուրեմն անոնց գէժ հայութեան «Բաղուկ»ը պիտի բարձրանար եւ յախտի հարուածը պիտի իջնէր «արդարութեան» հատու սուրին նման:

Մենք տկանաւոր եղանք ուրեմն, սխալէմաթիք զրոյարտութեանց եւ զգուշի վերադրումներու, ուղղուած Դաշնակցու-

թեան հակառակորդներուն դէմ: Ասիկա նախ ՈՃԻՐԻՆ գետինը պատրաստելու. եւ ոճրագործներու. Երամագրութիւնը (եւ մաս-
զործի գանակներն ալ) սրելու. համար էր: Անգամ մը այդ արա-
մագրութիւնը պատրաստուելէ յետոյ, «Յուսարեք»ի սինակին մէջ
կարգով պիտի «բաշտէին» անոնք, որոնց դէմ արձակուած էին,
զազանի Ժողովներու մէջ, «անդարձ վճիռ»ներ: Ու Դեռողներ,
Միհրաններ եւ այլ անուններ պիտի նետուէին իրրեւ ճարակ վրէժ-
խնդրութեան, աշնայէս, ինչպէս կը նետուէին հին մարտիրոսու-
թեանց դարերուն զոհերու մարմինները զառագեղներու առջեւ.
անհամբեր սպասող զազաններու: Շարքայիններուն եւ կամ անոնց-
մէն «առաքելատիպ»ներուն եւ «արգար»ներուն «բաշերը պիտի
ցցուէին» աշն ատեն (ինչպէս կը գրէր «Յառաջ») եւ անոնք կոտորե-
լով զառագեղին երկաթեայ դռները կամ «կուսակցական տիսիք-
լինը» (ինչպէս կը յայտարարէր Ա. Ջամալեան) պիտի խոյանա-
յին «զառաճան»ներու, «մասնիչ»ներու, «թրքատիպ»ներու վրայ
եւ զանոնք պիտի բլբլէին...:

Բարեգործականի դէմ սկսուած պայքարը, Հայաստանի կու-
ռալարութեան համակիրներու եւ էջմիածնի հաւատարիմ եկեղե-
ցականներու դէմ պայքարէն յետոյ, որոնք յանդիպան նախ Պէյ-
րութի եւ Աթէնքի ու յետոյ Նիւ Եորքի ահաւոր ոճիրներուն, կը
մղուի նոյն քաֆքիֆով, նոյն ոգիով եւ զրեթէ նոյն բառերով:
Պիտի չուզէինք — պիտի չկրնայինք ալ — մեր ընթերցողներուն
աչքին առջեւ փակ այն «զրականութիւն»ը, որ վերջին ամիսնե-
րուն զաշնակցական թերթներունը եղաւ. ընդդէմ Հ.Բ.Ը. Միու-
թեան եւ անոր վարիչներուն: Մտկայն մտքերու մէջ ս'եւէ կասկած
չձգելու. համար, կու տանք միմիայն մէկ բանի «հատրնաիր հմոյչ-
ներ» ալ «զրականութենէն», թուականի կարգով:

Աթէնքի «Նոր Օր» թերթը կը գրէր հետեւեալը 11 Սեպ-
տեմբերի թիւով:

«... Բարեգործականը վերջին տարիներուն չաքիֆ մը դար-
ձաւ գաղութներու գլխուն: Թուեալով որ գալարումներով
կը յայտնէ իր կատաղութիւնը:

«... Բարեգործականը անսկզբունք է, որովհետեւ բարո-
յական չունի, անխիղճ է, որովհետեւ վատ է:

«... Դանի որ Բարեգործականը շեղած է ուղիւ համբէն,
դարձած է հատուածամոլ, քիմախնդիր, ամէն պարկեշտ հայու
աւագ պարտականութիւնն է հակառակ բռնել անոր դէմ եւ առիթը
ներկայացած պահուն անխնայօրէն հարուածել ու ջախջախել ա-
նոր օսի գլուխը, որ ժողովուրդը կը բաժնէ երկու հատուածներու:

«... Ով որ Բարեգործականին ներքէ ու նեցուկ ըլլայ անոր
բարոյապէս ու նիւթապէս, դէմ է հայ ժողովուրդի միութեան
եւ քշնամի հայ դատին: Ով Բարեգործականին դէմ է, արի եւ

գերազանցօրէն հայրենասէր հայ է, որ ցեղին սպառնացող բարոյական վտանգին դէմ բռունցք կը բարձրացնէ»:

Պուրբէշի գաշնակցական թերթը «Արազ» 20 Սեպտեմբերի թիւով կը գրէր.

«... Բարեգործականը ուրիշ բան չէ բայց երէ տեսակ մը «խմարէք-հանէ», ուր հաւաքուած են ռամկավար գործիչները մեծով պզտիկով գայն վերածելով կուսակցական կոռուանի մը:

«... Զալտի քննենք հոս քէ ինչ կ'ընէ արդարացնելու համար իր գոյութիւնը, ոչ ալ տեղն է նժարի դնելու այն փշրանքները, զորս երբեմն կը նետէ աջին ու ձախին, աչքերու փռիչ փչելու համար, իբր քէ իր կոչումը արդարացուցած ըլլար:

«Ինչ որ վրդովեցուցիչ է, Բարեգործականի գործօն մասնակցութիւնն է գաղթային վէներուն, զորս յանալս ինքն իսկ կը հրահրէ?»:

Բարեգի գաշնակցական «Յասաջ» թերթը 6 Տօկտեմբերի թիւով եւ «Դիմակաւոր Կոմիտէն» խորագրին տակ կը գրէր.—

«Այլեւ ոչ մի տարակոյս, որ Բարեգործականը խելակորոյս արշալի մը ձեռնարկած է, բոլոր նակատներու վրայ:

«Ամբողջ մէկ տարի հետախուզական աշխատանքներ կատարելէ, զանազան ռազմախաղեր փորձելէ յետոյ, ան իջած է փոյոց իր կեղըր. վարչութեամբ, վարիչ-պատուիրակով, կրթական ֆինիչներով եւ զանազան գործակալներով:

«Իջած է փողոց չափուելու այն տարրերուն հետ, որ բարեւի չեն կենար իր առջեւ:

«Պայքարը սուր է այս անգամ, որովհետեւ կեղըր. վարչութիւնը գորաշարժ հոշակած է, գործադրելու համար իր կըրթական ծրագիրը:

«... Գաղտնիք չէ որ Բարեգործականի խելակորոյս «օլիկարշ»ին այս ապուշ եւ գրգռիչ գործերը կը կատարէ ի հեռուկս Հ. Յ. Գաշնակցութեան:»

Պոսթրինի գաշնակցական «Հայրենիք»ը 9 Տօկտեմբերի թիւով կը գրէր.—

«... Ժամանակը եկած է, որ ամէն տեղ Բարեգործականի դիմակը վար առնուի, եւ ամէն հայ հասկնայ վերջապէս, որ Բարեգործական կոչումը կազմակերպութեան ետեւ քաղցնուած է ազգայնական եւ ազատատենչ հայութեան երդուեալ բշխամիներու խմբակցութիւն մը, որ դրամի ուժով կը ձգտի քայքայել ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի համար մարտնչող հայութիւնը:»

*Եղիշատսի «Յուսարեբ»ը 22 Հոկտեմբեր թիւով եւ «Սրբ-
կայաթիւն»ը խորագրին տակ կը գրէր։—*

«... Մամուլը Բարեգործականի այս ստորին խաղին մէջ կ'ուզէ առաւելաբար կուսակցական դաւ տեսնել։ Մինչդեռ եղածը ամէկէ շատ աւելի ստորին արարք մըն է։ Խորքին մէջ այս սրիկա-
յութիւնը ոչինչով կը տարբերի այն միւս սրիկայութենէն, որ կը
գործեն «Պոլսոյ քուրք լուսաւորչականները» Հայոց Ազգային
Պատրիարքարանը վերածելով ... քէմալական Բիւլայի։

«Այո, նիշդ եւ նիշդ այս սրիկայութիւնը»։

*Սեւանիկի «Հորիզոն»ը 2 Նոյեմբերի թիւով եւ «Կառաղի
Պայքար» խորագրին տակ կը գրէր։—*

«Պէտք է միշտ գրել զագրելի Բարեգործականին դէմ։ Գրել,
որպէսզի հանրութիւնը տեսապէս իր մտքին մէջ ունենայ ու բնաւ
չմոռնայ այն տխուր դերը, զոր բարեսիրական կեղծ դիմակի տակ
ծածկուած եւ իր նպատակէն հիմնապէս շեղած այս կազմակեր-
պութիւնը կը խաղայ գաղութահայութեան ծոցին մէջ...»

«... Ով որ կը գրէ ու կը խօսի Բարեգործականին դէմ,
կատարած կ'ըլլայ խղի՛ պարտք մը հայ ժողովուրդին նկատ-
մամբ։ Պէտք է յստակօրէն դրոշմել ամէնուն մտքին մէջ այն
չարաբաստիկ իրողութիւնը, թէ Բարեգործականը, վերջին քանի
մը տարիներու ընթացքին մանաւանդ դարձած է քուսաւոր իժ
մը, որ գաղութէ գաղութ սողոսկելով աւերներ կը գործէ։

«... Յետին պարզամիտն ալ գիտէ, թէ չարագործները, ա-
փաշի յատուկ քառէքներով չեն շրջիր միշտ։ Սմոքինկ հագած
ազնուական չարագործներ շատ կան սալօններու մէջ... Բարե-
գործականը, սալօնական չարագործն է հայ իրականութեան մէջ։

«Այս է պատճառն ալ, որ այդ գանգուածը, մոլեգնօրէն
պիտի պայքարի չարաղէտ եւ չարագործ Բարեգործականին դէմ։
Ու պիտի պայքարի իժը քունագերձ դարձնելու հիմնական առա-
ջադրութեամբ, հակառոյն պիտի ստեղծէ անոր դէմ, ամէն տեղ։
Պոլսոյ պիտի ենթարկէ գայն։ Ոչ միայն պիտի չանդամագրուի
անոր, այլ եւ պիտի աշխատի որ փոքրաքիւ անդամագրուածներն
ալ հեռացնէ անոր շարքերէն։ Ոչ նիւթական եւ ոչ ալ բարոյական
փաշապեքանք հանրավաւաս այդ կազմակերպութեան։ Պարկէշտ եւ
պատուախնայիր հայը պիտի գոցէ իր քսակը անոր առջէն։ Երես
պիտի դարձնէ անոր։ Եւ հանդիպած տեղը, տունը թէ խանութը,
սրնարանի թէ փողոցի մէջ՝ ատելութիւն պիտի քարոզէ անոր
դէմ։ Անիկա այս բոլորը պիտի ընէ այն խոր գիտակցութեամբ թէ
կը ծառայէ իր ազգային-հաւաքական շահերուն, իր հանգստին եւ
ապահովութեան։»

Պէշրութի «Ազգակ»ը իր Տ Նոյ.ի թիւին «Ո՞վ է Բարեգործականի թշնամին» խորագրուած յօդուածին (Գ.) մէջ կը զբէր.—

«... Նոյն մտայնութիւնը կրքական պաշտօնէութեան ընտրութեան մէջ, տեղ տալ խիղճ ու համոզում ծախողին, անոնց որոնք յանձն կ'առնեն հանդուրժել բոլոր տեսակի դիմումներուն եւ գործակցիլ անուղիղ եւ մութ հաշիւներու:

«... Ուրիշ խօսքով Բարեգործականը նետած է ասպարէզ իր երեսուն արծաթը, սպասելով Յուդաներ, որոնք համբուրելով պիտի մատնեն մեր ազգային կազմակերպութիւններն ու ոգին:»

Եւ վերջապէս փոփոխութեամբ այս մէկ քանի նմոյշներու ցանկը, տանք Գաճիւրէի Քրմապետին պատգամը.—

«Պէտք է վերջ գտնէ այս դար: Այս կարգի սրիկայութիւնները կրնան յաջողութիւն գտնել Պոլսոյ եւ Երեսնի մէջ, բայց ոչ գաղթաշխարհի:»

Յարձակողականը զրգռիչ յօդուածներով՝ մղուելով հանդերձ, կարելի է՞ր որ ցուցմունքներ չըլլային ինչ «պատասխանատու»ներուն, կամ անոնց մասին, որոնք «կը մօխեն» Հ.Բ.Ը. Միութեան դրամները, «որքերու յատկացում» գումարները կ'իւրացնեն կամ կը յանդգնին Սուրիա մէկնել իբրեւ «կրթական քննիչ», Գաճիւրէի դաշնակցական թերթը այս օրերուն մասնաւոր խնամքով զրազեցաւ Վ. Մալեգեանով, Ա. Չօպանեանով (որ ոչ մէկ պաշտօն ունի Հ.Բ.Ը. Միութեան մէջ), Վ. Թէքէեանով (որ դեռ նոր պաշտօն մը ստանձնեց) եւ Մ. Նաթանեանով, որ Հ.Բ.Ը. Միութեան հին եւ բազմափաստակ աշխատաւորն է:

Ինչ էր սակայն «ոճիւր»ը, զոր գործեց Հ.Բ.Ը. Միութիւնը: Ո՞րն է այն «դար», որ լարուած է... Դաշնակցութեան դէմ, որպէսզի այս կազմակերպութեան մամուլը կրակ ու բոց ժայթքէ այս կերպով: Կամ ո՛րեւէ բարի գործ չէ՞ր արած «Չարագործական»ը, իր մօտ 30ամեայ կեանքին մէջ, որ այսպէս «թունաւոր իժ» մը դառնայ, եւ որուն գլուխը ջախջախելու պատրաստ մարդիկ ըլլան:

Գ. ՊԱՅԲԱՐԻՆ ՊԱՏՐՈՒԱԿԸ

Հ.Բ.Ը. Միութեան զէմ չգիտակցածութեամբ բոսն եւ ոճրաբոյր պաշտօնին պատրուակը այն կրթական ծրագիրն է, զոր գործադրութեան դրած է Միութիւնը անցեալ տարիէն ի վեր, չլիաւորապէս Յունաստանի եւ Սուրիոյ մէջ, ուր հարիւրէ աւելի

նպաստընկալ վարժարաններ կան: Պէտք է ըսել, որ այդ նպաստները խնդրուած են, վարժարաններու հոգարարձու մարմիններէն կամ արդարեւ վարչութիւններէն եւ ոչ թէ պարտադրուած անոնց՝ Միութեան կողմէ: Այսպէս էր կրթական ծրագրին գործադրութենէն առաջ եւ այսպէս է անկէ յետոյ ալ: Սա տարբերութեամբ միայն, որ Հ.Բ.Ը. Միութիւնը առաջ կու տար իր նպատար առանց ծրագրի, առանց հակակշիռի, իսկ այժմ կու տայ ծրագրով մը եւ պայման դնելով իր հակակշիռը: Ինչո՞ւ: Պատճառը քանիցս բացատրուած է արդէն: Այսօր ալ աւելորդ չէ կրկնելը:

Ինչպէս յայտնի է, Բարեգործականը կազմուած է ոչ ոքի դէմ, այլ ամէնուն համար: Բարեգործականի հիմնադիրներուն նպատակը եղած է Միութիւն մը ստեղծել, որուն շուրջը կարելի ըլլար միացնել ամբողջ հայութիւնը, առանց դաւանութեան, հոսանքի, դատակարգի խորութեան: Բարեգործականի հիմնադիրներուն մէջ գտնուած են ռամկավար հոսանքի պատկանող անհատներ ալ, որոնք Միութեան գաղափարին ջերմ ջատագովը եղած են սկիզբէն եւ աշխատած համոզումով եւ նուիրումով, Միութեան հայրենաշէն եւ արդարեւ նպատակներուն իրագործման եւ այդ ուղղութեամբ կատարուած ձեռնարկներուն յաջողութեան: Զարմանալի չէ, ուրեմն, որ Հ. Բ. Ը. Միութեան պաշտօնէութեան մէջ գտնուին քիչ քիչով Ռամկավար Ազատական հոսանքին պատկանող անհատներ եւ, որոնք սակայն իրենց կուսակցականութիւնը մոռցած են Բարեգործականի մէջ պաշտօն մը ստանձնելէ յետոյ: Ասոր համար, սակայն, Բարեգործականը երբ եւ իցէ խտրողականութիւն չէ ըրած: Անիկա ընդունած է բոլորին նուէրը կամ անդամավճարը, առանց հարցնելու թէ ի՞նչ կուսակցութեան, ի՞նչ դաւանանքի կը պատկանին: Ու իր օժանդակութիւնը բաշխելու տակն ալ Բարեգործականը չէ հարցուցած նպատարնկալին ո՞ր դաւանանքի կամ ո՞ր կուսակցութեան պատկանիր: Եթէ կայ մէկ հատիկ իսկ փաստ, թող հրապարակ դնեն: Միայն կայ ու կը մնայ այն փաստը թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը սկիզբէն իսկ հակառակ դիրք բռնած է Բարեգործականին:

Ախէնքի դաշնակցական թերթը «Նոր Օր», վերջերս, ուրիշ ասիւթով մը կը գրէր.—

«Բարեգործականի դէմ պայքարի բուն պատճառը, անոր կազմը, անոր ծրագիրը, անոր բուրժուական ըմբռնումներն են, որոնց հետ չի կրնար հաշտուիլ Դաշնակցութիւնը եւ պէտք չէ որ հաշտուի:

«Եթէ մինչեւ անգամ Բարեգործականը մնար չէզոքութեան սահմանին մէջ եւ դառնար ժողովրդական կազմակերպութիւն,

Դաշնակցութիւնը չէր կրնար համակերպութեամբ նայիլ կամ բերիլ իր օժանդակութիւնը անոր քարգաւառման եւ զարգացման:

«Պէտք է յստակ կերպով ըսեմք թէ դէմ ենք Բարեգործականին...»:

Հ. Յ. Դաշնակցութեան անդամները չեն տարած իրենց լուսման Միութեան: Անոր հանգանակութեանց եւ ձևանարկներուն չեն մասնակցած. չեն տուած մէկ խօսքով, բայց առած են, երբ որ պէտք ունեցած են եւ երբեմն ամէնէն բարձր պոռպոցած են առնելու համար, որքան բարձր պոռպոցած են չտալու համար: Եւ որպէսզի արգարացնեն իրենց չտալը, սկիզբէն իսկ գտած են թերութիւններ, ի՞նչ կ'ըսենք, մահացու մեղքեր Բարեգործականի մէջ եւ այդ մեղքերէն ամէնէն մեծը — չըսելու համար միա'կը — այն եղած է, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը զայն չէ կրցած իր ավերի մէջ առնել, արքանալ անոր դեկալարութեան եւ ուրեմն՝ գանձին: Ու ականելով, հակառակ իր ընդգլխութեան, որ Բարեգործականը կ'աճի ու կը հարստանայ, Հ. Յ. Դաշնակցութիւնը անոր գործունէութիւնը խաչաձևելու համար կազմած է միմիայն դաշնակցականներով, ու իրենց համակիրներով «Համազգային» միութիւն, «Դիմութեան» եւ այլ «Կարմիր Խաչ»եր, որոնց հաւաքած գումարները ոչ թէ «Համազգային» նպատակներու, գլխութեան գործերու կ'երթան, այլ միմիայն դաշնակցական գործերու եւ դաշնակցական նպատակներու կը յատկացունին: Օրինակ, Ամերիկայի «Կարմիր Խաչ»երուն գանձը այս օրերս կը պարպուի Նիւ Եորքի սփիւրի իրրեւ հեղինակ գաղափարաբանութեան դաշնակցականներու «Վերկութեան» գործին համար...:

Այս այսպէս ըլլալով հանդերձ, Բարեգործականը դիրք չէ բռնած եւ դիրք չի բռներ ոչ մէկուն գէժ եւ ոչ ալ մէկուն ի նպաստ: Անիկա դիրք բռնած է եւ կը բռնէ մի միայն ինքզինքին համար, իր նպատակներուն, իր առաջադրութեանց համար, որոնց յաջողութիւնը կը հետապնդէ: Կրթական ծրարքին մշակումը ուրիշ մտահոգութեան արդիւնք չէ:

Արդարեւ, երբ պատերազմէն յետոյ հարիւր հազարաւորներ ունէինք, իրրեւ գաղթական եւ իրրեւ որր թէ՛ մայր երկրին եւ թէ՛ մանաւանդ գուրք՝ գաղութներու մէջ, Միութիւնը չաւարկեց իր օժանդակութիւնը: Իր ընձեռած նպատակներուն, գահապան ազգօգուտ եւ հայրենաշէն նպատակներուն յատկացուցած գումարը մօտ մէկ միլիոն մոպ. ոսկի է: Թող Դաշնակցականները ըսեն թէ այս միլիոնին մէջ ի՞նչ է իրենց տուած բաժինը.— Ոչինչ: Հակառակ ասոր, երբ Բարեգործականը բացաւ իր որբանոցները, որոնց մէջ տասնեակ հազարաւոր որբեր պիտի խնամէին ու մեծնային, երբեք չգտանց դաշնակցական ուսուցիչը ոչ դաշնակցականէն: Սուրբոյ մէջ, Յունաստանի մէջ, Կիպրոսի մէջ

րազմաթիւ գաշնակցական պաշտօնեաներ եւ ուսուցիչներ ընդունուեցան Բարեգործականի հաստատութիւններէն ներս: Ի՞նչ եղաւ անոնց վերաբերմունքը հանդէպ Բարեգործականին: Անոնք փախանակ Բարեգործականի համար ուղղամիտ վերաբերմունք տածելով իրենց կուսակցութիւնը գուրա ձգելու, այս հաստատութիւններէն ներս ջանացին թունաւորել աշակերտութիւնը, Բարեգործականի դէմ լարեցին դանոնք եւ պատրաստեցին սերունդ մը, որ ըմբոստ եղաւ իր բարերարներուն դէմ եւ ապերախ՝ զինքը արարական անապատներէն փրկող, խնամող եւ գաստխարակողներուն դէմ: Որբանոցային գործին հաշուեյարդարին հետ, պէտք էր հաշուեյարդարի ենթարկել զբոլորն մը, որոնք նպատար կը բաշխուէր առանց հակակշիռի եւ գաստխարակութեան զործը կը կատարուէր հայ ազոց գաստխարակը բլլալու անարժան ուսուցիչներու կողմէ: Անոնք որ Բարեգործականին կը վստահէին իրենց գումարները՝ իրեւ անգամամիշար, նուէր կամ կտակ, սկսան պահանջել որ իրենց տուած գրամը գործածուի իմաստուն կերպով, Բարեգործականի նպատակներուն համապատասխան արդիւնքներ ձեռք ձգելու եւ ոչ թէ Բարեգործականի մտատիպարը — որ միւլքեան գաղափարն է ամէնէն առաջ — քանդելու ձգտող պաշմաններ ստեղծուին իր շուրջը, իր իսկ ընդունած նպատակի գումարներով:

Հ. Բ. Բ. Միութեան մշակած կրթական ծրագիրը հիմնուած պիտի ըլլար, ուրեմն, հակակշիռի հիման վրայ, ինչ որ ոչ միայն բացարձակ իրաւունքն է նուիրատու մարմիններու, այլ մանաւանդ անոնց աւագ պարսկականութիւնը: Այդ ծրագրին հիման վրայ Բարեգործականը կ'օժանդակէ այն վարժարաններուն, որոնց հոգարարձու մարմինները կ'ընդունին իր հակակշիռը, որ գլխաւորապէս կը կայանայ ուսուցիչներու ընտրութեան առեկն խորհրդակցական ձայն ունենալու մէջ, այդ մարմիններուն հետ: Եթէ այս հակակշիռը չընդունուի, Բարեգործականը բնականաբար կը մերժէ իր նպատար, բայց չի ալ ստիպեր որ զայն ընդունին: Բարեգործականը երբեւ իցէ միաժէն չէ անցուցած եւ չի կրնար անցունել միմիայն գաշնակցականներու դէմ փակել իրմէն նպատակ ստացող վարժարանները, այլ անիկա կը մերժէ ընդունիլ բոլոր այն ուսուցիչները — կուսակցական բլլան թէ ոչ — որ զպրոցէն ներս կուսակցականութիւն, հաստատականութիւն եւ Բարեգործականի դէմ բրբարականա կ'ընեն: Եթէ այսպիսի տարբեր միմիայն Դաշնակցութեան մէջը կան, ուրեմն յանցանքը Բարեգործականինը չէ:

Եւ գաշնակցական մամուլին մօտ՝ պայքարին ներքին կողմը այն է որ գաշնակցական ուսուցիչները ազատ համարձակ ներս մտնեն Բարեգործականի սեփական հաստատութիւններէն կամ անկէ նպատակ ընդունող վարժարաններէն եւ հոն ընեն իրենց ուզածը,

այսինքն քանդումի գործ մը կատարեն, «ատելութեան դատարարակութիւն»ը ջամբեն անմեղ սղոց, անոնց հոգիները խաթարեն եւ դպրոցները դարձնեն կուսակցական կերքի ազատ տապարէզ:

Հայ նորահաս սերունդին ներշնչել սէր՝ հայ հայրենիքին, հնազանդութիւն՝ հայ եկեղեցիին եւ հաւատարմութիւն՝ հայ ազգին, ահա՛ ինչ որ կ'ուզէ ընել Բարեգործականը իր կրթական ծրագիրով, այսինքն «Երեսուն արծաթով»: Եւ ինչ որ կը պահանջէ ան «իրենց խիղճը ծախող»ներէն, այն է՝ նուիրուիլ միմիայն հայ ուսուցչի կոչումին, ինչ դադափարի կամ կուսակցութեան ալ պատկանին: Անոնք որ տասներկու տարիէ ի վեր ոչ միայն իրենց խիղճը, այլ իրենց հայրենիքը, եկեղեցին եւ ազգը ի վաճառ հանած են օտար հրապարակներու վրայ, տարրերութիւն չդնելով արծաթի եւ ոսկիի, Քրանքի եւ մարքի, սթերլինի եւ զլօթիի միջեւ, պիտի չխղիւճահարէին մատնելու Հ.Բ.Ը. Միութիւնն ալ, անոր գէժ ժողովալ տալով յոյն եւ սուրիական իշխանութեանց, որպէսզի Միութիւնը իր «Երեսուն արծաթ»ը իրենց տայ առանց պայմանի եւ հակաէջիւն: Աւելի միայն այսչափ, այլ անոնք պիտի դիմէին իրենց սովորական եւ սիրական (չրսելու համար «սրիկայական») ամբոխաւարութեան ալ, «ի խաչ հան» պոռալով «գազրեկի» Բարեգործականին գէժ, որուն զանձին վրայ «վիճակ» ձգած էին:

Դ. ՊԱՅՔԱՐԻ ԶԵՆՔԵՐԸ

Երեսութապէս Բարեգործականի կրթական ծրագիրը ձախողցնելու, բայց իրականին մէջ Բարեգործականը «քանդել»ով «ճշմարտապէս? Բարեգործական» «Համագլխին»ի ու «Հայ Կարմիր խաչ»երու ճամբայ բանալու համար զաշակցական մամուլը պիտի դիմէր այն բոլոր զէնքերուն, որոնց դիմած է Հայաստանի եւ հայ եկեղեցիին գէժ պայքարելու համար:

Այդ զէնքերէն առաջինը մրոտումն էր կամ վարկարկումը, որպէսզի ժողովուրդը երես դարձնէ Բարեգործականէն: Պէյրութի «Աղպակ»ը իր հօթը յօդուածներուն մէջ առատօրէն սպառած է այդ ռազմամթերքէն, առանց ո՛րեւէ փաստի, ո՛րեւէ թուանշան յիշելու: Այդ յօդուածներուն հեղինակին նայելով Բարեգործականը «աւարաւութեան» եւ «ղեղձութի» որջ մըն է, որ ոչ հաշիւ կու տայ «Ժողովուրդ»ին, ոչ ալ «անկէ» իր ստացած զումարները կը յատկացնէ անոր պէտքերուն: Նոյնիսկ «Բարեգոր-

ծաղկանի կեդրոնը իր կապուած? Եւ անձեռնմխելի դրամներէն չառ քիչ բան ունէր տալիք ժողովուրդին առօրեայ պէտքերուն, որոնց գլխաւորն էր կրթականը, դամար մը, որ կէր? Իսկ չի կըրնար ըլլալ անոր (Բարեգործականի կեդրոնին) չուրջ հաւաքուած ազաւաններուն»: Դարձեալ բոտ «Ազգակ»ի, պէտք է հաշիւ եւ ձայն տալ «Ժողովուրդ»ին (այսինքն Հ. Յ. Դաշնակցութեան որ ոչ ոքի հաշիւ տալու սովորութիւն չունի...) իր դործերուն եւ դիկալարութեան մէջ, «միաք բարոյ» լսելով «Հաճագործման եւ կրթութեւ, եւ չիլ հաշիւներու, եւ կոսկածելի ու անհարազատ? Երեւոյթներու եւ որ աւելի է նիւթական անպատասխանատու? Վիճակէն»: «Թողունք գեւ. անցեալի մէջ կատարուածներու? հաշուառութեան ու գալթակցութիւններու ամօթանքը»:

Այս մէկը բաւական է իրբեւ. նմոյշ. հարկ չենք տեսներ, չերկարելու համար, ուրիշ մըստումներ մէջրերելու:

Պայքարի երկրորդ գէնքը ողբուկոծն էր: Բարեգործականը «կ'ուզէ» դաշնակցական ուսուցիչները զպրոցներէն դուրս նետել: Հապա անոնց բնտանի՞քը, դատակն՞քը...: Աթէնքի «Նոր Օր»ը որ առաջին «կրակ» բացողն էր Միութեան դէմ, անոր կրթական ծրագիրէն իսկ առաջ, իր պայքարը մղեց մասամբ այս ձամբով: Միութիւնը անարդարութիւն, թշնամութիւն «կ'ուզէ» ընել դաշնակցական ուսուցիչներու, ուրեմն Հ. Յ. Դաշնակցութիւնը «ստիպուած է» մղելու «ինքնապաշտպանութեան կռիւ...»: Բայց — Եթէ նոյնիսկ ճիշդ ըլլար առիկա — միթէ բոլոր վարժարանները Հ.Բ.Բ. Միութեան ձեռքին տա՞նք էին: Դաշնակցականները, Յունաստանի մէջ մանաւանդ, որ որ վարժարան մը ձեռք ձգած էին — ազգային կամ իրենց սեփական, ինչպէս Գողինիայի Զատարեան վարժարանը — հոն տեղաւորած էին դաշնակցական ուսուցիչները, Սեւանիկի Թագ. Խորհուրդը երբ անցաւ դաշնակցականներու ձեռքը, ուսուցչական կազմը վերէն վար դաշնակցականներէ բնորոշ, դուրս նետելով ոչ-դաշնակցական ուսուցիչները: Հապա ասոնց բնտանիքն՞քը, ասոնց դատակն՞քը...: Չենք բսեր թէ Բարեգործականը «փոխ-վրէժ» պիտի դործադէր. սակայն Եթէ Հ.Բ.Բ. Միութիւնն ալ չըլլար, այդպիսի ուսուցիչները — իրենց կոչումին հաստատրիմ հայ ուսուցիչները — իսկապէս սովահար պիտի ըլլային: Ապացոյցը տեսնեք մեր դպրութիւն մէջ ալ, Աղեքսանդրիոյ թէ Գաճիքի մէջ, երբ դաշնակցական կամ անոր համակիր հոգաբարձութիւններ փողոց նետեցին իրենց չհամակրած, այսինքն տարրեր հոտանքներու պատկանող ուսուցիչները, որոնցմէ ոմանք գեւ մինչեւ այսօր անդործ եւ թշնամ կը թափառին: Այնպէս որ, Սեւանիկի մէջ իր սեփական վարժարանը բանալով, Բարեգործականը ԲԱՐԻՔ մը բրաւ ոչ միայն հայ մանկաւիին, որուն ծնողքը կը մերժէր ափ առնել դաշնակցական քիւպի վերածուած տեղւոյն ազգ. վարժարանը, ալ

ԲԱՐԻՔ ԸՐԱԸ հաեւ այն բաղմաթիւ հայ ուսուցիչներուն, որոնք անխղճօրէն փողոց նետուած էին, իրենց «խիղճը ծախած» չըլլալնուն համար Հ. Յ. Դաշնակցութեան:

Պալքարի երրորդ ղէնքն էր հաւար փրցնել «Ազգային Սահմանադրութիւնը ոտնակոխուած» ըլլալուն մասին... Կարելի՞ է աւելի արտաոսոց «փաստ» քան ա՛յս մէկը: Ազգային Սահմանադրութեան հիմնադիրները կամ անոնցմէ ուղիղ զծով իջնող Կ. Պոլսոյ ազգասէր հայ ղեկավարները հիմնած էին «Արարատեան», «Կիլիկեան» Միութիւնները, գաւառի հայ վարժարաններուն Օժանդակութիւն ընելու համար: Ասոնք յետոյ միացան «Միացեալ ընկերութիւն» անունով: «Միացեալ»ը ունէր իր կրթական ծրագիրը, իր նախընտրած ուսուցիչները, զոր յաճախ ինք կը պատրաստէր, իր դասադիրքերը, ինչպէս Բարեգործականը ունի եւ պիտի ունենայ ի՛րը: Եւ սակայն Ազգային Սահմանադրութեան համար վերաւորանք կամ ազգային իշխանութեանց ու մարմիններուն համար արժանապատուութեան հարց չնկատուեցաւ ո՛րեւէ ազգային վարժարանի՝ Միացեալի կամ ալլ — ինչպէս Ազգանուէր Հայուհեացի եւ կամ Դպրոցասէրի — կրթական հակակրէսին ենթարկուիլը: Անոնք որ չխղճահարեցան Ամերիկայի մէջ Ազգային Սահմանադրութիւնը պատառ պատառ ընելով իջմիածնի հայրապետական իշխանութեան կից տալու, «ազգային» եկեղեցի անունով «եկեղեցի» մը հաստատելու եւ հայ եկեղեցիին մէջ հերձուած յառաջացնելու, իրենց Գահիրէի պաշտօնաթերթին մէջ կը գրէին հետեւեալը. «Թուրքին մէջ այս սրիկայուրիւնը (այսինքն Հ.Բ.Ը. Միութեան կրթական ծրագրին գործադրութիւնը) ոչինչով կը տարբերի այն միւս սրիկայութենէն, որ կը գործեն Պոլսոյ «թուրք լուսաւորչական»ները Հայոց Ազգ. Պատրիարքարանը վերածելով... քէմալական քիւպի»: Այս տողերը գրողները, որոնք Ամերիկայի մէջ «Հայոց Առաջնորդարան» անունով գաշնակցական քիւպ մը բացին, ոչ իսկ Կ. Պոլսոյ «թուրք լուսաւորչական»ներուն իսլամահարութիւնը ունեցան եւ իջմիածնի «հոգեւոր» իշխանութիւնը միայն ճանչնալով? հոնդերձ, իջմիածնին կողմէ կարդալոյժ հոգակուած չվարդապետ մը «եպիսկոպոս» ձեռնադրելու որոշում ալ տուին...: «Այս, ճիշդ եւ ճիշդ այս սրիկայութիւնը» գործեցին:

Պալքարի չորրորդ ղէնքն էր ճամբան կարել Բարեգործականին եւ զայն, ուր որ հնարատր է, ազգ. վարժարաններու Օժանդակելէ արդիւլէլ յետոյ, իր սեփական վարժարանը ունենալու հնարատրութենէն եւս զրկել, Սելանիկի մէջ երբ Բարեգործականը ուղեց իր սեփական վարժարանը բանալ, «Նոր Օր» եւ «Հորիզոն» ձայն ձայնի տուած՝ յայտարարեցին թէ «Յունաստանի օրէնքները թույլ չեն տար որ Հ.Բ.Ը. Միութիւնը իր անունով դպրոց բանայ»: Անշուշտ այդ ուղղութեամբ առնուած էին «հարկ

եղած» միջոցները...։ Սակայն երբ Բարեգործականը յաջողեցաւ Դանիական առաքելութեան վարժարանը իրեն փոխանցել տալ, այս անգամ այս թերթերուն զայրոյթը չափ ու սահման չունեցաւ եւ ամենազուհիկ վերադրումներն ու յարձակումները գործունեցան Բարեգործականին եւ անոր սեփական վարժարանին դէմ։ Նոյնա- նման դէպքերու ականջալուր բրաւ մեզ Սուրիա, ուր ինչպէս Թրիփոլիի մէջ Բարեգործականը կ'օժանդակէր մասնաւորի մը ա- նունով բացուած վարժարանի մը։

Պայքարի հինգերորդ դէնքն էր ուղղակի յարձակիլ անոնց վրայ, որոնք Բարեգործականի օժանդակութիւնը կ'ընդունին կամ պաշտօն կը ստանձնէին Բարեգործականի վարժարաններուն մէջ։ Հալէպի չըջանը օրինակներ տուաւ այս մասին։ Յիշենք մասնա-ւորապէս Արար Բունարի Հոգարարձութեան անդամներէն մէկուն եւ Հալէպէն հոն գրկուելիք ուսուցչի մը կրած փողոցային յար- ձակումները, որոնց հետեւանքով յիշեալները վիրաւորուեցան։

Պայքարի վեցերորդ դէնքն էր ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ Բարեգոր- ծականին դէմ, կապկածելի ցոյց տալու համար յաջոյտն եւ սու- րիական կառավարութեանց։ Այդ պատճառով, օրինակ, ցարդ կարելի չեղաւ Հ. Բ. Ը. Միութիւնը պաշտօնապէս ճանչցնել տալ Սուրիոյ մէջ, հակառակ որ Տ. Բարդէն կաթողիկոս անձամբ ներ- կայացած էր իրրեւ ներկայացուցիչը Հ. Բ. Ը. Միութեան։ Ճիշդ է նաեւ թէ Հ. Բ. Ը. Միութիւնը ազատօրէն կը գործէ Սուրիոյ մէջ, ուր իր բնձեռած օժանդակութիւնները հայ գաղթականնե- րու տեղաւորման, նոր աւաններու շինութեան եւ կրթական դոր- ծին՝ չի կրնար շնորհակալութեամբ չընդունուիլ նոյնիսկ տեղա- կան եւ հոգատար իշխանութեանց կողմէ, որոնք առանց Բարե- գործականի նպաստներուն, դժուարութեանց պիտի մատուցէին հայ գաղթականներու բազմապիսի կարօտութեանց առջեւ։

Զէնքերուն վերջինը սպառնալիքն էր, զոր առատօրէն սպառեց նոյնպէս գաղնակցական մամուլը, «Թույլ պիտի չտանք», «Թունաւոր օձին գլուխը պիտի ջախջախենք», «սօյքոթ պիտի բնենք» եւ այլ բացատրութիւններով։ Մեր Բ. յօդուածին մէջ բա-ւական նմոյշներ տուինք արդէն, որպէսպիսի այս մասին տւելի չծան- բանանք։

Անոնք որ դէնքերու մէջ խտիր չեն գներ իրենց պայքարին համար, ուրիշ աւելի ծանրակշիւ քայլեր առնելէ ալ պիտի չվա- րանէին, ի հարկին, ջատագովելով «ահարեկման հասարակական զերը...»։

Ըսինք թէ կրթական ծրագիրը պատրուակ մըն էր լսի, չ. Բ. Բ. Միութեան ղէմ «կատաղի պաշար» մզկու համար: Իրականին մէջ չ. Բ. Բ. Միութեան գործունէութիւնը վտանգ մը կը նկատուէր չ. Յ. Դաշնակցութեան համար, որ դպրոցներէն ներս թափանցելով կը ձգտէր հայ նոր սերունդը իր ճանկին մէջ առնել, ուսուցչական պաշտօններու մէջ տեղատարելով իր մարդիկը եւ այդ ասպարէզէն դուրս քշելով իրեն համար «անյոյս» տարրերը: Այն տեղերը, ուր ազգային մարմինները Դաշնակցութեան կամ իրեն համակիր տարրերուն ձեռքն էին, կարելի էր այդ: Բայց կային բազմաթիւ վայրեր, ուր ազգային իշխանութիւնը ոչ-դաշնակցականներու ձեռքն էր: Իսկ կային տեղեր այ, ուր դաշնակցականները ուժ եւ ազդեցութիւն ունէին դպրոցական մարմիններուն մէջ, սակայն դպրոցները չէին կրնար իրենց պիւտձէն դուրս ելլել: Այնպէս ունէին արտաքին օժանդակութեան: Այս օժանդակութիւնը կ'ընձեռէր Բարեգործականը, որ աչք պիտի ունենար, չորսիւ իր հակակշիւին, նպատարնկալ վարժարաններուն մէջ, եւ պիտի հաւանէր որ այդ դպրոցները կրթական յարկերէ տարբեր վայր մը ըլլան, կամ ասպարէզ՝ կուսակցական շահատակութեանց: Ուրեմն պէտք էր պահանջել, որ չ.Բ.Բ. Միութիւնը իր օժանդակութիւնը տալ «վստահելով» այդ Ազգ. իշխանութեանց ու անոնց կարգած ուսուցիչներուն: Բայց որովհետեւ Բարեգործականը պիտի չընէր, չէր կրնար ընել այդ բանը. պէտք էր յարձակուակնով մը վերականգնել Միութեան կրթական ծրագրին նպատակը, այնպէս որ զոյց տալով որ այդ ծրագիրը յարձակողական մըն է կատարուած Բարեգործականի կողմէ՝ չ. Յ. Դաշնակցութեան ղէմ . . . :

Կարելի չէ չիլիկ հոս, ծանօթ առածը այն հրեային, որ մէկու մը վրայ կը յարձակի եւ կը ծեծէ զայն, բայց առանց ժամանակ թողլու որ ծեծ ուտողը ձայն-ծպտուն հանէ, ինքը կը սկսի պոռալ կանչել, յալ ու մողերը փետտել, բռնել թէ զինքը ծեծած են . . . : Բոլոր նակաւորներու վրայ կռիւ յայտարարած դաշնակցական մամուլին պոռչաւորք «միացեալ ձեռքով» մը մասին՝ որ իրեն դէմ կը կուտի եղեր, հրեայի պատմութիւն է միայն:

Դաշնակցական մամուլը, զիւ կրթական ծրագիրը չգործադրուած, սկսաւ ազդել հրապարակը, թէ Բարեգործականը դաշնակցական ուսուցիչները պիտի վտարէ իրմէ նպատարնկալ վարժարաններէն: Անոնք չարուպան եւ չեն կրնար արուիլ: Բայց այնտեղերը – Յունաստան թէ Սուրիա – ուր դաշնակցականները կրնային ձեռք մտնել դպրոցական վարչութիւնները, նպատարնկալ վարժարաններէն սկսան վտարել ոչ-դաշնակցական ուսու-

ցիւններ: Մենք կրնանք տալ օրինակներ եւ անուաններ: Սեւանիկի մէջ Թաղ. Խորհուրդը անմիջապէս որ դաշնակցականներու ձեռք անցաւ, այս մարմինին առաջին գործը եղաւ զպրոցէն գուրս հանել այն ուսուցիչը, որ Բարեգործականի համաձայնութեամբ նշանակուած էր: Այդ ուսուցիչը նախկին դաշնակցական մըն էր եւ Սեւանիկի ռամկավար ազատական թերթին խմբագիրը միաժամանակ, ուրեմն հասկնալի էր որ հակառակութեան արդիւնք էր լոկ առիկա, որովհետեւ չբուռեցաւ թէ խնդրոյ առարկայ ուսուցիչը ո՛րեւէ թերացում ունեցած կամ անկարող եղած է իրեն յանձնուած ալցելու ուսուցչի պաշտօնին մէջ: Սեւանիկի նոր Թաղ. Խորհուրդը պայման կը դնէր այդ ուսուցչին հեռացուիլը, ստանալու համար նպաստը: Բարեգործականը մերժեց ընդունիլ այդ պայմանը եւ զազրեցնուց իր նպատար:

Նոյնը եղաւ Սուրիոյ մէջ: Թրիփուի տուաւ օրինակը, որուն յաջորդեց Բալաքն այլ: Թրիփուիի նպատարնկալ վարժարանը ունէր իր տնօրէնը: Նոր Թաղ. Խորհուրդի մէջ դաշնակցականները տեղաւորուելէն յետոյ դաշնակցական խանութպան մը բերին եւ տնօրէն կարգեցին, նախորդ տնօրէնը գուրս հանելով, առանց հաւանութեանը եւ համաձայնութեանը Հ.Բ.Ը. Միութեան, որուն կը մնար գազրեցնել իր նպատար:

Այս ընկելով Հ. Յ. Դաշնակցութիւնը ուղղակի հարուած կը հասցնէր աղգային վարժարաններուն, որոնք պիտոճէի բաց ունէին, եւ նաեւ՝ աղգին մանկախին գաստիարակութեան: Որովհետեւ, Դաշնակցութեան կողմէ Բարեգործականի ղեմ բացուած սղաքարին հեռեւանքով շատեր իրենց գտակները հեռացուցին նպատար գաղթած աղգային վարժարաններէն, եւ հոն ուր ուրիշ հայ վարժարան չկար, տղաքը սկսան յաճախել օտար կամ ալլա-դատան հայ վարժարանները:

Սեւանիկի դաշնակցական թերթը «Հորիզոն» իր Նոյ 10ի թիւին մէջ հրատարակած է տեղւոյն Թաղ. Խորհուրդին եւ Միութեան Եղիպտոսի Շրջ. Յանձնաժողովին միջեւ փոխանակուած նամակներու պատճէնները, որոնք շատ ուշագրաւ են իրենց բովանդակութեամբ: Թաղ. Խորհուրդը իր 10 Յունիս թուակիր գիմումնադրին մէջ կ'ըսէ թէ «հասոյթներու զգալի կերպով նուազման եւ այլ պատճառներով, մեր վարժարաններու այս տարուան պիտոճէն մատնուած է չափազանց մեղ դրութեան»: Եւ նպատին (որ 70 ե. սակի էր) յաւելումը կը խնդրէ: Բարեգործականի Եղիպտոսի Շրջանակային Վարչութիւնը իր պատասխանին մէջ (16 Յունիս 1934) կ'ըսէ. «Իրամով եւ ուսուցիչ տրամադրելով (Բարեգործականը) պիտի օգնէ միայն այն վարժարաններուն, որոնք պիտի ընդունին Միութեանս լայն հակառակորդ, իրենց ուսուցչներուն բնարտթիւնը եւ պիտոճէի պատրաստութիւնը կատարելով Բարեգործականի համաձայնութեամբ»:

Իր յաջորդ նամակին մէջ (1 Օգոստ. 1934) Շրջանակային Վարչութիւնը կ'աւելցնէ թէ նպաստը նկալ վարժարանները պիտի ենթարկուին իր կողմէ անուանուելիք կրթական տեսուչի մը հրահրութեան: Ո՛չ այդ համաձայնութիւնը եւ ո՛չ ալ այդ հակադրութիւնը գործին չէր դարձնէր Սեւանիկի դաշնակցականներուն, որոնք Թաղ. Խորհուրդի կապը խզել կու տան Հ.Բ.Բ. Միութեան հետ: Այդ. դպրոցը որ արդէն «մասնուած էր չափազանց նեղ դրութեան», կը կորսնցնէ ոչ միայն Հ.Բ.Բ. Միութեան տարեկան նպաստը, այլ եւ դպրոցական աշակերտութեան մեծագոյն մասը, որովհետեւ Բարեգործականի սեփական վարժարանը, որ բացուեցաւ Սեւանիկի մէջ, այժմ ունի 240 աշակերտ, ծնողներու մեծագոյն մասը նախապատիւ համարելով իրենց աղաքը չլանձնել դաշնակցական ուսուցիչներու: Այստեղ աւելցնենք որ, Սեւանիկի դաշնակցական Թաղ. Խորհուրդին ընթացքը այնքան հակադրային էր որ տեղւոյն վրայ Բարեգործականի սեփական վարժարանին հաստատուելը տեսակ մը յաղթանակ նկատուեցաւ ժողովուրդին ողջամիտ դառին համար եւ իրրեւ այդ ալ աօնուեցաւ վարժարանի բացման հանդէսը, բացառիկ եւ համադրային խանդավառութեամբ:

Սուրիոյ մէջ, մասնաւորապէս Հալէպի Քաղ. Ժողովը ունեցաւ այն դիրքը, զոր որդեգրեց — ընդհանուր կուսակցական կարգախօսի վրայ — Սեւանիկի Թաղ. Խորհուրդը, թույլ չտալով իրեն ենթակա հոգարարութեանց որ նպաստը ընդունին Հ.Բ.Բ. Միութեան, պայմանաւոր կերպով: Պէջրութի Քաղ. Ժողովը գրեթէ նոյն չափին հետեւեցաւ. պախանջելով (ըստ «Ազգակ») Հ.Բ.Բ. Միութեան օժանդակութիւնը, եւ անոր հետ բանակցութեան մասնելու հաւանելով միայն դպրոցական շրջանի բացումէն յետոյ, երբ վարժարաններու ուսուցչութիւնը եւ պիտեճէն որոշւած էին: Պէջրութի դաշնակցական թերթը մասնաւոր գուրդուրանքով մը փաթթուեցաւ Ազգ. Սահմանադրութեան, խոսքեանը հանդիսացաւ ազգային իշխանութեանց հմայքին եւ արժապատուութեան, ու խոսքէն մերժեց «բարեւի կենսով» Միութեան տուջեւ, անոր «նետած փշրանքներ» ընդունելու գնով: Մինչ՝ այդ «փշրանքներ» պիտի երթային զաղթական աղոյց, խեղճ ու անճար ծնողքներու գաւառներուն դաստիարակութեան: Դաշնակցութեան համար այդ մտահոգութիւնը արժէք չունի, բաւական է որ Բարեգործականը Սուրիոյ մէջ գործունէութեան ասպարէզ չունենար եւ «մատահելի» «Համազգային»ը եւ «Կարմիր Խաչեր»ը տեղաւորուէին՝ իրենց նետած կամ նետել խոստացած «փշրանք»ներով՝ Սուրիահայ գաղութին եւ անոր դպրոցական գործին մէջ, զայն ենթարկելով ոչ թէ Հ. Յ. Դաշնակցութեան հակակշիռին միայն, այլ անոր ԱնֆԱկԱնՈՒԹԻԻՆԸ գործնելով այդ գործը:

Ազգային Իշխանութեանց հմայքին եւ արժապատուութեան

թեան «նախանձախնդիր»ները այդ իշխանութեանց ԴէՄ՝ գործելէ չխղճահարեցան սակայն այն տեղերու մէջ, ուր այդ իշխանութիւնները ընդունած էին Բարեգործականի պայմանաւոր նպատար՝ դպրոցական գործին: Օրինակ, Աթէնքի Աղլալին Վարչութիւնը Բարեգործականի գործակցութիւնը ընդունած էր եւ ատոր չնորհիւ ալ այժմ բազմաթիւ վարժարաններ — որոնցմէ շատեր դադլթակայաններու մէջ — նպաստ կը ստանան Միութենէն: Աթէնքի դադլթակայաններէն Լիրադմա, որուն թաղականութիւնը դաշնակցականներու ձեռքն էր, մերժեց հնազանդիւ Աթէնքի Աղլալ իշխանութեան հրահանգներուն եւ իր վարժարանը չենթարկեց Միութեան կրթական հսկողութեան, հայ մանկալին զրկելով աւելոր նպաստէն:

Ուրեմն հոն ուր Դաշնակցութիւնը կրցաւ ճամբան գոցել Բարեգործականի կրթական ծրագրին գործադրութեան առջեւ, աղլալին վարժարանը միասուեցաւ՝ զրկուելով ոչ միայն նիւթական նպաստէ, այլ եւ հսկողութենէ մը, որ իր բարոյական իմաստով ու նշանակութեամբ համարժէք էր նիւթական նպատին, մանաւանդ յետամնաց վայրերու մէջ, ուր աղլալին իշխանութիւնները հնարաւորութիւն չունին դպրոցները ենթարկելու կրթական տեսուչի մը կամ քննիչի մը հսկողութեան եւ հակաչիւրին:

Բարեգործականի կրթական ծրագիրին դէմ մղուած պայքարին գոհերը գարձան ուրեմն աղլալին կարօտ վարժարանները եւ կարօտ աշակերտութիւնը: Ճիշդ ատոր համար ալ պայքարը չուշացաւ իր հակադրեցութիւնը ունենալէ:

Զ. ՊԱՅՔԱՐԻՆ ԱՐԴԻԻՆՔԸ

Հ. Բ. Ը. Միութեան դէմ Դաշնակցութեան բացած պայքարին արդիւնքը պիտի բլլար այն, ինչ որ եղաւ այդ կազմակերպութեան կողմէ Հայաստանի եւ հայ եկեղեցւոյ դէմ բացուած պայքարին արդիւնքը, այսինքն՝ խայտառակ պարտութիւն եւ կորակոր նահանջ:

Արդարեւ, Հայաստանի դէմ տասներկու տարիէ ի վեր Դաշնակցութիւնը կը մղէ «կառաղի պայքար»՝ ամէն գետնի վրայ, քաղաքական թէ աղլալին, իր ծառայութիւնը արտամղելով օտարներու՝ «երեսուն արծաթի փոխարէն», եւ հայ կեանքէն ներս ամէն ճիւղ թափելով որ Հայաստանի շինարարութեան օժան-

զախութիւն չերթայ զազութներէն ու ներգաղթը ձախողի: Այս նպատակով՝ Հայաստանի դիրքը կը ներկայացուի խախտու, ապահովութիւնը՝ վտանգուած, ազատութիւնը՝ անպայ, բնակչութիւնը՝ սովահար, շինարարութիւնը՝ ատապել, ներգաղթը՝ թէական: Գահիրէի զաշնակցական թերթը, որ պատանձած պէտք էր ըլլար գէթ օտար թղթակիցներու եւ ականատես վկաներու խանդավառ եւ մխիթարական տեղեկութեանց առջեւ, զեռ վերջին օրերս՝ շնական ծիծաղով մը կը յայտարարէր. «Ամէն տարի գուրսէն ՔԱՆԻ ՄԸ տարագիր ներս կ'առնեն (անունը... ներգաղթ գնելով), իսկ ներսը ՔԱՆԻ ՄԸ ՊԱՏ քով քովի կը բերեն (այս ալ... շինարարութիւնը կոչելով)»: Ու այս բողոքները անոնք են, որ ոչ թէ «քանի մը պատ քով քովի» չրերին երբ իրենք էին իշխանութեան գլուխը, այլ եղածներն ալ քարուքանդ ըլլին: Եւ այս բողոքները դարձեալ անոնք են՝ որ ոչ թէ գուրսէն քանի մը տարագիր ներս չառին, այլ հայ ժողովուրդին կէսը տարագիր դարձուցին...:

Արատասահմանի հայ ժողովուրդը, բոլորուած Հ.Բ.Բ. Միութեան, Հայրենակցականներու, ՀՕԿի, պետական Կարմիր Սաշերու շուրջ, նուիրուեցաւ, ի հեճուիս հայրենազաններու, Հայաստանի շինարարութեան, ոչ թէ «քանի մը պատ» չինելով, այլ նուազաչէն եւ տանակ մը նոր աւաններ կառուցանելով: Եւ ոչ թէ մի քանի տարագիրներ մօտան երկիր, այլ 40 հազարի հասաւ ներգաղթողներու թիւը վերջին տասնամիակին մէջ, առանց հաշուելու «Լեւոնահայաստան»էն զաշնակցականներու խորհուրդով Պարսկաստան անցած տար հազար զաղթականութիւնը, որ քիչ յետոյ կրկին ետ բերուեցաւ Զանգեզուր, Հայաստանի ներկայ կառավարութեան կողմէ: Հայաստանի գէմ պայքարին պատասխանեց արատասահմանի հայութիւնը, աւելի եւս կապուելով հայրենիքի գաղափարին, եւ աւելի մեծ չափով օժանդակելով այն բոլոր կողմակերպութեանց, որոնք Հայաստանի կողքին կեցած են հակառակ բոլոր զրպարտութեանց, մատնութեանց եւ հալածանքներու, թողյով որ հայրենազանները գլուախին քրքիջներով լեցնեն իրենց չըմպտար եւ իրենց ձեռքին տակ գանուող հայրենակցականներէն մէկ մասին եւ կեղծ «Կարմիր Սաշ»ներուն հուտքած գումարները յատկացնեն ոճրագործներու «Վերկութեան», փոխանակ՝ իրենք ալ՝ «քանի մը մը տարագիր» գրեկու, ինչպէս կ'ընէ, օրինակ, Հ.Բ.Բ. Միութիւնը:

Նոյն կերպով պատասխանեց արատասահմանի հայ ժողովուրդը այն պայքարին, զոր շղթայադերձեց անխորհուրդ եւ սրբապղծ յանդգնութեամբ մը Հ. Յ. Գաշնակցութիւնը, հայ եկեղեցիին գէմ, Ագարեկոյներու օգնութեամբ, հայ եկեղեցականներէն մէկ մասը սեղնելով եւ իրը «Չէկայի զործակալ» օտար կառավարութեանց մատնելով զանոնք: Ամենէն վերջ գործուե-

ցաւ. Նիւ Եորքի խաժգուժ ոճերը, Ամերիկայի հանրային կարծիքը ցնցելով եւ աշխարհի ուշադրութիւնը հրաւիրելով հայ մարդասիրաներու վրայ, որոնք խրուածք «Ուսմաշխ»ներու եւ «Մակեդոնական քոմիթէ»ի հետ մէկ զծի վրայ կու գան այլեւս, որպէս ահարկեղանի կազմակերպութիւն: Ասոնց ձեռքերը Ամերիկայի մէջ հայ եկեղեցին պառակտելու եւ միւս հայ գաղութներու — ինչպէս Սուրիոյ — մէջ հայ եկեղեցիի նախապետութիւնը հարուածելով ուրիշ յարանաւանութեանց դիրքը զորացնելու համար, արթնութեան հրաւիրեց հայ ժողովուրդը, որ աւելի սրտազին կերպով փարեցաւ իր դարաւոր եւ ազգային եկեղեցիին ու իր կեանքէն դուրս նեանց ու պիտի նեակ անոնք, որ կը յամոտին «ընդդէմ խթանի աքացել», Գաշիւրէի Փարիսեցին կը դէժը անցած օր, թէ՛ «Ձէկան» հայ եկեղեցին քանդելու համար նախ կ'ուզէ Դաշնակցութիւնը քայքայել... Վա՛յ այն եկեղեցիին որ հայ եկեղեցականը հայ եկեղեցւոյ խորանին առջեւ սրախոյտոյ բնոյ անաստուած թշուառականներուն շնորհիւ կանգուն պիտի մնայ: Հայ ժողովուրդը եւ հայ եկեղեցականութիւնը — մէկ քանի բացատրութիւնները չհաշուելով — այսօր կանգնած են էջմիածնի կողքին, անոր ազնւոր Հայրապետին հաւատարիմ եւ անոր հրահանգներուն հնազանդ:

Վերջերս Պուլիարիոյ մէջ տեղի ունեցան թաղականական բնարութիւններ: Այդ բնարութիւնները միտեցան հետեւեալ բանաձեւով. «էջմիածնի համար կամ էջմիածնի գէմ»: ՏԱՍԸ քաղաքներէն Ինժ հտար քաղաքիցին էջմիածնի համար եւ Հ. Յ. Դաշնակցութեան գէմ. իսկ Միկ քաղաքին մէջ միայն (Ռուսնոյ) գաշնակցականները հաղար ու մէկ խորհուանանքներով յաջողած են միմիայն 6 քուէի առաւելութիւն չափել, Ֆիլիպէի մէջ, որ Դաշնակցութիւնը յաջողած էր կառավարութեան մօտ գիմելով, յետագայի տայ բնարութիւնները, ամսոյս Վին կառարուած են անոնք եւ Դաշնակցութիւնը «ամօթանք»ով խոյս տուած է պայքարի հրապարակէն, որովհետեւ ոչ ոք ուզած է իր անունը Դաշնակցութեան ցանկին վրայ տեսնել, իրբւ բնարելի:

Բարեկործականի գէմ բանալով իր «կատաղի պայքարը», Դաշնակցութիւնը ուղեց հարուածել միւլքեան գաղափարը, այնպիսի ատեն մը, որ մեր ժողովուրդը հայրենաշէն ու ազգապահպան այս Միութեան շուրջը միանալու պէտք ունէր: Դաշնակցութիւնը առաջին անգամ չէր որ կը բանար նման պայքար մը: Ինչպէս բռնիք, կրթական ծրագիրը պատրուակ մըն էր լսի, 1914ին, պատերազմի նախօրեակին, կրթական ծրագիր չկար, երբ գաշնակցականներու եղբայրապան գնդակով ինկաւ Վանի պատուական ազգայիններէն եւ տեղւոյն Բարեկործականի Մասնաժողովի ասենապետը՝ Պետրոս Գարամաճեան: Պատերազմը վրայ հասաւ եւ Դաշնակցութիւնը կրցաւ հայ ժողովուրդին ար-

դար զայսոյթէն ազատիւ: Այժմ, հայ ժողովուրդը հասած է այն-
պիսի արթնութեան մը, որ նման երևոյթներ չեն կրնար աննշմար
ևս տանց պատիժի անցնիլ, պատիժ զոր կուտայ հանրային կար-
ծիքը, զատապարտելով և անարդանքի սինին դամելով հանրա-
յին բարիքին և ապահովութեան զէմ գործող ունէ մէկը, ան-
հատ ըլլայ թէ կազմակերպութիւն:

Արդարեւ, ուր որ Դաշնակցութիւնը ուղեց պատ քաշել
Հ. Բ. Ը. Միութեան առջև, Յունաստանի թէ Սուրիոյ մէջ, մեր
ժողովուրդին հանրային կարծիքը ընդլիցեցաւ անոնց զէմ, որոնք
Միութեան ընձեռած բարիքներէն կ'ուղէին զրկել մեր կարօտ
վարժարանները: Յիշենք միայն Հալէպի շրջանին մէջ Գրբըզ
Խանի օրինակը, ուր ժողովուրդը հանրապրութեամբ մը գիմեց
Հալէպի Քաղաքական ժողովին, սպառնալով բուռն միջոցներով
խելքի բերել անոնք, որ ազգային իշխանութեանց մէջ տեղաւոր-
ւած, կը խողան ժողովուրդին շահերուն հետ: Խոհեմութեան և
չափաւորութեան յորդորները, որոնք մեկնեցան Բարեգործականի
շրջանակէն, հանդարտեցուցին Գրբըզ Խանի ժողովուրդը, որ
նոր թաղականական ընտրութեանց ասթիւ պիտի տայ իր վճիռը:

Պայքարը, զոր մասնաւոր ուժղնութեամբ մը կը մղէ Դաշ-
նակցութիւնը Սուրիոյ մէջ, կ'սկսէր ստած օտար ուժերու և ար-
ժեցնելով «վստահելի»ութիւնը մէկ քանի անհատներու, չի կրնար
չցնցել Սուրիոյ հայ գաղութին հանրային կարծիքը, որ իր ազգա-
յին իշխանութիւնները պիտի ջանայ մաքրել բոլոր այն սուրբե-
րէն, որոնք կը շարունակեն հայ ժողովուրդին թշուառութիւնը վա-
ճառքի նիւթ դարձնել և ջլատել այդ թշուառութիւնը ամօքելու
համար թափուող մեր ներքին ճիգերը:

Պայքարին արդիւնքը պիտի ըլլայ նաեւ այն, որ Հ. Բ. Ը.
Միութեան վարիչ շրջանակները նոր թափ և եռանդ հազցնեն
իրենց գործունէութեան և գորացնեն ու թարմացնեն իրենց մաս-
նաժողովները մանաւանդ այն տեղերու մէջ, ինչպէս Սուրիա, ուր
կը գործադրուի կրթական ծրագիրը: Մեր Հալէպի պաշտօնակիցը
«Շփրտա» վերջերս պէտքը ցոյց կու տար աւելի «սեղմ և ամփոփ»
աշխատանքի մը, Հ. Բ. Ը. Միութեան մասնաժողովներուն հա-
մար:

Երեք նոյնրականութիւններ կան, որոնց շուրջ հայ ժողո-
վուրդը ամուր շղթայի մը նման բոլորուած է ու միացած պիտի
մնայ.— Հայրենիք, Ազգ և Եկեղեցի: Այդ երեք նոյնրականու-
թեանց զէմ գացող բոլոր հոսանքները ու թէ կանոնի գաղափար-
աւած են խորտակուելու: Հ. Բ. Ը. Միութիւնը մէկն է այդ չղ-
թային գլխաւոր օղակներէն և իր երկու առաջադրութիւններովը
— Հայրենաշինութիւն և Ազգապահպանում — լուաղոյնա կ'ար-
տայայտէ մեր ժողովուրդին ներկայ հոգեկան պահանջն ու ճշդ-
առումները: Աստ'ը համար ալ մեր եկեղեցւոյ հոգեւոր պետերը,

սկսելով Ամենայն Հայոց ազգերնաիր Հայրապետէն եւ Կիլիկիոյ
դուռը Կաթողիկոսներէն, իրենց օրհնութիւնները տուած են Հ. Բ.
Ը. Միութեան հիմնադիրներուն եւ վարիչներուն եւ քանիցս հը-
րաւէր ուղղած, որ մեր ժողովուրդը սիրէ Հ. Բ. Ը. Միութիւնը
եւ քաջալերէ անոր ձեռնարկները:

Հայ ժողովուրդը հաւատարիմ կը մնայ ոչ միայն իր Հայ-
րենիքին, ոչ միայն իր Ազգին ու Եկեղեցիին, այլ հաւատարիմ կը
մնայ անոնց որ կը ծառայեն այդ նուիրական երրորդութեան եւ
առաջին զծի վրայ՝ Հ. Բ. Ը. Միութեան, իբրեւ ՄիԱն եւ լաւա-
զոյն պատասխան անոր դէմ մղուող անարժան եւ անիրաւ պայ-
քարին:

Վ Ե Ր Զ

Մ Ե Ր Դ Ե Ր Ը

Ի՞նչ եղևի եի Ի՞նչ ՊԵՏԻ ԸԼԼԱՅ

(Ռամկավար եւ Ազատական Կուսակցութեանց
միութեան տասնեւհինգամեակին առթիւ)

1921—1935

Ա.

ՄԻԱՆԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր երկու գլխաւոր հատուածներուն միացումէն եւ միատարր ու միաձոյլ քաղաքական կազմակերպութիւն մը դառնալէն ասդին տասնեւհինգ տարուան կեանք ունի: Այդ միացումէն առաջ մեր Կուսակցութեան բաղկացուցիչ հատուածները իրենց ծագումը կը թուագրեն Հայ Ժողովուրդի վերջին ազատագրական շարժումին սկիզբէն իսկ, որովհետեւ այդ շարժումին ստեղծիչն ու նախակարապետներն են: Ու այդ ծագումն իսկ կը բացատրէ արդէն, թէ ինչո՞ւ համար Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը մնայ այսօր ալ հարապատ թարգմանը Հայ տարահալած ժողովուրդին ներշնչումին ու ձգտումներուն, որոնք կու գան անոր գոյութեան պայքարէն եւ իր մարդկային իրաւունքներուն տիրութեան ու ազգային ինքնուրոյն կեանքի հասնելու ճիգէն: Այս պայքարին ու ճիգին համար Ռ. Ա. Կուսակցութեան հին ու նոր անդամներէն շատեր, Արմենական, Հնչակեան, Վերակազմեալ թէ՛ Ռամկավար կոչուած ըլլան ժամանակին, տալին իրենց կեանքը եւ իրենց գոհութիւնները: Այդ պայքարն ու ճիգը մերը ընելով հանդերձ այսօր ալ, դանտնք սեփականացնելու եւ մեր մենաշնորհը դարձնելու յաւակնութիւնը չենք ունեցած երբեք: Մեր բաժինը միայն բերած ենք ու կը բերենք, փախաքելով որ ուրիշներ ալ իրենց բաժինը բերեն եւ այս կերպով մեր ժողովուրդին եւ անոր հայրենիքին համար կատարուած աշխատանքները դառնան միահամուռ ու միակամ: Իսկ ծառացած ենք ու պիտի ծառանանք — ու արդէն մեր մամուլի կամ բեմի վէճերն ալ ատոր հետեւանքն են — ամէն անգամ որ Հայ Հայրենիքին ու Հայ Ժողովուրդին համար մեր պայքարն ու ճիգը հանդիպին խոչընդոտի ոմանց կողմէ, եւ կամ ընդունուին թշնամանքով կամ անտարբերութեամբ:

Ուսման վար Ազատական Կուսակցության, իրրեւ միացեալ Հայ քաղաքական կազմակերպութիւն, գոյատու թիւնը կը գուգա-
գիպի այն թուականին, երբ Հայ Աշխարհն ու Հայ Ժողովուրդը
— բնիկ երկրի մէջ թէ գուցար — գտնուեցան ճակատագրական
գարձակէտի մը առջեւ: Ներկայ Հայաստանով մնալու կամ ա-
ռանց անոր կորսուելու երկրորդանքը կար: Մենք անվերապահ
ու անվարան ընդունեցինք առաջինը եւ տառնեւինդ տարիէ ի վեր
կը մնանք նոյն գծին վրայ, հաստատորթ միեւնոյն ուղղութեան,
որ վերջին տառնեւինդ տարուան դէպքերուն յոյսին տակ կը ներ-
կայանայ իրրեւ յատկատեսութեան եւ առողջ ըմբռնումի (bon
sens) արդիւնք: Այդ պատճառով ալ մենք կարեւորութիւն չենք
տար ո՛չ ուշամնաց եւ չաճախեցիր Հայաստանասէրներու քննա-
դատութեանց եւ ոչ ալ անուղղայ եւ կոյր Հայաստանատեսացներու
չողովանքին:

Այն միեւնոյն ուղիով եւ բմբռնումով, որոնք մեզ կ'առաջ-
նորդեն եւ գործի կը մղեն այսօր ալ, 1921ի աշնան նախաձեռնուե-
ցաւ չորս Հայ քաղաքական կազմակերպութեանց կեդրոնական
մարմիններու ներկայացուցչական Ժողովի մը, Կ. Պոլսոյ մէջ:
Այդ Ժողովը 6 Սեպտ. թիւով հրատարակեց հետեւեալ կոչը ար-
տասահմանեան հայ մամուլին մէջ:—

Սիրելի Հայրենակիցներ,

Ձեզի ծանօթ է թէ Հայաստանի խանգարուած տնտեսու-
թիւնը յառաջ բերած է անմախքաց կարօտութիւններ, որոնց
պէտք է հասնիլ անմիջապէս, արգիլելու համար երկրի ժողովուր-
դին սպառնացող փրկիական կոտորածը: Ձեզի ծանօթ է նոյն-
պէս, թէ բոլոր կուսակցութիւնները էական պարտականութիւն
կը նկատեն մայր երկրի ժողովուրդին փրկիական պահպանու-
թիւնը:

Չորս կուսակցութիւններու կեդր. Մարմիններու ներկայա-
ցուցչական Ժողովը միաձայնութեամբ որոշած է լծուիլ Հայրե-
նիքին օգնութիւն հասցնելու գործին, եւ այս գրութիւնով կը
հրահանգուի բոլոր շրջանային ղեկավար մարմիններու, որպէս
զի անմիջապէս նախաձեռնեն համագգային օգնութեան մարմին-
ներու կազմութեան՝ իրենց մասնակցութեամբ, եւ կամ արդէն
գոյութիւն ունեցող մարմիններու միջոցով իրենց բոլոր ուժովը
նուիրուին օգնութեան գործին:

Հայաստանի պէտք է դեղ, ուտելիք, հագուստ, եւ գիւղա-
կան ու արհեստական տնտեսութիւնը վերականգնելու համար
գործիքներ: Օգնութեան գործին մէջ նկատի առնելով այս պէտ-
քերը, դուք կրնաք ատոնց համաձայն ընթացք տալ ձեր ջանքե-
րուն:

Ո՛չ մէկ վերապահութիւն, ոչ մէկ վարանում օգնութեան հասնելու այս պարտականութեան մէջ: Մեր բոլոր քերթերը, գործիչները, տեղական վարիչ մարմիններն ու բոլոր ընկերները կուսակցական պարտաւորութիւն մը պէտք է ընդունին Միջկուսակցայինի այս որոշումը եւ անոր գործադրութեան համար երեւան բերելով զոհողութեան ու կամեցողութեան ոգին՝ խրախուսուելու օգնութեան համար անհրաժեշտ ամեն ինչ անելու:

Արդիւնաւոր ու յաջող գործունէութեան քաղաքական

Այս կոչին տակ ստորագրած են՝ Աղատական Կուսակցութեան կողմէ՝ Հրաչ Երուսանց եւ Լ. Գ.

Հայ Ռամկավար Կուսակցութեան կողմէ՝ Ա. Դարբինեան:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան կողմէ՝ Վ. Իչգալացեան եւ Տոքթ. Հ. Փէշտիմալճեան:

Հ. Յ. Դ. Արտատաճմանի Պատասխանատու Մարմնոյն կողմէ՝ կողմէ՝ Յ. Ամատունի եւ Խ. Պապայեան:

Վերոյիշեալ կոչին խմբագրութեան տուն տուող հիմնական միտքերը հետեւեալներն էին.—

«Բոլոր կուսակցութիւնները Հական պարտականութիւն կը նկատեն մայր երկրի ժողովուրդին ֆիզիքական պահպանութիւնը), եւ

«Բոլոր կուսակցութիւնները պէտք է լծուին Հայրենիքին օգնութիւն հասցնելու գործին:»

Ընդհանուր է թէ այդ օրերուն «Հայաստանի տնտեսութիւնը խանդարտած էր» եւ «երկրի ժողովուրդին ֆիզիքական կոտորած կը սպառնար»: Սակայն քաղաքական կազմակերպութիւնները չեն կազմուած ժամանակաւոր պահանջներու համար, այլ անոնց կոչումն ու պարտականութիւնն է տնտեսական աշխատիլ, որ իրենց պատկանած երկրի տնտեսութիւնը չխանդարուի եւ ժողովուրդին կոտորած չսպառնայ: Այդ խանդարումը եւ սպառնալիքը եթէ կային տանտնէին պարտաւորութիւնը համար, կրնան ըլլալ եւ այսօր եւ վաղը, ինչպէս բոլոր երկրներու համար: Հայաստանի եւ Հայ ժողովուրդի հանդէպ մեր նուիրական պարտքը այն ատեն եթէ մեզ մտահոգ կ'ընէր ներկային համար, չէր կրնար մտահոգ չընել եւ վաղուան համար: Քաղաքական կազմակերպութիւնները եթէ խուճապի եւ քրեթիքական ապրումներու վայրկեանին կրնան պահ մը օգնութեան եւ նպաստի գործին նուիրուիլ եւ մոռնալ իրենց բուն կոչումը, բնականոն ժամանակներու մէջ կը հետեւին այդ կոչումին, այն

է՝ ընել այն բոլորը որ իրենց երկրի եւ ժողովուրդի տնտեսութեան բարձրացումին եւ Ֆիզիքական գոյութեան պահպանութեան կը նպաստեն, եւ չընել այն բոլորը որ երկրին տնտեսութիւնը կը խանգարեն եւ ժողովուրդին ֆիզիքական գոյութեան կը սպառնան:

Երկիրը վառնալու չէր եւ մահը կը սպառնար Հայ ժողովուրդին, ոչ միայն երկրին մէջ ալլ գութը: Սրբազան միութեան կոչը կու գար Հայ երկրի աւերակներէն եւ Հայ ժողովուրդի տառապանքի հծծիւններէն: Ազատական եւ Ռամկավար Կուսակցութիւնները լսեցին այդ կոչը եւ ձեռք ձեռքի տուին, իրրեւ «մըրկաւ գառուած» եղբայրներ:

Բ.

ՊԵՏԱԿԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ՄԵԶԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Ռամկավար եւ Ազատական Կուսակցութեանց, աշխնքն նոյնանման մտածող եւ նոյն նպատակներու ձգտող երկու Հայ կազմակերպութեանց միաձուլումը ոչ միայն անոնց գործունէութեան համար ուժի եւ խնայողութեան ազդեցիկ էր, ալլ նաեւ օրինակ մը, որպէս զի միութեան գաղափարը տարածուն եւ վարակիչ գառնայ ժողովուրդի մը մէջ, որ իր բեկորները հաւաքելու, իր գոյութեան նոր պայմաններուն մէջ տակալու եւ տեւելու, իրրեւ ժողովուրդ վերակազմուելու եւ իր հայրենիքին համար թիւ ու թիկունք ըլլալու պէտք ունէր: Այս վերահասարակութեան ըմբռնումին, աշխնքն առանց մեր բեկորներուն մէջ վերահաստատուելու նախ հաստաքը իրենց հայրենիքին եւ յետոյ հաստարմութիւնը՝ երկրին ճակատագիր վարող իշխանութեան հանդէպ: Հաւատք եւ հաստարմութիւն, որ անկախաբար իրաւակարգէն, կը պահանջուին բոլոր ժողովուրդներէն, իրենց երկրին եւ օրուան իշխանութեան հանդէպ: Առանց այս երկու պայմաններուն, ո՛րեւէ ժողովուրդ, երբ մանաւանդ մեր պայմաններուն մէջ է ան, կը խզուի իր բունէն եւ կը նետուի կորուստի ճամբաներուն վրայ:

Այս դիտակցութեամբ մօտեցաւ Ռամկավար Ազատականութիւնը Հայաստանի եւ անոր ներկայ իշխանութեան, երբ այդ իշխանութեան ճակատագիրը անստույգ կը թուէր ըլլալ եւ Կոմկոսէն արտասահման հասած յուրերը — յաճախ նպատակաւոր եւ երբեմն շփոթ — զայն ցոյց կու տային սեւ գոյներու տակ: Բնազգը — մեր ժողովուրդին ինքնապահպանութեան սքանչելի

բնազդը — մեզի կ'ըսէր թէ միա'կ փրկութիւնը՝ Հայ Երկրին ազատագրուած մասին եւ հոն խմբուած ժողովուրդին՝ կախում ունէր այս իշխանութեան ամբապնդումէն եւ տեւականութենէն։ Նոր ցնցում մը եւ նոր փոփոխութիւն մը կրնար վերջնական կերպով վառնալ երկուքին ալ գոյութիւնը։ Հայաստանը պէտք էր շրջապատել զգուշութեամբ եւ աղապատանքով, ինչպէս նորածին եւ տկար մանուկ մը։

Չորս քաղաքական կուսակցութիւնները Կ. Պոլսոյ մէջ Հայու եւ մարդու պարտականութիւնն էր որ կը կատարէին միանալով եւ օգնութեան կոչ մը ստորագրելով։ Ասիկա չէր բաւեր։ Պէտք էր նաեւ որ այդ կոչին տուն առողջ զգացումը քաղաքական դաւանանքի փոխուի եւ մշտապէս մղիչ ազդակը դառնայ Հայ քաղաքական մտածողութեան եւ գալն մեր կեանքին մէջ իրականացնելու յաւակնութիւնը ունեցող կազմակերպութեանց։

Այս ըմբռնումով էր որ ստորագրուեցաւ համաձայնագիր մը, դարձեալ 1921ի աշնան, Ռ. Ա. եւ Հ. Յ. Դ. կուսակցութեանց Կ. Պոլսոյ պատասխանատու մարմիններուն միջեւ, իբրեւ գլխաւոր նպատակ ունենալով Բարիզի զոյգ Պատուիրակութեանց գործունէութեան ներդաշնակումը՝ Հայաստանի մէջ կատարուած իշխանութեան փոփոխութեան յոյսին տակ եւ Թրքահայաստանի ճակատագիրը վճռելու կոչուած նոր խորհրդաժողովներու նախօրեակին։ Այդ համաձայնութեամբ, որ մէկ ճակատի կազմութիւնն էր օտարներու առջեւ եւ մեր մէջ, երկու քաղաքական կազմակերպութիւնները՝ կ'ընդունէին Հայաստանի մէջ հաստատուած իշխանութիւնը իբրեւ երկրին օրինաւոր կառավարութիւնը եւ ուրեմն՝ զուրպ թէ երկրէն ներս սե'ւէ քայլ պիտի չառնէին այդ կառավարութեան դէմ, այլ ընդհակառակը անոր վերաջինական գործին օժանդակելով պիտի գիւրացնէին երկրին տնտեսական գրութեան բարելաւումը եւ ժողովուրդին ֆիզիքական գոյութեան պահպանումը։

Երկրի սահմաններէն դուրս գործող Հայ կազմակերպութեանց համար տարբեր ուղիղիժ գոյութիւն չէր կրնար ունենալ։ Արդարութեան պարտք մըն է ըսելը թէ Հ. Յ. Դաշնակցութեան «արտասահմանի պատասխանատու մարմին»ը այդ համաձայնութեան տակ ստորագրելով կ'առաջնորդուէր առողջ հայրենասիրութենէն եւ մեր երկրի ու ժողովուրդի պայմաններուն գիտակցութենէն։ Ու եթէ միեւնոյն հայրենասիրութիւնն ու գիտակցութիւնը մնար որպէս ղեկավար ոգի այդ կազմակերպութեան, վերջին տասնեւհինգ տարուան մէջ արտասահմանի Հայ գաղութները կատարած պիտի ըլլային շատ աւելի դրական գործ Հայաստանի եւ Հայ ժողովուրդին համար եւ մեզի ինչպէս ծախելով ըլլային աշխարհի սպառնիչ վէճեր եւ ուժի ու զրամի վատնումներ։ Սակայն Կոմկառն արտասահման ապաստանած մարդիկ այդ

կազմակերպութեան ղեկավարութիւնը ձեռք տանելով քաղաքացիական կռիւը պիտի փոխադրէին գաղութներու մէջ, այդ կռիւը մղելով դուրսէն՝ նախ Հայաստանի օրուան կառավարութեան եւ ապա Հայաստանի կողքին մնացող արտասահմանեան հայ կազմակերպութեանց եւ անհատներուն դէմ:

Կ. Պոլսոյ համաձայնութեան մեկանը չէր չորցած, երբ անիկա պատուուեցաւ Բարիդի «Հ. Հ. Պատուիրակութեան» կողմէ, որ ի հեճուկս Կ. Պոլսէն առնուած հրահանգներու, յիշատակագիր մը կը ներկայացնէր ժընէւի, Աղզերու Ընկերութեան, բողոքելով Հայաստանի պոլշեւիկներու կողմէ «գրաւման» դէմ եւ միջադային օժանդակութիւն հայցելով «օտար իշխանաւոր»ը երկրէն դուրս վտարելու համար...:

Ակնարկուած կազմակերպութեան Բարիդի ղեկավարներուն այս ելոյթը եղաւ ճակատագրական: Ոչ միայն ներդաշնակութիւնը, քաղաքական ըմբռնումով, բացակայեցաւ անկէ ի վեր մեր արտասահմանեան գործունէութեան մէջ, այլ Հայաստանի եւ Հայ ժողովուրդի օգնութեան գործը լղբճուեցաւ, այլանդակ պայքարներու տեղի տուաւ եւ վերջ ի վերջոյ մեր տարահայած ժողովուրդը բաժնեց, օտար ափերու վրայ, թշնամի բանակներու: Թող այս կացութեան պատասխանատուները անդրադառնան իրենց արարքին եւ բռնէին, — դէթ իրենց խղճին տռջեւ, — թէ ի՞նչ արդիւնք տուաւ, տասնեւհինգ տարիէ ի վեր, իրենց «գործունէութիւնը» Հայաստանի եւ Հայ ժողովուրդին համար:

Մենք, այսօր ճակատարաց կը ներկայանանք ո՛չ միայն մեր խղճին, այլ մեր ժողովուրդին պատասխանին տռջեւ, դրական գործերու հաշուեկշիռով մը, զոր պիտի ներկայացնենք յաջորդաբար:

Եւ սակայն համաձայնութեանց պատմութիւնը թերի պիտի բլլար, եթէ Հիշատակէի 1932ի փորձը, որ կատարուեցաւ Հ. Յ. Դ. Կազմակերպութեան Արեւմտեան (Բարիդի) «Բիրտ»-ի կողմէն, դատար եւ պաշտօնական զիմումով մը Ռ. Ա. Կոստակցութեան Կեդր. Վարչութեան: Այդ փորձին պատասխանեցինք անկեղծ ու անվերապահ մօտեցումով մը, միաբերնիւ ունենալով հանդերձ այն առածը թէ «փորձելը կրկին փորձելը յիմարութիւն է»: Կ'ուզէինք գիտնալ դէթ՝ թէ տար տարուան փորձառութիւնը ո՞ւր է փոփոխութիւն առաջ բերած էր եւ մանաւանդ կ'ուզէինք վերջին պատահութիւնն օգտագործել Հայաստանի եւ Հայ ժողովուրդին համար. սակայն մեր դէմ գտանք մարդիկ, որ անկեղծ չէին եւ բանաձեւերու թիճուկին մէջ կ'ուզէին բռնել մեզ մեր առողջ պետական ըմբռնումի գծէն: Այդ փորձին մասին մեր մամուլը աւելի բան պիտի չգրէ, փոխադարձ պաշտնապահութեան յանձնառութիւնը առնուած բլլայով: Սակայն համաձայնութեան առաջարկը բերողները մեր կողմէն արտօնուած են ար-

դէն եւ հրապարակաւ, մէջտեղ դնելու հարցը իր մանրամասնութեամբ, եթէ ատիկա հաճելի է իրենց, որպէս զի 1932ի փորձին ձախողանքէն յետոյ հրապարակ նետուած ալլանդակ պաշտօնի լեզուն եւ ունէ կազմակերպութեան ինչպէս նաեւ ունէ անհատի համար ամօթալի դարձունէութիւն մը չքմեղացնելու չափաաւելին: Ռ. Ա. Կուսակցութեան քաղաքական ուղեգիծը դժուած է, ինչպէս ըսինք, առաջնորդուած մեր երկրի տնտեսական պայմաններուն բարելաւման եւ ժողովուրդի Ֆիզիքական զոյւթեան պահպանման հիմնական մտահոգութեանն եւ պետական առողջ բարձրութեան: Այդ ուղեգիծը կը մնայ անշեղ եւ անփոփոխ, տապալանէն աւելի ի վեր:

Գ.

ԾԱՆՕԹԱՑՆԵԼ ԵՒ ՍԻՐՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Կ. Պոլսոյ համաձայնութեան խղումէն յետոյ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը առանձին, կամ զբեթէ առանձին կը մնար, մեր դադութեամբ իրականութեան մէջ, Հայաստանի պետականութեան հանդէպ իր հաւատարմութեան եւ Հայ Երկրի ու ժողովուրդի օգնութեան գործին կազմակերպութեան մէջ: Միակ բեմն ու մամուլը որ կրնային խօսիլ ու գրել Հայաստանի մասին, զայն ճշգրտօրէն ներկայացնելու եւ սիրցնելու համար, Ռամկավար Ազատական բեմն ու մամուլն էին: Այս ալն թուականն էր, երբ արտասահմանեան ոչ մէկ երկիր իր յարաբերութիւնը վերահաստատած էր իմ. Միութեան հետ եւ կարմիր գծէն ներս տարածուող աշխարհը խորհրդաւոր խաւարով մը պատած կը ներկայանար, այդ գծէն դուրս գտնուողներուն համար: Եւրոպական պետութիւններէն ոմանք պաշարման օգակի մէջ առած էին իմօրհրդային երկիրները, իսկ ուրիշ պետութիւններ առուապն կը կապեալէին ունէ մէկէն որ իմօրհրդային երկիր կ'երթար ու վերադարձին անոր մասին նպաստաւոր արտայայտութիւններ կ'ընէր:

Հայաստան կը ներկայացուէր իրրեւ տմենադրային՝ բոլոր իմօրհրդային երկիրներուն մէջ: Օտար մամուլի յաճախ նպատակաւոր եւ յերկրածոյ պատմութիւնները հակահայաստանեան խմբակին բեմէն եւ մամուլէն կը ներկայացուէին սրտաբեկ եւ յուսահատ արտասահմանի պաթականութեան՝ յաւելեալ եւ ճշտացեալ կերպով: Եւ իրրեւ վերջին միութեամբութիւն կը հրամայուէր ալն զուլակութիւնը թէ մէկ ամիսէն կամ մէկ տարիէն պիտի ապալի իմօրհրդային իշխանութիւնը: Այդ «ապալում»ի

դործին համար «մարտական պատրաստութիւններ» եւ օտարներու հետ սակարկութիւններ կային եւ կան... մինչեւ այսօր:

Ռ. Աղատական Կուսակցութիւնը առաջին հարուածը տուաւ, պատուելու համար Հայաստանը պատուոյ խորհրդաւոր մշուշը եւ առաջին խաղրիկները՝ մեր երկրէն՝ բերին մեր աշն դործիչները, որոնք արհամարհելով ամէն նկատում եւ վտանգ, զայցին Հայաստան եւ վերադարձան՝ սկանառետի վկայութիւններով:

Այո, վտանգը կար 1922ին, արտասահմանէն Հայաստան մեկնելու եւ հոն ընդունուելու համար: Մեր առաջին պատուիրակը՝ Ընկ. Արամկ Դարբինեան, ճամբայ կաւ այդ թուականին Կ. Պոլսէն եւ առաջին չիումը հաստատելէ յետոյ Հայաստանի նոր վարիչներուն հետ — որոնցմէ ոմանց հետ անձնական ծանօթութիւն եւ հին մտերմութիւն ունէր — վերադարձաւ, նոր յոյս մը բերելով մեզի՝ ընդհանուր խաւարին մէջ: Անկէ յետոյ մէկ երկու տարիի միջոցով, ճամբայ ելան Ընկերներ Ա. Թէրզիպաշեան, Մ. Պապաջանեան, Հրաչ Նրումանգ (երկու անգամ) եւ այս տողերը գրողը: Մեր պառպանութիւնները տեղեկացան երկրի եւ ժողովուրդի կացութեան, Ս. Հայաստանի վարիչներուն տեսակէտներուն՝ գաղութահայութեան մասին եւ Հայ երկրի քաղաքական հարցերուն, ու փոխադարձաբար՝ Հայաստանի վարիչներուն ծանօթացուցին արտասահմանի հայ գաղութներուն զգացումները, սկիզբաւորութիւնները եւ պայմանները: Այսպէս ձգուեցաւ կամուրջը երկրի եւ Արտասահմանի միջեւ:

Եթէ վտանգը կար սկիզբը, այդ կամուրջը ձգողներուն համար՝ անհատապէս թէ իրենց պատկանած կուսակցութեան տեսակէտով — որովհետեւ զեռ աշն թուականէն շատեր՝ մեր բարեկամներէն՝ սկսան մեզի հանդէպ կասկածանքով վերաբերուիլ եւ մեր հակառակորդներն ալ՝ մեզ մտանանչեցին որպէս բարեկամ համաշնոյսարութեան կամ «քողածածուկ» համայնավարներ, ու այդ կերպով մեր թէ՛ անհատական եւ թէ՛ կուսակցական դործունէութիւնը արգիլել ջանացին, — վտանգը կա՛յ առկաին այսօր աշն բոլոր գաղութներուն մէջ, ուր խորհրդային Միութիւնը չէ ճանչցում եւ ուր տեղական պայմանները թոյլ կուտան խառնել վերաբերուիլ սե՛ւէ խորհրդային երկրի մասին նպատաւոր արտայայտութեան հետ: Մեր անաղին հակառակորդներուն կողմէ մինչեւ այսօր կը շահագործուին այդ պայմանները ընդդէմ մեզ: Այս տողերը գրողին համար Երիտասարդականութեան մօտ կազմուած է տօսիէ մը, աշն բաղմաթիւ «ժուռնալ»ներով, որոնք արուած են «Հայաստան գաղած» եւ Հայաստանի վրայ զիրք մը հրատարակած ըլլալուն եւ Հայաստանի վրայ գրած իր յօդուածներուն համար... Արտասահմանի կարգ մը ազատ ու անվտանգ երկիրներուն մէջ «քաջարար» յեղա-

փոխութիւն երգող նորափետուրներուն կը ներենք որ մեր «կեղծ հայաստանասիրութեան» վրայ ճառեն: Ամէն պարագային, չմոռնան, որ Ամէրիկայի մէջ մարդիկ չեն բանտարկուիր եւ չեն աքսորուիր իրենց գաղափարներուն եւ իրենց հայաստանասիրութեան համար...: Իսկ ուրիշ երկիրներու մէջ Ռամկավար Ազատականը կա՞մ բանտարկուողներու մէջն է եւ կամ անոնց կողքին:

Այսպէ՛ս է որ մասնուեցաւ, բանտարկուեցաւ եւ Յունաստանէ վտարուեցաւ Սեւանիկի մեր «Արեւելք» թերթին խմբագիրը՝ Ընկ. Գառնիկ Նաւասարդեան, որ այժմ կը գտնուի Հայաստանի մէջ եւ ուսուցչական պաշտօն ունի: Մեր թերթերը՝ Պալքաններու, Եղիպտոսի, Սիւրիոյ մէջ՝ մատնանշուած են իրրեւ «կասկածելի», իրրեւ «համայնավարական փրփուկանտ»ի ծառայող օրկաններ, միայն անո՛ր համար որ Հայաստանի օժանդակութեան գաղափարը կ'արծարծենք, ու Հայաստանի վրայ կը հրաժարակենք նպատաւոր յօդուածներ: Վերջին անգամ Այկեքսանդրիոյ ՀՅԿի անդամներուն բանտարկութեան առթիւ, «Արեւ»ի խմբագիրը մատնանշուեցաւ իրրեւ «Հօկ»ի կազմակերպիչ եւ թերթին ալ՝ «կասկածելի»...:

Հայաստանը ծանօթացնելու աշխատանքին նուիրուած մեր տաղանթավորներէն միւր կարելի էր աւելցնել Պ. Ե. Կարիկեանի երեք տարուան համար Հայաստան երթալն ու հոն աշխատանքի լծուիլը, Պ. Պ. Յովհաննէս Յակոբեանի եւ Յակոբ Փափուգեանի (երկուքն ալ «Արեւ»ի խմբագիրներ)՝ Հայաստան երթալը, հոն մնալու եւ աշխատելու համար եւ վերջապէս Պ. Ա. Զօպանեանի աշցելութիւնը Երեւան՝ որպէս Կաթող. Պատգամաւոր Ֆրանսայէն: Զեմ՝ յիշեր մեր բազմաթիւ հին բնկերները, որոնք այժմ Հայաստանի մէջ են եւ կ'աշխատին հոն, իրրեւ մատուցական, արհեստաւոր կամ բանուոր:

Հայաստանի ծանօթանալով սիրեցինք դայն: Ու մեր սէրը անխառն էր ինչպէս է հայրենասիրութիւնը: Եւ յետոյ նոյն սիրով Հայաստանի սէրը վառեցինք գաղութահայութեան սրտին մէջ որպէս փարոս, որպէս յոյսի ու մխիթարութեան արեւ:

Այդ փարոսին բացած լուսեղէն աղօսին ուղղութեամբ է որ ընթացան եւ կ'ընթանան գաղութահայութեան մէջ այժմ գործող բոլոր այն մարմինները — Բարեգործական, Հայրենասէրական, ՀՅԿ, Պետական Խաչ եւ այլն — որոնք իրենց օժանդակութիւնը եւ գաղութներու համակրանքը կը տանին Հայ Երկրին: Այդ աղօսին ուղղութեամբ է որ ճամբայ ելան ներգաղթի կարտաւանները: Այդ աղօսը կը մնայ իրրեւ լուսաւոր հետքը մեր կուսակցութեան կարած տասնեւհինգ տարուան նուիրումի եւ աշխատանքի ճամբուն:

ԴԻՕՇԱԿԱԿԻՐ ՀԱՅՐԵՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ

Վերջին տասնեւհինգ տարուան մեր դործունէութեան վրայ պէտք է նկատել յետադարձ ակնարկ մը, թարմացնելու համար յիշողութիւնները եւ ցոյց տալու համար թէ ի՞նչ է եղած մեր ղերը, իրրեւ առաջնորդող եւ ղեկավարող ուժ, հայրենաշինութեան մէջ, զոր բրած ենք մեր նպատակի առաջին կէտը:

Մինչեւ այն թուականը, այսինքն մինչեւ 1921, արտասահմանի մէջ բաղմաթիւ ձեռնարկներ եւ հանդանակութիւններ կատարուած էին որրի, զաղթականներու օգնութեան, սովահարներու փրկութեան եւ այլ նպատակներով, առանց հաշուելու հայաստանի նախօրդ կառավարութեան օրով հրապարակ նկատուած հանդանակութիւնները, որոնց Ռամկավար եւ Ազատական անհատները թէ կուսակցութիւնները իրենց բոլորանուէր աջակցութիւնն ու մասնակցութիւնը բերած էին: Հ. Բ. Բ. Միութիւնը, մեր բարեգործական մեծագոյն հաստատութիւնը, կրանուած էր արտասահմանի հայութեան թշուառութեամբ եւ իր բոլոր նիւթական միջոցները յատկացուցած էր որբանոցներու եւ զաղթականներու գործերուն: Դժուար էր այս պայմաններէ մէջ, աչքերն ուղղել ղէպի Հայաստան, ղէպի աւերակայ եւ թշուառ երկրի մը փերաշինութեան եւ բարգաւաճումի գործը: Դժուար էր մանաւանդ համոզել թէ այլեւս պէտք է արտասահմանի մէջ ծախսուած գումարները հետազնուէ յատկացնել որբերու եւ զաղթականներու Հայաստան փոխադրութեան եւ Հայաստանի փերաշինութեան ու անտեսութեան զօրացման գործին:

Դժուար էր անոր համար որ հաւատք չկար Հայաստանի վրայ: Արտասահմանի հարուստները եւ անոնց ձեռքին տակ զրուհուող հաստատութիւնները՝ սարսափահար պոլշեիկեան յեղափոխութեան առաջին ծայրայեղութիւններէն եւ ազդուած հակահայաստանեան խմբակին փրոփականալն ու պայքարէն, Հայաստանը եւ հոն համախմբուած ժողովուրդը կորսուած կը նկատէին: Այս աչն չըջանն էր, երբ ոմանք Հայ ժողովուրդին համար նոր հայրենիք կը փնտէին Հապէշխտանի կամ Հարաւային Աֆրիկէի մէջ...

Ռամկավար Ազատական մամուլը եւ բեմը հնչեցուցին, այս րնդհանուր շուարումին եւ անտուգութեան մէջ, առաջին ղեփորը, — Միրտերը փէր, աչքերը ղէպի՝ Հայաստան: Եւ առաջին տաթիւ ցնցեցինք Հ. Բ. Բ. Միութեան վարիչները, որպէս ղի Հայաստանի հետ կապին իրենց արտասահմանեան գործունէութիւնը եւ այն գումարները՝ որոնք կանխորոշ պայմաններով կատակային արգելքի տակ ղեն:

Կարելի է յիշել մեր ընկերներէն Պ. Ե. Կարիկեանի պայ-
քարները «Ապագայ»ի մէջ 1922–24 թուականին, որոնց հետեւան-
քով Պ. Կարիկեան — Պատուոյ անդամ Հ. Բ. Ը. Միութեան —
քառուկաւ Բարեգործականէն եւ նուիրուեցաւ ՀՅԿ-ի կազմա-
կերպութեան գործին, Ֆրանսայի մէջ, ու յետոյ գնաց Հայաս-
տան, երեք տարի աշխատելու համար, որպէս ՀՅԿ-ի Երեւանի
առաջնագործարանի վարիչ: Կարելի է յիշել մեր ողբալեալ ըն-
կերս՝ Մ. Պապաջանեանի ճիգերը, որպէս անդամ Հ. Բ. Ը. Միութեան
Կեդր. Վարչութեան, ճիգեր՝ որոնք երկրորդուեցան
Բարեգործականի Կեդրոնի եւ Շրջ. Յանձնաժողովներու կամ
Մասնաժողովներու Վարչութեանց անդամակցող մեր ուրիշ ըն-
կերներուն կամ համակիրներուն կողմէ եւ որոնք վերջ ի վերջոյ
յաջողութեամբ պատուեցան շնորհիւ այն յատկատեւ հայրենա-
սիրութեան, որ յատկանշեց Պօղոս Նուպարը իր ամբողջ կեանքին
մէջ:

Բարեգործականը սկսաւ մասնաւոր առաքելութիւններ
զրկել Հայաստան, ձեռնարկեց Նոր Եղեղիս աւանի շինութեան,
իրրեւ առաջին շինարարական գործ՝ արտասահմանի հայութեան
անունով, նշանակեց իրեն համար մասնաւոր ներկայացուցիչ
Երեւանի մէջ, Երուսաղէմի «Արարատեան» որբանոցի սաներէն
մօտ 200 հոգի փոխադրեց Հայաստան, ներգաղթի օժանդակու-
թիւնը յանձն առաւ Յունաստանէն գաղթողներու համար (1924-
26), եւ վերջապէս Ամերիկայի Շրջանակի բաղձանքին եւ նախա-
ձեռնութեանը վրայ մէջտեղ նետեց Նուպարաշէնի գործը, իր
չուրջ համախմբելով Հայրենակցականներ ալ, որոնք կ'ուզէին
Նուպարաշէնի մէջ թողաժառեր ունենալ: Եթէ ուրիշ ո'ւեւէ ձեռ-
նարկի օժանդակած չըլլայինք իսկ, մի'այն այն իրողութիւնը թէ՛
Ամերիկայի մեր բնմը եւ մամուլը Նուպարաշէնի ձեռնարկին յա-
ջողութեան մէջ կատարեց գլխաւոր դերը եւ թէ մեր բոլոր ըն-
կերները եւ համակիրները մասնակցեցան հանդանոցութեան, ի-
րաւունք կու տայ մեզի բնիւ թէ հայրենաշինութեան մէջ դեր
մը կատարեցինք:

Բարեգործականի հայրենաշինութեան ծրագիրը զոր այս
կազմակերպութիւնը որդեկրած է այժմ, յիշին կը համապա-
տասխանէ մեր կուսակցութեան ուղղութեան եւ առողջ համար ալ
Բարեգործականը կը չփոխուի Ռամկավար Ազատական Կուսակ-
ցութեան հետ: Այդ չփոխութիւնը՝ նպատակաւոր բոլոր թէ ան-
գլխակցութեան արդիւնք, մեզի համար պատուարեր է:

Բարեգործականի զբաղաւորութիւն մեծապէս մասը կը կապ-
մէ Մեղլոսեան Եղբայրներու նուիրատուութիւնը, մօտ կէս մի-
լիոն անգլիական օսիլ, կամ երկուք ու կէս միլիոն տոլար: Այդ
նուիրատուութեան մէջ մեր ընկերներուն եւ մասնաւորապէս Պ.
Տիգրան Հաճընլեանի կատարած գերը տեղին չէ հոս յիշելը:

Բայց անհրաժեշտ է յիշել թէ Մեկլզնեան նուիրատուութեան նկատմամբ հազար անգլիական ոսկիի կամ 15 հազար տուրքի յատկացումը Հայաստանի Համալսարանին, Եզրպատսի մեր ընկերներուն եւ մասնաւորապէ՛ս ողբացեալ Ընկեր Լեւոն Մկրտիչեանի գործն է: Հակառակ նուիրատուութեան սկզբնական վաւերապարտման մէջ Հայաստանի համար սեւեւ տրամադրութեան չըլլալուն, մեր Կուսակցութեան Եզրպատսի Շրջանակը յաջողեցաւ, բարերարը համոզելով, աւելցնել տալ տրամադրութիւն մը Հայաստանի Համալսարանին համար: Տոննեւհինգ տարիէ ի վեր այդ յատկացումէն Հայաստան զացած է 45 հազար ոսկի կամ 225.000 տուրք, ու այդ գումարին շնորհիւ կարելի եղած է ոչ միայն Հայաստանի Համալսարանին մէջ «Հայագիտական ամպլոն» մը ունենալ, ալլ տպագրուած են հայագիտական եւ ազգագրական մեծ արժէք ունեցող գործեր, ինչպէս Հ. Աճառեանի ստուգարանական մեծ բառարանը, եւ հիմը գրուած է Համալսարանի մատենադարանի շէնքին, որ պիտի կոչուի Մեկլզնեաններու անունով եւ պիտի ունենայ իրեն յատուկ տպարանն ալ: Մեկլզնեան Ֆոնտին Հայաստանի մէջ յանձնաձեռնմին եւ օգտագործումին մէջ ութը տարիէ ի վեր լաւագոյն դերը կը կատարէ Պ. Յովհ. Յակոբեան, «Արեւ»ի ռախկին խմբագիրը, որ այժմ քարտուղարն է Մեկլզնեան Ֆոնտի Յանձնաժողովին եւ ինք ալ այդ Ֆոնտին գումարով կը կատարէ աշխատասիրութիւններ, որոնցմէ յիշենք «Ուղեգրութիւններ», կամ օտար ճամբորդներու հինէն ի վեր Հայաստանի վրայ արուած տեղեկութեանց ամփոփումը (վեց հատոր):

Բարեգործականի խողովակով եղած օժանդակութիւնները կամ յատկացումները միակ գործը չեն, որ արդիւնքը եղան մեր աշխատանքներուն կամ թելագրութիւններուն:

1925-ին, Ռ. Ա. Կուսակցութեան Ամերիկայի Շրջանակը ուղեց «Պայքար»ի անունով ձեռնարկ մը բնել ի նպատակ Հայաստանի Համալսարանին: «Պայքար»ի խմբագրութիւնը գիմեց Հայաստանի նոյն տոնի Լուսաւորութեան Կոմիտար Ասքանազ Մըռաւեանի, որ սիրով ընդառաջ գնաց եղած տառջարկին եւ թելագրեց, որ Գիւլպատնասական վարժարանի շինութեան յատկացուի հանգանակուելիք գումարը:

Այս նպատակով հրապարակ նետուած 10 հազար տուրքի հանգանակութիւնը իրականացաւ չուտով մեր ընկերներու եւ համակիրներու նուիրատուութիւններով եւ Գիւլպատնասական վարժարանին շէնքը կանգնուեցաւ Երեւանի մէջ: Պապաջանեանի աջգին տեղւոյն վրայ, Հայաստանի Կառավարութեան կողմէ եւս գումարի մը յատկումով: Այդ շէնքը այժմ զարդերէն մէկը կը կազմէ Երեւանի Համալսարանի թաղին:

Բարեգործականը միակ մարզը չէր, ուր Ռամկավար Ազա-

տական Կուսակցութեան անդամները գործեցին իրրեւ դրօշակահիր Հայրենաշինութեան:

1921-ին, Կ. Պոլսոյ մէջ կազմուած էր Հայրենիքի Օգնութեան Մարմին մը, որուն մէջ գործօն դեր ստանձնած էին Ռամկավար և Ազատական անհատներ: Ողբացեալ բանաստեղծ Յովհ. Թումանեանի աջակցութենէն յետոյ, այդ մարմինը կոչուեցաւ ՀՕԿ (Հայրենիքի Օգնութեան Կոմիտէ) և իրրեւ մասնաճիւղ կապուեցաւ նախ Թիֆլիսի և ապա Երևանի կեդրոնին: 1922-ի դէպքերը եկան Կ. Պոլսոյ Հայութեան մէջ ազգային և Հայաստանեան գործունէութեան վերջ տալու:

1924-ին Բարիզի մէջ սկսաւ ստաջին շարժումը արտասահմանեան ՀՕԿ-երու կազմութեան: Առաջին գործիչը, այդ շարժումին համար, եղաւ Պ. Ե. Կարիկեան: Երկու տարի յետոյ, երբ Պ. Շահվերտեան Բարիզ եկաւ, ՀՕԿն ստացաւ նոր կազմակերպութիւն, մասնակցութեամբ Ռամկավար Ազատական անհատներու, որոնց մէջ մեր ողբացեալ ընկերը՝ Պ. Մ. Պապաջանեան վարեց Բարիզի Կեդրոնական Վարչութեան նախագահութիւնը՝ մինչև իր մահը (1929): Այդ միջոցին էր, որ Հայաստանէն արտասահման եկող առաջին պատուիրակութիւնը՝ ՀՕԿ-ի և Պետական Կարմիր Խաչի կողմէ հասաւ Բարիզ և ձեռնարկուեցաւ Խրանասահայ տան մը շինութեան և Կարմիր Խաչի հանգանակութեան: Քիչ յետոյ պատահեցաւ Շիրակի երկրաշարժը, երբ ղեռ Պատուիրակութիւնը Բարիզ էր: Ու այդ առթիւ ևս բացուեցաւ հանգանակութիւն մը, որ մօտ երկուք ու կէս միլիոն Փրանքի կամ հարկւր հոգար տուար արգիւնք մը տուաւ: Այդ հանգանակութեանց յաջողութեան համար Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը տրամադրեց իր բեմը և մամուլը, առանց որու սեւէ ժողովրդական ձեռնարկի յաջողութիւնը անկարելի է:

Բարիզէն յետոյ Պրիւսիյի և Լոնտոնի մէջ կազմուեցան ՀՕԿ-ի մասնաճիւղեր, դարձեալ մեր ընկերներու և համակիրներու կողմէ:

Բարիզի հետ միաժամանակ Աթէնքի մէջ սկսաւ ՀՕԿ-երու կազմութեան շարժումը, Հայաստանի համար համակրանք ստեղծելու և օժանդակութիւն ձեռք բերելու նպատակով: Հակառակ հակահայաստանեան իմբրակին մատնութեանց և Յունական կառավարութեան կողմէ տեղ տեղ ցոյց տրուած արգելքներու — որոնք հետեւանք էին այդ մատնութեանց — ՀՕԿ-ը ծաւալ գտաւ և մասնաճիւղեր ունեցաւ բազմաթիւ գաղթականներու և նոր Յունաստանի, այսինքն Սեկանիկի չրջանակին մէջ:

ՀՕԿ-ի շարժումին հետ միաժամանակ ներգաղթի շարժումը ծնաւ և 1924-26 թուականներուն Յունաստանէն տասը հազար գաղթականներ փոխադրուեցան Հայաստան: Թէ՛ ՀՕԿ-ի և թէ՛ ներգաղթի շարժումը ղեկավարուեցաւ Ռամկավար Ազատական

Կուսակցութեան կողմէ, որուն գործիչները, զեռ ալբ. տառնէն, որպէս «Համայնափար» ներկայացուեցան եւ ատենցմէ ոմանք (ինչպէս Գ. Նաւասարդեան) հալածուեցան եւ վերջ ի վերջոյ արտաքսուեցան Յունաստանէն:

Առաջին օրէն, ալսինքն 1924էն ի վեր, Աթէնքի ՀՕԿ-ի վարչութեան տառնապետն է մեր պատուական ընկերը Տոքթ. Տ. Էնֆիլէճեան: ՀՕԿ-ի շարժումը Յունաստանէն անցաւ Պուլկարիա եւ Ռումանիա, ուր եւս ՀՕԿ-ի անդամներու եւ վարիչներու մէջ կարեւոր թիւ մը կը կազմեն մեր ընկերները: Նոյնն է պարագան Սիւրիոյ մէջ եւ այլուր, ուր ՀՕԿ-երը կը մնան որպէս զուտ հայ-բննաչինական մարմիններ, հետի քաղաքական կամ հատուածական բնոյթ կրելէ:

Ամերիկայի մէջ եւս նոյնն էր իրականութիւնը՝ սկիզբի շրջանին:

ՀՕԿ-ի առաջին շարժումին դուրսը կեցողները, այս դադութին մէջ եւս, Ռամկավար Ազատականներ էին: ՀՕԿ-ի եւ Պետական Կարմիր Խաչի պատգամաւորութիւնը 1926ին, Ամերիկայի մէջ իրեն իրբեւ առաջնորդ եւ աջակից ունեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան գործիչները եւ անդամները: Մեր մամուլը եւ բեմը լայն պատահութիւն եւ արձագանդ տուաւ անոնց փրփրականաին ու կոշերուն եւ Ամերիկահայ Տան հանգանակութեան մէջ նուազ կարեւոր դեր մը չէ որ կատարեցինք:

Պետական Կարմիր Խաչը, ուրիշ մարդ մը եղաւ մեր հայ-բննաչինական գործունէութեան Ամերիկայի մէջ թէ՛ Ամերիկայէ դուրս, Հայաստանի Պետական Կարմիր Խաչին հետ արտասահմանի կապը պահուեցաւ. առաւելապէս մեր ջանքերուն շնորհիւ: Ներկայ յօդուածաշարքին սահմանէն դուրս կը թողտաք ալի ցաւայի թիւրիմացութիւնները եւ շեղումները, որոնք պատճառ դարձան Ամերիկայի մէջ մեր թէ՛ ՀՕԿ-էն եւ Պետական Կարմիր Խաչէն քաջուելուն: Սակայն արտասահմանեան կարգ մը երկիրներու մէջ թէ՛ ՀՕԿ-ի եւ թէ՛ Պետ. Կ. Խաչի մասնաճիւղերու մինչեւ այսօր գոյութիւնը արդիւնք է Ռամկավար Ազատական կամ համակիր անհատներու ճիգերուն եւ կամ մեր մամուլի տուած օժանդակութեան: Այսպէս է, օրինակ, Բարիդի Պետ. Կարմիր Խաչի մասնաճիւղի պարագան: Այս մասնաճիւղը, որուն գլուխը կը մնայ մեր պատուական բարեկամը Տոքթ. Պօղոս Քօթօյեան, Հայաստան ուղարկած է հարիւր հազարաւոր ֆրանք արժէքով զեւոքայք, հագուստեղէն, բժշկական գործիքներ, եւ այլն:

Հայրենակցականները ուրիշ արդիւնաւոր մարդ մը եղան մեր հայրենաչէն գործունէութեան: Մեր ընկերները, որ Հայրենակցականի մէջ որ եղան իրբեւ անդամ կամ վարիչ, գալն ուղղեցին զէպի Հայաստանեան գործունէութիւն: Այսպէս՝ Արարիկի, Խարբերդի, Մալաթիոյ եւ այլ Հայրենակցականները շատ

րան կը պարտին մեղի, ոչ միայն Ամերիկայի, այլ միւս Հայ դա-
պութներու մէջ, իրենց անուներով Հայաստանի մէջ նոր աւան-
ներու շինութեան տեսակէտէն:

Նոր Արարկիրի շինութեան համար Ամերիկայէ Հայաստան
դաշնու առաջին պատուիրակը եղաւ մեր ընկերներէն Պ. Մ. Ղա-
զիկեան: Նոր Կեսարիոյ շինութեան հանդանակութիւնը սկսաւ
Նգիլպատի մէջ մեր մամուլին փրփրականտին շնորհիւ եւ մեր
գործակցութեամբ:

Անհիմն ինքնադուլութիւն պիտի չըլլար ըսելը թէ՛ մեր
մամուլին, ըսմին եւ անհատ ընկերներու թափած ճիգերուն եւ
մղած փրփրականտին հետեւանքն եղան շատ մը ձեռնարկներ եւ
նոյնիրատուութիւններ՝ հայրենաչէն նպատակով:

Աւետ Սարգիսի անունով եւ կատարարութեանի մը համար
եղած հազար անգլիական ոսկիի կամ հինգ հազար տոլարի նու-
րատուութիւնը արդիւնք է մեր ընկերներէն Պ. Պ. Վ. Մալեգեանի
եւ Ե. Կարիկեանի թերադրութեանց: Ըիզ չինականքի համոզելու
համար Խեբեան Կտակի Խնամակալութիւնը, որպէս զի Թայլինի
մէջ հաստատուի վարժարան մը: Մարիոսեան նուիրատուութիւ-
նը՝ Երեւանի արհեստագիտական վարժարանին համար, ապա-
հովուեցաւ դարձեալ մեր շրջանակի, մասնաւորապէս Պ. Պ. Պօղոս
Խամէրեանի եւ Մ. Միհրդատեանցի ջանքերով: Պ. Միհրդատ-
եանց Հայաստան գնաց այդ վարժարանին շինութեան գործին
համար:

«Պայքար» խմբագրութիւնը, այս տողերը գրողին Հա-
յաստանէն վերադարձէն յետոյ, Հայաստանի Համալսարանին
դրիկեց կարգ մը պիտոյքներ, որոնց ցանկը յանձնուած էր այս
թերթի թղթակցին, Լուս. Ժող. Կոմիտարութեան կողմէ: Պ. Ա.
Զօգանեան Հայաստանէն իր վերադարձէն յետոյ «Անախիտ» մէջ
րոցաւ Հայաստանի հնութեանց պահպանութեան համար հանգա-
նակութեան սիւնակ մը եւ մօտ տասը հազար Փրանք գոյացաւ,
եթէ համ սխալիր:

Մեր Ամերիկայի պատուական ընկերներէն Պ. Ատիկ Տէ-
վէճեան վերջին անգամ Հայաստանի Համալսարանին նուիրեց իր
թանկարժէք մատենագարանը, զոր կազմած էր երկար տարիներ
ու աշխատութեամբ եւ գոհարութեամբ:

Սակայն այս նիւթական օժանդակութեանց հետ բաղդատ-
մամբ անհամեմատօրէն բարձր է արժէքը այն բարոյական մըթ-
նոյրարին, որ մեր ջանքերով ստեղծուեցաւ գաղութներու մէջ՝
ի նպատակ Հայաստանի եւ մեր երկրի վերաշինութեան:

Այժմ, տասնեւհինգ տարուան աշխատանքէն յետոյ գոհ ենք
— եւ մեր վարձատրութիւնը կը գտնենք այս գոհունակութեան
մէջ — որ մեր տաճի օրէն ի վեր այնքան տաժանքով հերկած հայ-
րենաշինութեան դաշար այժմ ընդարձակուած է եւ կ'ընդգրկէ

բոլոր հայ գաղութները իրենց ստուար մեծամասնութեան մէջ: Ուրիշներ — անոնք որ այժմ կ'ուրանան մեզ — կրնան զիւրոյթեամբ քալել մեր հետքերուն վրայէն եւ քաղել մեր ցանած սերմերուն արգիւնքը: Բայց մենք կը մնանք հայրենաշինութեան առաջին եւ վերջին գրօնակիրները:

Ե.

ՀԱՒԱՏԱՐԻՄ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Եթէ Հայաստանը մեր զարուոր հայրենիքն է, որուն դոյութեամբն ու քաղաքական անկախութեամբը պայմանաւորուած են Հայ ժողովուրդին ֆիզիքական գոյութիւնն ու իրրեւ ազգիքնորոյն եւ ազատ զարգացումը, Հայաստանեայց Եկեղեցին մեր հոգեւոր հայրենիքն է, որ Հայաստանի ստրկութեան եւ տառապանքի օրերուն Հայ ժողովուրդին մէջ վառ պահած է հաւատքը իր հայրերուն, պահպանած է անոր մշակոյթին գանձերը, որոնցմէ առաջինն է մեր ոսկեգինիկ լեզուն, ու մագնիսի մը պէս, որ ինքը՝ Արարատն է, մեր ժողովուրդին հալածական բեկորներուն աչքերը սեւեռած է զէպի էջմիածին, աշխինքն զէպի Հայաստան, ու անոր ազատագրութեան յոյսով ալ մխրիթարած մեր հուրէ ու սուրէ անցած սերունդները:

Այս բմբունումով Հայաստանեայց Եկեղեցին մեր մէջ կատարած է ոչ միայն զուտ կրօնական հաստատութեան մը դերը, այլ անիկա եղած է ազգային պաշտամունքի խորան մը, մեր ժողովուրդին միաձույլ եւ համակեդրոն ապրումին կառանք եւ նաեւ, երկար ատենի համար, ներշնչարանը Հայ արուեստին ու գրականութեան: Մեր Եկեղեցին իր այս դերը կրցած է կատարել, որքան կարելի էր հաւատարիմ մնալով այն քաղաքական իշխանութեանց, որոնց յօժին ենթարկուած է Հայ ժողովուրդը: Այսպէս է, որ Պարսիկ, Բիւզանդական, Աբար, Թուրք, Թաթար եւ Ռուս բռնակալութիւնները անցած են մեր Եկեղեցիին վրայէն, որ իրրեւ հաստատութիւն՝ կանգուն մնացած է ինչպէս եղէզը՝ կաղնիին տակ: Էջմիածինը իր նիւթական շէնքին թէ բարոյական հեղինակութեան պահպանութիւնը կը պարտի Հայաստանեայց Եկեղեցւոյ ա՛յս ճկունութեան, աշխինքն քաղաքական իմաստութեան, որ մեր ժողովուրդին ինքնապահպանման բնազդին ցոլացումն է միայն:

Այսօր, ինչպէս Հայ Ժողովուրդը, նոյնպէս իր ազգային եկեղեցին կը գտնուի ենթակայ, զանազան իշխանութեանց, զանազան երկիրներու մէջ: Մեր Ժողովուրդին ստուար եւ համախումբ զանգուածը այսօր կը գտնուի Խորհրդային Հայաստանի սահմաններուն մէջ, իսկ բաւական ստուար զանգուած մըն ալ ունինք Հայաստանի դրացի եւ քոյր Խորհրդային միւս Հանրապետութեանց մէջ: Էջմիածին, քաղաքականօրէն, ենթակայ է Խորհրդային Իշխանութեան, ինչպէս Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը քաղաքականօրէն ենթակայ է Սիւրիական իշխանութեանց եւ Փրանսայի, Երուսաղէմի Պատրիարքութիւնը՝ Անգլիոյ, Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը՝ Թուրքիոյ եւ զանազան գաղութներու Առաջնորդութիւնները՝ Եգիպտոսի, Յունաստանի, Պուլկարիոյ, Ռումանիոյ եւ այլ կառավարութեանց: Այս բոլոր Հայ եկեղեցական իշխանութիւնները, Էջմիածինէն սկսեալ մինչեւ յետին հոգեւոր հովուութիւնը, չեն կրնար հաւատարիմ չըլլալ իրենց տեղւոյն քաղաքական իշխանութեանց, ինչ որ ալ ըլլայ անոնց ազդեցութիւնը կամ վարչաձեւը: Ու այդպէս ընելով, Հայաստանեայց եկեղեցին հաւատարիմ կը մնայ Քրիստոսի պատուէրին. «Տուք զկայսերն կայսեր...»: Եւ յետոյ աշխարհի ո՞ր եկեղեցին է, որ կրնայ պայքարիլ կամ թշնամանալ քաղաքական իշխանութեան մը հետ, առանց վտանգելու իր գոյութիւնը: Վատիկան վերջ ի վերջոյ ստիպուեցաւ. հաշտուիլ Բոալիոյ քաղաքական իշխանութեան հետ, անոր զէմ երկար ատեն մաքառելէ յետոյ անշուշտ բարոյական զէնքերով: Այն ֆոնֆօրտաները որ կնքուեցան Կաթողիկ եկեղեցիին եւ զանազան իշխանութեանց կամ վարչաձեւերու միջեւ, ուրիշ բան չեն ցոյց տար, եթէ ոչ կրօնական իշխանութեան ճկունութիւնը, յարմարելու համար ամէն վարչաձեւի: Վերջին յուրերու նայելով, հաւանական է որ Վատիկան համաձայնութեան մը գայ Խ. Միութեան հետ եւս:

Էջմիածին լեզու գտած է անցեալ դարերուն իր վրայ տիրած բոլոր իշխանութեանց հետ, եւ լաւ բրած է: Այլապէս այսօր ո՛չ Էջմիածինը գոյութիւն կ'ունենար եւ ոչ ալ Հայաստանեայց եկեղեցին, իր միասնականութեան մէջ: Էջմիածին չբաժնելով հանգերձ Պոլսէի իրան կարգին տեսակէտները եւ բողոքելով հանդերձ անոր կողմէ Էջմիածնի եւ Հայաստանեայց եկեղեցիի պարտադրուած կարգ մը պայմաններուն եւ զրկանքներուն զէմ, չհեղեցաւ իր հաւատարմութենէն Հայաստանի Պետութեան հանդէպ եւ այս կերպով կրցաւ պահել իր գոյութիւնը եւ գործունէութեան ազատութիւնը: Անոնք որ օտար իշխանաւորներու եւ բռնակալներու առջեւ բարեւի կեցած են արտասահմանի մէջ, կը պահանջեն որ Էջմիածին ապստամբութեան զբօշ պարզէ Խորհրդային Իշխանութեան զէմ...: Թող այդպիսիները բարեւ ըլլան եւ երթան Հայաստան, անմաւր պարզելու համար այդ ապստամբու-

Թեան դրօշը, փոխան էջմիածնի...: Կամ գոնէ արտասահմանի մէջ իրենց ձեռքը գանուող սեւէ եկեղեցի մը կամ հողեւորական մը ապստամբեցնեն սեղւոյն քաղաքական իշխանութեան դէմ: Յետոյ կը տեսնուինք:

Էջմիածին ոչ միայն Հայաստանեայց եկեղեցւոյ գարաւոր աւանդութեանց եւ իմաստութեան հաւատարիմ կը մնայ իր աշտօրուան գերբին մէջ՝ հանդէպ Հայ Երկրի իշխանութեանց, այլ կը կատարէ հայրենասիրական պարտք մը, գնահատելով այն իշխանութիւնը՝ որ կը վերաշինէ ուրիշներու քանդած երկիրը, իր հայրենի հողին վրայ ապրող Ժողովուրդին պաշտպանութիւնը կ'ապահովէ եւ խաղաղութիւն ու հաց կու տայ անոր: Ոչ միայն հաց կու տայ, այլ կը կանգնէ համալսարան, թատրոն, օրերա, մշակոյթի տուններ, մարզական սպորտներ, հանդստան տուններ, կը շինէ գործարաններ, ճամբաներ, բնակարաններ: Կը սահպանէ Հայ Երկրի գարաւոր հնութիւնները ու գանձեր վերակերակու կը ջանայ: Կը պահէ հայ մշակոյթի գանձերը, որոնց մէջ՝ էջմիածնի հազարաւոր թանկարժէք ձեռագիրները: Վերջապէս իշխանութիւն մը որ Հայերէ բարեկացած է եւ Հայկական է: Այդ իշխանութիւնը, աւելին բլլալով, չի միջամտեր եկեղեցիին գործերուն, եւ արգելք չէ որ եկեղեցին վարէ իր գործերը, իր բմբրունութիւն եւ իր միջոցներուն համաձայն: Այդ ոչ-միջամտութեան քաղաքականութեան վերջին ազդեցոյցն էր Կաթողիկոսական բնաւորութիւնը, առանց կառավարութեան ներկայացուցչի մը կամ պրօկուրօրի ներկայութեան: Այդ ոչ-միջամտութեան փաստեր են եպիսկոպոսական ազատ ձեռնադրութիւնները, միսօսի օծումը եւ այլ արարողութիւնները, որոնք կը կատարուին էջմիածնի մէջ Ժողովրդական բարձրութեանց ներկայութեամբ: Էջմիածնի կը մընայ շարունակել իր հաւատարմութեան մէջ եւ օգտուելով այն բարեփոխութիւններէն, որոնք կը կատարուին Սորհրդային իրաւակորդին տակ, հետզհետէ բնոյթային իր կրօնական գործունէութեան շրջանակը, առանց միջամտիս բլլալով քաղաքական խրնդիրներու:

Ռամկափար Ազատական Կուսակցութիւնը հաւատարիմ եղաւ էջմիածնի, այսինքն Հայաստանեայց եկեղեցւոյ գերագոյն իշխանութեան եւ նախանձախնդիր՝ անոր հոգեւոր հեղինակութեան, այդ հեղինակութեան ամրապնդումը նկատելով իրբեւ պայման մեր փայլաւառին Ժողովուրդի հոգեկան միութեան եւ Հայաստանի հետ բարոյական կապին: Էջմիածնէն խզուիլը կը նշանակէ խզուիլ Հայաստանի հետ: Եւ արտասահմանի մեր եկեղեցականութիւնը չառ լաւ կ'ըմբռնէ թէ՛ Հայաստանեայց եկեղեցին հետո պահելով քաղաքական պայքարներէ, ու հնազանդ մընալով Ամենայն Հայոց Հայրապետին հրամաններուն, կը կատարէ ոչ միայն եկեղեցիին այլ եւ անոր Գերագոյն Պետին՝ էջմիածնի

Հայրապետութեան գոյութեան պահպանութեան համար իր պարտականութիւնը, եւ կ'ապացուցանէ իր ողջամիտ զնահատումը Հայաստանի ներկայ իրականութեան արժէքին՝ Հայ երկրին եւ Հայ ժողովուրդին համար:

Մեր հաւատարմութիւնը՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ հանդէպ, լրացումն է այն հաւատարմութեան, զոր Հայաստանեայց Եկեղեցին կը տածէ հանդէպ Հայ Պատականութեան: Եկեղեցին եւ Պատութիւնը բաժնուած են Հայաստանի մէջ, ինչպէս շատ մը երկրներու մէջ: Բայց արտասահմանի մեր իրականութեան մէջ տնտէք իրարու կապուած կը մնան: Եւ ատոր համար ալ շատ հասկրնալի է այն պայքարը, զոր Հայ Պատականութեան դէմ թուղթի կախ մղողները ուղղած են Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետութեան դէմ եւս: Մենք մնացինք եւ կը մնանք պատնէշի վրայ ինչպէս Հայաստանի Պատականութեան, նոյնպէս եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Գերագոյն Իշխանութեան հետ:

Զ.

ԻՐԱԿԱՏԻՐ ԹՐԲԱՀԱՅ ԴԱՏԻՆ

Դատ մը գոյութիւն ունի այնքան ատեն, որ դատին տէրը կ'ապրի կամ չէ հրաժարած այդ դատէն եւ կամ ժամանցում չէ եղած: Թրքահայ ժողովուրդին բեկորները կ'ապրին աստանդական, աշխարհի շուր ծաղերուն վրայ, շատեր աւանց հպատակութեան, այսինքն ատանց քաղաքացիութեան իրաւունքի, ոմանք մարդկային իրաւունքներէ ալ զրկուած, ինչպէս են՝ ապստանի եւ աշխատանքի իրաւունքը: Ու ասիկա՝ անոր համար, որ Թուրքիա ոչ միայն զարեւու ընթացքին ճնշեց՝ բռնակալութեանց ամենադաժանին տակ մեր ժողովուրդը, այլ օգտուելով վերջին պատերազմի պատահութեանէն, իր սահմաններուն մէջ ապրող Հայութեան մեծագոյն մասը կոտորեց եւ մնացորդներն ալ վրտարեց կամ ստիպեց մեկնելու իր երկրէն, սր մեր հայրերուն երկրն էր:

Զինադադարէն յետոյ, մեր ժողովուրդի դատին հետապնդումը յանձնուած էր Թրքահայոց ներկայացուցչական ժողովին՝ ապաինքն Կ. Պոլսոյ Պատրիարքարանին կողմէ Բարիլի Ազգ. Պատու իրակութեան, սր խաղաղութեան խորհրդաժողովներուն մէջ արդարութիւն եւ հատուցում պահանջեց յաղթական պատուիրաններէն: Ռամկավար եւ Ազատական կուսակցութիւնները,

դեռ զինադարարի վաղորդայնին, պահանջեցին, որ Թրքահայ Դատը միայն ու միայն պէտք է Թրքահայոց կողմէ հետապնդուի եւ Ռուսահայաստանի հողերուն վրայ կազմուած Հայ Պետութիւնը չմիջամտէ մեր գործերուն: Դժբախտարար նրեանի կառավարութեան ղեկը այն ատեն իր ձեռքն ունեցող Հ. Յ. Դ. կազմակերպութիւնը ներկայացաւ իրրեւ Թրքահայ Դատին ալ իրաւաւորը եւ ոչ միայն Բարիդ զրկելով պատուիրակութիւն մը, խառնակեց ու խանդարեց Ալզէ. Պատուիրակութեան զիմուսներն ու աշխատանքները, այլ 1919 Մայիս 28ին, թուղթի վրայ «անկախ եւ միացեալ» Հայաստան հռչակելով պատճառ դարձաւ, որ Թրքահայ եւ Ռուսահայ խնդիրները չխոթուին, Թուրքիոյ թշնամանքը հրաւիրուի նորածին Հայ Պետութեան դէմ եւ պատերազմի ալ պատրուակ ստեղծուի, նրեանի կառավարութեան նուաճողական ձգտումներուն իրրեւ հետեւանք:

Այդ պատերազմին ելքը ցոյց տուաւ թէ՛ «միացեալ եւ անկախ» երգողները ոչ միայն կարող չէին Թրքահայաստանը կցելու Ռուսահայաստանին, այլ նոյնիսկ չէին կրնար պահել Ռուսահայաստանը, որուն կէսը յանձնեցին Թուրքին, իսկ Թրքահայ Դատն ալ ուրացան, ստորագրելով Աղեքսանդրապոլի դաւաճան դաշնագրին տակ, որուն մէջ կ'ըսուի թէ՛ Հայ Ժողովուրդը պատմական իրաւունքներ չունի Թուրքիոյ ներկայ սահմաններուն մէջ...

Այս ուրացումին հեղինակները, — որոնք Փետրուարեան ապստամբութեան եւ Պրոմէթէականներու հետ գործակցութեան ալ հեղինակները եղան, ցոյց տալով թէ Աղեքսանդրապոլի Դաշնագրին ստորագրութիւնը ոչ թէ ակամայ եւ հարկեցուցիչ պատճառի մը, այլ կանխորոշուած եւ կանխամտածուած քաղաքականութեան մը արդիւնք էր, — մինչեւ այսօր կ'ըման ղեկավարները Հ. Յ. Դաշնակցութեան, որ չէ մերժած այդ դաշնագիրը եւ չէ ժխտած այդ դաշնագրին տակ ստորագրողներուն յանուն Թրքահայութեան խօսելու իրաւունքը: Այս կերպով Հ. Յ. Դաշնակցութիւնը, իրրեւ քաղաքական կազմակերպութիւն իւրացուցած է Աղեքսանդրապոլի Դաշնագրին արթը, որով Թրքահայ Դատի անունով խօսելու իրաւունքէն ալ կամովին հրաժարած: Մամուլի մէջ կամ բեմերու վրայ երբեմն երբեմն «միացեալ եւ անկախ Հայաստան»ի անունով երգում բնողները պարզապէս փոշի կ'ըման իրենց միամիտ հետեւորդներու աչքին: Այդպիսիները, իրակա—նին մէջ «միացեալ եւ անկախ Հայաստան» բռնով կ'ը հասկնան ներկայ Հայաստանի դէմ պայքար, որուն զոհած են ուրիշ սեւերան, անտեսելով մեր Ժողովուրդին բո՛ւն դատը, որ Ռուսիոյ դէմ չէր, ոչ ալ՝ ներկայ Հայաստանի...

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, որուն համար արդէն գոյութիւն չունէր Ռուսահայ դատ մը, կ'ը նկատէ թէ ներ—

կայ Հայաստանը միակ եւ բանաւոր ելքն է Ռուսահայաստանի մէջ մեր ունեցած պատմական ապրումներուն եւ թէ այդ հողամասին վրայ ապրող ժողովուրդին կը մնայ իր ճակատագիրը վարել այնպէս ինչպէս կ'ուզէ կամ կրնայ:

Ուրիշ հոսանք մըն ալ կայ այժմ մեր մէջ, որ տարւած միջազգայնական եւ «յեղափոխական» տեսակէտներէ, Թրքահայ Դատը կը նկատէ «պուրժուազական» խաղ...: Որպէս թէ Թրքահայ Դատը բռնատէր եւ շահագործող իշխանութեան մը եւ առաջակարարոյ տարրերու դէմ հայ ժողովուրդին ազատ եւ պատուով ապրելու իրաւունքին դատը եղած չըլլար:

Այդպիսիները կրնան պաշտպան կանգնիլ բոլոր «իրաւագուրդ» Ժողովուրդներու, պաշտպանել Հապէշ ժողովուրդի իր սեփական հողին վրայ ազատ ապրելու իրաւունքը: Սակայն չեն անդրադառնար թէ երէկ Հայ ժողովուրդը իր հողին վրայ այդ միեւնոյն իրաւագրկումի եւ նուաճողական ախորժակներու զոհն էր եւ այսօր ալ տակաւին զոհն է այդ միեւնոյն անիրաւութեանց, որոնց հեղինակները անպատիժ կը մնան:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ոչ մէկ ստեն դաւած է Թրքահայ ժողովուրդի արդար դատին, բայց անոր յաղթանակին համար նուիրարեւած է իր զոհողութիւնները, կեանքի գնով: 'Ակա' Ամերիկայէն քսան տարի առաջ դէպի Կոստի դաշտը մեկնած մեր կամաւորները: Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը բողոքած է Աղեքսանդրաբոյի Դահնագրին դէմ եւ խտտօրէն դատապարտած է զայն ստորագրողները, մերժելով անոնց իրաւունքը՝ Թրքահայոց անունով խօսելու: Ռ. Ա. Կուսակցութիւնը մերժելով կը մերժէ նաեւ այն այլանդակութիւնը, որ կը ցուցադրուի այսօր ոմանց կողմէ, Թրքահայ Դատը ուրանալով կամ նոյնիսկ ծաղրելով: Մենք համոզուած ենք թէ՛ Հայ ժողովուրդին դատը, իրեն արդարութեան դատ, ընդհանուր մարդկութեան դատն է, եւ ով որ ընդհանուր մարդկութեան անունով կը խօսի, չի կրնար Հայ Դատին սոջեւ չխոնարհիլ:

Մեր մէջ, ուրեմն, եթէ կայ քաղաքական կազմակերպութիւն մը, որ ծնունդն է Թրքահայ ժողովուրդին եւ անխախտ կը մնայ անոր իրաւունքներուն պաշտպանութեան մէջ, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնն է: Այդ իրաւունքին պաշտպանութեանը համար մենք տանիքներուն վրայէն չենք պոռար, ոչ ալ ցուցարարական սպաննալիքներ կ'ընենք կամ Տօնքիշօթի նիգակ կը ճօճենք ասոր կամ անոր դէմ:

Կը նախընտրենք հետեւիլ Կամպէթթայի, որ խօսելով Ալլահա Լօրէնի մասին՝ կ'ըսէր. «Միշտ մտածել եւ չխօսիլ երբեք»: Մեր համոզումն այն է թէ՛ ժողովուրդներու իրաւունքները անժամանցելի են եւ մենք պարզապէս դատած կ'ըլլանք մեր միլիոն-

նաւոր զոհերուն դէմ, եթէ հրաժարինք կամ մոռանանք Հայ Դատը: Մեր համոզումն է նաեւ, որ արդարութիւնը կրնայ ժամանակ մը անտեսուիլ, կրնայ մեր դատին համար ալսօր դատարան դռնութիւն չունենալ, բայց բոլոր ժողովուրդներուն եւ բոլոր դատերուն համար կայ ժամ մը, որ կը հնչէ: Միայն թէ այդ ժամուն անպատրաստ չգտնուինք:

Ուսմէալար Ազատական Կուսակցութեան ղեկավարն իսկ փաստ է որ մենք չենք ուզեր անպատրաստ ըլլալ: Եւ սպասելով այդ ժամուն, այժմ կ'ընենք այն ինչ որ հնարաւոր է ու թոյլատրելի, ներկայի քաղաքական եւ տնտեսական պայմաններուն մէջ: Այդ պայմանները թոյլատու են, որ մենք ազդահաւաք ընենք, մեր ժողովուրդին բեկորները տանելով Հայաստան եւ ուշադիր հրահենք հայրենիքէն հեռու մնացողներուն ազդապահականութեան: Ու աշխատելով ազդահաւաքին համար, որ ներգաղթով կ'երակահանայ, կը մնանք այն տեսակէտին վրայ թէ՛ ներկայ Հայաստանը իրական կուսան մըն է թրքահայ Դատին լուծման համար: Ու նաեւ՝ զիտենք թէ մեր դատին հետադիւրս մը երբեք չի հակասեր ներկայ Հայաստանի քաղաքականութեան, որովհետեւ՝

1.— Ներկայ Հայաստանի Կառավարութիւնը պատուած է Աղեքսանդրաբոլի դաշնադիրը:

2.— Ներկայ Հայաստանի Կառավարութիւնը ստորագրած է ունէ դաշնադրի տակ, որով սրացուած ըլլայ Թրքահայ Դատը:

3.— Ընդհակառակը իմ. Միութեան Սահմանադրութեան յոսանքները կը կազմէ «զրկուած ժողովուրդներու իրաւունքներուն յայտարարութիւնը», որուն մէջ Թրքահայ ժողովուրդին իրաւունքը ճանչցուած է «ինքնորոշման» համար:

Ճիշտ է թէ մենք չենք պահանջեր Հայաստանի ներկայ Կառավարութենէն, որ «ընդարձակէ սահմանները», Թուրքիոյ ձեռքէն «Լեւ տռնէ» Թրքահայ Նահանգները եւայլն: Այդ պահանջները զնելու իրաւունքը չունինք, որքան ատեն որ մենք ունէ բան չենք ընելու այդ ուղղութեամբ: Հայաստանի պետականութեան հետ մնալով, գոնէ չենք խանդարեր այն գործը, զոր կ'ընէ Հայաստանի ներկայ Կառավարութիւնը: Եւ ինչ որ կը կատարուի ներկայ Հայաստանի մէջ, մեզ չի հեռացներ Թրքահայ Դատին լուծումէն, ընդհակառակը: Մնացածը պիտի ընէ ժամանակը: Բաւական է որ մենք քայլեր ժամանակին հետ: Ու մանաւանդ արթուն հսկենք:

ՊԱՇՏՊԱՆ ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒ ԵՒ
ԶԱՏԱԳՈՎ ԱԶՍԱՍԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՆՈՒԹԵԱՆ

Մեր մէջ անհատներ կան, եւ զարգացած անհատներ որ կը ժխտեն գոյութեան իրաւունքը հայ քաղաքական կադմակերպութեանց, մեր արտասահմանեան իրականութեան մէջ: Ոմանք կ'ըսեն թէ՝ մեր սեփական հողին վրայ չենք: Ուրիշներ կ'առարկեն թէ՝ օտար երկիրներու մէջ վնասակար է մեզի համար քաղաքական գործերով զբաղիլ: Կան ալ, որ կը թելադրեն տեղական քաղաքական կադմակերպութեանց մէջ մտնել, եթէ քաղաքականութեամբ զբաղիլ ուզողներ կան մեր մէջ: Ձեմ ուզեր յիշել այն միւսները, որոնք մեր ներկայ վէճերը կը վերադրեն կուսակցութեանց գոյութեան, առանց քննելու թէ ո՞վ է մեկուորը եւ ո՞վ է արդարը, որպէս թէ մի'այն մեր մէջ գոյութիւն ունենային կուսակցութիւն եւ վէճ, եւ կամ՝ որպէս թէ կուսակցութիւններէն առաջ մեր ժողովուրդը համերաշխ եւ միացած ըլլար անցեալին:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր հայրենաշէն եւ ազգաշէն գործունէութեան ընթացքին բախեցաւ նման առարկութեանց, որոնք յաճախ բարեկամներէ կու գային, եւ մեր գերը եղաւ ու պիտի ըլլայ նաեւ այդ հոսանքին դէմ թիւովարկ, մեր ժողովուրդին մէջ ամուր պահել Ռամկավարական կարգերու հանդէպ յարգանքը եւ աշխատիլ Ազատական գաղափարներու տարածման:

Եթէ մեր սեփական հողին վրայ չենք, այդ բանը մեր կամքովը չէ եղած, այլ արդիւնք է ազադակող անարդարութեան մը, որուն դէմ գտաւ ունինք: Եթէ ուրիշներ բրած են մեզի անարդարութիւն մը, մենք արդարութիւն բնել կ'ուզենք մեզի՝ ինքզինքնիս չզրկելով իրաւունքէ մը, զոր ունին իրենց սեփական հողին վրայ ապրողները:

Անոնք որ կ'ըսեն թէ վնասակար է մեզի համար օտար երկիրներու մէջ քաղաքական գործերով զբաղիլ, թող բան թէ՝ այդ ո՞ր քաղաքական գործն է, որ կ'ընէ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, վնասելով մեր ժողովուրդին՝ օտար երկիրներու մէջ:

Մենք օտարներու ներքին գործերուն չենք խառնուիր, առանց իրաւակարգին եւ պետական կարգուսարքին դէմ բմբոսաւթեան չենք մղեր մեր հետեւորդները, ընդհակառակը զանոնք հաւատարիմ կը պահենք տեղական իշխանութեանց, մեր ապրած երկիրներու իրաւակարգին դէմ չենք գործեր եւ րամկավար ու ազատական սկզբունքները ջատագովելով կարգի ու կանոնի եւ օրի-

նապահութեան դատարարակութիւնը կու տանք մեր շարքերուն: Եւ տախտակ, կը կարծեմ լաւագոյն քաղաքականութիւնն է մեզի համար՝ օտար երկիրներու մէջ:

Եթէ պա՛մ մը մենք հրաժարէինք մեր գաղափարական գործունէութենէն, մեր ժողովուրդին մէջ գոյութիւն պիտի ունենային մի-միայն ընկերավարական եւ ծայրայեղ գաղափարներու հետեւողներ, որոնք իրենց գտնուած երկիրներու մէջ կը մասնակցին օտար քաղաքական կազմակերպութեանց, կամ ծայրայեղական հայ կազմակերպութեանց, եւ իրրեւ ալ կը վնասեն երբեմն Հայ ժողովուրդին, անոր հիւրընկալուածի կացութիւնը վատթարացնելով տեղ տեղ եւ զայն անբաղձալի տարր դարձնելով կարգ մը կատապալտութեանց աչքին: Այն բարեկամները, որ մեզի խորհուրդ տուած են եւ կու տան վերջ տալ մեր կազմակերպութեան, ինչ միջոցներ ունին արգիլելու համար արիւնները, որ անտեսական եւ քաղաքական ներկայ պայմաններու մէջ չհետեւին մեր տեսակէտով արկածախնդրական եւ վտանգաւոր համբաներու:

Վերջին փամփուշտը, որ կ'ուղղեն ոմանք մեզի, այն է թէ՛ քանի որ Հայաստանի մէջ Խորհրդային իրաւակարգը կը տիրէ եւ մենք ալ իրաւակարգին տակ ապրող Հայաստանին կը համակրինք ու կ'օժանդակենք, հակառակեան մէջ կ'ըլլանք իրրեւ Ռամկափար Ազատական ներկայանալով: Բարեկամներու կամ բարեմիտներու այս գիտողութիւններուն փոխառացութիւնը կ'ընեն չարամիտները եւ մեր հակառակորդները, ըսելով թէ՛ մենք կ'ամ կեղծ Ռամկափարներ եւ Ազատականներ ենք եւ կամ ծածուկ «Համայնափար»ներ, քանի որ չենք պայքարիր Հայաստանի ներկայ իրաւակարգին դէմ, որպէս թէ՛ արտասահմանէն ուղղուած սեւէ պայքար, մտղաշտի կարենար աղղել Հայաստանի իրաւակարգին վրայ:

Այս առարկութեան կամ չարախօսութեան պոտտախանր կը կազմէ մեր՝ իրրեւ հայրենասիրական կազմակերպութիւն՝ գոյութեան գլխաւոր փաստը: Մենք կը գնահատենք այն բարիքները զոր Խորհրդային իրաւակարգը բերու մեր երկրին: Այլ բարիքներէն առաջինը իտպալովութիւնն է, երկրորդը՝ երկրին վերաշինութիւնը, երրորդը՝ ազգային մշակոյթի եւ անտեսութեան բարդաւածումին համար եղած ֆնաքերը:

Եթէ արիւ իրաւակարգ մըն ալ կարենար նոյն բարիքները ապահովել Հայաստանին, մենք պիտի գնահատէինք ա՛յլ իրաւակարգն ալ: Մեզի համար երկիրը եւ ժողովուրդը կու գան առաջին գծի վրայ եւ անոնց գոյութիւնն ու շահը վեր է ամէն տեսարանութենէ: Ասիկա մեզի համար կը կազմէ սկզբունք մը, որ մեր առաքինութիւնն է նաեւ: Կուսակցական նեղմտութիւնը չունինք, երկիրը եւ ժողովուրդը իրաւակարգի վէճերու գոհելու համար: Եթէ մենք Հայաստանի ներկայ կատապալտութիւնը վարող կու-

սակցութեան տեղն ըլլալինք, պիտի ջանայինք ընել նոյն բաները, միայն թէ աւելի ըլլալով պիտի ապահովէինք այն բոլոր բարեքները — նիւթական թէ՛ բարոյական — որ կ'ապահովուին մի՛ միայն Ռամկավարական կարգերու տակ, այն է՝ մտածումի եւ խօսքի, անհատական նախաձեռնութեան եւ սեփականութեան ապահովութենք, որ կատարեալ մարդկութեան իրաւունքը կը կազմէ:

Հայաստանի ներկայ իրաւակարգին բարեշրջումը պիտի փերտագործնէ այդ իրաւունքին կերարկումը: Եւ այն իրականութիւնը թէ՛ Գ—րդ Միջազգայնականի վերջին համաժողովը հրաժարելով համաշխարհային յեղափոխութեան ցնորքէն, ինքզինք Ռամկավարական կարգերու պաշտպան հռչակեց ընդգէմ միաշխ—մի, ցոյց կու տայ թէ՛ բարեշրջումը ճամբայ կ'ստնէ այսպէս, ինչպէս մենք կը սպասէինք:

Եթէ Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը իր քառամեայ փորձառութեամբ եւ կեանքի պայմաններուն հետ չփութելով ինքզինք կը սրբադէժ դէպի Ռամկավարութիւն, մեր Ազատական գաղափարները թոյլ կու տան ըսելու թէ Ռամկավարութիւնն ալ կը քայլէ ժամանակին հետ եւ ընկերային ու տնտեսական նոր փորձարկութիւններ կ'ընէ, ինչպէս Ամերիկայի մէջ:

Թերեւս հետոյ չէ այն ժամանակը, որ յառաջդիմող Ռամկավարութիւնը հասնի ընկերկող Համայնավարութեան:

Ռամկավար կարգերու եւ Ազատական գաղափարականութեան հետ եւ միաժամանակ Հայաստանի ներկայ պետականութեան հաւատարիմ մնալով, մեր Կուսակցութիւնը ցոյց կու տայ թէ Հայաստանը սիրելի անպայման չի նշանակեր աշօրոտան Համայնավարութեան համակրիլ կամ Համայնավար ըլլալ: Հայաստանի հակառակորդներուն ջանքերը, արտասահմանի հայ ժողովուրդին զգացումները Հայաստանի հանդէպ՝ օտար կառավարութեանց մօտ սխալ գոյներու տակ ներկայացնելու, ամբողջութեան կը դատապարտուին մեր կողմէ, չնորհիւ մեր համոզումներուն: Ու նաեւ այդ համոզումներուն չնորհիւ է որ մենք կ'արգիլենք մեր մէջ տարածումը այն սխալ ենթադրութեան թէ՛ Հայաստանը «անկեղծօրէն» սիրելու համար անպայման պէտք է մտնել Համայնավարներու մէջ:

Գիտենք թէ՛ ապերախտ է մեր դործը՝ գաղափարական գեանի վրայ: Ու ասոր համար ալ կը ցաւինք այն զարգացած անհատներուն, որոնք անտարբեր կը մնան մեր կատարած գործերուն հանդէպ եւ կամ դրան կը թերզնահատեն: Իրբեւ քաղաքական կադմոնիարութիւն՝ ո՛չ պաշտօն, ոչ գիրք, ոչ այն նիւթական շահեր կրնանք ապահովել մեր հետեւորդներուն, ինչպէս կրնան ընել իրենց սեփական երկրին մէջ գործող եւ կառավարական հիմնարկներու մէջ դեր կատարող կուսակցութիւնները: Ընդհակառակը

մեր հետեւորդները կը մղենք նիւթական թէ՛ բարոյական դոհո-
ղութեանց՝ Հայ ժողովուրդին եւ Հայ Երկրին համար:

Այդ դոհողութիւնները հնարաւոր չեն տանց քաղաքական
դաստիարակութեան, որ մեր մէջ կը թարգմանուի հայրենասի-
րական եւ ազգասիրական դաստիարակութիւն: Ռամկավար Ազա-
տական Կուսակցութիւնը զպրոցի մը դերը կը կատարէ այդ դաս-
տիարակութեան համար, մեր գաղութներուն մէջ, քաղաքական
միօրինակ ըմբռնումի եւ ընկերային ու տնտեսական միւլտիպլի-
մոդումներու չորք համախմբելով մեր հայրենակիցները, անոնց
մէջ ստեղծելով միութեան կապ եւ գործունէութեան ներդաշնա-
կութիւն:

Ուրիշ խօսքով մեր գերը եղաւ ու պիտի ըլլայ արտասա-
մանի ցրտած հայութիւնը պահել իրբեւ ամբողջական ազգ, իր
սեփական քաղաքական ձգտումներով եւ ընկերային ու տնտեսա-
կան համոզումներով:

Ը.

ՍԱՏԱՐ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄԻ

Ազգապահպանում բառին իմաստը մեզի համար կ'ընդգրկէ
արտասահմանի հայութիւնը, քանի որ ներկայ Հայաստանի մէջ
ապրող ժողովուրդի ազգապահպանումի հոգը կ'իյնայ Հայ Կա-
սավարութեան վրայ:

Արտասահմանի հայութեան համար ազգապահպանումի
ազգակները բազմաթիւ են — հայրենիքի սէրը եւ Հայաստանի
ներկայ իրականութեան կապում մնալը, Հայաստանեայց Եկե-
ղեցին եւ հայ մշակոյթի հիմնարկները՝ գալոց, յարան, բեմ եւ
մամուլ: Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը սատարած է եւ
կը սատարէ ազգապահպանումի, այդ բոլոր ազգակները իր գոր-
ծունէութեան մէջ չանտեսելով եւ ի հարկին ինքը ստանձնելով՝
ստանձինն՝ անոնցմէ մէկուն կամ միւսին գերը: Այսպէս է, օրի-
նակ, որ երբ Հայաստանեայց Եկեղեցիի գոյութիւնը պահ մը վը-
տանդուեցաւ Ամբրիկայի մէջ, Ռամկավար Ազատական Կուսակ-
ցութիւնը ուղղակի ստանձնեց Եկեղեցիներու պահպանութեան եւ
մեր եկեղեցական նուիրակութեան պաշտպանութեան գերը:
Այսպէս է զարձեալ, որ Ռ. Ա. Կուսակցութիւնը՝ սկիզբէն մինչեւ
այսօր՝ պաշտպան կանգնած է Հ. Բ. Ը. Միութեան, իր անդամ-
ներուն նիւթական օժանդակութիւնը եւ իր կազմակերպական մե-
քենային բարոյական զօրավիգը տանելով այս համազգային հիմ-
նարկութեան, որպէս զի ան կարենայ անսայթաք կատարել իր

հայրենաշինական գործին հետ, գաղութներու մէջ իր մշակութա-
յին եւ կրթական գործն ալ:

Եւ սակայն վերոյիշեալ ազգակները տակաւին բաւական
չեն լրիւ կերպով ապահովելու մեր ազգապահպանումը: Արտա-
սահմանեան օտար երկիրներու մէջ, ուր ազգային հեղինակութիւն
եւ իշխանութիւն մը չկայ քաղաքական, անտեսական եւ ընկերա-
յին ալիքոծումներուն մէջ մեր ժողովուրդին աստանդական նաւը
ստաջնորդելու համար, զարձեալ հայ քաղաքական մտածողու-
թեան կ'իշխայ, իբրեւ կողմակերպուած ուժ, հսկել մեր զան-
գուածներուն ազգապահպանումին վրայ:

Մեր մէջ կան մարդիկ — եւ ասոնք առաւելագէս մերինին
նման քաղաքական կուսակցութեան մը գոյութեան իրաւունքը
ժխտողներն են — որ կր սիրեն ըսել թէ՝ Թուրքիոյ մէջ մեր ժո-
ղովուրդին ճակատադիրը աշխարհս կր անօրինուէր, եթէ կարգ մը
արկածախնդրութեանց արգելք հանդիսացող եւ ազգին զեկը խո-
հեմ կերպով վարող ուժ մը գոյութիւն ունեցած ըլլար: Թուրքիոյ
Հայութեան մնացորդներուն գոյութիւնը — ֆիզիքական եւ արն-
ատեսական իմաստով — նուազ վտանգուած չէ այսօր օտար ափե-
րու վրայ, ուր միեւնոյն արկածախնդրութիւնները կր փորձուին
միեւնոյն անհատներու կամ կազմակերպութեանց կողմէ, տարրեր
ձեւերով եւ տարրեր անուններու տակ: Եւ նման արկածախնդրու-
թեանց գէժ ելլող միակ ուժը, Ռամկապար Ազատական Կուսակ-
ցութիւնն է:

Ասկէ առաջ արդէն յայտնեցինք մեր գնահատանքը՝ Հա-
յաստանի ներկայ իրաւակարգին մասին, այն քաղաքական, արն-
ատական եւ ազգային բարեփոխելուն համար, զոր այդ իրաւակար-
գը ապահոված է մեր երկրին ու ժողովուրդին: Եթէ Հայաստան
չմտնէր Խորհրդային իրաւակարգին տակ եւ մաս չկազմէր Խոր-
հրդային Միութեան, այսօր ո՛չ Հայաստան գոյութիւն կ'ունե-
նար եւ ոչ ալ Հայ ժողովուրդ՝ մեր բնիկ երկրին մէջ: Հայաստանի
իրականութեան՝ այս յոյսին տակ գնահատումք մեր կողմէ՝ չի
նշանակեր թէ մեր Ռամկապարական եւ Ազատական սկզբունքնե-
րէն հրաժարած ենք: Այլ սկզբունքները կր կիրարկենք արտա-
սահմանեան երկիրներու մէջ, ուր մենք իբրեւ քաղաքական կազ-
մակերպութիւն՝ արածնուած ենք գործելու: Հայաստանի մասնէր
Խորհրդային իրաւակարգին տակ՝ քաղաքական գոտաւորումնե-
րու եւ մեր երկրի պայմաններու տեսակէտով՝ փրկութեան միակ
ճամբան էր: Արտասահմանեան պայմաններու եւ քաղաքական
դատաւորումներու մէջ մեր ժողովուրդին համար կործանարար
զեր մը կրնայ կատարել համայնավարական շարժումին խառնուի-
լը, արուած ըլլալով որ այդ շարժումը ուղղուած է օտար երկիր-
ներու քաղաքական, անտեսական եւ ընկերային կարգերուն գէժ,
որոնց յարգանք կը պարտինք իբրեւ հիւրասիրուած կամ հան-

դուրժուած մարդիկ: Մեր սեփական տան մէջ իրաւակարգ մը եւ կարգ ու սարք մը կայ, որուն զէմ չենք դործեր: Եւ ասիկա կու գայ Հայաստանի եւ Երկրի ժողովուրդի Ֆիզիքական գոյութեան եւ շահերու մտահոգութենէն: Ուրիշներու տան մէջ ալ իրաւակարգեր կան, որոնց հաւատարիմ կը մնանք: Եւ այս հաւատարմութիւնը կու գայ արտասահմանի հայ զանդուածներու Ֆիզիքական գոյութեան ու շահերու մտահոգութենէն ու կը կազմէ մեր ազգապահպանումի քաղաքական ազգակը:

Եթէ մեր մէջ կան իրապէս զաղափարապաշտ մարդիկ, որոնք կը կարծեն թէ Համայնավարութիւնը ընդհանուր մարդկութեան համար բարիք եւ փրկութիւն է, Հայաստան եւ Հայ ժողովուրդը արդէն լիովին տուած են իրենց տուրքը: Ուրիշ երկիրներ եւ ուրիշ ժողովուրդներ թո՛ւյ տան իրենցը եւ մենք, որ չնչին թիւ մը միայն կը կազմենք այս բոլոր երկիրներու մէջ, ոչինչ կրնանք շահեցնել ուրիշներու, եթէ անոնց «կարաւանին խառնուելով» մեր կազմէն չենք: Սակայն կրնանք շատ բան կորսցնել իրրեւ անհատ եւ իրրեւ համայնք: Եթէ մարդկու թիւնը պիտի փրկուի, թո՛ւյ մէկ անգամ ալ մենք ուրիշներու վաստակէն օգտուենք, փոխանակ մեր գոյնի վաստակը վրայ տալու ուրիշներու համար:

Ուրիշ շարժում մըն ալ, նոյնքան վտանգաւոր, սկսած է մեր մէջ եւ մեզ կը տանի տարբեր ուղիով կորստաւ: Փաշիգմի շարժումն է այն, նոյնքան օտար մեր բարեբաւուն եւ մեր ժողովուրդի շահերուն: Աւելի բլրալով, այս շարժումը, օտար պետութեան մը գլխաւորութեամբ, ուղղուած է Խորհրդային Միութեան, այսինքն Հայաստանի դէմ ալ: Գաղտնիք չէ թէ որո՞նք Փաշիգմի մեր մէջ կ'ուզեն տարածել: «Յեղակրօն»ներ կան Ամերիկայի մէջ, իրրեւ նմոյշ: Բարիկի մէջ եւս «մի խումբ երիտասարդներ» կը փորձեն ստեղծել Փաշիստական կազմակերպութիւն մը Հայոց մէջ, որպէս թէ «Հայ ցեղին վեհութիւն» ապացուցանելու համար: Այդպիսիները շատ շատ իրենց ազիտութիւնը կ'ապացուցանեն՝ Հայ ժողովուրդին ներկայ պայմաններուն մասին: Արդ, եթէ կարգ մը երկիրներու մէջ Համայնավարութիւնը կը նկատուի վտանգաւոր եւ կը հայածուի, ուրիշ երկիրներու մէջ եւս Փաշիգմի կը նկատուի նոյնքան վտանգաւոր եւ կը հայածուի: Եւ առաջին տոթիւ հայածանքը ուղղուած է օտարականներու դէմ, որոնց մէջ Հայ ժողովուրդը՝ իրրեւ անպաշտպան եւ անհայրենիք բազմութիւն՝ կը կազմէ առաջին թիրախը եւ պիտի բլրայ առաջին գոհը:

Անցած Յուլիսի 13-ին, Պրանսայի ազգային տոնին առթիւ, Բարիկի մէջ Համայնավար-Ընկերայարական ճակատը դէմ առ դէմ եկաւ Փաշիստ ճակատի հետ, փողոցային ցոյցերով: Պրանսական կառավարութիւնը, ինչպէս միշտ, այդ առթիւ ալ պաշտօնապէս յայտարարեց թէ՛ նման ցոյցերու մասնակցող ոեւէ օտարական

պիտի արտաքսուի երկրէն: Իսկ արտաքսումը՝ մեր պայմաններուն մէջ՝ կը նշանակէ տնտեսական ճգնաժամ: Իրրել. Համայնավար կամ Ֆաշիստ «քաջութիւն» ծախող ոչ մէկ Հայ ուղեց իր մօրթը վտանգել: Եւ լաւ ըրաւ: Սակայն գիտենք թէ այդ միեւնոյն «քաջ»երը պիտի չվարանէին հրապարակ գալու եւ ամբոխավարական ցոյցերու մտանակցելու, եթէ գիտնային թէ իրենք անձնապէս չեն վտանգուիր, հոգ չէ թէ իրենց ազգակիցները, այսինքն ուրիշներ վտանգուին: Ամերիկայի մէջ հայերէն համայնավարական թերթի մը գրածները ուրիշ տեղեր կը թարգմանուին եւ հայութեան մէկ մասին դէմ իրրել. փաստ կը ներկայացուին: Այդ կերպով ոչ միայն կը վտանգուին տնտեսներ, այլ կասկածի տակ կ'առնուի ամբողջ Հայ համայնքը: Այդպիսի մատնութեանց եւ կասկածներու իրրել. հեռեւանք չառ տեղ Հայերու հպատակութեան թուղթ չի արուիր, եւ դործարաններէ հեռու կը պահուին, իրրել. անվրատահելի տարր: Ամերիկայի մէջ անգամ օտարականներու դէմ շարժում մը կը զգացուի, եւ չենք գիտեր թէ ո՛ր կընայ յանգիլ նման շարժում մը:

Այս վտանգներուն առջեւ ի՞նչ կը խորհին անոնք, որ չափաւոր եւ չըջահայաց քաղաքական մտածողութեան մը գերը կը ժխտեն: Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը ներկայանայ որպէս վաճառ մեր ժողովուրդին, նման վտանգներու դէմ պաշտպանելու համար գայն: Անոնք որ եռասիրութեան աշտարակի մը մէջ չեն բանտարկած իրենց անձն ու մտածումը, ոչ միայն պէտք է դնահատեն այս ուղղութեամբ մեր կատարած ու կատարելիք ազգապաշտպանութեան գերը, այլ պէտք է մեզի ոյժ տան եւ զօրացնեն մեզ: Ասիկա ընելով՝ իրենց սեփական գոյութեան եւ ազահովութեան ալ կը նպաստեն: Որովհետեւ եթէ այսօր իրենց մօրթին վրայ չեն զգար վտանգը, վաղը կընան զգալ եւ այն առեւ շատ ուշ ըլլայ, թերեւս:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր որդեգրած ուղեգծով, իր գաղափարական ճրագրով, իր ուղիղ եւ օրինապահ գործունէութեամբ կը ներկայանայ իրրել. այն հայ կազմակերպութիւնը, որ արժանի է հայութեան գնահատանքին եւ քաջալերութեան: Մեր նշանարանն է ԾԱՌԱՅԵԼ ԵՒ ՕԺԱՆԴԱԿԵԼ ԱԶԳԻՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ: Մեր գոներբ բաց են բոլոր անոնց համար, որ կ'ուզեն իրենց աշխատանքը միացնել մեր աշխատանքին եւ իրենց բարոյական ու նիւթական զոհողութիւնը խառնել մերինին: Որովհետեւ «Միութիւնը զօրութիւն է»:

(ՎԵՐՋ)

ՄԵՐ ԲԱԶՄԵՐԱԽՏ ՎԱՍՏԱԿԱԻՈՐՆԵՐԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍԵԱՆ

Դրեց՝ ՎԱՀՐԱՄ ԿԵՕՔՃԵԱՆ

1972 Յուլիո 12ին, «Պայքար» օրաթերթը, «Թափափար Աղատական մամուլը սուգի մէջ է» յատկանշական տողերով կու տար զոյժը անխոնջ ու անվճատ զրոյի մը, — վաթսուն տարիներու հարուստ վաստակը կոնակը անշնչացած Յովհաննէս Պօղոսեանին, որ առ յաւէտ փակած էր իր մշտաժպետ աչքերը 1972 Յուլիո 4ին, երկարատեւ ծիրիչ հիւանդութեան խորհրդաւոր հարուածին տակ, իր անձնուէր կոյակիցին՝ Սիւզիին ու զուգուրտ ուրդուն՝ Ժան-Ժաքին տարիներու հոգածութիւնը վաշտած:

Յաւէտ սղորացեալ ընկեր Յովհաննէս Պօղոսեանին բերքատուտ կեանքն ու օրինակելի նկարագիրը մեծ օրաթերթին այդ սրահումը, կեանք մը ամբողջովին նուիրուած հայ մամուլին — հայ մամուլին խոյսմանով ծառայելու համար հայ ժողովուրդին ու հայրենիքին:

Հրապարակազրական ճամբաներու վրայ մաշած հայ զրոյներու նման ընկեր Պօղոսեանի հարուստ վաստակին մէկ շնչին կոտորակը միայն մատչելի է մեր սերունդներուն, որոնք ըլլալով որ անոր բազմաշաղկապ լէզեր զարգարող միտքի զոհարներէն քանի մը հարիւրներ միայն հատորի վերածուած են, հազարաւոր լէզեր տակաւին ցրուած կը մնան «Արեւելքի», «Ժամանակի», «Վերածնունդի», «Ժողովուրդի ձայնի», «Այսպայ»ի, «Արազած»ի, «Արեւ»ի, «Զարթօնք»ի, «Այսօր»ի եւ «Պայքար»ի դեղնած, եթէ ոչ փշուր փշուր եղած լէզերուն վրայ:

Ան հազիւ թեւակոխած փթիւմի չըջանա՞ր՝ զգացեր էր սարսուռը իր նամոյ թեւերու բացակայութեան եւ նշմարած զսպառաքարի մը ծանր թաթը, երբ իր մայրը զարձեր էր միակ նեցուկը ութ անշափաճաւ օրը ու օրրոհներուն, համեատ տնակէ մը ներս: Որբացան Յովհաննէսը իր փոքր տարիքին պէտք է պաշտար մղէր, ա՛հպ պաշտար մը, իր զոյսութիւնը պահելու, տեղ մը համեկու, նպատարնկալի գիրքէն նպատակը բարձունքները զրտեւելու համար, պէտք է չա՛նարկէր ներկայացող իւրաքանչիւր պատեհութիւն, նոյն իսկ ի հարկին ամէն զնով սակցծէլ փրկարար միջոցներ հասակ նետելու համար:

Թուրքին արխանտ եաթագանը 1895ի սեւ օրերուն խլած էր անոր հօր զլուխը եւ 1915ի ա՛հաւոր օրերուն ոճրածին Թուրք ժողովուրդը պիտի խողովէր ութ օրը-օրրոհներու մայրը: Յովհաննէս Մարմարաշի ափերուն վրայ պիտի իմանար սրախողխող մօրն ու քոյր-եղբայրներուն ճիշը, երբ կը լոյրբէր կաղմաւորման, հոգեկան կաղապարումի բախտորոշ չըջանա՞ր եւ Ուստի-

նա Վարպետ Տուտուի մանկանոց-վարժոցէն (ինչպէս ինք կը ընտրուէ իր ինք-
նակենսագրութեան մէջ), կը մագլցէր Պոլսոյ համալսարանին բարձունքները:

Վերջապէս սլաքաբլրը դինք հասցուցեր էր տեղ մը, լայց թրքական
արիւնստ միջնավայրը եւ անոր կենսաքանդ եաթաղանք զուպարի նոր դաշտ
մը նեւտած էր Ուխտանա Տուտուի հէք տղան, Ս. Կարապետ Ժառանգաւորա-
ցին փայլուն սանը, Պոլսոյ խոտուամշակից երիտասարդ իրաւաբանը:

Յովհաննէս Պօղոսեան, տասնհինգ տարեկանին, Ս. Կարապետ Ժառան-
գաւորացէն շրջանաւարտութեան օրերուն, առանց շունչ առնելու կը նետուի
մատաղ սերունդի գաղտնիարարութեան դաշտը, զիրք կը փոխէ հեւ ի հեւ
երիտասարդի կորով ու փառասիրութիւնով նեւշահիրէն Գոնիւա, Գոնիւայէն
Աֆիոն Գարահիսար, Աֆիոն Գարահիսարէն Էսկի Շեհիր կ'ուսուցանէ օր-
նակելի նստիւմով մը: Եւ քսան տարեկանին ափ կ'առնէ Պոլսոյ գոյները, նոր
ստուծով մը բարձունքներ գրաւելու առաջագրութիւնով: Պոլսոյ մէջ կը
բողբոջեն Յովհաննէսին թաքուն ձիրքերը — բանաստեղծութիւն, կազմա-
կերպելու շնորհք եւ հրապարակագրութիւն:

Պաւստի անմեղ ու անփորձ երիտասարդը թոխչքներ կ'ունենայ անծա-
նօթ Մարիի մը շուրջ, որոնց կծիկը քակել կու տամ տասնեակ մը տարիներ
ետք, — 1924ին մտերմիկ զրոյցներու ընթացքին: Սիրակարօտ Յովհաննէսի
չար լախտէն մանկամարդուհին կը մնայ անմերձեւայի, փանծօրներու (վե-
նեշիրմ պլայմսոս) ետին:

Սիրահար սրտանին կ'երգէ իր աջկան սիրարօրը աչքերը, ձիւնափայլ
լանջքն ու զայն հովանաւորող խոսքովիները, լայց անոր բողբոջող ալիք-
ները կ'անէտան արդիւնաշատ ափեր հասնելէ առաջ, եւ առանց ճաշակելու
րիւրիցս րիւրիցացած տաքուն աւաղին հոգեկան հպումները, սիրտերը կը
մնան իրարու անհաղորդ, բոցը առանց մոխրի եւ երգը՝ առանց արձագան-
դի: Պատրանաթափ Պօղոսեան զոգտրիկ զբոյժիկի մը մէջ կը մէկտեղէ իր
սիրտին տաղաչափեալ կաշիները, զորս տեսած եմ Տարսոնի ստանդարթեան
օրերուն:

Ընկեր Յովհաննէս Պօղոսեանի բանաստեղծական թռիչքներէն շատ քիչ
յիշատակներ ունինք, կարծես անոր սիրային քայլերուն անբաջող էլքը փա-
կած է ամէն գոռո՝ կը մնայ մշտաբաց միակ պատուհան — անոր Ռամկավար
Ազատական Կուսակցութեան քայլերդը, ուր մեր երբեմնի բանաստեղծը
կ'երգէ:

Դարերուս սեւ օրեր սպրեցանք,

Այ բաւ է լացուկո՞ծ, տառապանք,

Օ՛հ, ուխտեմք աչքներնիս վեր յառած,

Խառնայիմ ձեզ՝ Մասիս. Արագած:

Պօղոսեանին հանրային կեանքը եւ կազմակերպչական աշխատանքը կը
սկսին Պոլսոյ մէջ, երբ համալսարանի խումբ մը ուսանողներով կը հիմնա-
դրէին Պոլսոյ Հայ Ուսանողական Ուսանողական Միութիւնը, «Վերածը-
նունդ» հանդէսով, հոն է որ պատրաստուեցաւ յետագայի երկարամեակ հրա-

պարակազիրը եւ Լուսակցական առաջնորդը, որ չուտով պիտի չըջապատուէր հին ու նոր ուժերով: անոր հաղորդական ջերմութիւնը, դերող անկեղծութիւնն ու առաքեալի նուիրումն թիւնը իրեն համար պիտի ապահովէին նորանոր պատուանդաններ եւ ան չուտով պիտի դառնար Լուսակցական գաղափարախօս եւ դեկաւփար: Անոր մօտ մշտադոյ կրակն ու կայծը կը սկսին տաքցընել հայկական մթնոլորտը եւ գիտակից դանդուածը կը թոլորուի անոր շուրջ, ինչպէս ձմեռը փոքրիկներ վառարանին շուրջըրորը:

Իբրեւ հանրային գործիչ՝ ընկեր Յովհաննէս Պօղոսեան պիտի մնայ հանդարտ ու անաղմուկ համադրողի, համակարգողի կենդանի տիպար մը, անսակարկ աշխատութեան խորհրդանիշ, նուիրումի, անսահման գոհարեումի խօսուն օրինակ: Ան իր իրադործումներու ամենարեղուն շրջաններուն, իր փառքի օրերուն իսկ մնաց համեստ, անպաճոյճ ապրելակերպն ու պարզ կեանքը մնացին իրեն հետ: Ճոխութիւն ու սերճանք հեռու մնացին իր տունէն ու սեղանէն:

Ընկեր Յովհաննէս Պօղոսեանին անմահ փառապանին է անտարակոյս, անոր երկարամեայ (1909–1970) հրապարակագրական վաստակը, եւ կարելի է դայն կոչել մին հայ հրապարակագիրներու Մաթուսաղաներէն: Ան 1909ին սկսած էր հետեւիլ պոլսահայ լրագրութեան քայլերուն, հետզհետէ զրաւած գործօն դերեր եւ շատ չանցած՝ առաջնորդողի դերքեր: Ունեցաւ կապեր տասնեակ մը թերթերու հետ, եղաւ ութ թերթերու խմբագիր ու խմբագրապետ: Անոնցմէ մի քանիները պահեց հոն, ուր հասցուցեր էին Հրաջ երուանդի, Վահան Թէքէեանի նման մեծ գրողներ, իսկ ուրիշները բարձրացուց, հասցուց նախանձելի դիրքերու:

Ակնեւ եւ որ այդ թերթերը չէ որ Պօղոսեանը հասցուցին բարձունքներու, ընդհակառակն, Պօղոսեանն է որ իր ողկեան աշխատանքով ու նուիրեալ գործունէութեամբ, այդ թերթերը հասցուց բարձունքներու, ռամկավար ազատական մամուլին տուաւ ժողովրդական լեզու եւ դատարարակցական դեր: Յովհաննէս Պօղոսեանին գիտող աչքերն ու դատող միտքը գէպքերը վերածեցին պատկերներու, լացին մթին ծալքերը հայ ժողովուրդը շահագրգռող կենսական հարցերուն:

Անոր քաղաքական փրկումները, ազգային ու միջազգային հարցերու շուրջ անոր ողջմիտ մեկնարանութիւնները միշտ պիտի պահեն իրենց թարմութիւնը: Ան, հակառակ իր հանդարտարարոյ խառնումքին, սրազան կիրքով պայքարեցաւ հայափնտս շարժումներուն դէմ:

1930 թուականին, ընկեր Պօղոսեան «Պայքար» օրաթերթի նախաձեռնութեամբ պնաց Հայաստան, տեսնելու, դիտելու եւ գտնելու համար հայրենադնակ հայութեան կեանքն ու կենցաղը չափելու, կշռելու համար հայ արիւն-քրտինքին արդիւնքը, հայրենի կառավարութեան ղեկավարներուն թաղկերակը եւ անոնց թոխչքներուն կլակէտն ու նպատակակէտը: վերջապէս՝ ւափ-քուտէյք՝ ընկելու համար ռամկավար ազատական գործիչներուն — Աւետիս Թերզիպաշեանի, Արտակ Դարբինեանի, Հրաջ երուանդի եւ անոնց հետեւողներուն — ականատեսի վկայութիւնները, որոնք անհրաժեշտ դարձեր էին սփռեալհայութիւնը մոլորումներէն ազատ, անբարեխիղճ հովիւներէն

հեռու պահելու, արտերկրի հայութեան հայրենասիրութիւնը կեանքի կոչելու համար :

Ընկեր Յովհաննէս Պօղոսեան երկու երկար ամիսներ մնաց հայ հողին վրայ, հայ ժողովուրդին հետ, կրկնակի, երկար տեսակցութիւններ ունեցաւ. մեր պետական վարիչներուն հետ, գլուխ գլխի դրոյցներ կազմակերպեց երկրին արդիւնարեութիւնը գլխաւորող մեծ ու պղտիկ անձնաւորութիւններուն հետ, սեղանակցեցաւ հայ շինականին ու ճաշակեց անոր հացին ու պանիրը, խորովածն ու փիլլաւը, մերթ զիշերներ անցուց հայ խրճիթէն ներս, լսեց հայ պապիկի ու մամիկին սիրտին ձայնը, ոչ-առանձնաշնորհեալի դանդաղն ու գոլքը, յոյգերն ու յոյսերը, եղաւ մայր հողին պատմական անկիւններէն ներս եւ տեսաւ յարութիւն առած հայրենարմակ հայութեան ճիւղերն ու նուաճումները, նորարաց ջրանցքներն ու ոսկի դաշտերը, կանգ առաւ մեր հին ու նոր աւերակներուն դիմաց եւ հրճուեցաւ հայու արիւն-քրտինքով, տեղ-տեղ նահատակներու ոսկորներով. բարձրացած պարիսպներով, կեանքի կոչւած մեր հին ու նոր կոթողներով եւ մերթ իրար խառնեց ցաւին ու ցնծութեան արցունքները, լսեցաւ հիւներուն համար եւ ցնծաց նորերուն համար, երկու ամիսներ ունեցաւ վշտախառն բերկրանքի ծանր օրեր «խանդավից» մթնոլորտի մը մէջ, որովհետեւ իրեն ըսողներ եղած էին թէ «հաշիւներդ կարգի գիր, կտակդ չինէ, երթալը քեզմէ կախում ունի, բայց վերադարձդ՝ կախեալ է այլոց քմայքէն...» :

Պօղոսեան դնաց առաքելի, ուխտեալ կուսակցականի տեսլականով եւ վերադարձաւ հողեկան բացառիկ բարարութիւնով մը, երկար յօդուածաշարքով մը «Պայքար» օրաթերթի ընթերցողներուն տուաւ մեր մայր հայրենիքին իրական պատկերը, եղաւ անաչառ իր գաղտնիքներուն մէջ, ինչպէս յանձնարարած էր Հայաստանի պետական վարիչներէն ողորացեալ Սահակ Տէր Յարրիէլեան, որուն սրտազին պատգամը եղած էր՝ «Արտասահմանի հայութենէն կը սպասենք միայն բարեացակամ վերաբերմունք գէպի խորհրդային Միութիւն եւ գէպի խորհրդային Հայաստան» :

Հրապարակագիր Յովհաննէս Պօղոսեան եղաւ անաչառ, քննադատեց ու գնահատեց ինչ որ տեսած էր ու գտած՝ նորածին հայ պետութեան հողին վրայ եւ անոր րնակչութեան մօտ. վերապահումներ չսարդեցուց իր տողերէն ներս, գիտնալով հանդերձ չարամիտներուն առկապութիւնը — Հայաստանի եւ արտերկրի զաղթօճախներուն մէջ, որոնք պիտի փորձէին չարաշահութիւններ ընել հարուածելու համար զինք եւ իր կուսակցութիւնը, մղուած՝ հատուածական ու գաղափարախօսական շիւ հաշիւներէ :

Ընկեր Պօղոսեանին այս անկեղծութիւնը շատ սուղ արժեք իրեն եւ Ռամկապար Աղատական Կուսակցութեան : Ան անարգարօքէն քաջբռնեցաւ երկու հակառակ հոսանքներու կողմէ, հակասական որակումներով :

Ընկեր Պօղոսեան մնաց իր բարձրութեան վրայ եւ արհամարհանքով վերադարձուց նետուած մուրն ու մախաթը. եւ հինգ հարիւր պտտկերադարձ էջերու վրայ, «Երկու ամիս Հայաստանի մէջ» խորագրով իր գիրքով սեռ-տոնդներու փոխանցեց իր հայրենական տպաւորութիւնները : Երկրէ երկիր — Եգիպտոս, Ֆրանսա, Ամերիկա, Սուրիա եւ Լիբանան — անձամբ տարաւ

սիւզը Արազածին, մոնչիւնը Արաքսին, զօղանջը Իջմիածինին շնկչկոցը Արարատեան դաշտին, խայտանքը հայ շինականին, կոփիւնը Հայաստանի որմնաղիրին, արծաղանջը պետական երգ ու պարին, շառաչը Սեւանին, խինդն ու խնծիւղը հայ հողի երջանիկ մանկութեան եւ ճաճանջը լուսապատ քաղաքամայր Երեւանին:

Պօղոսեան ազատագրուած հայկական հողաշերտը մօտեցուց, սիրցուց մայրրած հայ զանդուածին, իր լրումին հասցուց Ռամկալար Ալատական Կուսակցութեան հայրենասիրական-հայաստանասիրական ճիգերը: Ան պատուեց քողը, սրուն կտին կանգնած էր Հայաստանը՝ նոր շորերով, հարսի չորերով:

Փարիզի մէջ արկածահար «Այսօր»ի փակումէն ետք, Պօղոսեան քաշուած էր տարւորերոջ կեանքէն եւ կ'աղբէր Անկէն-լէ-Պէնի իր համեստ յարկէն ներս եւ սկսաւ զսհանալ մնայուն աշխատակիցի խաղաղ կեանքով: Ան՝ աշուհեմեմ կանոնաւորարար մեր մամուլին յանձնեց իր խոր հմտութեամբ դրսեւորուած համով հոտով տեսութիւնները՝ ազգային եւ միջազգային հարցերու շուրջ:

Վերջին անգամ ընկեր Յովհաննէս Պօղոսեանը տեսայ 1966ին, եթովպիայէն մեր փերադարձի ճամբուն վրայ: Երկու օր վայելեցինք իր եւ իրեն-ներուն հաճելի ընկերակցութիւնը: Տարիներու աղղկցութիւնը ակնհերեւ էր. կանխահառ ծերութիւն մը զինք առած էր իր ճիրաններուն մէջ եւ կը ճնշէր անոր էութիւնը: Իայց ան կը պահէր մտքի պայծառութիւնը, զիտեւու եւ գատեւու րացատիկ շնորհքը եւ օրինակելի էր իր հետաքրքրութիւնը՝ ազգային հարցերու շուրջ, որոնք յաճախ եւ հնոցէն գուրս կու գային գտուած ու հասարակութեան մարտելի զոյալիճակով մը:

Անոր հոգիով հայացած Փրանսուհի կողակիցը՝ Սիւզին հաղորդ էր իր ամուսնոյն ներքին տպումներուն, հոգեկան պահանջներուն եւ զիրենք կաշկանդող հայկական պայմաններուն: Միութարական է տեսնել անոր յօժարակամ համակերպումը: Ան նոյնացեր էր ամուսնոյն եւ հայկական կեանք ու կենցաղին հետ անձայն ու առանց պանդառի կը տանէր իրեն վիճակուած առաքելութիւնը — հաւատարիմ ամուսին, տնտեսագէտ տանտիկին, դորո-վաղութ մայր եւ սակաւակեացի խաչ: Հարուստ կը թուէին իրենց չունեւորութեան մէջ. իրենց միակ հարստութիւնն էր իրենց մէկ հատիկը՝ Ժան-Ժաքը, որ կը մարմնաւորէ իր ծնողաց հոգեկան բոլոր շնորհները եւ յուսացող ենք որ անոր մէջ տիրապետող զիրք մը կը գրաւէ Յովհաննէսին ներքոյ հայրենասիրութիւնը եւ վառ ազգային ոգին:

Ընկեր Յովհաննէս Պօղոսեանին զոյապայքարը թէ եւ եղած էր ծանր, բայց ան առաքելի համակերպումով վաղուց հաշտուած էր տիրող պայմաններուն հետ եւ իւրաքայտուկ լաւատեսութիւնով մը կը բանար նոր ու-ղիներ երեւան եկող խութերու աղուձախին, ապահով ու անեղծ նաւահան-դիւտ կը հասցնէր նաւն ու կենտամթերքը: Սփիւռքահայութիւնը երկար տ-մեն պիտի փնտէր արտերկրի հայ մամուլին այս քորմէն հօրն ու հրայրքը, ճոճանչն ու լոյսը, մասնաւորաբար երբ ազգային հրատապ հարցեր զուխ-ցեն եւ հրեղէն սիւներու անհրաժեշտութիւնը կը դառնայ օրուան պահանջը:

Ընկեր Յովհաննէս Պողոսեանին հոգեկան պատկերը մի քիչ աւելիով տալու համար կ'արտագրենք զինք բնորոշող հետեւեալ վկայութիւնները .

«Մանրակազմ, նիհար, ժամանակէն առաջ ճերմկած առատ մազերով, ուշիմ ու ուշադիր նայուածքով, ժպիտը շրթունքին ծայրէն անպակաս, յարաշարժ եւ թեթեւ հոգի մէկն էր Յովհաննէս Պողոսեանը :

«Ան շարժումներու եւ ձեւերու մէջ ժլատ, բայց ծայրափոքրէն խանդավառ էր, եւ գիտէր իր խանդավառութեան հաղորդակից զարձնել իր շուրջիները :

«Ան վերին աստիճանի պարկեշտ էր իր համոզումներուն մէջ, հայութեան եւ Հայաստանի ապագային մասին խոր հաւատքով տոգորուած . մէկ խօսքով՝ իսկական հայրենասէր մըն էր :

«Ան եղաւ պայքարի մարդը, առանց սակաւն տարուելու չափադանցութիւններէ, որոնք մարդ կակը կը հեռացնեն ճշմարտութիւններէն :

«Ան եղաւ աշխատասէր խմբադիր մը, արտասահմանի սպերսիտ պայմաններու տակ կատարելով տարապալման աշխատանք, առանց դժգոհելու եւ տրտնջալու :

«Ան ապրեցաւ բեղուն կեանք մը, անձնութեամբ դորձեց տասնեակ տարիներ, ուր որ գտնուեցաւ, օգտակար աշխատանք կատարելով» :

Ան չգոհացաւ փարիզի խաղաղ, համեմատաբար սպառնով դորձով եւ ոչ ալ կռթնեցաւ աստիճանի բարձրացումներուն . եղաւ յարաշարժ պատգամատարը եւ երկրէ երկիր, ցամաքամասէ ցամաքամաս տարաւ . հայրենասիրութիւն-հայաստանասիրութեան դրօշակը աշխատանքին որ պայմանները եւ զան թոյլատու :

Յովհաննէս Պողոսեան նախ եւ առաջ էր հայ մը, լաւ հայ մը, բառին ազնուական իմաստով : Հայրենասիրութիւնը անոր համար ո'չ չապիկ էր եւ ոչ ալ զարդասեղ, այլ անրաժանելի մէկ մասը իր կութեան, տասնիկ մը որ կը տիրապետէր անոր սիրտին ու միտքին եւ հոգիին : Ան տէրն էր իր համոզումներուն եւ համոզումները չլրցան գերել զինք, ան մնաց հաւատարիմ իր ուխտին եւ կոչման, ինչպէս վարնան կենսատու, աշնան հաշուարքի օրերուն, նոյնպէս ալ ձմեռն անրաբնացակամ եւ ամառուան հեղձուցիչ օրերուն, կեանքի լաւ ու վատ օրերուն հաւասարապէս :

Եւ այսօր երբ ողակոչումը կ'ընենք մեր վաստակաւորներուն, չենք կրնար չառաջել երբ կը տեսնենք հայ ավերուքի հասարակական, մշակութային կեանքին օրբտօրեակեան ծանծաղումը, աղքատացումը, եւ ալ անկումը որոշ չափով մը վարմանելու համար տարուած աշխատանքին, թափուած ճիգերուն ու վատնուած հսկայ դումարներուն սահմոյթեցուցիչ արդիւնքը : Հինքը կը մեկնին, արտերկրի բնին ու մամուլը կ'ամայանան, նորերը չեն պահեր անհրաժեշտ կապը հիւներուն հետ, չըսելու համար կ'արհամարհեն երէկի ուժերը, որոնք դուցէ տարբեր ձեւ մը ունին, ներկայ պահանջներուն անհամապատասխան գոյն ու երանդ :

Կ'ընդունինք որ 1915ի ահաւոր ոճիրը, ցեղասպան թուրքին հակա-

մարդկային անաստուածութիւնը փճացուց սերունդներու շղթան, բացաւ կործանարար խրամատ մը, բայց հայ սփիւռքին եղեռնափորձի երկրորդ եւ երրորդ սերունդն է որ հասակ կը նետէ եւ տակաւին չունեցանք Միհրան Տամատեաններուն, Համբարձում Պոյաճեաններուն, Սիմոն Զաւարեաններուն յաջորդ հասարակական դործիչներ, Բելզանդ Քէշեաններուն, Տիրան Քելեկեաններուն, Մատթէոս Մամուրեաններուն, Հրաչ Երուանդներուն չափանիւշով լրագրողներ, Արշակ Զօպանեաններուն, Վահան Թէքեաններուն, Դանիէլ Վարուժաններուն, Սիամանթօներուն պակասը անդդալի դարձնող հոգիի դարբիններ, երբ հրապարակը կ'ողողեն ազատ ստպարէզներու հետեւող լեզուներ: Բան մը, մեծ բան մը փոխուած է — մոռցուած է հասարակութիւնը եւ անհատը — անձը հրապարակ իջած է իր սանձադիւրձ բոնակալութիւնովը:

«Պայքար» օրաթերթը կը հնչեցնէր ահազանգը, երբ Յովհաննէս Պօղոսեանի մահուան առթիւ կը դրէր. «Ռամկալար ազատական մամուլը սուրի մէջ», սրովհետեւ Յովհաննէս Պօղոսեանի մահով կը վերջանար լրագրողներու հին սերունդը. սուրբ սփիւռքահայ մամուլինն էր, արդարեւ:

Մենք, մեր աշնանավերջի օրերուն, այս քանի մը տողերը թուղթին կը յանձնենք, մեր յաւէտ ողբացեալ զաղափարակից-մտերիմին հանդէպ մեր ունեցած հիացումը մեղի հետ տանելու խղճահարութիւնէն ձերբազատուելու, միաժամանակ նորահաս սերունդները անոր օրինակելի կեանքով հետաքրքրելու սիրոյն: Թող հաջորդական զատնան ողբացեալին կեանքն ու շունչը:

Նիւ Եորք, 1972



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐՍ

3

- Լուսանկար Յովհաննէս Պօղոսեանի 5
- Մուտքի համար Դոկտ. Վ. Ղազարեան 7
- Կուսակցական կեանքի յուշերս 9
- Ծանօթագրութիւններ 83

ՅԱՒԵԼՈՒԱԾ

- Պաշտօնական Յայտարարութիւն
Ռաւկավար եւ Ազատական Կուսակցութիւններու
Միութեան 89
- Պայքարը՝ Հ.Բ.Ը. Միութեան դէմ 91
- Մեր դերը *Ի՞նչ եղաւ եւ ի՞նչ պիտի ըլլայ* 115
- Մեր բազմերախտ վաստակաւորները՝
Յովհաննէս Պօղոսեան
Գրեց՝ Վահրամ Կէօֆեան 144

Բովանդակութիւն

153

PRINTED IN LEBANON